

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1 (21)

ԵՐԵՎԱՆ 2019

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հրատարակվում է ԵՊՀ ԻՄ Գիտական խորհրդի որոշմամբ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ասատրյան Ա. Գ. - արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գասպարյան Ս. Ք. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դերձյան Հ. Մ. - իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

Զաքարյան Ս. Ա. - փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ղարիբյան Գ. Ա. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ

թղթակից անդամ

Մանուչարյան Հ. Գ. - քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մինասյան Է. Գ. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Միքայելյան Մ. Վ. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Միքայելյան Վ. Հ. - հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Մուրադյան Ս. Պ. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նահապետյան Ռ. Ա. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

YEREVAN STATE UNIVERSITY

IJEVAN BRANCH

A K U N Q

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

NUMBER 1 (21)

YEREVAN 2019

YSU PUBLISHING HOUSE

EDITOR-IN-CHIEF

ASHOT NERSISYAN - doctor of historical sciences, professor

EDITORIAL COUNCIL

Asatryan A. G. - doctor of art, professor

Derdzyan H. M. - doctor of law, professor

Gasparyan S. K. - doctor of philological sciences, professor

Gharibyan G. A. - doctor of economic sciences, professor, associate member of
NAS, RA

Manucharyan H. G. - doctor of political science, professor

Minasyan E. G. - doctor of historical sciences, professor

Mikaelyan M. V. - doctor of economic sciences, professor

Mikaelyan V. H. - doctor of psychological science, professor

Muradyan S. P. - doctor of philological sciences, professor

Nahapetyan R. A. - doctor of historical sciences, professor

Zakaryan S. A. - doctor of philosophy, professor

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՈՐԲԱԽԱՄ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՔՐԻՍՏԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի
կրթական ծրագրերի բաժնի վարիչ

Հովհաննես Թումանյանը այն մարդասերներից էր, որ Հայոց ցեղասպանության տարիներին անձնուրաց նվիրվեցին իրենց ժողովրդին, կորցրին առողջությունը, հյուծվեցին ֆիզիկապես և հոգեպես, սակայն մնացին նրանց կողքին:

1914 թվականին, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, հայ ժողովրդին և նրա բնաստեղծ զավակին սպասում էին զարհուրելի, դժոխային ժամանակներ¹: Դեռ պատերազմից շատ առաջ՝ 1913 թ. հունվարի 2-ին, «Հորիզոն» թերթում «Հայկական հարցն ու իր լուծումը» հոդվածում Թումանյանը գրել էր. «Եվ նա՝ Թուրքիան, դիմել է, դիմում է և կդիմի ամենահրեշավոր միջոցների՝ վերջ դնելու է՞ ժողովրդին իր հարցի հետ միասին, հայի հայրենիքի ու ազգային իրավունքների խնդիրը ընդմիշտ փակելու համար»²:

Իր հոդվածում նշում էր նաև, որ Հայկական հարցը թուրքական լծի տակ դարձել է արյունոտ ու արցունքոտ. «Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների ու գաղթականությունների հարց է. նա գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է»³:

Պատերազմի լուրը Թումանյանին է հասնում, երբ այդ օրերին նա ընտանիքի, հարազատների և մտերիմների հետ գտնվում էր Վրաստանի Չաղվեր ամառանոցում⁴: Նա շուտափույթ վերադառնում է Թիֆլիս և անդամակցում 1914թ. հոկտեմբերին ստեղծված «Պատերազմից վնասվածներին օգնող կոմիտե»-ին, որը մշակութային և հոգևոր գործիչների մասնակցությամբ ծավալում է լայն գործունեություն⁵: 1914-1915թթ. Թումանյանի հասարակական ողջ գործունեությունը կապվում է հիշյալ ընկերության կենտրոնական կոմիտեի հետ: Ի խորին դժբախտության հայ ժողովրդի՝ այդպես էլ եղավ⁶: Թումանյանն այն սակավաթիվ

¹ Լ. Հախվերդյան, Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն, Երևան, 2000, էջ 13:

² Ա. Շղիագարյան, Հայկական հարցն ու իր լուծումը ըստ Հովհաննես Թումանյանի, Հովհաննես Թումանյանի թանգարան, Երևան, 2015, էջ 18:

³ Մ. Արզումանյան, Հայաստան 1914-1917, Հայաստան հրատարակչություն, Երևան, 1969, էջ 38:

⁴ Լ. Կարապետյան, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, Երևան, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1992, էջ 99:

⁵ Նույն տեղում էջ 104:

⁶ Նույն տեղում, էջ 105:

գործիչներից էր, որ երկու անգամ եղան Արևմտյան Հայաստանում՝ 1914 և 1915 թվականներին: Նա իր աչքերով տեսավ հայ ժողովրդի մեծագույն ողբերությունը:

Երբ 1915 թվականի ապրիլին Թիֆլիս է հասնում կոտորածի բոթը, Թումանյանն առաջինն է ձեռնամուխ լինում հայ գրողների ընկերությանը կոչ գրել, հրապարակել և աշխարհի տարբեր երկրների գրողներին իմաց տալ¹: Բռնկուն բնավորության տեր Թումանյանն այնքան է ոգևորվում, որ հրապարակում է մայիսի 10-ին «Վան ու Երևան» հոդվածը: Մեծ լավատեսն այնպես էր մտածում, թե ամեն ինչ վճռվեց հոգուտ հայության²:

1915 թ. հունիսի վերջին Բայազետ, Բերկրի, Վան, Իզմիր ուղևորությունից ստացած ծանր տպավորություններից վշտացած և հյուծված՝ Թումանյանը վերադառնում է Թիֆլիս: Հուլիսի 23-ին Թիֆլիսի ամառանոցում հիվանդ Թումանյանին է հասնում բոթը. Վանը հանձնվել է թշնամուն, և ծովածավալ գաղթականությունը բռնել է Իզմիրի և Էջմիածնի ճամփան³:

Այդ տարիների ընթացքում նա պահում էր օրագրեր, որոնք այսօր էլ ցեղասպանության պատմությունը համար շատ կարևոր և բացառիկ վավերագրեր են:

Օրագրերում վերակենդանանում է ծանր տարիների պատկերը՝ կոտորածներ, թուրքերի դաժանությունների վկայություններ, հայ որբերի ճակատագրեր:

1915 թվականին է գրել «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը: Ո՞վ կարող էր 1915-ին ասել՝ «իմ նոր հայրենիք, հզոր հայրենիք»: Այդ տարիներին բոլորի շուրթերից անեծք էր հնչում, մոայլություն էր տիրում, իսկ Թումանյանն ասում էր. **«Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով, Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով»**⁴:

Նա պետք է լինե՛ր այնտեղ, որտեղ հայ ժողովուրդն էր: Հուլիսի 30-ին Թումանյանն իր դստեր՝ Նվարդի հետ արդեն Էջմիածնում էր⁵:

Նա անմիջապես ստանձնում է գաղթականների և որբերի օթևանի, խնամքի, նրանց սնունդով ապահովելու գործը: Թումանյանի հաստատուն ջանքերի շնորհիվ բացվում են 5 հիվանդանոց՝ 500 մահճակալով, որբանոց՝ 3000 երեխայի համար⁶: Թումանյանն այդ փոքրիկ, բախտահալած որբերի պաշտպանն ու գուրգուրացողն է եղել, և նրանց կողմից անվանվել է «մեծ բանաստեղծ հայրիկ»:

Թումանյանը Էջմիածնի տպարանի դահլիճը ևս ծառայեցնում է որպես պահեստ՝ օգնություն եկող մթերքի և հագուստի համար: Օգոստոսի առաջին

¹ Զ. Թումանյան, Ընտիր երկերի ժողովածու, I հատոր, «Սովետական գրող» հրատարակչություն, 1985, էջ 22:

² Լ. Հախվերդյան, Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը, էջ 14:

³ Նույն տեղում, էջ 15:

⁴ Նույն տեղում, էջ 22:

⁵ Զ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 8, Երևան, 1999, էջ 405:

⁶ Լ. Հախվերդյան, Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը, էջ 267:

օրերին ճեմարանում ապաստանել էին 2000 որբ երեխա, մինչդեռ ննջարանը կարող էր տեղավորել միայն 405-ին:¹

Պոետն իր վրա վերցրեց 1915 թ. հունիս-օգոստոս ամիսներին Հայաստան ոտք դրած գրեթե բոլոր հայրենագուրկ որբերի ապաստանի հոգածության հարցը: Էջմիածնի վանքի բակում տասնյակ հազարավոր գաղթականներ էին՝ տառապանքի, զարհուրանքի պատկերները դրոշմված դեմքերին: Գաղթականության մեջ մոլեգնող տարբեր հիվանդությունների համաճարակն ամեն օր բազմաթիվ մարդկանց մահվան պատճառ էր դառնում: Թումանյանը դստեր՝ Նվարդի հետ շրջանցեց այդ վտանգը՝ անմնացորդ նվիրվելով որբերի փրկության գործին:²

Թումանյանին և այդ օրերի մղձավանջային պատկերները ներկայացնում են բանաստեղծի «Էջմիածնում ծոցատետրային» գրառումները, «Հիշողություններ Էջմիածնի որբանոցից» հրապարակումը և Զապել Եսայանին գրած նամակը, Վահան Թոթովենցի, Նվարդ Եգիբյան Բաղդասարյանի, Նվարդ Թումանյանի հուշերը³:

Թումանյանի՝ Էջմիածնում ծավալած գործունեությունը ծանր ու տառապալից է եղել: Լեոն գրել է. «Հովհաննես Թումանյանն այդ դժոխքի մեջ է գործում, բարեբախտաբար չի գժվում»: Իսկ Զապել Եսայանին գրած նամակում ակնհայտ է դառնում գրողի ծանր վիճակը. «... Մի ծանր թախիծ ճնշում է սիրտս շարունակ: Շատ բան է խորտակվել ինձ համար աշխարհքում, և աշխարհքը շատ ցավերով է լցված արդեն: Շատ բան կա, որ էլ չեմ սիրում, բաներ էլ կան, որ սիրում եմ, բայց տեսնել չեմ կարող: Օրինակ, էն օրվանից հետո, որ տեսա մորս՝ սպանված եղբորս դիակի վրա, և մյուս սպանված եղբորս (սպային) էլ թաքցրինք, որ նա չիմանա, այլևս չեմ կարողանում տեսնել նրան- իմ մորը»⁴:

Թումանյանը որբախնամ գործունեությունից զատ, Էջմիածնում զբաղվում է նաև որբահավաք գործունեությամբ: Նա ամեն վայրկյան ականատես էր լինում սահմոկեցուցիչ տեսարանների. նա անձամբ ինքն էր խնամում ու դարմանում ոչ միայն ծնողներից հեռու երեխաներին, այլ նաև իրենց հայրենի տնից զրկված մանուկներին⁵:

Հազարավոր որբեր զգացին նրա հոգատարությունը: Թումանյանը նույնիսկ իր վրա էր վերցրել որբերի տեղափոխումը՝ ուշադրություն դարձնելով նրանց

¹ Մ. Հովհաննիսյան, Վեմ համահայկական հանդես, Թ (ԺԵ) տարի, թիվ 2 (58), ապրիլ-հունիս, 2017, էջ 126:

² Նույն տեղում, էջ 124:

³ Ավելի մանրամասն տե՛ս, Լ. Հախվերդյան, Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը, էջ 205-206:

⁴ Լ. Հախվերդյան, Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը, էջ 19:

⁵ Մ. Հովհաննիսյան, Վեմ համահայկական հանդես, Թ (ԺԵ) տարի, թիվ 2 (58), էջ 135:

ուսմանն ու դաստիարակությանը: Նա նույնիսկ տեղ չլինելու հանգամանքով երեխաներին տեղավորում էր Էջմիածնի հարակից գյուղերի տներում¹:

Երեխաներից շատերը Թումանյանին հայրիկ էին կոչում: Թումանյանի գրառումներից մեկում կարդում ենք. «Երեխաներից ոմանք էնպես են սովորել, որ ճաշելուց հետո էլ փեշերս բռնում են (թեև հագնված են, պատսպարված և կերակրված) հայրիկ ես որբ եմ, նա հեր ունեի, նա մեր»: «...Որ ասում էին նոր շորեր պիտի կարենք ձեզ համար, էստեղից-էնտեղից գլուխ էին բարձրացնում. – Հայրի՛կ, ինձ համար կարմիր հալավ կարեցե՛ք...»²:

Իր օրագրում Թումանյանը հավաստում է, որ որբանոցի երեխաներից հիվանդանում էին միայն այն երեխաները, որոնք դրսից այցելող ծնողներ ունեին. **«Երեխաների մեջ հիվանդության դեպքեր պատահում են գրեթե բացառապես նրանց մեջ, որոնք հեր ու մեր ունեն – գնում են գալիս... որբերի մեջ ոչ մի հիվանդություն չկա»**³:

Շատ ուշագրավ են Նվարդ Թումանյանի հուշերը. «Օգոստոսի 19-ի գիշերն էր: Արարատյան դաշտի անմոռանալի ծանր գիշերը... Հայրիկս սև թիկնոցով, կեպին գլխին, շտապ դուրս եկավ սենյակից՝ գաղթականությունը շենքերում պատսպարելու, վազում էր կետից կետ, վրանից վրան... մի մեռնողից դեպի ուրիշ մեռնողը: Կարգադրում էր, հրամայում, հայիոյում, կշտամբում, ժպտում, շոյում, զայրանում: Մի օր էլ, տեղատարափ անձրևին, նա վազեց, բռնի կերպով բաց արավ նոր կառուցվող հայրապետական վեհարանը, որը մինչ այդ անձեռնմխելի էր: Գաղթականները լցվեցին ներս: Զայրացած կաթողիկոսը կշտամբում է պոետին, ասելով. – Դուք գիտեք, որ ես Ամենայն Հայոց Կաթողիկոսն եմ... Թումանյանը պատասխանում է. – Գիտեք, որ ես էլ Ամենայն Հայոց Բանաստեղծն եմ»⁴:

Սա թերևս ամենամեծ գնահատականն է, որին ականա արժանացրել է ինքն իրեն բանաստեղծը: Եվ ամենայն հայոց բանաստեղծն է, որ ուներ իր ժողովրդին հոգեհանգիստ կարդալու բարոյական մեծ իրավունքը.

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ,
Մասիսի նրման,
Կանչեցի թըշվատ էն հոգիներին՝ ցրված հավիտյան
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ...
— Հանգե՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կը մնա...⁵

¹ Նույն տեղում, էջ 136:

² **Հ. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 8, էջ 408-409:

³ **Ս. Հովհաննիսյան**, Վեմ համահայկական հանդես, Թ (ԺԵ) տարի, թիվ 2 (58), էջ 142-143:

⁴ **Լ. Հախվերդյան**, Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը, էջ 263:

⁵ **Հ. Թումանյան**, Ընտիր երկերի ժողովածու, I հատոր, էջ 23:

1915 թ. Թիֆլիսում Թումանյանի հորդորների և ջանքերի շնորհիվ բացվում է «Հայ օրիորդների կոմիտեն»¹, որի ակտիվ անդամներից էր Նվարդը²: Նպատակն այն էր, որ հայ կանայք և աղջիկները դառնան գրության քույրեր և լինեն Էջմիածնում: Նա իր դստեր օրինակով փորձում էր համոզել՝ գաղթականների և որբերի խնամքի գործը խիստ կարևոր է:

Թումանյանը երախտագիտությամբ է մտաբերում մղձավանջային օրերին որբախնամ գործին նվիրված անձնվեր հայ կանանց: «...Հիշում եմ էն մանկական կմախքների խիտ-խիտ ու երկար շարքերը, երբ կերակրելու համար նստեցնում էին վերահսկող տիկիներն ու օրիորդները, որոնք ազատաբար ոգիների նման, անդադար պտտվում էին նրանց վրա, ոտից գլուխ ձերմակ վերնաշապիկներ հագած, ցավից՝ ու անտանելի ծանր օդից ու հոտից գունատված, դալկացած տիկիներն ու օրիորդները...»³:

Այդ պահապան հրեշտակների թվում էր նաև Թումանյանի դուստրը՝ Նվարդը, ով արհամարհելով ամեն մի դժվարություն, անձնվիրաբար ծառայում էր իր ժողովրդի փրկության գործին: Նվարդի հետ Էջմիածնում էին նաև նրա երեք ընկերուհիները, որոնք հոժարակամ ստանձնել էին գաղթականների կարիքները հոգալու գործը⁴:

Թումանյանն անձամբ կազմում է հիվանդ և առողջ երեխաների ցուցակները՝ առանձնահատուկ հոգածությամբ վերաբերվելով հիվանդ հայ որբերին⁵:

1915 թվականի գարնանը Հովհաննես Թումանյանը ձեռնամուխ է լինում նաև մանկապատանեկան հայրենագիտական խաղեր ստեղծելուն⁶: Բանաստեղծը կարևորում է նաև հայ մանուկների ժամանացն ու կրթությունը: Այդ մասին բանաստեղծը գրում է նամակներից մեկում. «...*Էսպես վշտի ժամանակ մարդիկ կան, որ իրենց գինուն են տալիս, մարդիկ կան՝ թղթախաղի կամ զանազան ուրիշ առաքինությունների, ես էլ ես բաներով եմ զբաղվում պարապ ժամանակս: Թե օգուտ չտան, վնաս իսկի հո չեն տալ*»⁷:

Բանաստեղծը ցանկանում էր, որ խաղերի միջոցով երեխաներն ու պատանիները ճանաչեն ու սիրեն իրենց հայրենիքը. «*Միրեն ոչ թե կույր ազգասերի սիրով, այլ գիտակից, ինտելիգենտ մարդու սիրով, որ սերն ազնիվ լինի, առողջ ու բովանդակալի*»⁸:

¹ Օրիորդների կոմիտեն աշխատում էր երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը՝ առավոտյան ժամը 11-ից մինչև 1-ը, երեկոյան՝ 17 մինչև 19-ը, տե՛ս, Հորիզոն, 1915, N 182, էջ 1:

² Լ. Կարապետյան, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, էջ 161:

³ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատոր 7, էջ 180:

⁴ Ս. Հովհաննիսյան, Վեմ համահայկական հանդես, Թ (ԺԵ) տարի, թիվ 2 (58), էջ 132:

⁵ Հ. Թումանյան 1869-1923, Արևելք-Արևմուտք մատենաշար, Երևան, 2014, էջ 226-227:

⁶ Նույն տեղում, էջ 232:

⁷ Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 10, Երևան, 1999, էջ 235:

⁸ Հ. Թումանյան, ԵԼԺ, հատոր 7, Երևան, 1995, էջ 208:

Մեծ է եղել բանաստեղծի դերը Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած նյութական և մարդկային կորուստները ցուցակագրելու գործում:

1917-1918 թթ. հայկական գրեթե բոլոր գավառներում գործում էին **«Հայրենակցական միություններ»**, որոնց խնդիրն էր օգնել պատերազմից տուժածներին և գաղթականներին, հավաքել հանգանակություններ, վարել բանակցություններ տարբեր կազմակերպությունների հետ, ինչպես նաև նպաստել հաշտության և խաղաղության գործին¹: Աշխատանքը կենտրոնացնելու և ճիշտ կազմակերպելու նպատակով 1918թ. մարտին Թիֆլիսում ստեղծվեց **«Հայրենակցական միությունների միություն»**, որի խորհրդի անդամ ընտրվեց Թումանյանը, այնուհետև 1918 թվականին՝ նոյեմբերի 21-ին, Թիֆլիսում գործող մի շարք հայրենակցական միությունների նախաձեռնության և նախապատրաստական որոշակի աշխատանքների արդյունքում ստեղծվում է **«Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողով»**, որի նախագահ է ընտրվում Հովհ. Թումանյանը: Նրա գլխավորությամբ հանձնաժողովը կարճ ժամանակաընթացքում կատարում է հերոսական աշխատանք. Կողոպտված և անօթևան հազարավոր հայերից հավաքում, խմբավորում, իրավական տեսքի է բերում հսկայածավալ փաստական նյութ և դրանք տրամադրում Փարիզում հրավիրվելիք Խաղաղության կոնֆերանսի պատվիրակությանը²:

1920 թվականի փետրվարին Վրաստանի հայոց ազգային խորհրդին կից կրկին բացվում է Հայ որբերի և գաղթականների հանգանակիչ կոմիտե, որը ղեկավարում էր ինքը³: Թումանյանի մարդասիրական գործունեությունը չավարտվեց միայն սեփական ազգի հանդեպ տածած հոգատարությամբ. նա, 1920 թվականին վաճառելով իր գրքերի հրատարակության իրավունքը, ստացած գումարի 10.000 ռուբլին հատկացրեց հայ որբերին, 10.000՝-ը՝ Վրաստանի երկրաշարժից տուժածներին նույնքան էլ՝ Ռուսաստանի սովյալներին⁴:

1921 թ. սեպտեմբերին ստեղծված Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) բարձրագույն գործադիր մարմնի նախագահի պաշտոնում Թումանյանը մեկնում է արտերկիր, պայմանավորվածություններ ձեռք բերում Հայաստանին օգնելու գործում, նոր թափ հաղորդում Հայաստանի օգնության միության (ՀՕԿ) գործունեությանը:

1922 թվականին վիճակը կտրուկ վատանում է:

¹ Լ. Կարապետյան, Թումանյանը և Հայոց հայրենակցական միությունների միությունը, Պատմա-բանասիրական հանդես, № 2, (2002), էջ 30:

² Անուշավան Զաքարյան, հայ ժողովրդի կորուստները առաջին աշխարհամարտի տարիներին, Երևան, 2005, էջ 8-9:

³ Մ. Հովհաննիսյան, Վեմ համահայկական հանդես, Թ (ԺԵ) տարի, թիվ 2 (58), էջ 147:

⁴ Հ. Թումանյան, ԵԼԺ, հատոր 8, 1999, էջ 653:

1923 թվականի մարտի 23-ին, երբ եկել էր ճակատագրական պահը, գավակներին ասել է. «Ղոչաղ կացեք...»: Սա եղավ բանաստեղծի արտաբերած վերջին խոսքը¹:

Ամփոփելով փաստենք, որ Թումանյանն ապրեց ոչ այնպես, ինչպես կուգենար, այլ այնպես, ինչպես թելադրում էր իր ժողովրդի ճակատագիրը, արեց ամեն ինչ, որ կարող էր՝ առանց իր կարողությունների սահմանն իմանալու: Համատարած ողբի և կոտորածի մթնոլորտում Թումանյանն իր առաքելությունը համարեց լինել Էջմիածնում՝ փրկել որբերին, նրանց փրկելով՝ ամոքել հայ ժողովրդի տառապանքը: Այդ են վկայում նաև մեծ մարդասերին ուղղված տասնյակից ավել խնդրագրերն ու շնորհակալագրերը:

Բանալի բառեր - Թումանյան, որբեր, ցեղասպանություն, Էջմիածին, երեխաներ, նամակներ:

Քրիստինե Նաջարյան, Հովհաննես Թումանյանի որբախնամ ու ազգային գործունեությունը ցեղասպանության տարիներին - Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի գրական ստեղծագործությունները յուրաքանչյուր հայի մանկության, պատանեկության և հասուն տարիքի մշտական ուղեկիցներն են: Բանաստեղծի ազնիվ հերոսների օրինակն արտացոլվել է մեր ժողովրդի տեսակի մեջ: Այս հոդվածը փորձ է՝ ներկայացնելու Հովհաննես Թումանյան բանաստեղծին՝ որպես հայրենասեր մարդու և նվիրյալի, ցույց տալու նրա անձնվեր ու մարդասիրական գործունեությունը Հայոց ցեղասպանության տարիներին:

Կարևորել ենք հատկապես անդրադարձը՝ 1915 թվականին Էջմիածնում ապաստանած հայ որբերի ծանր կեցությանն ու վիճակին և Թումանյանի՝ այդ գործում անգնահատելի դերակատարությունը:

Кристине Наджарян, Деятельность Ованнеса Туманяна во благо нации и уходу за сиротами в годы геноцида - Литературные произведения армянского поэта Ованнеса Туманяна сопровождают каждого армянина на протяжении всей. Пример честных, порядочных героев писателя отразился в образе нашего народа. Это статья – попытка представить поэта Ованнеса Туманяна как патриота, показать его самоотверженную и гуманитарную деятельность в годы Геноцида армян.

Важное значение в статье также придали тяжелому положению нашедших убежище в 1915 году в Эчмиадзине армянских сирот, и неоценимую роль О. Туманяна в этом деле.

¹ Հ. Թումանյան, ԸԵ, հատոր 1, 1985, էջ 28:

Kristine Najaryan, Hovannes Tumanyan's Orphan Care Activity during Genocide Years - The literary works of all-Armenian poet Hovannes Tumanyan are the constant companions of every Armenian fellow from childhood to adolescence and adult age. The example of the noble heroes of the poet has been reflected in our nation's kind. This article is an attempt to present the Hovannes Tumanyan the poet as a patriot and devout, to show his selfless devotion and humanitarian activities during the Armenian Genocide.

We particularly highlighted the tremendous situation and the condition of the Armenian orphans who were sheltered in Echmiadzin in 1915 and Tumanyan's invaluable role in organizing their help.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՆՈՒՆԵ ՄԿՐՏՁՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու,

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Հովհաննես Թումանյանի գրական-գեղարվեստական ժառանգությունից գատ ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում նաև նրա քաղաքական ու հասարակական կյանքը: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը նշում էր, որ թումանյանագիտության ամենաքիչ ուսումնասիրված բնագավառը գրողի հասարակական գործունեությունն է: Հայ ժողովրդի բուսահողից ծնված Թումանյանը չէր կարող մշտապես չլինել բոլոր ճակատագրական իրադարձությունների կենտրոնում: Ինչպես նկատում է Մանուկ Աբեղյանը. «Պ. Թումանյանի միտքն ու զգացմունքը զբաղվում են ավելի ժողովրդական աշխարհով... ժողովրդի կտրճական, քաջամարտիկ ոգու անկումը,- ահա այն խնդիրները, որոնք գրավել են բանաստեղծի ուշք ու միտքը, և որոնք գեղեցիկ արտահայտություն են գտել նրա գրվածքների մեջ...»:¹

Թումանյանի կյանքի մի զգալի մասն անցնում է ազգային վշտերի ու ողբերգությունների առաջադրած մտորումների ու խոհերի մեջ՝ բանաստեղծին պարտադրելով դառնալ ակնառու հասարակական գործիչ: Ավ. Իսահակյանը գրում էր՝ «Թումանյանը կյանքով բռնկված մարդ էր: Նրա էությունը ամբողջովին բաղձանք էր, տենչանք, ցանկություն: Ուզում էր և գրել, և հասարակական, և քաղաքական գործիչ լինել, այն էլ, իհարկե, առաջին կարգի»:²

Մեծ է Թումանյանի դերը ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած մարդկային և նյութական կորուստները արձանագրելու գործում: 1918թ. նոյեմբերի 21-ին Առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասները հաշվելու և Փարիզի հաշտության խորհրդաժողովին ներկայացնելու նպատակով ստեղծվում է «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողով», որը գլխավորում է Հայ հայրենակցական միությունների նախագահ Հ. Թումանյանը: Քննիչ հանձնաժողովին դիմում էին ոչ միայն տարբեր տարածքների բնակիչներ, այլև անհատներ՝ նշանավոր ճարտարապետ Թորոս Թորամանյանը (գործում առկա է ճարտարապետին պատճառած վնասների ցուցակը՝ գրված իր կողմից),³ անվանի հայագետ Երվանդ Տեր-Մինասյանը և ուրիշներ: Թումանյանն այնտեղ էր, որտեղ իր ժողովուրդն էր. «Գրողը պիտի իր ժողովրդի հետ կրի նրա նեղություններն ու վայելի նրա խնդությունները-այս էր Թումանյանի միտքը: Սա նրա լոգունգն էր...

¹ Մանուկ Աբեղյան, Երկեր, 7 հատոր, Երևան, 1975, էջ 362:

² Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1969, էջ 20:

³ ՀԱԱ, 1918, ֆոնդ 221, ցուցակ 1, գործ 53:

Նա իր ժամանակի ամենահասարակական գրողն էր...նրա ժամանակի հասարակությունն էլ նրան դիմում էր ամեն խնդրում...»:¹

Հայ կյանքն ալեկոծված էր արևմտահայերի ջարդերի սարսափելի լուրերով և ջարդերին ակնատես, փախած հայ գաղթականների սրտակեղեք պատմություններով. «Նա անվերջ տեսակցությունների մեջ էր ինտելիգենցիայի և հասարակության ներկայացուցիչների հետ, հետաքրքրվում էր գաղթականների վիճակով և տետրակներ էր լցնում նրանց պատմածներով»:²

Թումանյանը չէր կարող անտարբեր մնալ բնաջնջվող իր ժողովրդի ճակատագրի հանդեպ. «Որդեկորույս հայրը ներկայացրել էր ասկյարների կողմից երկու մանկահասակ երեխաներին իրենց գյուղից գողանալու և չվերադարձնելու փաստը. խնդրում էր միջամտել և հետ վերադարձնել իր զավակներին»:³

Ի՞նչ խոսքերով կարելի է նկարագրել այն զգացումները, որոնք բզկոտում էին Թումանյանի հոգին, երբ նա խորհում էր իր դժբախտ և հերոսական ազգի մասին. «Իմ սրտին շատ է ծանրանում էս ժողովրդի ճակատագիրը... Էն սոսկալի դրաման, որ կոչվում է հայոց պատմություն... և էս առաջ եմ գալիս...մի արյունոտ հողից, մի անօրինակ զարհուրելի պատմությունից, մի հոշոտված ժողովրդից, ուր ինձ բանաստեղծ է արել ճակատագիրը...»:⁴

XX դարասկզբին Թուրքիայում ասպարեզ եկած երիտթուրքերը շարունակեցին Աբդուլ Համիդի քաղաքականությունը՝ առավել խարդախ ու դաժան մեթոդներով: Սկիզբ առան այն սարսափները, որոնք իրենց հավասարը չունեն պատմության մեջ: Արևմտահայերի բռնագաղթը այլ բան չէր, քան քողարկված սպանդ: Թումանյանը ուսումնասիրում է Էրզրումից բերված ռազմագերիների ցուցմունքները. «Թուրքերը...առանձնացրել էին 40 հայ սպաների, որոնց տարբերել էին ազգանվամբ ու արտաքինով... առանց որևէ պատճառաբանության և բացատրության սպանում էին հայ զինվորներին»:⁵

Տեղահանության իսկական նպատակը թալանն ու ոչնչացումն էր: Իրականում դա բնաջնջման մի նոր եղանակ էր: Այս ամենը մտովի պատկերացնելն իսկ սահմոկեցուցիչ է, իսկ ի՞նչ էր զգում Մեծն Լոռեցին. «Այդ իրականության մեջ տառապող հայրենիքը, որին բանաստեղծը կապված էր հոգու ամենանուրբ և ամենասուրբ թելերով «զիշեր ու ցերեկ, հազար ցավերով, հազար ձևերով» («Նախերգանք») կանչում էր նրան (հատկանշական է, որ «Հառաջանք» պոեմի համար գրված այս «Նախերգանքը»-ը Թումանյանը հետագայում դարձրել է իր ողջ ստեղծագործության բնաբանը):⁶

¹ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969, էջ 41:

² Ավ. Բաախյան, Երկեր, 1951, հ. 4, էջ 65-66:

³ ՀԱԱ, 1918, ֆոնդ 221, ցուցակ 1, գործ 27:

⁴ Հովհ. Թումանյան, հ. 6, էջ 178:

⁵ ՀԱԱ, 1918, ֆոնդ 221, ցուցակ 1, գործ 87:

⁶ Արամ Բնձիկյան, Հովհ. Թումանյան, Կյանքի և ստեղծագործության պատմություն, Երևան, 1969, էջ 363-364:

Թումանյանը վերլուծում էր փաստերը և բնաջնջվող հայ ժողովրդի համար ելք էր փնտրում: Հասարակական կյանքով խորապես ապրող այդ մարդը շարունակ դեպքերի հորձանքների մեջ էր. «այդ օրերին նրա վիշտն անսահման էր»:¹

Թումանյանը կարծես դաս էր տալիս ապագա դիվանագետներին, հուշում և զգուշացնում: Աշխարհի լուռ ու անտարբեր հայացքի ներքո ոչնչացվում է մի ողջ ժողովուրդ՝ իր իսկ պատմական հայրենիքում. «...տաճկահայ ժողովուրդն իր հարցով նույնպես եղել է եվրոպական պետությունների հակամարտության դժբախտ զոհերից մեկը, և անպայման ամենադժբախտը»:²

Հովհաննես Թումանյանը ուսումնասիրում էր Ալեքսանդրապոլի գավառի մի շարք գյուղերի բնակիչների կորուստների մասին ցուցակները, ինչպես նաև Ուլուխանլու կայարանում թուրքերի կողմից գնացքի թալանման ու վայրագությունների մասին գրությունները, Թիֆլիսի նահանգի Ղարապազ գյուղի 8 հայ ընտանիքների խնդրագրերը, որոնցում նշված էր, որ «35-40 տարվա դառը քրտինքով և տանջանքով վաստակը՝ ոսկյա և արծաթյա իրեր, կահ-կարասի, թուրքերը թալանել են, իսկ իրենք մի կերպ փախչել են: Եվ ահա 3 ամիս է ոչ ոք չի հետաքրքրվում նրանց անելանելի ու ծանր վիճակով»:³

Համաշխարհային պատերազմի ընթացքում որևէ մեկ այլ վայրում չցուցաբերվեցին հրդեհելու, ավերելու, կողոպտելու այնքան մոլեգին արարքներ, ինչպիսիք տեղի ունեցան Հայաստանում: Ալեքսանդրապոլի գավառի Ալուխան գյուղի բնակիչները Թումանյանին խնդրում էին փրկել իրենց և ներկայացնում էին «գորքի ձեռով և խուժանի ձեռով» կատարած ավերածությունների չափերը. «Ալեքսանդրապոլի գավառի գյուղերում կային գերիներ և մարդկային զոհեր: Կային մեծ քանակությամբ բռնաբարված կանայք և երեխաներ»:⁴

Մեծն Լոռեցին ցավով նշում էր Գանձակի, Շուշիի գյուղերի բնակիչների կորուստների մասին. «Գանձակի նահանգի Շուշու գավառի Շոշ գյուղից հայտարարություն ստացվեց, որ 1918թ.-ի հոկտեմբերի 1-ին Շուշի քաղաքի գրավումից հետո Տաճկական և Ադրբեջանական 1-ին դիվիզիայի հրամանատար Ջեմիր Ջեհիր բեյը, Հասան Էֆենդի Բասրի բեյը և Խոսրով բեկ Ֆոլատովը պահանջ դրեցին հայերին ճանաչել Ադրբեջանի իշխանությունը և հանձնել զենքերը»:⁵

Հայ ժողովրդի ողբերգությունն աննախադեպ իրադարձություն էր մարդկության պատմության մեջ: Ամենայն հայոց բանաստեղծը չէր կարող չանդրադառնալ Ախլալաքում բարբարոս սպանության պատկերներին, անմարդկային տառապանքների նկարագրություններին. «Ախլալաք քաղաքում պատահմամբ մնացել էին 1000 հոգու չափ ծերեր, կանայք և երեխաներ:

¹ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969, էջ 120:

² **Հովհ. Թումանյան**, Երկերի ժողովածու, Ե., 1954, հ. 4, էջ 169-171:

³ ՀԱԱ, 1918, ֆոնդ 221, ցուցակ 1, գործ 26:

⁴ ՀԱԱ, 1918, ֆոնդ 221, ցուցակ 1, գործ 89:

⁵ ՀԱԱ, 1918, ֆոնդ 221, ցուցակ 1, գործ 88:

Կանանցից և երեխաներից շատերին բռնաբարելուց հետո տաճիկները այդ 1000 հոգուն գավառից վոնդեցին Բաքուրիան, նրանցից շատերը, չղիմանալով իրենց կրած տառապանքներին, մահանում էին Բաքուրիանի անտառներում...»:¹

Դա սպանդ էր, մի ողջ ժողովրդի աննախադեպ ջարդ. «70.000 փախստականներից շատերը մեռնում էին, և այդ թիվը օր ավուր աճում էր: Կոտորվեցին 3000 անմեղ, անզեն ծերեր, կանայք, երեխաներ և քիչ թվով երիտասարդ տղամարդիկ: Մահն ամենից հեշտությամբ հնձում էր ծերերին, և մանավանդ երեխաներին, որոնք կաթ չէին գտնում իրենց մայրերի չորացած ստինքներում: Ծալկան ու Բաքուրիան դարձան շատ հայերի գերեզմանը»:²

Որպես Բյուրոյի հիմնադիրներից մեկը՝ Թումանյանը քաջատեղյակ էր զարգացող իրադարձություններին և գիտեր, որ ապագայի հանդեպ հուսապարար ակնկալությունը սրտերում՝ արևմտահայ բնակչությունը կամենում էր իր բախտը կապել Հայաստանի Հանրապետության հետ, ամենից առաջ այն պատճառով, որ հոգեպես չընկճված ազգի համար ազատությունը գերադասելի է ստրկությունից: Կյանքը գունաթափվել ու իմաստազրկվել էր: Անկումների ուղին տեսանելի էր առավել քան երբևէ. «Աբդուլ Համիդը կոտորեց 200.000 հայ: Երիտասարդ թուրքերի սահմանադրական կառավարությունը այդ թիվը հասցրեց 2.000.000 և ազատեց Տաճկահայաստանը հայերից»:³

Գերմանացի գիտնական Ալբերտ Էյնշտեյնը ցավով շեշտում է, որ հայ ժողովրդի ոչնչացումը մնում է և կմնա որպես ամենամեծ ողբերգություն, որը համայն մարդկության, այդ թվում և Գերմանիայի ամոթն է, քանի որ վերջինս, լինելով Օսմանյան Թուրքիայի առանջնաշնորհյալ դաշնակիցը, ոչինչ չի արել մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի կոտորածն արգելելու համար:

Տարիներ շարունակ մահվան ճանապարհով գնացող, Բայց կյանքի հույսով շնչող հայ ժողովուրդը և հայ մտավորականները համոզված էին, որ Եվրոպական ազգերի ներկայացուցիչները հայի դատին կմոտենան արդարությունն վերականգնելու նպատակով: Լեոն հիշում էր, որ Հովհ. Թումանյանի տանը կազմակերպվել էր մի նախաճաշ՝ «հայերին առատ ժպիտներ բաժանող» փոխհյուպատոս Դյուռուանի պատվին. «Ամեն խոստումներ էր անում մաքուր հագնված, եվրոպացու կնիքը ճակատին կրող մարդը, ինչպե՞ս չհավատար նրան մեզ պես մի ջարդված ու մանրված ժողովրդի մարդը», մանավանդ, երբ ասում էր՝ «սարի պես պաշտպանում է հայերին և հայոց հարցը»:⁴

Խորհում է գրողը՝ որտե՞ղ էր ավարտը: Մի՞թե վերջ չէր ունենալու դժբախտությունների այդ շղթան, որ խեղդալար դարձած՝ սեղմում ու սեղմում էր կյանքի պարանոցը՝ ապրելը վերածելով դժոխային տառապանքի. «Արգելվում էր

¹ ՀԱԱ, 1918, ֆոնդ 245, ցուցակ 2, գործ 3:

² ՀԱԱ, 1918, ֆոնդ 245, ցուցակ 2, գործ 3:

³ Նույն տեղում:

⁴ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969, էջ 99:

հոգուտ հայկական դատի խոսել, գրել, հանգանակություն անել, անցնել Արևմտյան Հայաստան, կամ այնտեղից՝ Կովկաս, օգնություն հասցնել թուրքական խժոժություններից փախած հայ գաղթականներին»:¹

Սակայն նաև զարմանալի լավատեսություն ուներ Մեծն Բանաստեղծը: Վարպետը հուզմունքով ներկայացնում էր՝ «Առհասարակ լավատեսությունը գերիշխում էր Օհաննեսի հոգում. ընկճվածությունը մի վայրկյան էր նրա մոտ: Հավատով էր մեր ճակատագրի հանդեպ և պայծառ հեռանկարներ էր տեսնում հայ ժողովրդի առաջ: Այս հավատը վարակեց և ինձ... »:²

Նույնիսկ այն ժամանակ, երբ եղեռնը արդեն իրողություն էր, նա գրում էր. «Էս ամենը լավ պետք է իմանա ամեն մի հայ ու միշտ հիշե, ոչ ոք հուսահատի ու վիհատի խոսքեր չպետք է անի, որ հատուկ է ձախորդ վայրկյանին, փորձությունը, ինչքան էլ մեծ լինի, պետք է տանենք արիությամբ ու վեր կենանք միասին, միահամուռ ուժերով դիմագրավելու մեր վատթար թշնամիներին և դարման տանենք ընդհանուր ազգային աղետին հանգիստ ու լիքը՝ մոտիկ լավագույն ապագայի անսասան հավատով»:³

Թումանյանը, երբեք չի կորցնում ապագայի հույսը, չի հուսահատվում, հիասթափությունն ու հոգեկլկումները չեն դառնում նրա ուղեկիցները: Նա պատերազմի օրերին լինում է ռազմաճակատում, քաջալերում անձնագոհ պայքարող մարտիկներին, լինում է Վանում, Էջմիածնում և հայաբնակ շատ այլ վայրերում: Հովհ.Թումանյանը իրեն ծնող ժողովրդի Բանաստեղծը, արտահայտիչն ու թարգմանն էր: «...Եթե չլինեին Էջմիածնում անցկացրած մղձավանջային ամիսները, 1914-1915թթ. Արևմտյան Հայաստան կատարած ճամփորդությունները, չէին ծնվի Թումանյանի «Հոգեհանգիստն» ու «Հայրենիքիս հետը», իսկ եթե նա չլսեր դժոխային տեսարանների ականատեսների, հատկապես Մարտիրոս վարժապետի՝ կոտորածների զարհուրանքների նկարագրությունները, չէր գրի «Դժոխքի հանդեպը...»:⁴

Հովհ. Թումանյանի անսահման հավատը հայ ժողովրդի «լավագույն ապագայի» նկատմամբ իր արտահայտությունն է գտել նաև գրողի գործերում (Մենք միշտ անսասան առաջ պիտի գնանք, Ինչքան մեր ճամբան լինի ահարկու): «Յուրաքանչյուր գրողի ծայրահեղ ապրումները պայմանավորված են կյանքի կոնկրետ հանգամանքներով, և շատ հաճախ դրանք նպաստում են մեծարժեք ստեղծագործությունների երևան գալուն»:⁵

¹ Արամ Ինձիկյան, Հովհաննես Թումանյան, Կյանքի և ստեղծագործության պատմություն, Երևան, 1969, էջ 362:

² Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Հայկական ՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1969, էջ 10:

³ Հախվերդյան Լ., Թումանյանը և իր ժամանակը, Ե., 1995, էջ 50:

⁴ Սուսաննա Հովհաննիսյան, Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմությունը (1900-1912թթ.), Երևան, 2012, էջ 7:

⁵ Նույն տեղում:

Մենն Լոռեցիին հավատում էր հայ ժողովրդի վաղվա օրվան և նշում, որ անհնար է միշտ բարուն, լույսին, սուրբ բարձունքներին ծառայած մի ժողովուրդ վերանա աշխարհի երեսից: Նա համոզված էր, որ թեպետ Հայաստանը վերջին շունչն է փչում, բայց նա կվերածնվի, կհառնի որպես փյունիկ և աշխարհին կապացուցի, որ մի ժողովուրդ, որը չի ցանկանում մեռնել, չի մեռնում. նրանից դեռ ծնվելու է մի ամբողջ հերոսական սերունդ:

Բանալի բառեր - Քննիչ բյուրո, եղեռն, նահատակվող ժողովուրդ, բեկորների փրկություն, կհառնի որպես փյունիկ:

Նունե Մկրտչյան, Հովհաննես Թումանյանը հասարակական գործիչ - Մենն է Թումանյանի դերը ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած նյութական և մարդկային կորուստները արձանագրելու գործում: Առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասները հաշվելու և Փարիզի հաշտության խորհրդաժողովին ներկայացնելու նպատակով ստեղծվում է «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողով», որը գլխավորում է Հայ հայրենակցական միությունների նախագահ Հ. Թումանյանը:

Մենն Լոռեցիին հավատում էր հայ ժողովրդի վաղվա օրվան և նշում, որ անհնար է միշտ բարուն, լույսին, սուրբ բարձունքներին ծառայած մի ժողովուրդ վերանա աշխարհի երեսից: Հ. Թումանյանը համոզված էր, որ թեպետ Հայաստանը վերջին շունչն է փչում, բայց նա կվերածնվի, կհառնի որպես փյունիկ և աշխարհին կապացուցի, որ մի ժողովուրդ, որը չի ցանկանում մեռնել, չի մեռնում, նրանից դեռ ծնվելու է մի հերոսական սերունդ:

Нуне Мкртчян, Ованес Туманян общественный деятель - Огромную роль играл Туманян для армянского народа, записав материальные и человеческие потери в следствие геноцида. В 1-ой отечественной войне для защиты потерь армянского народа и участие в Парижском госсоведе создается всемирная комиссия, которую руководил президент армянского отечественного союза Туманян. Великий Лореец верит в завтрашний день армянского народа и отмечал, что невозможно, чтобы пропал с лица земли тот народ, который всегда служил добру, свету и святым вершинам.

О. Туманян был уверен, что несмотря на то, что Армения испускала последний вдох, но она возратдется как феникс и миру докажет, что та нация, которая не хочет умирать, не умрет. От них еще родится целое героическое поколение.

Nune Mkrtchyan, Hovhannes Tumanyan a public figure - The role of Tumanyan is too great in human and material losses during the Holocaust.

In order to accumulate the great human losses of Armenians during the Holocaust and in order to represent in Paris Solidarity Council is formed "The investigating Council of Armenian Human losses during the World War". The great Lorets believed in the coming day of armenian nation and mentioned, which is impossible for the light and kindness to the nation which served to the wholly heights.

H. Tumanyan was sure that in spite of the fact that Armenia gives its last breath, but it will survive and will prove the hole world, that a nation which doesn't like to die, doesn't die, from which a new heroic nation is going to be born.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԽԱՂԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻ

ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

ԵՎԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. Գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՀԱՍՄԻԿ ԱԲԵՂՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. Գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Հովհաննես Թումանյանի մանկական ստեղծագործությունները մշտապես եղել են թե՛ ժամանակի, թե՛ հետագա թումանյանագիտության ուշադրության կենտրոնում: Բազմաթիվ հոդվածներ, աշխատություններ են նվիրվել բանաստեղծի մանկական երկերի քննությանն ու արժևորմանը, սակայն ուսումնասիրության առանձին նյութ չեն դարձել ժամանակակիցների՝ բանաստեղծի կազմած խաղերին վերաբերող արձագանքները, որոնցում առկա գնահատման չափանիշների և դրանց արդիական հնչեղության բացահայտումը կազմում է հոդվածի հիմնանպատակը:

Ի հակադրություն տարածված այն կարծիքի, թե մանուկների համար ստեղծագործելը տաղանդի և ժամանակի զուր վատնում է, հեշտ ու ժամանցային գործ, Թումանյանը համոզված պնդում էր, որ մանկական գործ ստեղծելը ամենաբարդ ու պատասխանատու գործն է. երեխայի հոգու հետ գործ ունենալ: «Մանկությունը մարդու կյանքի էն ամենաընդունակ շրջանն է, երբ նա չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ: Հետևաբար՝ շարունակ էլ պետք է սնունդ տալ նրան, որ միշտ աճի ու զարգանա... Միայն պետք է իմանալ, գտնել էս անսպառ սնունդ տալու ձևը»¹, - ասում է Թումանյանը՝ համոզված, որ մանուկների ու պատանիների դաստիարակության համար հոգևոր սնունդը պետք է լինի կատարյալ, բազմազան ու հետաքրքիր, երեխաների մտավոր ու հոգեկան հետաքրքրություններին ներդաշնակ ու առավելապես մատուցվի խաղերի ձևով:

Թումանյանի անվան հետ են կապվում հայրենագիտական խաղերը, որոնք նա ստեղծել է իր երեխաների հետ 1915 թ. հայ ժողովրդի համար ողբերգական մի ժամանակահատվածում: Առաջին հայացքից պարադոքս թվացող այդ իրողությունը իրականում ունի ողջամիտ բացատրություն: Աչքի առաջ ունենալով հայ երեխաների ֆիզիկական, մտավոր, ազգային նկարագրի

¹ **Հ. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 7, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1995, էջ 207:

խեղաթյուրումը՝ բանաստեղծը ձեռնամուխ է լինում խաղերի ստեղծմանը: Այդ ժամանակաշրջանում Թումանյանն առաջնային է համարում ապագա սերնդի ազգային-հայրենասիրական դաստիարակության խնդիրը, որի լուծման ամենաարդյունավետ ճանապարհը խաղն է. «Մեր պատմության էս սև ու դժբախտ ժամանակի շրջանում, շատ ու շատ լավ սովորությունների հետ, մենք թողել ենք և մեր ազգային գեղեցիկ ու իմաստալի խաղերը, մոռացել ենք նրանց ահագին նշանակությունն ու ազդեցությունը կյանքի մեջ»¹:

Թումանյանն անչափ կարևորում է խաղի դերը երեխայի բնավորության, հոգեբանության, մտածողության ձևավորման գործում: Խաղը կենսաբանական պահանջ է, որի ընթացքում ներդաշնակ և հետաքրքիր գործողությունների համակցությամբ իրականացվում են երևակայական մի շարք մտահղացումներ՝ նպաստելով ֆիզիկական, մտավոր, և հոգևոր-բարոյական զարգացմանը: «Խաղը նրա, մանուկ մարդու, բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է, - գրում է բանաստեղծը: - Խաղում է նրա մատաղ կյանքի ամեն մի մասնիկը, խաղում է նրա թրթռուն սիրտը ջահել կրծքի մեջ, ու կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, խաղով է քննում, խաղով է ճանաչում ու ընդունում: Դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամին բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում, առանց ձանձրանալու, առանց հոգնելու»²:

Ն. Թումանյանը հիշում է բանաստեղծի ջանքերը խաղերը կազմելիս. «Մեր տանը կազմեցինք «Մանուկ» ընկերությունը: Կարճ ժամանակում հայրիկի նախաձեռնությամբ և Արտիկի ղեկավարությամբ, ընկերությունը բավական բան արեց. կազմեցինք մի շարք հայկական խաղեր՝ թանկագին քարերի, աստղերի, գույների, հայոց գետերի, տառերի մասին»³: Թումանյանն այն կայուն համոզումն ուներ, որ և՛ գիտությունը, և՛ գեղարվեստը, և՛ գրականությունը երեխան պետք է սովորի մանկության տարիներին և ամենակարևորը՝ խաղով սովորի. «Ամեն ինչ կյանքում խաղ է ու հաճույք և կյանքում ամենալուրջ բանին էլ պիտի նայել որպես խաղի. էն ժամանակ մարդիկ մի բան կսովորեն, մի բան կստեղծեն հաճույքով»⁴: Բանաստեղծն էական մի դիտարկում է հավելում. յուրաքանչյուր բան հաճույքով ու խաղով անելու հարցում ամենամեծ ու կարևոր մասնակցությունը պետք է ունենա մայրը:

1915 թ. մարտին Փ. Վարդազարյանին ուղղված նամակում Թումանյանը գրում է. «Նկատելով, որ մեր աշխարհքից, մեր հայրենիքից կատարելապես անգետ ու անտեղյակ ենք առհասարակ, թե մեծերս, թե փոքրերը, և էն ժամանակ, երբ մենք դուրսը մեծ բաներից ենք խոսում՝ գալիս ենք տեսնում ներսը մեր

¹ Նույն տեղում, էջ 206:

² Նույն տեղում, էջ 208:

³ Ն. Թումանյան, Հուշեր և գրույցներ, Երևան, «Լույս» հրատ., 1969, էջ 122:

⁴ Նույն տեղում:

երեխեքը խորթանում են ավելի ևս ամեն հայկականից, մտածեցի ձեռնարկել, կազմել ու հրատարակել մի շարք հայրենագիտական և այլ տեսակի խաղեր, թե երեխաների, թե պատանիների և թե նույնիսկ մեծերի համար: Առայժմ դրանցից 4-ն եմ հրատարակել¹, չնայելով թղթի և ամեն բանի զարհուրելի թանկությանը»²:

Մանկան հետ տարբեր ձևերով խոսող բանաստեղծը (բանաստեղծություն, բալլադ, հեքիաթ և այլն) այս անգամ դիմում է «մանկավարժական, կրթական խաղի հրաշալի մեթոդին՝ ձգտելով «մեր մանուկներին մի բանով օգնած» լինելու՝ «հայանալու և մարդանալու»: Առանձին ուշադրություն է դարձնում հայրենագիտությանը: «Մտքումս դրել եմ,- հիշյալ նամակի վերջում գրում է Թումանյանը, - էնպես անեմ, որ մի երկու տարումը բոլոր հայ երեխաներին սովորցնեմ հայոց գետերի, քաղաքների, լեռների, լճերի և այլն - գոնե անունները»³: Երեխաները կծանոթանան իրենց հայրենիքին ու կսիրեն այն «ոչ թե կույր ազգասերի սիրով, այլ գիտակից, ինտելիգենտ մարդու սիրով, որ սերն ազնիվ լինի, առողջ ու բովանդակալի»⁴:

Թումանյանը մանկավարժ-հոգեբանի նրբանկատությամբ կրկնում է, որ խաղը մարդու, մասնավորապես երեխաների ոչ միայն կենսապահովման կարևորագույն ուժն է, հայրենիքը ճանաչելու և սիրելու բացառիկ գործոնը, ազգային-հայրենասիրական զգացումներ ձևավորելու խթանիչը, այլև ինքնադրսևորվելու հնարավորությունը: Երեխաներն իրենց ինքնությունությամբ և ստեղծագործելու ողջ կարողությամբ երևան են գալիս հենց խաղի ընթացքում. այդ ժամանակ նրանք լուրջ են ու պրպտող: Սա է այն հիմքը, որը հարկադրում է մանուկներին տրվելիք սնունդը մատուցել խաղի կամ նմանատիպ այլ միջոցներով:

Թումանյանի հայրենագիտական խաղերը գրավում են ոչ միայն երեխաների, այլև մամուլի ուշադրությունը: «Հորիզոնի» հմ. 111-ում տպագրվում է Հ. Էլիբեկյանի հաղորդումը՝ լույս տեսած խաղերի վերաբերյալ: Ողջունելով «Հայոց գետերը»՝ հոդվածագիրը բարձր է գնահատում ընկերության ձեռնարկումը և կարևորում «խելացի» խաղերի «մուտքը» հայ ընտանիքներ: «Ընդունելով, որ խաղը երեխայի կազմակերպման առաջին շրջանում էական դեր է կատարում և այն ամենը, ինչ որ խաղով է տրվում, հեշտ էլ յուրացվում է,- գրում է Էլիբեկյանը, - «Մանուկ» ընկերությունը նպատակ է դրել կրթական խաղերի, քարտեզների և բացատրական գրքույկների միջոցով ծանոթացնել երեխաներին

¹ 1915 թ. մարտի 19-ին «Հորիզոնը» տպագրում է հայտարարություն այն մասին, որ «Մանուկ» ընկերության հրատարակությամբ լույս են տեսել հետևյալ խաղերը՝ ա. Հայոց գետերը - Հայրենագիտական խաղ հայոց 69 գետերի՝ խաղաթղթերով, պատկերազարդ, բացատրական գրքույկով և քարտեզով, բ. Թանկագին քարեր - Քարերի խաղ բացատրական գրքույկով, գ. Սրամիտ նախրապանը - Տառերի խաղ: դ. Դղում- Գույների խաղ:

² Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 10, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 199, էջ 222:

³ Նույն տեղում, էջ 223:

⁴ Նույն տեղում:

մեր հայրենիքի լեռների, կենդանիների, բույսերի և բնական հարստությունների հետ: Նա որոշել է տալ նաև այնպիսի խաղեր, որ երեխաները տառեր, բառեր և նույնիսկ ոճեր սովորեն: Առաջին գործը իր բովանդակությամբ, շքեղությամբ և ճոխությամբ ցույց է տալիս, որ նրա մյուս ձեռնարկություններն էլ լինելու են հետաքրքիր և չափազանց շահեկան»¹: Հոգվածագիրն ընդգծում է խաղերի ներգործուն ուժը. երեխայի առօրյան պետք է լցնել օգտակար և հետաքրքիր բաներով՝ կտրելով նրան փողոցից և իմաստավորելով ժամանակը: «Հայոց գետերը» հետաքրքիր կլինեն մանավանդ մեր ծխական դպրոցների Գ. պատրաստականի աշակերտների համար, որոնք, անցնելով հայրենագիտություն, ձեռքի տակ չունին ոչ հայերեն քարտեզ և ոչ էլ որևէ հայրենասիրական գրքույկ»², նկատում է Էլիֆեկյանը:

1915 թ. հունիսի 10-ի նամակում Յ. Խանգադյանը իր հավանությունն է արտահայտում խաղերի վերաբերյալ, սակայն ցավով արձանագրում է՝ առաջիկայում չի կարող գրախոսությամբ հանդես գալ. «հոգեկան ապրումները թույլ չեն տալիս»³: Հուլիսի կեսերին Ն. Թումանյանին գրած նամակում Վ. Տերյանը ջերմ ողջույններն է ուղարկում Մանուկ ընկերությանը և նկատում է, որ իրեն «շատ դուր եկան»⁴ խաղերը:

«Արև» թերթի հմ. 68-ում Խ. ստորագրությամբ (Բորյան Խորեն) տպագրվում է փոքրիկ գրախոսական: Արժևորելով «Խաղերի» ուսուցողական, դաստիարակչական նշանակությունը և ծանուցելով, որ հեղինակը դրանք հանձնարարում է դպրոցներին և ընտանիքներին՝ գրախոսը մասնավորապես գրում է. «Ճշմարիտ է, հրատարակության այս հինգ համարները (1.Հայոց գետերը, 2.Թանկագին քարեր, 3.Սրամիտ հովիվը, 4.Դդում, 5.Հայոց լճերը) չունեն ներքին ուժեղ կապ և ընդհանուր պատկեր, բայց և այնպես նրանցից յուրաքանչյուրն առանձնապես իր գաղափարը ըմբռնելի է դարձնում մանուկների համար»⁵: Կարծում ենք, այսօրինակ խաղերի նպատակային ուղղվածությունը չի պարտադրում առարկայական, տեսանելի ամբողջականություն: Այս խաղերի աղերսները շատ ավելի կարևոր նպատակներ ու խնդիրներ են հետապնդում, որոնք մատնանշվում ու գնահատվում են մեկ այլ գրախոսի կողմից:

1916 թ. հունվարին տպագրվում է սովորածավալ գրախոսական՝ նվիրված «Մանուկ» ընկերության՝ հրապարակ հանած նոր խաղերի շարքին: Ուշագրավ է, որ Խաչենցի ստորագրությամբ հեղինակը բավական հիմնավոր դիտարկումներ է կատարում՝ ընդգծելով խաղերի համադրական ու համակարգված բնույթը: Հստ գրախոսի՝ շարքն «իր մեջ գեղեցիկ կերպով համախմբել է մանկավարժական մի

¹ «Հորիզոն», հմ. 111, Թիֆլիս, 1915:

² Նույն տեղում:

³ Գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի ֆոնդ, 1362:

⁴ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հտ. 4, Երևան, «Սովետական գրող» հրատ. 1979, էջ 215:

⁵ «Արև», հմ. 68, Բաքու, 1915:

շարք առողջ տարրեր, որոնցից զատ ունի և դաստիարակչական, կրթական, գրական, բարոյական ու հայրենագիտական նշանակություն»¹: Ընդհանուր բնութագրին հետևում են խաղերի կիրարկման գործառնության վերլուծությունները:

Ամենայն հավանականությամբ ծանոթ լինելով տարիքային հոգեբանության և մանկավարժության համաշխարհային փորձին ու հիմնական դրույթներին՝ Խաչենցին այդ համատեքստում անդրադառնում է երեխաների դաստիարակության առկա ոչ ճիշտ համակարգին, քննադատում այն միտումները, որոնք ստիպում են մանկանը «հակառակ գնալ իր մանկական բնույթին, իր հոգեբանությանը»²: Երեխան պետք է մեծանա բնականոն և աստիճանական զարգացմամբ: Հիշեցնելով ֆրանսիացի մեծ մանկավարժ, փիլիսոփա, գրող Ժան-ժակ Ռուսոյի հայտնի միտքը, թե «ո՞վ է ասում, թե մանուկը պետք է ապրի մեծ մարդ դառնալու համար»՝ Խաչենցին հաստատում է, որ «ոչ մի հասակ նպատակ չէ մի այլ հասակի». յուրաքանչյուր տարիք պահանջում է առանձնահատուկ մոտեցում և վերաբերմունք, համակողմանի ճանաչողություն: Ականավոր մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին, դիմելով մանկավարժներին ու դաստիարակներին, գրում է. «Ուսումնասիրեցեք այն հոգեկան երևույթների օրենքները, որոնք դուք ցանկանում եք կառավարել, և գործեցեք՝ հաշվի առնելով այն օրենքներն ու հանգամանքները, որոնցում դրանք ցանկանում եք կիրառել»³: Այս տեսանկյունից գնահատելով «Մանուկ» ընկերության նախաձեռնությունը՝ գրախոսը ինքն էլ կարևորում է խաղի արժեքն ու դերը մանուկների դաստիարակության գործում: Խաղի ժամանակ երեխան իրեն ոչ միայն զգում է միանգամայն ազատ, այլև երևան է բերում ինքնուրույնություն և ստեղծագործ միտք, նա «բոլոր խաղերի ընթացքում լուրջ է ու որոնող»: Խաղն առաջ է բերում ընկերներին գերազանցելու ձգտում, ուստի և կենտոնացնում է խաղացող երեխաների հոգեկան ու մտավոր ուժերը: Սա դժվար, բայց ցանկալի կարգավիճակն է, որին պետք է հասցնել: Խաչենցին համոզված է, որ հոգեբանական այդ «կենտրոնացումը ուժեղացնում և արագացնում է ըմբռնման ընթացքը. բացի դրանից նա ապացույց է, որ մանուկը հասկանում է իր անելիքը, ուրեմն այդ կամ պարզ է կամ ծանոթ: Պարզն ու ծանոթը վերը հիշած պայմանների հետ թե՛ են տալիս մանուկի հետաքրքրությանը և նա սրընթաց ու ստեղծագործող անցնում է մինչև մյուս ծայրը՝ առանց ձանձրույթ ու հոգնություն զգալու»⁴: Այս սկզբունքով առաջնորդվող «Մանուկ» ընկերությունը կարող է հասնել իր նպատակին: Ավելին, խաղերի մեծ մասը հանձնարարելի է նաև մեծահասակներին, որոնք մանկության տարիներին չեն հասցրել ծանոթանալ հայրենի երկրի գետերին:

¹ «Հորիզոն», հմ. 17, 1916:

² Նույն տեղում:

³ Ушинский К. Д., Собр. соч., т. 8, М-Л., Изд-во АПН РСФСР, 1950, с. 55.

⁴ «Հորիզոն», հմ. 23, 1916:

Գրախոսն առանձին ուշադրություն է դարձնում «Հայոց գետերը» գրքույկի կառուցվածային բովանդակությանը, ինչը մանկավարժության ու հոգեբանության տեսանկյունից հիմնավորված և արդարացված է: «Այս գրքույկի մեջ խոսում են ու պատմում հայ մանուկին հայոց գետերի մասին հայ վիպագիրը, պատմագիրը, ազգագրագետը, ճանապարհորդն ու բանաստեղծը: Այս բազմաթիվ անձանց բազմաձև պատմածները միատեսակ գետերի մասին մտապատկերների մի ամուր ու երկար շղթա են ստեղծում մանուկի համար, մտապատկերներ, որոնք եթե ոչ ընդմիջտ, գոնե երկար ժամանակ չեն ջնջվի նրա մտքից»¹:

Խաչենցին խորագիտորեն մատնանշում է գրքի արժեքը բարձրացնող և նրա առավելությունն ընդգծող այլ գործառնություններ. ծառայելով իբրև աշխարհագրություն սովորեցնելու գործիք՝ գրքույկը միաժամանակ իրականացնում է այլ նպատակներ ևս. «Մանուկը, փոխանակ հաճախ մի անշնորհք և չոր ու ցամաք դասագիրք կազմողի լեզուն կարդալու, կարդում է մեր շնորհալի գրողների լեզվի նմուշները. ծանոթանում է նրանց գեղեցիկ ոճաբանությանը և բանաստեղծական նկարագրությունները ավելի պատկերավոր են դարձնում նրա համար նյութը: Աշխարհագրության հետ նա սովորում է մասամբ լեզու, մասամբ գրականություն, մասամբ պատմություն և այլն: Հայաստանի աշխարհագրության ուսուցիչներին մասնավորապես, և հայ մանուկներին ընդհանրապես մեծ ծառայություն կարող է անել այս գրքույկով «Մանուկ» ընկերությունը»²: Խաչենցին առանձին անդրադառնում է խաղերին, յուրաքանչյուրի դեպքում նշում առավելությունները, ինչ-ինչ փոքրիկ թերություններ և հույս հայտնում՝ հայ ծնողները, դաստիարակներն ու ուսուցիչները մեծապես կօգտագործեն խաղերը:

Ինչպես նկատում ենք, ժամանակակիցները բարձր են գնահատում Թումանյանի խաղերը՝ դրանք դիտելով իբրև երեխաների կրթության, հայրենիքը ճանաչելու, հաճելի ոգտակարի հետ համատեղելու հրաշալի միջոցներ: Այսօր էլ բանաստեղծի կազմած խաղերը մեծ հետաքրքրությամբ են ընդունվում երեխաների, նաև մեծահասակների կողմից: Սակայն, ցավոք, դրանք չունեն կիրառության այն հաճախականությունը, ինչն իրապես կարող էր հանգեցնել ցանկալի արդյունքի: Սակայն միանգամայն համոզված կարող ենք պնդել, որ Թումանյանի կազմած խաղերի ներմուծումը դպրոց, մասնավորապես տարրական օղակ, առավել արդյունավետ ու հետաքրքիր կդարձնի ուսումնառության գործընթացը, մասնավորապես «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների շրջանակներում:

21-րդ դարի հրամայականով կրթության ոլորտում մեկը մյուսին փոխարինելու են գալիս մանկավարժահոգեբանական հիմնավորում ունեցող

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

տարբեր մեթոդներ և միջոցներ, որոնք տարեցտարի նորացվում են, փոփոխվում: Հ. Թումանյանի հայրենագիտական խաղերը՝ իբրև արժեքավոր նյութեր, կարող են ուսումնասիրվել և ուսուցանվել այդ առաջադեմ մեթոդների կիրառման տեսանկյունից:

Ըստ Հ. Գարդների «Բազմակի զարգացումների տեսության»՝ ճիշտ ուսուցումը երեխայի մեջ կարող է ձևավորել ու զարգացնել ութ հիմնական կարողություններ՝ լեզվական, տրամաբանական-մաթեմատիկական, տարածական, շարժողական, երաժշտական, միջանձնային, ներանձնային և բնության ու շրջակա միջավայրի ճանաչողություն: Գրողի և նրա զավակների կազմած խաղերը ոչ միայն ցույց են տալիս հոգևոր սնունդ տալու և ստանալու ամենադյուրին և արդյունավետ ճանապարհը՝ ընդլայնելով երեխայի աշխարհաճանաչողությունը, այլև ձևում են միտքը, զարգացնում խոսքը, տրամաբանությունը, շարժողական կարողությունները և այլն: Նկատենք նաև, որ որոշ խաղեր ինքնաբերաբար առաջ են բերում մրցություն խաղացողների միջև: Աչքի ընկնելու, հաղթելու ձգտումը կլանում է ու միավորում երեխաների հոգեկան ու ֆիզիկական ուժերը: Երկկողմանի այդ կենտրոնացումը ուժեղացնում է ընկալունակությունը, նպաստում շարժողունակության զարգացմանը:

Այսպիսով՝ հարյուրամյա ճանապարհ անցած մանկական խաղերը այսօր ոչ միայն չեն կորցրել իրենց արդիականությունը, այլև առավել կարևորվել են համակարգչային խաղերի մրցավազքում: Կախված ընտանիքի և հատկապես մոր ազգային մտածողությունից, արժեքային համակարգից, դաստիարակության մեթոդներից՝ այդ խաղերը կարող են դառնալ հայ ընտանիքներում մեծացող երեխաների լավագույն բարեկամն ու ուսուցանողը:

Բանալի բառեր – Հովհաննես Թումանյան, հայրենագիտական խաղեր, ճանաչողություն, ազգային դաստիարակություն, քննադատություն, բարձր գնահատություն:

Եվա Մնացականյան, Հասմիկ Աբեղյան, Հովհաննես Թումանյանի խաղերը ժամանակի հոլովությամբ – Հոդվածը ներկայացնում է ժամանակակիցների՝ Հովհաննես Թումանյանի և նրա զավակների 1915 թվականին կազմած հայրենագիտական մանկական խաղերին վերաբերող արձագանքները, որոնցում առկա գնահատման չափանիշների և դրանց արդիական հնչելության բացահայտումը կազմում է հոդվածի հիմնանպատակը:

Աչքի առաջ ունենալով հայ երեխաների թե՞ ֆիզիկական, թե՞ մտավոր, թե՞ ազգային նկարագրի խեղաթուրումը՝ բանաստեղծը ձեռնամուխ է լինում խաղերի ստեղծմանը: Թումանյանը համոզված էր, որ հատկապես ողբերգական

այդ ժամանակաշրջանում առաջնային պետք է լինի ապագա սերնդի ազգային-հայրենասիրական դաստիարակության հարցը, ինչի լուծման ամենաարդյունավետ ճանապարհը խաղն է:

Ժամանակակիցները բարձր են գնահատում Թումանյանի խաղերը՝ դրանք դիտելով իբրև երեխաների կրթության, հայրենիքը ճանաչելու, հաճելին օգտակարի հետ համատեղելու հրաշալի միջոցներ:

Ева Мнацаканян, Асмик Абегиан, Игры Ованнеса Туманяна в контексте времени - В статье представлены отклики современников на составленные Ованнесом Туманяном и его детьми в 1915 году обучающие детские игры на тему родины. Выявление присутствующих в этих откликах оценочных критериев и их актуального звучания является основной целью статьи.

Видя искажение физического, интеллектуального, национального облика армянских детей, поэт предпринял создание игр. Туманян был убежден в том, что особенно в тот трагический период времени первостепенным должен быть вопрос национально-патриотического воспитания будущего поколения, самым эффективным решением которого является игра.

Современники дали высокую оценку играм Туманяна, рассматривая их как чудесный способ образования, познания родины, совмещения приятного с полезным.

Eva Mnatsakanyan, Hasmik Abeghyan, Games by Hovhannes Tumanyan during the different times - The article focuses on the reflections of the games created by Tumanyan and his sons on Armenian studies in 1915, and the main aim of the article is to reveal the evaluation criteria and the present value of these reflections.

Taking into account the physical and mental abilities of Armenian children, as well as the lost characteristics of his own nation, the poet launches the creation of the games. Tumanyan was sure that specifically in that tragic period the question of bringing up a national - patriotic generation should be of first priority, the most effective solution of which should be the games.

Games by Tumanyan were highly thought of by contemporaries, considering the games as means of joining the pleasant with the useful, recogniaing their own fatherland and educating children.

**ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴՈՒ ԹԵՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ
ԷՍԹԵՐ ԽԵՄՉՅԱՆ**

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող
ՄԱՐԻՆԵ ԽԵՄՉՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող

Հայ ժողովրդական իրապատում հեքիաթներում ստվար թիվ են կազմում անխելք, ձախորդ ու անհաջողակ մարդու թեմայով հեքիաթային մոտիվներն ու տիպերը: Նմանօրինակ հեքիաթների հերոսի անառարկելի հիմարության վրա կառուցված սյուժեներում ընդգծվում է նրա առանձնահատուկ բնույթը, որը հասնում է անհեթեթության և ծառայում որպես տարբերակիչ հատկանիշ շրջապատող մարդկանցից ու աշխարհից:

Ի սկզբանե բանահյուսական մի շարք սյուժեներ ձևավորել են բնական կարգի խաթարման և դրա վերականգնման մասին պատումներ, որոնց մի մասը վերաճել են անխելք մարդու մասին հեքիաթաշարին: Ըստ այդ պատումնաշարի՝ անխելք մարդը միջնորդ է աստծո և ինչ-ինչ պատճառներով բնական կարգից շեղված գանգատվորների միջև: Աստված վերականգնում է խաթարված բնական կարգը և պատժում նրան, ով ունակ չէ օգտագործել իրեն շնորհված հնարավորությունները:

Հասարակության անդամ յուրաքանչյուր մարդ-անհատ օժտված է սեփական մտավոր կարողություններով, հանդես է գալիս յուրովի գործելակերպով, ունի խնդիրների լուծման անհատական մոտեցումներ, երևույթների վերլուծման, դրանց հիման վրա եզրակացություններ անելու և համապատասխան վարքագիծ դրսևորելու կարողություն, որը կիրառում է ըստ անհրաժեշտության: Ըստ այդմ հասարակությունը բաժանվում է խելոքների և հիմարների, նախաձեռնողների ու անճարակների, միամիտների ու խորամանկների և այլն: Հասարակության անդամների բնավորության անհատական ու բազմազան դրսևորումները, նրանց գործելակերպի ու վարքագծի հակադրությունները, դրական ու բացասական ուղղորդումները հիմք են հանդիսացել բանահյուսական բազմաթիվ պատումների առաջացման համար: Ժողովրդական վիպական պատումները, դարավոր ճանապարհ անցնելով, սերնդից սերունդ փոխանցվելով, հղկվել ու կատարելագործվել են: Բանահյուսական պատումները սոսկ «պարապ վախտի խաղալիք» չեն եղել. Դրանք ներկայացրել են շրջապատող աշխարհն ու մարդկանց իր բազմազանության, սոցիալական ու կենցաղային հարաբերությունների, վարքի

կանոնների ու չգրված օրենքների տարատեսակության և դրանցից բխող դրական ու բացասական եզրահանգումների ուսանելի ամբողջության մեջ:

Իրապատում հեքիաթի հիմար հերոսն իրենից ներկայացնում է հեքիաթային հիմարի տեսակ: Հիմարությունը նրա տարբերակիչ առանձնահատկությունն ու կոչումն է, որն առավել ևս ընդգծվում է¹ պատումների ընթացքում: Ըստ էության բոլոր հիմար հերոսներն անկախ ազգային պատկանելությունից, միջավայրից, սյուժեների զարգացումից իրենց վարքագծով ու գործառույթներով կրկնում են մեկը մյուսին: Հերոսի գործողություններն ու արարքները բացահայտում են նրա բուն էությունն ու մարդկային հատկանիշները որոնք շեղվում են բնականոն, ընդունված չափանիշներից: Ըստ հեքիաթների միջազգային համացույցի՝ «հիմարների մասին» խմբի մոտիվները՝ ATU 460A², ATU 1200-1349³, բնորոշ են բոլոր ժողովուրդների հեքիաթներին, սակայն պետք է նշել, որ յուրաքանչյուր ազգ յուրովի և ազգային ավանդույթների սահմանում է զարգացնում այն: Հետևաբար հայ բանահյուսական ժառանգության մեջ «հիմարների մասին» հեքիաթաշարի հեքիաթների տարբերակների սյուժեները պայմանավորված են Հայաստանի պատմաազգագրական տարածաշրջանների լեզվամտածողության, սովորույթների, բնական միջավայրի, հասարակական ընկալումների առանձնահատկություններով: Ըստ այդմ «անխելք մարդու» թեմայով սյուժեների համեմատությունը հնարավորություն է տալիս նկատել, որ տարբեր տարածաշրջաններում հիմարի կերպարային զարգացումը նույն սխեմայով է կատարվում: Բոլոր տարբերակներում⁴ անխելք ու աղքատ մարդը վերջապես գլխի է ընկնում, թե ում դիմի իր վիճակը բարելավելու համար. «...ըլնեմ էրթամ մոտ բախտ-զանցյնութեն տվող ասպած, ինորից խառցուցեմ»⁵, կամ «Մին օր տա ասում ա քյնտկան ըմ ըստոծեն կոշտը կյենգոտ, ասընմ ինե՞ ինձ բախտ չըս տամ, քըշեր-ցիրեկ անըմ

¹ Юдин Ю.И., Русская народная бытовая сказка и история // Русский фольклор, XVI т., изд-во “Наука”, Ленинград, 1976, с.152.

² Uther H.-J., The types of international folktales: A Classification and Bibliography Based on the System of Antti Aarne and Stith Thompson, part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales. and Realistic Tales, with an Introduction, Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011, pp. 269-270.

³ Uther H.-J., The types of international folktales: A Classification and Bibliography Based on the System of Antti Aarne and Stith Thompson, part II, Tales of the Stupid Ogre, Anecdotes and Jokes, and Formula Tales, with an Introduction, Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011, pp. 72-150.

⁴ Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀժՀ), հ. VII, Արցախ-Սյունիք, կազմողներ՝ Նազինյան Ս., Առաքելյան Ս., Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1979, «Անխելք մարդը», № 162, էջ 371, «Թմբօլ Փաբուլը», № 185, էջ 489; ՀժՀ, հ. VIII, Գուգարք (Լոռի), կազմողներ՝ Նազինյան Ս., Գրիգորյան Ռ., Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1977, «Աստծուն զանգատ զնացող մարդը», № 8, էջ 65; Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 8, Արձակ, կազմող՝ Ավագյան Ս., Երևան, Հայկ. ՍՄՀ ԳԱ հրատ., 1978, «Ախմախու խեբաթ», էջ 119; Հովսեփյան Հ., Ղարաղաղի հայերը, Բանահյուսություն, հ. II, կազմողներ՝ Վարդանյան Ս., Խեմյան Է., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, «Բախտեն շոռ եկուլը», № 7(32), էջ 175:

⁵ ՀԱԲ հ. 8, նշվ. աշխ., էջ 119:

ըմ, անում, էլլա քյոսիք ըմ ապրում»¹ : Երկարատև դեգերումների ընթացքում աղքատ ու անխելք մարդը հանդիպում է սև օձին, որը տառապում է ատամնացավից, զինավառ հեծվոր փահիլանին, որը ծպտված կին է, տանձի ծառին, որի վրայի հասուն ու շողշողուն տանձերը ժանգախամ են, սովամահ ծովային հրեշին, որի քթածակերից լույս է ցայտում (Վասպուրական), գլխացավից տառապող գայլին, այգու բերքից զրկվող բաղմանչուն, երկարած պոզերի պատճառով խոտ չուտող այծին (Լոռի), գլխացավ ունեցող արջին, ցանքից արդյունք չստացող հողագործին, կռվում հաղթվող թագավորին, որը նույնպես ծպտված կին է (Արցախ), սովամահ գայլին, նիհարած քոսոտ ձիուն, չորացող խնձորենուն (Սյունիք) և այլն, լսում է նրանց գանգատներն ու խնդրանքները և խոստանում նրանց խնդիրքը փոխանցել աստծուն: Իր առաքելությանը զուգընթաց անխելք մարդը ստանձնում է միջնորդի դեր: Ակնհայտ է, որ տարբեր տարածաշրջաններում անխելք մարդու պյուժեի զարգացումը միանշանակ աստծուն գտնելու խնդիր է իրականացնում, որին զուգահեռ հանդես են գալիս գանգատավորներ, որոնց կազմը և նրանց անհաջողությունների պատճառները ապահովում են տարբերակների առատություն: Բոլոր տարբերակներում պյուժեի հանգուցալուծումն անխելք մարդու կործանումն է, որը պայմանավորված է նրա հիմարությամբ: Աստծո միջամտությամբ գանգատավորներին տրված հնարավորությունների ընդերքում գաղտնագրված է նաև անխելքի խնդրի լուծման բանալին, այսինքն՝ աստված անուղղակի կերպով շրայլորեն աղքատին շնորհում է հարստանալու և նորմալ ապրելու հնարավորություններ: Աղքատի անխելքությունը թույլ չի տալիս հասկանալ իրեն ընձեռված հնարավորությունները: Նա կարող է գանձերի տեր դառնալ, ամուսնանալ հարուստ ու քաջ կնոջ հետ, սակայն իրականն ու շոշափելին թողած՝ շարունակում է վագել երևակայական բախտի հետևից: Հետևաբար նա պետք է հատուցի իր հիմարության համար, ուստի անխելքը գանգատավորների համար ծառայում է որպես քաղցածության, գլխացավի կամ ատամնացավի դեղ, որովհետև աստված նրանց պատվիրել է ուտել կամ կծել որևէ «անխելք» (Արցախ, Ղարադաղ), «ախմախ» (Վասպուրական), «շաշ» (Լոռի), «դամլա» (Սյունիք) մարդու: Գայլը, արջը, օձը անխելքի պատմածներից տրամաբանական վերլուծություն են անում. «- Դու ուրիշի հմա չարչարվում ես, պարապ տեղը ճամփեննի վագում, քիանից էլ շաշ մարդ ես ո՞րդի պտիմ ճարել: Էս ասում ա ու վեր կոխում ուտում մարդուն»:² (Լոռի), «Հիշքան մտածում ըմ, քրզանա անխելք մարթ չի պըտըիլական, լիհա էն ա փոնըմ քեզ օտըմ»:³ (Արցախ), «Ախըր ես քեզանից ախմախ մարթ ո՞րտեղից կընդնեմ, արի քյե կծեմ»⁴

¹ ՀԺՀ հ. VII, նշվ. աշխ., էջ 371:

² ՀԺՀ, հ. VIII, նշվ. աշխ., էջ 67:

³ ՀԺՀ, հ. VII, նշվ. աշխ., էջ 373:

⁴ ՀԱԲ հ. 8, նշվ. աշխ., էջ 122:

(Վասպուրական): Այս հիմար աղքատը թեև մտածում է, «... միտք ա անում, որ գնա աստծուն զանգատ...»¹, սակայն նրա մտածումները կրավորական են, նա վերլուծելու ու հետևություններ անելու կարողություն չունի, որն էլ հենց նրա բոլոր դժբախտությունների հիմքն է: Պատումի պյուծեն ու անխելքի գործողությունների զարգացումները խորհելու և եզրակացություն անելու հնարավորություն են տալիս ունկնդիրներին: Վերջին հաշվով անխելք մարդու հեքիաթաշարերը բարոյախրատական և դաստիարակչական նշանակություն ունեն ուշիմ ունկնդրի համար:

Այժմ անդրադառնանք անխելք մարդու պատումների խորքում անթեղված մոտիվներին: Անխելք մարդու թեմայի վաղնջական արմատներն են մատնացույց անում պյուծեներում մթագնված հնագույն սովորույթները, հավատալիքներն ու ծեսերը: Վասպուրականյան և արցախյան տարբերակներում հանդես են գալիս ռազմիկ տղամարդու զենք ու զրահով ծպտված կանայք²: Ի դեմս այս մոտիվի՝ մենք գործ ունենք նվիրագործման ծեսի³ մի դրվագի հետ, ըստ որի կինն ամուսին գտնելու համար պետք է իրականացնե՛ր որոշակի ծիսական գործողություններ: Սեռերի տարբերակման և վերջնական նոր կարգավիճակի անցման փուլը հաճախ ուղեկցվել է տղամարդու և կնոջ մենամարտով, որի ընթացքում կնոջ պարտությունը խորհրդանշել է նրա նոր դերը ընտանիքում: Հատկանշական է այն հանգամանքը, որ ծիսակարգը ենթադրում է կնոջ փորձության ավարտը կնոջը տիրելու, իրեն ենթարկելու գործողությամբ: Ուստի աստված անխելքին հանձնարարում է. «...ծեռ թալ դոշ, ինոր ծըծե՛ր պըռնի, կայիմ ճըմոթի»⁴, այս գործողությունը միտված է մոգարգելքի խաթարմանը, որով կինը պատրաստ կլինե՛ր ամուսնության: Կնոջ ժամանակավոր կերպարանափոխման այս փաստը վկայում է հնագույն սովորույթի ինչ-որ ժամանակ կենցաղավարելու հանգամանքը, որն անուղղակի կերպով պահպանվել է բանահյուսական տարբեր ժանրերում:

Հնագույն հավատալիքի մի դրվագ էլ պահպանվել է Լոռու տարբերակում: Գանգատավոր այծի եղջյուրներն աճել-հասել են երկինք, որի վրայով անխելքը բարձրանում է աստծո մոտ: Այստեղ ակնհայտ է տիեզերական ծառի և երկիր-երկինք փոխադարձ կապի մասին մեր նախնիների պատկերացումները: Դարերի խորքից եկող այծի մթագնված սիմվոլիկայից կարելի է ենթադրել այծ-աստված փոխադարձ կապի առկայությունը: Ինչպես նկատել է հնագետ Հ. Մարտիրոսյանը՝ «հին արևելյան ու հունական դիցաբանության մեջ այծը հանդես

¹ ՀԺՀ, հ. VIII, նշվ. աշխ., էջ 65:

² **Վարդանյան Ն.**, Հայոց իրապատում հեքիաթը. ժանրային տիպաբանական քննություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 106:

³ **Левинтон Г.А.**, Инициация и мифы // Мифы народов мира, том I, изд-во “Советская энциклопедия”, 1987, с. 543-544.

⁴ ՀԱԲ հ. 8, նշվ. աշխ., էջ 121:

է գալիս իբրև երկնային շանթոդ աստվածների ստնտու մայր»¹: Այծը և այծապատկերները հին հայկական գրային մշակույթում իմաստաբանական առումով ներկայացնում են ամպրոպ-կայծակի երևույթը: Հեքիաթում հանդես եկած մարդակերպ աստծո գործառույթը «տիեզերական կովի» մի դրվագ է, որը միտված է բնական կարգի վերականգնմանը, հետևաբար տրամաբանական զարգամամբ աստվածային սղոցով հատված այծի եղջյուրների պատկերը ներկայացնում է աշխարհի խաթարված կարգի վերականգնումը:

Ահա այսպիսի հարուստ ավանդույթներ ունեցող բանահյուսական գանձարանը, որ մանկությունից սնել էր Հովհաննես Թումանյանի միտքն ու հոգին, դարձավ նրա ստեղծագործական խոհանոցի հիմնական աղբյուրներից մեկը: Կարելի է ասել, որ Հովհ. Թումանյանի գրական գործունեության հիմքում ընկած են ժողովրդական բանահյուսության բազմաժանր տեսակները: Մանկության տարիներին ստացած ժողովրդական իմաստությունները ողջ կյանքում ուղեկցեցին նրան, և նա, առատորեն օգտվելով այդ անսպառ գանձարանից, իր ստեղծագործությունները դարձրեց ամենաընկալելի, ամենասիրելի, ամենախրատական, ամենաուսանելի և ամենահամապարփակ գործեր՝ հարազատ հայ մարդու հոգուն և սրտին: Նա ինքն ընդգծել է իր գեներտիկ կապը ժողովրդական բանահյուսության հետ. «... ես լոռեցի եմ ու էն գլխից ոչ «դիպվածով» սիրել ու հետաքրքրվել եմ հեքիաթներով, լեգենդներով, առակներով և շատերն անգիր գիտեմ դեռ մանկությունից»²:

Հովհ. Թումանյանը, բարձր գնահատելով ժողովրդական բանահյուսության անառարկելի դերը և հատկապես հեքիաթն ընկալելով որպես ժողովրդական կենսափորձի ու իմաստության խտացում, իր ստեղծագործական զինանոցի թեմաները համալրել է բանահյուսական սկզբնաղբյուրներից քաղված կերպարների համընդհանուր և համամարդկային բնույթի ցայտուն օրինակներով: Հովհ. Թումանյանը, շատ լավ իմանալով ժողովրդական բանահյուսության ժանրերի թափառիկ բնույթը և տարբերակայնությունը, ընտրված թեմաների մշակումների ժամանակ ի մի էր բերում նույն սյուժեի հայկական և հարևան ժողովուրդների տարբերակները և, հավատարիմ մնալով ժողովրդական ոգուն, լեզվին, մտածելակերպին, ստեղծում էր նոր պատում իր ուրույն ասելիքով: Գրականագետ Լևոն Հախվերդյանը դիպուկ նկատել է. «Բանահյուսական նյութերը և մտքերը նրա գրչի տակ ձեռք բերին գեղագիտական անտարակուսելի արժեք»³:

Թումանյանի հեքիաթներում անխելք մարդու թեման առանձին շարք է ներկայացնում, որտեղ ինքնատիպ ի հայտ են բերված հիմարության բոլոր

¹ Մարտիրոսյան Հ., Գիտությունն սկսվում է նախնադարում, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1978, էջ 41:

² Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. VI, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 161:

³ Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը, Երևան, «Հայաստան» հրատ., 1966, էջ 372-373:

կողմերն ու տարատեսակները: Հիմարությունը հասարակական չարիք է, որի դրսևորումներն առօրյա կյանքում այնքան հաճախ են հանդիպում, որ դրանից ձերբազատվելու համար մանկությունից պետք է երեխաների մեջ զարգացնել հիմար մարդու վարքագիծը ճիշտ ընկալելու, գնահատելու և համապատասխան եզրակացություն անելու կարողություն: Թումանյանի ստեղծագործությունների «հիմարների մասին» շարքը հիմարության դրսևորումների մի յուրօրինակ երանգապնակ է: Թումանյանի հիմարները հիմնականում գյուղաշխարհի ներկայացուցիչներ են՝ հիմարների ընտանիք («Կիկոսի մահը»¹), հիմար ամուսիններ («Բարեկենդանը»²), ձախորդ ու անուղղելի հիմար («Ձախորդ Փանոսի հեքիաթը»³), վախկոտ հիմար, որը շրջապատի հիմարության ու պատահականությունների շղթայի բարեպատեհ դասավորությամբ թագավոր է դառնում («Քաջ Նազարը»⁴) և այլն: Ակնհայտ է, որ հիմարությունը միայն առանձին անհատների մենաշնորհը չէ, այն կարծես վարակիչ լինի, և ողջ հասարակությունն է տառապում հիմարությամբ, հետևաբար Թումանյանը, ընդհանրացումներ կատարելով, ընդգծելով իր հերոսների բնավորության բացասական գծերը, հակադրելով դրականն ու բացասականը, հետապնդում է մարդու և հասարակության ձևափոխման ու կատարելագործման նպատակ:

Թումանյանը «Անխելք մարդը»⁵ հեքիաթը գրել է 1894 թ., այն տպագրվել է մանուկների համար նախատեսված «Աղբյուր» հանդեսում: Հեքիաթի սյուժեն զարգանում է այնպես, ինչպես ժողովրդական հեքիաթը: Ահաջողակ աղքատը ճանապարհվում է աստծո մոտ՝ նրանից բխիտ խնդրելու: Ճանապարհին նա հանդիպում է սոված գայլին, երիտասարդ, հարուստ, գեղեցիկ, բայց միաժամանակ անբախտ աղջկան, չոր ծառին և խոստանում նրանց խնդիրքն էլ փոխանցել աստծուն: Աստված լսում և համապատասխան պատվերներ է տալիս նրանցից յուրաքանչյուրի համար: Աղքատը հնարավորություն է ստանում հանել չոր ծառի տակ թաղված ոսկին և ամուսնանալ գեղեցիկ աղջկա հետ: Սակայն անխելքը հետևություն անելու ունակություն չունի, և թումանյանական այս հեքիաթն ավարտվում է անխելքության համար տրվող պատժով: Քաղցած գայլն անխելքի պատմածից անմիջապես հետևություն է անում. «- Էլ քեզանից անխելք մարդ որտե՞ղ գտնեմ, որ ուտեմ,- ասաց գայլն ու կերավ անխելք աղքատին»⁶: Թումանյանական հեքիաթների այս տիպը երգիծական բնույթ ունի և ավարտվում է անհաջողակների ու հիմարների վրա ծիծաղելով: Առողջ, սթափեցնող ու մաքրագործող ծիծաղը որոշակիացնում է մերժելի երևույթների

¹ Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. V, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 246:

² Թումանյան Հովհ., հ. V, նշվ. աշխ, էջ 218:

³ Թումանյան Հովհ., հ. V, նշվ. աշխ, էջ 250:

⁴ Թումանյան Հովհ., հ. V, նշվ. աշխ, էջ 235:

⁵ Թումանյան Հովհ., հ. V, նշվ. աշխ, էջ 167:

⁶ Նույն տեղում, էջ 169:

նկատմամբ վերաբերմունքը: Թումանյանի ստեղծագործություններին ուղեկցող ծիծաղը Լ. Հախվերդյանի բնորոշմամբ երկակի բնույթ ունի. «Ծիծաղ հարուցում է այն, ինչ նորմայից դուրս է, ինչ բնական, սովորական օրինաչափության խախտումն է երկու հակադիր կողմի վրա. Դեպի դրականը՝ **համակրանքի ծիծաղ** (ընդ.՝ Է.Խ., Մ.Խ.), դեպի բացասականը՝ **հակակրանքի ծիծաղ** (ընդ.՝ Է.Խ., Մ.Խ.)»¹: Հետևաբար հեքիաթի վերջըներ ծիծաղը դրական, թե բացասական տարբերակով ոչ միայն կողմնորոշում է ընթերցողի անհատական վերաբերմունքը պատումի անձարակ ու հիմար հերոսի նկատմամբ, այլև ձևավորում է եզրակացություն, թե այս կյանքում ինչ և ինչպես չի կարելի անել: Եթե մարդն ի ծնե հիմար է, ապա ասածո ընձեռած հնարավորություններն էլ ի գորու չեն շտկելու անհեթեթ իրավիճակը:

Բանահյուսության և գեղարվեստական գրկանության հարաբերության, ժողովրդական հեքիաթների մշակումների հարցերի շուրջ Թումանյանը հանիրավի մեղադրվել է գրագողության և ժողովրդական ստեղծագործությունները սեփականելու մեջ: Իր մշակումների արժեքը չհասկացող «ոչ գրական ոչնչություններ քննադատներ»-ին դիմելով՝ Հովհ. Թումանյանը շատ դիպուկ բնորոշել է բանահյուսական նյութերի ակունքն ու բանասացական դպրոցի կարևոր ներդրումը հեքիաթների վերարտադրման և փոխանցման ճանապարհին. «Դուք էնքան տգետ եք, չեք էլ իմանում, որ հեքիաթները **գրական մարդիկ** (ընդ.՝ Է.Խ., Մ.Խ.) չեն հորինում, այլ առնում են ժողովրդականը ու պատմում: Եվ շնորհքը հենց էդ պատմելու մեջն է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզվով, ինչ ոճով և ինչպես պատմեն, որ և՛ գեղեցիկ դուրս գա, և՛ ժողովրդական համն ու հոտը չկորցնի»²:

Մեր հոդվածի սկզբնամասում վերլուծելով անխելք մարդու թեմայի բանահյուսական դրսևորումները՝ մեր նպատակն էր ընդգծել բանահյուսական սյուժեների բազմազմանությունն ու դրանցում ընդգրկված տարբեր շերտերից եկող սովորութահավատալիքային, ծիսական հաճախ մթագնված դրվագների առկայությունը, ինչպես նաև ժողովրդական մոտեցումների ու խնդիրների էական տարբերությունը թումանյանական մշակումներից: Թումանյանը «Անխելք մարդը» գրելու ժամանակ օգտվել է տվյալ ժամանակահատվածում հրապարակի վրա գոյություն ունեցող հայ (Գաբեգին Սրվանձտյանց, Գևորգ Տեր-Աղեքսանդրյան և այլք)³ և օտար տպագիր աղբյուրներից: Նրա մշակումը, ի տարբերություն ժողովրդական տարբերակների, ավելի պարզեցված է. բացառվել է առասպելաբանական, ծիսահավատալիքային շերտը, շեշտը դրվել է մարդու անխելքության և հանգամանքներն իր օգտին չճառայեցնելու անկարողության

¹ **Հախվերդյան Լ.**, նշվ. աշխ., էջ 387:

² **Թումանյան Հովհ.**, հ. VI, նշվ. աշխ., էջ 161:

³ **Սրուանձտեանց Գ.**, Մանանայ, Կ. Պոլիս, 1876, էջ 161-170; **Տեր-Աղեքսանդրեան Գ.**, Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը, Թիֆլիս, Թիֆլիսի ընկ. հայերեն գրքերի հրատ, 1885:

վրա: Մշակումը բարոյախրատական, կրթական և դաստիարակչական նպատակ է հետապնդել: Ի տարբերություն բարու հաղթանակը հաստատող հեքիաթների՝ այս հեքիաթում անխելք մարդը պատժվում է: Լ. Հախվերդյանը համարում է, որ «Անխելք մարդը» հեքիաթի խորհուրդն այն է, որ մարդիկ ի դեմս անխելքի, չեն նկատում իրենց աչքի առաջ ընկած բախտը և այն ուրիշ տեղ են որոնում¹:

Հեքիաթները մշակելիս Հովհ. Թումանյանն աչքի առաջ է ունեցել ժողովրդական պատումների առանձնահատկություններն ու սկզբունքները: Հեքիաթագիր Թումանյանի պատումները ժողովրդախոսակցական լեզվի փայլուն նմուշներ են՝ կառուցված կենդանի լեզվին բնորոշ արտահայտչամիջոցներով, բարբառային հարուստ բառամթերքի կիրառումով: Հեքիաթը նա սկսում է հեքիաթային ավանդական կայուն բանաձևով. «Ժամանակով մի աղքատ մարդ կար...», որից պետք է ենթադրել որ աղքատի ու նրա գործառույթների պարագայում ժամանակի որոշակիությունը կարևոր չէ, և աղքատներ կան բոլոր ժամանակներում: Նա հարազատ է մնում ոչ միայն հեքիաթի սկսվածքին, այլև կառուցվածքային բոլոր նրբերանգներին: Գրականագետ Ազատ Եղիազարյանը, գնահատելով Հովհ. Թումանյանի ստեղծագործական պատումների ակունքը, գրում է. «Թումանյանի պատումը, իբրև գրական երևույթ, ծագումնաբանորեն սերտորեն կապված է բանավոր խոսքի հետ. Նրան խորապես հարազատ է բանավոր պատումի տարերքը, և այդ զգացվում է նրա ողջ ստեղծագործության մեջ»² [1, էջ 189]:

Ակնհայտ է, որ Թումանյանի ստեղծագործություններն իրենց վրա կրում են ժողովրդական բանահյուսության հզոր ուժը: Մասնավորապես հեքիաթագրության ասպարեզում Թումանյանն իրեն զգացել է ինչպես «ձուկը ջրում» և վարպետորեն օգտագործել է ժողովրդական հեքիաթների թեմաները, սյուժեները, մոտիվները:

Հայ բանահյուսության թումանյանական մշակումները նոր աստիճանի են բարձրացրել և ավելի են ընդգծել ժողովրդական դարավոր իմաստության ուսուցողական և դաստիարակիչ դերը:

Բանալի բառեր - հեքիաթ, անխելք մարդ, բանահյուսություն, տիպ, թեմա, մոտիվ, մշակում, ավանդույթ, կերպար, տարբերակ:

Էսթեր Խեմյան, Մարինե Խեմյան, Անխելք մարդու թեման Հովհաննես Թումանյանի հեքիաթներում - Հայ ժողովրդական իրապատում հեքիաթներում մեծ թիվ են կազմում անխելք, ձախորդ ու անհաջողակ մարդու թեմայով հեքիաթային տիպերն ու մոտիվները: Նմանօրինակ հեքիաթների հերոսի անառարկելի հիմարության վրա կառուցված սյուժեներում ընդգծվում է նրա

¹ Հախվերդյան Լ., նշվ. աշխ., էջ 394:

² Եղիազարյան Ա., Թումանյանի պոետիկան և նրա ժողովրդական ակունքները, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1990, էջ 189:

առանձնահատուկ բնույթը, որը տարբերակիչ հատկանիշ է շրջապատող աշխարհից ու մարդկանցից: Անխելք մարդու գործողություններն ու արարքները բացահայտում են նրա բուն էությունն ու մարդկային հատկանիշները, որոնք շեղվում են բնականոն, ընդունված չափանիշներից:

Ըստ հեքիաթների միջազգային համացույցի՝ «հիմարների մասին» խմբի մոտիվները՝ ATU 460A, ATU 1200-1349, բնորոշ են բոլոր ժողովուրդների հեքիաթներին, սակայն յուրաքանչյուր ազգ յուրովի և իր ազգային ավանդույթների սահմանում է զարգացնում այն:

Հայ բանահյուսության «անխելք մարդու» թեմայով սյուժեների համեմատությունը ցույց է տալիս, որ տարբեր տարածաշրջաններում հիմարի կերպարային զարգացումը նույն սխեմայով է կատարվում: Անխելք մարդու թեման վաղնջական արմատներ ունի. սյուժեներում մթագնված պահպանվել են հնագույն սովորույթներ, հավատալիքներ, ծեսեր:

Հայ մեծագույն գրող Հովհ. Թումանյանի համար ժողովրդական բանահյուսությունը ծառայել է որպես իր ստեղծագործությունների ակունք: Հովհ. Թումանյանը, բարձր գնահատելով ժողովրդական բանահյուսության անառարկելի դերը և հատկապես հեքիաթն ընկալելով որպես ժողովրդական կենսափորձի ու իմաստության խտացում, իր ստեղծագործական գինանոցի թեմաները համալրել է բանահյուսական սկզբնաղբյուրներից քաղված համընդհանուր և համամարդկային բնույթի կերպարներով: Հեքիաթի մշակման ընթացքում Թումանյանն օգտագործել է հայ և օտար ժողովուրդների բանահյուսական հեքիաթների տարբերակներ:

Թումանյանի հեքիաթներում անխելք մարդու թեման առանձին շարք է ներկայացնում, որտեղ ի հայտ են բերված հիմարության բոլոր կողմերն ու տարատեսակները: Թումանյանը, ընդհանրացումներ կատարելով, ընդգծելով իր հերոսների բնավորության բացասական գծերը, հակադրելով դրականն ու բացասականը, հետապնդում է մարդու և հասարակության ձևափոխման ու կատարելագործման նպատակ:

Հայ բանահյուսության թումանյանական մշակումները նոր աստիճանի են բարձրացրել և ավելի են ընդգծել ժողովրդական դարավոր իմաստության, բարոյախրատական, ուսուցողական և դաստիարակիչ դերը:

Эстер Хемчян, Марине Хемчян, Тема глупца в сказках Ованнеса Туманяна -

В армянских народных сказках большое число составляют сказочные типы и мотивы на тему глупца, невезучего человека и неудачника. В сюжетах аналогичных сказок, построенных на бесспорной глупости героя, подчеркивается его своеобразный характер, который является отличительным признаком от окружающего мира и людей. Действия и поведения глупца

выявляют его истинную сущность и человеческие свойства, которые отличаются от естественных, принятых критериев.

По международному каталогу сказок мотивы ATU 460A, ATU 1200-1349 группы "о глупцах" характерны сказкам всех народов, но каждая нация развивает их по своему и в пределах своих национальных традиций.

Сравнение сюжетов на тему "глупца" в армянском фольклоре показывает, что в разных регионах развитие образов глупца совершается одной и той же схемой. Тема глупца имеет древние корни: в сюжетах сохранились элементы древнейших обычаев, поверьев и обрядов.

Для великого армянского писателя Ованеса Туманяна народный фольклор служил источником для своих произведений. Туманян, высоко оценивая бесспорную роль народного фольклора и особенно воспринимая сказку как уплотнение народного жизненного опыта и мудрости, темы своего творческого арсенала пополнил образами всеобщего и общечеловеческого характера, извлеченными из фольклорных источников. В процессе обработки сказок Туманян использовал варианты фольклорных сказок армян и других народов.

В сказках Туманяна тема глупца представляется отдельным рядом, где выявлены все стороны и разновидности глупости. Туманян, совершив обобщения, подчеркнув отрицательные черты характера своих героев, противопоставив положительное и отрицательное, преследует цель преобразования и усовершенствования человека и общества.

Туманяновские обработки армянского фольклора подняли на новый уровень и все больше подчеркнули нравоучительную, обучающую и воспитательную роль народной многовековой мудрости.

Ester Khemchyan, Marine Khemchyan, The theme of fool in the tales of Hovhannes Tumanyan - In the Armenian folk tales a large number of fairy-tale types and motives are about the fool, the unlucky and the loser. In the subjects of similar tales constructed on the unquestionable stupidity of the character, emphasized by his own different character, which is making him unique from the surrounding world and people. Actions and behavior of a fool clarify his true essence and human properties that differ from the natural, accepted criteria.

According to the international catalogue of the fairy tales, the motives ATU 460A, ATU 1200-1349 of the group "about the fool" are typical for the fairy tales of all nations, but each one of them develops it in its own and within its traditions.

Comparison of plots about the "fools" in the Armenian folklore shows that in different regions the development of the character of the fool is done using the same

scheme. The theme of the fool has ancient roots: in plots are still hardly discoverable ancient traditions, beliefs and rituals.

For the great Armenian writer Hovhannes Tumanyan, the folklore served as a source for his works. Tumanyan, highly valuing the unquestionable role of folklore and especially perceiving the tale as a condensation of the nation's experience and wisdom, filled the themes of his creative arsenal by the universal and common characters taken from the folklore sources. During the course of the fairy tale processing Tumanyan used variants of folklore tales of Armenians and other nations.

In the tales of Tumanyan, the theme of fool represents a separate series, where all the sides and types of stupidity are revealed. Tumanyan emphasizing negative qualities of the characters with generalizations, opposing the positive and the negative, has as a goal the transformation and improvement of the human being and the society.

Tumanyan's works on Armenian folklore raised on a new level and emphasized the moral, educational and mentoring role of the nation's centuries-old of wisdom.

«ՔԱԶ ՆԱԶԱՐ» ՀԵՔԻԱԹԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Իջևանի Գ. Էդիլյան անվան N3 հիմնական դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Նախքան այս կամ այն հեքիաթի մշակումը Հովհ. Թումանյանը հանգամանորեն ուսումնասիրել է հեքիաթի հնարավոր բոլոր աղբյուրները և մշակվող հեքիաթի համար ընտրել այն տարբերակները, որոնք ավելի մոտ են իր գեղագիտական հավատամքին: Թումանյանին ավելի հարազատ է եղել կենցաղային հեքիաթը: Հեքիաթներում արտացոլվում են ժողովրդական խելքն ու աշխարհայացքը, ժողովրդի կենցաղը: Նա երբեք չի փոխել, խեղաթյուրել բանահյուսական օրինակի ներքին իմաստը, նրա մեջ չի ներմուծել օտար գաղափարներ՝ հարմարեցնելով իր սեփական գաղափարներին:

Հովհ. Թումանյանը «Քաջ Նազար» հեքիաթի մշակման ընթացքում հավաքել է ավելի քան 30 տարբերակներ: Հիմնական աղբյուրներ են եղել Գ. Սրվանձտյանի հայկական հեքիաթների ժողովածուն, Գ. Տեր-Աղեքսանդրյանի «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» գիրքը, Ա. Ն. Աֆանասևի ռուսական ժողովրդական հեքիաթները, Գրիմ եղբայրների հեքիաթները, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа»- ի մի քանի հրատարակությունները, «Сборник сведений о Кавказских горцах» գիրքը՝ իր հեքիաթի համար որպես հիմք ընդունելով հայկական «Դրժիկոն» հեքիաթը¹:

«Քաջ Նազար» հեքիաթի առաջին մշակումները Հովհ. Թումանյանը կատարել է 1908 թվականին, բայց ձեռագիրը կորցրել է: Հեղինակը սովորություն է ունեցել առանձին թղթերի վրա գրի առնել տարբերակներ, որոնք օգտագործել է այս կամ այն հեքիաթը գրելիս: Երկրորդ անգամ թեմային անդրադարձել է 1912 թվականին և նույն տարում էլ տպագրել է: Հեքիաթի մշակմամբ Թումանյանը հայ գրականություն ներմուծեց «քաջնազարականության» թեման՝ առաջացնելով նազարականություն կամ նազարիզմ թեմատիկ ուղղությունը²:

Հեքիաթի հիմքում անարժան մարդու անսպասելի և մեծ հաջողությունների պատմությունն է, որը մեծ տարածում է գտել նաև շատ այլ ժողովրդների բանարվեստում: Տարածված այս պատումն ունի երկու տարբերակ, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են ենթախմբերի:

Տարբերակներից մեկում հերոսն իր ձիու հետ փախչում է տնից, որովհետև մայրն ուզում էր վերացնել իմաստուն ձիուն, մյուս դեպքում՝ թագավոր-հոր հրամանով հանձնվելու է դերվիշին: Անձանոթ երկրում հայտնված հերոսը

¹ Գուլակյան Ս. Ա., Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազար» հեքիաթի գաղափարական իմաստը, «Տեղեկագիր» գիտությունների ակադեմիայի, 1965, № 9, էջ 113:

² Մելքոնյան Ս., Ոչ միայն հացիվ, Երևան, 1987, էջ 286:

մտնում է թագավորի պալատը որպես ձիապան, ամուսնանում է թագավորի աղջկա հետ և, շնորհիվ իր կատարած քաջագործությունների, հասնում է թագավորական գահի և դառնում բոլորի սիրելին:

Երկրորդ տարբերակը բավական հեռանում է առաջինից: Առաջին ենթախմբի տարբերակում հերոսին վռնդում են տանից, որովհետև նա չափից դուրս վախկոտ է ու անբան: Դրսի աշխարհում հերոսն ակամա սխրանք է կատարում՝ ջարդելով իրեն անհանգստացնող ճանճերին: Եթե ժողովրդական հեքիաթի Դրժիկոն, ավարական հեքիաթի Նազնայը տանից հեռանալուց հետո են ճանճերը սպանում, ապա Թումանյանի Նազարը ճանճերը սպանելուց հետո է վճռում վերջնականապես լքել տունն ու հարազատ միջավարը, որն ուշագրավ մանրամասն է. «Թումանյանի հերոսն ինքն իրեն վերագնահատելուց և արժևորելուց հետո է միայն լքում իր տունը¹: Այնուհետև, դեպքերի երջանիկ դասավորությամբ նա, անկախ իրենից, կատարում է փառահեղ քաջագործություններ և հասնում բարձր դիրքի:

Մյուս ենթախմբի տարբերակում հերոսն արդեն ճարպիկ է, դևի կամ վիշապի հանդիպելիս կարողանում է խուսափել չարիքից և հաղթում է իրենից ուժեղ հակառակորդին և տեր է դառնում նրա ունեցվածքին:

Հեղինակը, ձեռքի տակ ունենալով հեքիաթի այսքան տարբերակներ, ընտրել է ոչ թե ավելի հեքիաթային ու ֆանտաստիկ տարրերով օժտվածը, այլ իրական ու կյանքն ավելի մոտիկից պատկերող պատումներ՝ մասնավորապես հայկական «Դրժիկոն» հեքիաթը: Թումանյանի հերոսը ոչ միայն «մի անշնորհք ու ալարկոտ մարդ է», այլև «է՛նքան էլ վախկոտ, է՛նքան էլ վախկոտ, որ մենակ ոտը ոտի առաջ չէր դնիլ, թեկուզ սպանեիր: Օրը մինչև իրիկուն կնկա կողքը կտրած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալի: Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար²»:

Հեքիաթի հերոսին վախկոտ բնութագիրն է տրվում նաև ավարական, չեչենական, թաթարական ու մի շարք այլ տարբերակներում: Թումանյանը սկզբում նրան «Վախկոտ» մականունն է տալիս, հետո Նազարին կոչում է «Քաջ»: Գրական այս հնարանքը օգնում է հեղինակին Նազարի երգիծական կերպարի բնութագրմանը: Իսկ ժողովրդական հեքիաթում Դրժիկոյի կինը նրան բնութագրում է մեկ բառով՝ «անզգամ»: Թումանյանի երկում Նազարի կնոջը հեղինակային բնութագրում չի տրվում: Այստեղ Նազարն է իր կնոջը «անզգամ» անվանում: Բայց այն մի քանի բառը, որ ասում է Նազարի կինը, բնութագրվում է որպես կոպիտ, կամակոր մի կին, որը սովոր է ամուսնուն ուզածի պես ձեռքի մեջ խաղացնել և արդեն վերջնականապես զզվել է նրա ծուլությունից ու ալարկոտությունից:

¹ Գուլպյան Ս. Ա., նշվ. աշխ., էջ 115:

² Թումանյան Հովհ., Երկեր 2 հատորով, հ. 2, Ե., 1985, էջ 152:

Միշտ պասիվ Նազարը կյանքի առաջին ակտիվությունը ցուցաբերում է կնոջ կողմից տնից դուրս վոնդվելուց հետո: Նա սպանում է երեսին հավաքված ճանճերին և ալարկոտությունից անգամ դրանց թիվը չի հաշվում՝ ենթադրելով, որ հազարից քիչ լինել չեն կարող:

Դրժիկոն յոթ ճանճ սպանելով գնում է դերվիշի մոտ, և նա թղթի մի կտորի վրա գրում է. «Դրժիկոն է, մեկ ձեռքով յոթ հոգի սպանած է»: Նազնայը սպանում է ձմերուկի կլեպը ծածկած ճանճերին և դարբնին հետևյալ մակագրությամբ թուր է պատվիրել տալիս՝ «Մի հարվածով հիսուն է սպանում դյուցազուն Նազնայը»: Թումանյանական Նազարը տերտերին է գրել տալիս իր «սխրագործությունը», որն էլ, իմանալով Նազարի բուն էությունը, կատակի համար մի կտորի վրա գրում է.

«Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին գարկի՝ ջարդի հազար»¹:

Ի տարբերություն Դրժիկոյի, որը երկու այծ և մի կով ուներ, Նազարն աղքատ է: Դրժիկոն նստում է կովին, իսկ Նազարը հարևանի էշին: Թումանյանի մշակման մեջ կովը էշով փոխարինելու փաստը ներքին իմաստ ունի: Ինչպես հայտնի է, էշը համարվում է ամենախիմար կենդանին և Նազարը էշի վրա նույնն է, ինչ հիմարը հիմարի վրա: Սա արդեն հիմարության խորհրդանիշն է:

Կտորի վրա դրոշմված «բնութագրականով»՝ աննշան արարքը հերոսականացվում, ստերեոտիպացվում է՝ դառնալով «տարատեսակ հաղթանակների» սկզբնապատճառ: Ստերեոտիպացման արդյունքում հաջողության են հասնում նաև Թումանյանի «Չախչախ թագավորն» ու «Անբան Հուռին», որոնք, ի տարբերություն Նազարի, ազատված են ինքնուրույն որոշումներ կայացնելու պարտականությունից: Ամեն ինչ այլ է Նազարի պարագայում. սեփական «սխրանքները» հանրաժանոթ դարձնելու ձգտումը, պաշտպանություն ու հովանավորչություն կորցրած մարդու ինքնապաշտպանական փորձ կարելի է որակել: Եթե Նազարի հոգեկան պահանջմունքն էր ձեռք բերել ճանաչում, ապա միջավայրի հոգեբանական պահանջմունքն էր «իդեալական առաջնորդ» ունենալը. արդյունքում վախկոտը դառնում է «քաջ ու անհաղթ», քանի որ ինքնախաբեությամբ զբաղվող Նազարը գտնում է ինքնախաբեության ախտով տառապող ամբոխին²:

Այս տեսանկյունից հեքիաթի մշակման ընթացքում կարևոր է Նազարի մասնակցությունը հարսանիքին: Հարսանքավորները կարդում են անձանոթ հյուրի դրոշի գրությունը և նրա քաջության լուրը տարածվում է հարսանքատանը: Անգամ գտնվում են նրա վաղեմի ծանոթներ: Ահա այստեղ է, որ Վախկոտ Նազարը դառնում է Քաջ Նազար: Հայկական հեքիաթում

¹ Թումանյան Հովհ., նշվ. աշխ., էջ 153:

² [http://hpj.asj-oa.am/5685/1/2011-2\(142\).pdf](http://hpj.asj-oa.am/5685/1/2011-2(142).pdf)

խրախճանքի դրվագը բացակայում է: Ավարական հեքիաթում այն սոսկ ֆաբուլայի մաս է կազմում: Նազնայը գնում է վեզիրի տղայի հարսանիք, որպեսզի վեզիրի օգնությամբ ընկնի շահի մոտ: Թումանյանական տարբերակում այս դրվագը դառնում է հեքիաթի գաղափարական բովանդակության բանալին: Հարսանքավորները դյուրահավատության, հիմարության մարմնացումն են, իսկ ամբողջ տեսարանը սիմվոլն է այն աշխարհի, որտեղ ոչնչությունը հնարավորություն ունի դառնալու փառապանծ հերոս: Հեքիաթի ռուսական, վրացական, ավարական տարբերակներում հերոսը իր քաջագործությունները կատարում է ի ծառայություն թագավորի, իսկ Թումանյանը, հետևելով հայկական հեքիաթի ավանդույթներին, մի փոքր այլ կերպ է շարունակում հեքիաթը: Նազարը ընկնում է յոթ հսկաների երկիրը, որոնք արդեն լսել էին նրա փառքի մասին և նրան ընդունում են պատվով, ամուսնացնում իրենց քրոջ հետ և վերաբերվում արքայավայել:

Թշնամու գորքի դեմ կռվելու տեսարանը ևս հանդիպում է ժողովրդական տարբերակներում: Դրժիկոյի ու Նազնայի նման, իմանալով թշնամու հարձակման մասին, Նազարը ցանկանում է փախչել իրենց գյուղը, բայց նրան բերում են, զենք են տալիս ու բաց են թողնում կռվի դաշտ: Հայկական հեքիաթի հերոսը համոզվելով, որ կռվից խուսափելը անհնար է, որոշում է մեռնել և այդպես փրկվել խայտառակությունից: Թումանյանի Նազարը գրկված է այդ բնական ձգտումից: Նազարը ընդունակ չէ նման նուրբ հուզումներ ունենալու և շարժվում է միայն բնագոյաբար:

Միակ կենդանի էակը ձին էր, որ լավ էր հասկանում Նազարի ով լինելը, որին չի շփոթեցնում կատակով գրված, բայց անհերքելի ճշմարտություն համարվող երկտողը և, զգալով որ հեծյալը անփորձ է, ծառս է լինում: Նազարը, չկարողանալով կառավարել ձիուն, բռնում է մի ծառից, որը փտած է լինում և մնում է նրա ձեռքում, իսկ հակառակորդը կարծում է, թե նա պատերազմելու է գալիս ծառերն արմատախիլ անելով և այդ սարսափազդու տեսարանը նրանց ստիպում է փախչել կամ հանձնվել:

Ժողովուրդը մեծարանքով դիմավորում է Նազարին և թագավոր հռչակում: Ու մի օր էլ նա նկատում է, որ աշխարհն իր բռնի մեջ է. «Ասում են մինչև էսօր էլ դեռ ապրում ու թագավորում է Քաջ Նազարը: Ու՛ երբ քաջությունից, խելքից, հանճարից մոտը խոսք են գցում՝ ծիծաղում է, ասում է.

-Ի՛նչ քաջություն, ի՛նչ խելք, ի՛նչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուս բախտն է: Բախտ ունե՞ս՝ քե՞ֆ արա...

Եվ ասում են՝ մինչև էսօր էլ քե՞ֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում է աշխարհքի վրա»¹:

¹ Թումանյան Հովհ., նշվ. աշխ., էջ 161-162:

Բանալի բառեր – Հովհաննես Թումանյան, Քաջ Նազար, հեքիաթ, պատում, մշակում, քաջնազարականություն, կենցաղային հեքիաթ, հերոս:

Հասմիկ Գրիգորյան, «Քաջ Նազար» հեքիաթի թումանյանական մշակումները - Հովհ. Թումանյանը «Քաջ Նազար» հեքիաթի մշակման ընթացքում հավաքել է ավելի քան 30 տարբերակներ: Հեքիաթի մշակմամբ Թումանյանը հայ գրականություն ներմուծեց «քաջնազարականության» թեման: Հեքիաթի հիմքում անարժան մարդու անսպասելի և մեծ հաջողությունների պատմությունն է, որը մեծ տարածում է գտել նաև շատ այլ ժողովրդների բանավեպերում:

Հոդվածի նպատակն է ցույց տալ այն առանձնահատկություններն ու տարբերությունները, որոնք հանդիպում են թումանյանական մշակման ժամանակ:

Hasmik Grigoryan, Developments of “Brave Nazar” Fairy-tale by Tumanyan - More than 30 versions have been collected while developing Hovh. Tumanyan's "Brave Nazar" fairy tale. The development of the fairy tale by Tumanyan introduced the theme of "Brave Nazar" phenomenon into Armenian literature. The fairy tale is based on a story of unexpected and great success of an unworthy man, which has been widely spread in many other nations' literature.

The article aims at representing the peculiarities and differences that occur during the development of the fairy tale by Tumanyan.

Асмик Григорян, «Туманяновские разработки сказки «Храбрый Назар» - При разработке сказки «Храбрый Назар» Ов. Туманян собрал более 30 вариантов сказки. Этой разработкой Туманян внес в армянскую литературу тему «качнazarства». В основе сказки лежит история неожиданных и больших успехов недостойного человека, которая нашла широкое отражение в фольклоре других народов.

Цель статьи - показать те особенности и различия, которые встречаются в туманяновской разработке.

**ԹՈՒՄԱՆՑԱՆ ԱՆՀԱՏԸ ԻՐ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ
ՍԻՐԱՆՈՒՇ ՂՈՒՇՉՑԱՆ**

Մ. Մարտիրոսյանի անվան N5 հիմնական դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Նամակի ժանրը արդեն իսկ համարվում է հնացած ու անօգտագործելի, պարզապես անցյալ: Բայց երբ կարդում ենք մեծերի նամակները՝ նրանց սրտի խոսքը (իսկ նամակները հիմնականում անկեղծ են լինում), առավել քան համոզվում ենք, որ դրանք գրական գոհարներ են թե՛ իրենց ասելիքով, թե՛ գաղափարով ու գեղարվեստական հորինվածքով ու որ շատ կարևոր է՝ անկեղծությամբ: Նաև համոզվում ենք, որ հենց այդ նամակներից են ծնունդ առել շատ ստեղծագործություններ:

Թումանյանի նամակները բացառիկ հնարավորություն են՝ հաղորդակցվելու եզակի ու անկրկնելի անհատի հետ, ծանոթանալու նրա հույզերին, զգացմունքներին, մտածողությանը, փոխելու մտածողությունդ ու աշխարհայացքդ, հոգիդ լցնելու գեղեցիկ ու մաքուր զգացմունքներով:

Թումանյանի նամակները կարդալով՝ հասկանում ես, որ ոչ միայն «Մեր թռիչքը Հովհաննես Թումանյանի արվեստի գոհարակերտ բարձունքից այն կողմ չի անցել», այլև մարդկային հոգու վեհությունն ու բարձրությունը Թումանյանի հոգու գոհարակերտ բարձունքից այն կողմ չի անցել:

Թումանյանի նամակները ընթերցելով՝ ավելի ես արժևորում մեծն Թումանյանին ու զարմանում մեծ մարդու ազնվագույն հատկանիշներով՝ մարդասիրությամբ, հայրենասիրությամբ, ընկերասիրությամբ, անձնագոհությամբ...

Նամակներում Թումանյանն է՝ իրեն հատուկ գրավչությամբ, համեստությամբ, փիլիսոփայությամբ և յուրահատուկ սրամտությամբ:

Թերթենք Հովհաննես Թումանյանի նամակները. Ուլբե՞ր են հասցեատերերը, ու՞մ հետ է կիսվել մեծ բանաստեղծը ուրախ թե տխուր պահերին: Բնականաբար մարդիկ, ովքեր հոգեհարազատ էին Հովհաննես Թումանյանին, գաղափարակից կամ էլ շատ սիրելի: Բազմաբնույթ են այդ նամակները, և շատ տարբեր՝ արծարծված թեմաները, բայց կա մի ընդհանրություն. բոլոր նամակներից էլ վեր է հառնում բանաստեղծի անչա՛փ մարդկային կերպարը:

Մեծ պատասխանատվությամբ էր վերաբերվում Թումանյանը ստեղծագործողի իր ասելիքին, արվեստին ու արվեստի մարդու ճակատագրին ընդհանրապես, վստահ, որ «Ամեն մի ժողովրդի մեծության առաջին նշանը իր գրականությունն է», իմանալով նաև, որ իր խոսքերով՝ «Գրականությամբ պարապող մարդը վատ է»:

Իր ներսիայնական ընկերոջը՝ Արսեն Ղլտճյանին, գրում է. «Դու հարցնում ես իմ քեֆ ու հալից. դա այնքան պարզ ու հայտնի բան է. ամենքն էլ

գիտեն, որ գրականությամբ պարապող մարդը վատ է: Ընտանեկան հոգսերի տառապանքն ու գրական ձգտումների հուզմունքը անվերջ մաքառում են... Բայց չէ՞ որ ես բանաստեղծ եմ, պետք է գրեմ, պետք է տպեմ, մարդիկ պահանջում են, տրտնջում են, զարմանում են... »¹:

Ու համոզվում ենք՝ պատասխանատվությունը Թումանյանի բնավորության ընդգծված գծերից է: Պետք է գրել, ու մեծ բանաստեղծի ներշնչարանը նաև ժողովրդական բանահյուսությունն է, պարզ ու հասարակ մարդկանց զրույցներն ու պատմություններն են:

Նամակների մի զգալի մասը հասցեագրված է Մարիամ Թումանյանին: Նրանցից մեկում կարդում ենք. «Կիրակի օրերը հավաքում եմ գյուղացիներին, խոսեցնում, ուզում եմ լեզենդաներ հավաքել: Արդեն մի երկու լավ բաներ եմ գտել» (IV, 337)...

Հետո շարունակում է. «Բայց ափսոս, որ մեր այդ օրերում պակասում են մարդուն աստվածային տիպ պարզևող, ոգի ու ձգտում ներշնչող վսեմ բաները. նրանց հետ և պոեզիան, իսկ պոեզիայի ներշնչարաններից մեկը կինն է ու սերը նրա նկատմամբ... Կինն էական նշանակություն ունի մարդու վրա, մանավանդ զգայուն մարդու վրա» (IV, 340):

Ու այս զգայուն անհատը կարող էր մի խոսքով, մի նամակով քաջալերվել, ուժ ստանալ, նաև ապրել ու ապրեցնել:

Նրա բոլոր զգացումները մեծ էին ու շքեղ, մեծ ու շքեղ էր նաև թումանյանական կարոտը:

Դարձյալ իշխանուհի Մարիամին գրում է. «Կարոտը ինձ համար ամենաթանկագին զգացումն է: Կարոտից է առաջ գալիս ամեն բարձր բան. իդեալներն ի՞նչ են որ. հոգու կարոտներ» (IV, 352): Իսկ գուցե այս տողերը գրելիս հենց իրեն՝ Մարիամի՞ն էր կարոտել:

Զավակներին հասցեագրված նամակն է. «Դուք չեք կարող երևակայել, թե ինչքան եմ ձեզ կարոտել և ինչքան եմ ուզում շուտով հասնել ձեզ մոտ» (IV, 426):

Քայլ առ քայլ համոզվում ենք, որ նամակներում նույն Թումանյանն է, ու նույն գաղափարներն են, որ հանդիպում ենք ստեղծագործություններում: Մտերիմներից մեկին՝ գրական-հասարակական գործիչ Ֆիլիպ Վարդապարյանին, գրում է. «Հայնեն ասում է՝ բանաստեղծի սիրտը աշխարհի կենտրոնն է: Ուրեմն, վա՛յ մեր բանաստեղծին ու նրա սրտին: Հիրավի, իմ սրտի վրա չափազանց ծանրանում են մեր աշխարհի ցավերը: Սակայն քեզ ասեմ, որ մի մեծ ազգային պոեմա եմ ձևում, մի բան, որ վաղուց ներսս փոթորկում էր և անշուշտ մի օր ասելու էր՝ եղիցի լույս» (IV, 354): Ասվածը վերաբերում է «Հին կռիվը» պոեմին:

¹ **Թումանյան Հ.**, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, Եր., 1969, էջ 333: Այսուհետ բնագրում կնշվի միայն հատորը՝ հոմեական, էջը՝ արաբական նիշերով:

Անմիջական էր Հովհաննես Թումանյանը, ասելիքը՝ պարզ ու հասկանալի, երբեմն՝ հումորախառն: Նամակներից մեկի միտքը ընդհատում է՝ գրելով. «Այստեղ մերոնք եկան, ինձ խանգարեցին: Անշուշտ, եթե Աստված էլ կին ու երեխաներ ունենար, նա էլ չէր կարող աշխատել, ստեղծել կամ, ո՞վ գիտի, ինչի նման մի բան ստեղծեր: Մենակությունն աստվածային դրություն է, և մենակ մարդիկ են լավ բաներ տվել աշխարհին» (IV, 355):

Բայց այդ նույն «խանգարող» ընտանիքի հանդեպ անսահման էր Թումանյանի սերն ու պատասխանատվությունը: Դարձյալ նամակի տողերից. «Երեխաներին ուզում ես կրթել, ինչպես դու ես ցանկանում, բայց չես կարողանում» (IV, 358):

Այն ամենը, ինչ այս կամ այն կերպ կարևորվել է Թումանյանի կյանքում, հանդիպում ենք և նամակներում:

Մեծ էր «Վերնատուն» գրական խմբակի նշանակությունը Թումանյանի համար, բոլորից շատ Թումանյանն է հոգ տարել խմբակի մասին, անհանգստացել և ուրախացել, երբ հաջողություն է արձանագրել: Կարդում ենք. «Այս ձմեռ «Վերնատունը» պատվավոր կերևա, պետք է մի նոր հոսանք առաջ բերել, նոր գրական հասկացություններ, ճաշակ, լուրջ վերաբերմունք, պատկառանք դեպի գրիչը, գրչի անպայման մաքրությունը: Կեցցե՛ «Վերնատունը» (IV, 360):

Լոռին եղել է մեծ բանաստեղծի ներշնչարանը, նրա սիրո ու կարոտի ակունքը: 1902 թվականին Սմբատ Շահագիզին ուղղված նամակում հենց այդ սերն ու կարոտն է. «Երկար ժամանակ է՝ չեմ եղած իմ հայրենիքում: Սաստիկ ցանկանում եմ գնալ, շնչել մանկությանս սիրած վայրերի օդը, ապրել մեր ժողովրդի մեջ» (IV, 369):

Ու շա՛տ է հայրենի եզերքի հանդեպ ունեցած կարոտը նաև Թումանյանի ստեղծագործություններում, այնքան շատ, որքան մանկության սիրած վայրերն ու մանկության հուշերը.

Եվ մանկան նման արտասվում եմ ես,
Երբ այն օրերում, չարությամբ լցված,
Քեզ, սու՛րբ մանկություն, հիշում եմ ինչպես
Երազի տեսիլք՝ անհետ չքացած (II, 19):

Նույն խոր կարոտն ենք տեսնում նաև Վանյա Խանդամիրյանին գրված նամակում. «Շատ ժամանակ է՝ չէի անցել այս ճանապարհով, իմ հայրենիքի սիրուն ձորերով: Այդ ձորերն ինձ համար լիքն են ուրախ ու տխուր հիշատակներով, և ես չգիտեմ՝ դրանցից ո՞րն է ավելի թանկ ու սիրելի իմ սրտին» (IV, 370):

Թումանյանի սիրտը մեծ էր, մեծ այնքան, որ «ամեն արարած տեղ ուներ այնտեղ»: Մեծ հոգու ու բարի սրտի տեր էր նա թե՛ կյանքում, թե՛ նամակներում ու նաև ստեղծագործություններում:

Ո՛նց է ժպտում իմ հոգին

Չարին, բարուն, ամենքին.

Լույս է տալիս ողջ կյանքիս

Ու էն ճամփիս անմեկին (II, 263):

Ու հազար կապով կապված էր այդ նույն կյանքին, մարդկանց, բոլորին:

Ուշագրավ է այս նամակի շարունակությունը, մի սրտառուչ փոքրիկ պատմություն, թե ինչպես տարիներ առաջ հոր հետ անցնում էր իր նկարագրած ձորերից մեկով: Հայրը նրա ուշադրությունը հրավիրում է մի ծառի՝ ասելով. «Նայի՛ր, Օհաննէ՛ս, կարծես թե օքմին լինի էն ժայռի գլխին կանգնած»:

Թումանյանը անչափ շատ էր սիրում հորը, ու երբ հոր մահից հետո անցնում է այդ ձորերով ու նայում այդ ծառին, նրան թվում է, թե հոր ձայնն էլ ապրում է այդ ձորերում ու ամեն անգամ կանչում. «Նայի՛ր, Օհաննէ՛ս, կարծես թե օքմին լինի էն ժայռի գլխին կանգնած»:

Շարունակվում է նամակը. «Այժմ անցնելիս նայեցի և... այլևս չկար էն ծառը, ու հետո էլ չկար այն հրաշալի **պատրանքը**՝ իմ հոր ձայնը: Երկուսն էլ կորել էին» (IV, 370):

Հիշենք քառյակներից մեկը.

Ու՛ր կորա՛ն...

Մոտիկներս ու՛ր կորա՛ն,

Ինչքան լացի, ձեն ածի,

Ձեն չտվին, լու՛ռ կորան (II, 258):

Իսկ հրաշք «Պատրա՛նքը».

Վեր է կացել էն սարում

Մեր Չալակը իր թևից,

Գնում է մութ անտառում

Քաջ ախպերս ետևից:

Զրնգում են նրանք խոր

Էն անտառում կուսական.

Ես կանչում եմ նորից նոր,

Ինձ թվում է, թե կգան...

Զու՛ր... վաղու՛ց են, ա՛խ, նրանք

Մեր սարերից գնացել.

Էն զիլ ձեներն են մենակ

Իմ ականջում մնացել (II, 245)...

Փիլիպոս Վարդազարյանին գրած նամակներից մեկում գրում է. «Լավ ես ասում, թե կյանքը կյանք է: Բայց մարդն էլ մարդ է: Մարդ հոգնում, փոխվում,

կոտրվում է և մեռնում, այնուհետև դարձայ կյանքը կյանք է, բայց մարդը էլ որտե՞ղ է: Չէ՛, քիչ մխիթարանք կա դրա մեջ» (IV, 380):

Վերջացա՛վ.

Կյանքս մաշվեց, վերջացա՛վ.

Ինչ հույս արի, փուչ ելավ,

Ինչ խնդություն՝ վերջը ցա՛վ (II, 257):

Ու կյանքի այս վաղանցիկ լինելու զգացողությունից է, որ զայրացած ու մի քիչ էլ զարմացած պոետը պիտի գոչեր.

Հե՛յ ազահ մարդ, հե՛յ անհոգ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ,

Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.

Ի՛նչ են տարել նրանք կյանքից, թե ի՛նչ տանես դու քեզ հետ,

Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեղ (II, 267):

Նամակներում հանդիպում ենք նաև Թումանյանի ստեղծագործական թեմաներից կարևորին, հարցերից հարցին՝ մարդու՝ մարդ մնալու գաղափարին: Ցավով ու ամոսսանքով գրում է. «Քիչ մարդիկ կան, որ համ ճաշակ ու սիրտ ունեն, համ էլ սրտալի են մոտենում, և մարդ զգում է ջերմությունը անկեղծության ու սիրտ, մնացածները կեղծավոր, հիմար, անբովանդակ կամ հաճախ զգվելի բովանդակությամբ մարդիկ են» (IV, 384):

Ու մարդու՝ մարդ դառնալու գաղափարը մնում է կարևորագույնը Թումանյանի թե՛ կյանքում, թե՛ ստեղծագործություններում:

Խոսելով Թիֆլիսի հայ երաժշտական ընկերության բացման մասին՝ մի ուրիշ նամակում կարդում ենք. «Թող բացվի վարագույրը, թող հնչի աստվածային երաժշտությունը, և զազանը մարդ դառնա» (IV, 397):

Բանաստեղծը անչափ պարզ էր իր գրվածքներում, «աչքի նման պարզ», բայց և «աչքի նման բարդ»՝ ասելիքի խորությամբ: Ու թերևս մեր լեզվում ոչ մի հականիշ այնքան համահունչ չէ, որքան Թումանյանի «պարզն» ու «բարդը»: Ինքն էլ նույնքան պարզ էր, պարզ, անկեղծ ու համեստ: Ն. Մառին ուղղված նամակում կարդում ենք. «Ասում էիք՝ մենք բանաստեղծ մարդիկ ենք, ոգևորվում ենք: Բայց մեր մեջ մի մեծ տարբերություն կա. Դուք ոգևորվում ու գործ եք կատարում, իսկ ես միայն ոգևորվում եմ: Եվ գործի ամբողջ հույսը Դուք եք» (IV, 392): Եվ այս ասում է ստեղծագործական հեղեղներ թափած մարդը՝ ամենայն հայոց բանաստեղծը:

Օանր տարավ Հ. Թումանյանը Մեծ եղեռնի սարսափները, վերապրեց դրա հետևանքները: Դարձյալ Ֆիլիպին. «Աչքերիս առաջ աշխարհքներ են շուռ գալիս: Երեկ էլ նոր հեռագիր ստացանք, թե լայնածավալ կոտորածներ են սկսել Տաճկահայաստանում: Էն, ինչին որ սպասում էինք շարունակ ու ինչի մասին սարսափից չէինք խոսում: Այո՛, էսպես թուրքը վերջին անգամ լողում է ու էս դժբախտ ժողովրդի արյան մեջ: Ես համոզված եմ, որ այս վերջին ոճրագործությունը պետք է լինի էս համաշխարհային ճիվաղի» (IV, 401):

Թումանյանը վստահ էր, թե՞ ենթադրում էր, որ դա վերջին ոճրագործությունն է, բայց չէ՞ր մտածում, որ թուրք ճիվաղը դեռ ունի աղբբեջանցի տեսակ:

Այս մտահոգություններով է, որ ավելի վաղ՝ 1914-ին, արդեն գրել է «Վերջին տագնապը» («Վեր է կացել հին վիշապը նոր թափով...»): Իսկ 1916թ.-ին՝ «Հոգեհանգիստը»:

1917 թվականին, երբ վտանգված էր հայրենիքը, Թումանյանը իր բոլոր երեխաներին նվիրեց հայրենիքի պաշտպանության սուրբ գործին: Այդ օրերին Անդրանիկ Օզանյանին ուղղված հայտնի նամակում գրում է, որ իր տղաները երկրի կառավարության, Ազգային խորհրդի և զորավարի տրամադրության տակ են, իսկ աղջիկները պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքներին:

1921թ. Ավ. Իսահակյանին ուղղված նամակում տեսնում ենք և՛ գրչակից ընկերոջ սրտացավությունն ու անհանգստությունը, և՛ իր երկրի ապագայի համար տագնապող բանաստեղծին. «Կգաս, կտեսնես մեր աշխարհը ավերված, մեր ժողովուրդը կոտորված, ջարդված, մեր հարազատների ու ընկերների շրջանները նոսրացած: Կտեսնես, թե աշխարհքի էս ծով վշտից ինչ ահագին բաժին է ընկնում ինձ ու քեզ, բայց արի» (IV, 422): Իրոք, աշխարհի ծով վշտից մեծ էր Թումանյանի բաժինը.

Ծով է իմ վիշտն անափ ու խոր՝

Լիքն ակունքով հազարավոր.

Իմ գայրույթը լիքն է սիրով,

Իմ գիշերը՝ լիքն աստղերով (II, 259):

Սա արդեն ևս մեկ նախանձելի գիծն է Թումանյանի՝ անուղղելի լավատես. Չէ՞ որ հետո ավելի վստահ պիտի ասեր. «Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած...» (II, 259):

Բազմաբովանդակ ու հետաքրքիր են Թումանյանի բոլոր նամակները, ու բոլորում տեսնում ենք մեծ բանաստեղծին՝ սիրող ու կարոտող Թումանյանին, անմիջական ու պարզ, իր ծով սրտի մեջ հայրենիքի անափ վիշտը պարփակող Թումանյանին:

Այսօր, երբ ավելի շատ կարիք ունենք մարդկային բարձր առաքինությամբ ու արժեհամակարգով մարդկանց, ու երբ, ցավոք, այնքա՛ն քիչ են նրանք, երբ ամենուր փնտրում ենք ազնիվը, լավն ու բարին, ավելի ենք մոտենում Թումանյանին, արժևորում նրա մարդ տեսակը, որն այնքան պարզ ու պայծառ երևում է իր նամակներում: Խոր փիլիսոփայություն ու նաև անկեղծություն, բարձր գաղափարներ, կյանքում լավն ու բարին տեսնելու, նույն այդ կյանքը գնահատելու անգերազանցելի մշակույթ. ամեն ինչ կարելի հանդիպել Թումանյանի նամակներում, ու հենց այդ ամեն ինչն էլ սինթեզվում ու դառնում է Թումանյան մտածող, Թումանյան քաղաքացի, Թումանյան մարդ:

Բանալի բառեր – Հովհաննես Թումանյան, նամակ, անհատ, բանաստեղծ, մարդ, ստեղծագործություն, գրականություն, թեման:

Միրանուշ Ղուշչյան, Թումանյան անհատը իր նամակներում - Թումանյանի ժառանգության ոչ պակաս կարևոր մասն են կազմում նրա նամակները: Թումանյանի նամակները ամենայն հայոց բանաստեղծի կյանքի և գրական-հասարակական գործունեության, խոհերի, ժամանակաշրջանի խոսուն վկաներն են:

Հոդվածում փորձել ենք Թումանյանի նամակների միջոցով ներկայացնել Թումանյան մարդուն, Թումանյան մտածողին և Թումանյան բանաստեղծին՝ զուգահեռներ տանելով Թումանյանի նամակների և ստեղծագործությունների միջև:

Сирануш Гушчян, Личность Туманяна в его письмах - Немаловажной составляющей наследия Туманяна являются его письма. Письма Туманяна — говорящие свидетели жизни, литературной общественной деятельности, дум, эпохи «поэта всея Армении».

В статье с помощью писем Туманяна мы попытались представить Туманяна-человека, Туманяна-мыслителя и Туманяна-поэта, проводя параллели между письмами Туманяна и его произведениями.

Siranush Ghushchyan, Tumanyan's personality in his letters - The letters of Tumanyan are an important component of his heritage. Tumanyan's letters are speaking witnesses of the life, writing and public activity, thoughts, the era of the "poet of all Armenians".

In the article with the help of Tumanyan's letters we would like to present Tumanyan as a man, as a thinker and as a poet, by drawing parallels between Tumanyan's letters and his works.

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի
Հովհ. Թումանյանի կյանքի և գործի տարեգրության խմբի բաժնի վարիչ

Հովհաննես Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունը հայ գրականագիտության ամենից շատ ուսումնասիրված բնագավառներից է, և այսօր, հատկապես գրականագետների համեմատաբար ավագ սերնդի միջավայրում, բավական տարածում ունի այն մտայնությունը, թե թեման արդեն սպառված է. պատահական չէ, որ Բանաստեղծի մասին վերջին լուրջ ուսումնասիրությունները արդեն երեք-չորս տասնամյա վաղեմություն ունեն:

Թումանյանագիտության պատմության՝ մեզ ամենամոտ շրջանը անցյալ դարի 60-70-ական թվականներն են: Այդ տարիներին են վերաբերում թումանյանագիտության նվիրյալ երախտավորների՝ Արամ Ինճիկյանի, Էդվարդ Ջրբաշյանի, Հրանտ Թամրազյանի, Լևոն Հախվերդյանի և մյուսների ուսումնասիրությունները, որոնցով իրավամբ նշանավորվում է թումանյանագիտության վերջին ամենաբեղմնավոր փուլը: Ամփոփելով անցած տասնամյակների փորձը՝ թումանյանագետների այդ սերունդն ստեղծեց թե՞ Բանասիրական, թե՞ տեսական-գրականագիտական առումներով հիմնարար արժեքներ, որոնց ըստ արժանվույն գնահատումն ու իմաստավորումը թումանյանագիտության ապագա պատմաբանների գործն է:

Սակայն թումանյանագիտության այս վերջին արգասավոր մակընթացությանը պիտի հաջորդեր տեղատվության երկարատև մի շրջան՝ խորհրդային վերջին տասնամյակը և ետխորհրդային երկու տասնամյակները: Ճիշտ է՝ Թումանյանի ակադեմիական տասնատորյակի տպագրությունն իրականացվել է հիմնականում 90-ական թվականներին, բայց հատորները խմբագրված-պատրաստ են եղել նախորդ շրջանում: Այդ երեք տասնամյակների ընթացքում շատ բան է փոխվել: Ինչպես կյանքի բոլոր բնագավառներում, այնպես էլ մշակութային դաշտում ձևավորվել են արժեքային նոր համակարգեր, որոնք այլ չափանիշներ են թելադրում նաև հոգևոր արժեքների վերաիմաստավորման ու վերագնահատման համար: Միավլած չենք լինի, եթե ասենք, որ դա ամենից առաջ վերաբերում է Հովհաննես Թումանյանին:

Թումանյանագիտության արդի խնդիրները, իհարկե, շատ են: Այս համառոտ հաղորդման մեջ ես փորձել եմ անդրադառնալ դրանցից միայն երեքին:

Ինչպես վերևում ակնարկեցինք, ժամանակակից թումանյանագիտության առաջին անհրաժեշտություններից մեկը այդ բնագավառի պատմության ստեղծումն է, որ բարեբախտաբար արդեն սկսում է գիտակցել ուսումնասիրողների

այսօրվա սերունդը՝ եռանդուն գործունեություն ծավալելով այդ ուղղությամբ: Այսպես, Սուսաննա Հովհաննիսյանն ամբողջացնում է բանաստեղծի կյանքի պատմությունը: Ճիշտ է՝ դա բուն իմաստով գիտական կենսագրություն չէ, բայց վավերացնում է շատ կարևոր մի իրողություն, այն, որ Թումանյանի ապրած կյանքն ինքնին մի հոյակապ ստեղծագործություն է, որտեղ նա անձնական օրինակով մարմին է տալիս մեծատառով Մարդու իր նվիրական երազին: Եվա Մնացականյանը ծավալուն ուսումնասիրություն է գրում ժամանակի քննադատության կողմից բանաստեղծի ստեղծագործության գնահատման մասին՝ կարևոր արդյունքները պարբերաբար հրապարակելով մամուլում: Թումանյանի թանգարանի և Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհուրդների համատեղ որոշմամբ սկսվել է բանաստեղծի ակադեմիական տասնհատորյակի վերահրատարակությունը՝ լրացումներով, ճշգրտումներով և նոր խմբագրությամբ: Առաջին երկու հատորները արդեն հրապարակի վրա են, երրորդը տպարանում է և շուտով լույս կտեսնի: Վերջապես, գրականության ինստիտուտում հատուկ կազմավորված խմբի ջանքերով պատրաստվում է Թումանյանի կյանքի և ստեղծագործության ամբողջական տարեգրությունը՝ չորս հատորով: Առաջին և երկրորդ հատորները, որ ընդգրկում են 1869-1914 թվականների շրջանը, արդեն լույս են տեսել և արժանացել մասնագետների խրախուսանքին: Երրորդ գիրքը «1915-1919» արդեն խմբագրված ու սրբագրված, տպարան գնալու համար սպասում է բարեհաճ հովանավորության: Ինչպես տեսնում ենք, ուսումնասիրողները դատարկված են չեն դիմավորում մեծ բանաստեղծի հորեղանակյա տարին:

Այս ամենը նպաստավոր հիմք է ապահովում թումանյանագիտության համակարգված պատմության համար, որ իր հերթին կարող է օժանդակել պատասխանելու մի հարցի, որ այսօր էլ տարակարծությունների տեղիք է տալիս ուսումնասիրողների շրջանում, այն, թե ինչ ուղղության է հետևում բանաստեղծը, հայտնի ստեղծագործական մեթոդներից որով է առաջնորդվում:

Թումանյանի կենդանության ժամանակ՝ ո՛չ 90-900-ական թվականներին, ո՛չ էլ 10-ականներին, երբ նրա ստեղծագործությունն արդեն բուռն քննարկումների առարկա էր, այդ հարցն առհասարակ չէր բարձրացվում, որ նշանակում է, թե դրան առանձին կարևորություն չէր տրվում, իսկ Վալերի Բրյուսովը 1916թ. հայ պոեզիայի մասին հայտնի դասախոսության մեջ պարզապես հայտարարեց, որ հայ բանաստեղծը գրական ոչ մի հայտնի ուղղության չի հետևում, ունկնդիր է միայն իր ներշնչանքի ձայնին: Այդ շրջանում Թումանյանի ստեղծագործական ուղղության մասին մի երկու անգամ հարևանցիորեն ակնարկել են միայն հայ առաջին մարքսիստ քննադատները: Այդ հարցին առանձին կարևորություն պիտի տրվեր խորհրդային տարիներին, հատկապես 60-70-ական թվականներին, երբ պաշտոնական գաղափարախոսությունը արվեստի արժեքայնության

բարձրագույն չափանիշ էր ընդունում ռեալիզմը: Այդ ուղղության մասին եղած պատկերացումների համաձայն՝ Թումանյանի ստեղծագործությունը լիովին բավարարում էր այս պայմանը, քանի որ ո՛չ նախորդ, ո՛չ էլ նրան ժամանակակից գրողներից ոչ մեկը այնքան ճշմարտացի ու հարազատորեն, գեղարվեստական անկրկնելիությամբ չէր ներկայացրել հայ իրականությունը իր բոլոր կողմերով, ինչպես նա: Ուստի Թումանյանը հռչակվեց ռեալիզմի անվիճելի հետևորդ:

Ետխորհրդային երեք տասնամյակների ընթացքում հումանիտար գիտությունների բնագավառում նախկին պատկերացումների վերանայման անհրաժեշտություն է առաջացել: Դա վերաբերում է նաև Թումանյանի ստեղծագործական ուղղությանը, քանի որ նրա ստեղծագործության հետ կապված շատ հիմնահարցերի հնարավոր չէ բավարար պատասխան տալ ռեալիզմի դիտակետից:

Բայց նախ ուզում եմ ուշադրություն հրավիրել հարցին առնչվող մի իրողության վրա: Կան բացառիկ ընտրյալներ, որոնց ստեղծագործությունը անհնար է պարփակել որևէ հայտնի ուղղության շրջանակներում. նրանք իրենք են սկիզբ դնում նոր ուղղության՝ հաճախ մնալով անկրկնելի, այսինքն՝ ունիկում, ինչպես Տերյանն է բնութագրում Թումանյանին: Նրանք՝ այդ բացառիկ ընտրյալները, սովորաբար էական նշանակություն չեն էլ տալիս դրան, ժամանակին են թողնում վճիռը:

Միսաք Մեծարենցը, օրինակ, ընդվզում է այն քննադատների դեմ, որոնք իրեն հեզնանքով սիմվոլիզմի նոր ուղղություն ստեղծելու հավակնություններ էին վերագրում. «Ի՞նչ է այս դպրոց կազմողի պիտակը, զոր մանկահասակ *affichur*-ներ կուզեն փակցնել ճակատիս, որ շատ բարձր կը մնա իրենց հասակեն, -վրդովմունքով գրում է նա, - ... Ես երբեք դպրոցի մը հետևելու կանխակալությունը կամ նոր մը հիմնելու ունայնափառությունը չեմ ունեցեր: Ամեն մարդ, որ իր անհատականության արժանապատվության գիտակից է, ինքնին դպրոց մը կը կազմե արդեն»¹:

Թումանյանը մի ուրիշ կողմից է մոտենում հարցին: Նա ժամանակին չտպագրված և միայն սևագիր ինքնագրով պահպանված մի հոդված ունի՝ «Զինվորագրվել են» խորագրով: Գրության առիթը հետևյալն է: 1918թ. սեպտեմբերին Թիֆլիսի «Աշխատավոր» լրագիրը նորաստեղծ «Ժողովրդի ձայն» օրաթերթի մասին հաղորդագրության մեջ աշխատակիցների շարքում մի քանի հայտնի գրողների հետ հիշում է նաև Թումանյանի անունը՝ հավելելով, թե նրանք «զինվորագրվել են» թերթին: Այս արտահայտությունը ուղղակի զայրացրել է բանաստեղծին՝ առիթ տալով երկար ու հանգամանորեն բացատրելու, թե իր նմանները երբեք չեն կարող «զինվորագրվել» որևէ կուսակցության, ուղղության կամ գաղափարի, որովհետև նրանց միակ պաշտամունքը գեղեցիկն է, իսկ դրան

¹ Մ. Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1981, էջ 170:

հասնելու ճանապարհին անվախճան է: Դրա համար էլ իր նմանները, ինչպես բացատրում է բանաստեղծը, անվերջ որոնումների մեջ են և դժվարությամբ են գտնում իրենց երազած հանգրվանը կամ երբեք էլ չեն գտնում: Սա Մեծարենցի արտահայտությամբ «իր անհատականության արժանապատվությանը գիտակից» ամեն մի ստեղծագործողի համար սկզբունքի խնդիր է, և անպայման պետք է հաշվի առնել գրողի ուղղության կամ մեթոդի մասին խոսելիս: Ավելի վաղ՝ 1913թ., Շանթի «Հին աստվածների» գրական դատի առիթով «Հորիզոնում» տպագրած մի հոդվածում Թումանյանը գրական երկի արժևորման բարձրագույն չափանիշ է համարում այն, որ 1300 տարի առաջ Դավթակ Քերթոզն անվանել է «Աստվածային բանի արվեստական ոգի»։ «...Ամենից առաջ ուզում եմ ճշտել, գտնել, թե արդյոք նրա մեջ կա՞ ստեղծագործողի կենդանի շունչը,- կարդում ենք հոդվածում,- էն, որ ամենայն իրավամբ կոչվում է Աստվածային, որովհետև նա է միայն, որ գրական արտադրությանը տալիս է մեծության ու անմահության հատկությունը: Մնացածը՝ և՛ արվեստ, և՛ փիլիսոփայություն, և՛ հասարակական գաղափար, և՛ բարոյականություն - բոլորը գալիս են դրանից հետո»¹: Թվարկվածների շարքում գրական ուղղությունը կամ մեթոդը չկա, որովհետև դա ըստ էության դրանց համալիր ամբողջությունն է:

Բոլոր այս բացատրություններից ինքնաբերաբար առաջ է գալիս այն հարցը, թե որքանով է հիմնավոր Թումանյանին անվերապահորեն համարել ռեալիստական դպրոցի հետևորդ կամ նույնն է, թե «գինվորագրված» այդ ուղղությամբ: Հարցի վերաբերյալ իմ պատկերացումները ես ներկայացրել եմ Թումանյանի ակադեմիական տասնհատորյակի վերահրատարակության երկրորդ հատորի «Խմբագրության կողմից» հոդվածում: Այստեղ կփորձեմ համառոտ ներկայացնել դրանք:

Հայտնի է, որ Թումանյանին ռեալիստ համարողների գլխավոր հիմնավորումն այն է, թե նա ճշմարտացի է պատկերել հայ գյուղաշխարհի բարքերը, սոցիալական հարաբերությունները, այդ միջավայրի մարդկանց, այսինքն՝ ինչպես ժամանակին ասվում էր, «տիպական խարակտերները տիպական հանգամանքներում»: Այս հարցը տարակարծությունների առիթ է տվել դեռևս խորհրդային ժամանակներում, վիճելի է նաև այսօր, թեև ուղղափառ Ֆրեալիստականներ¹ այսօր էլ դեռ կան: Դա ժամանակին առիթ է տվել բազմավաստակ թումանյանագետ Էդ. Ջրբաշյանին հանդես գալ «Թումանյանի ռեալիզմը»² ծավալուն հոդվածով: Խորապես համոզված, որ Թումանյանի ստեղծագործական մեթոդի համար ամենաբնորոշը ռեալիզմն է՝ նա հարցը հանգամանորեն քննում է այդ ուղղության դասական, քննադատական և այսպես

¹ **Հովհ. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1995, էջ 26:

² Տե՛ս **Թումանյան**, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 3, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1983, էջ 9-31:

կոչված սոցիալիստական տարատեսակների համեմատությամբ և նշում այնքան տարբերություններ ու առանձնահատկություններ, որ բանաստեղծին ըստ էության ավելի շուտ հեռացնում են այդ ուղղությունից, քան մոտեցնում:

Պիտի խոստովանեմ՝ նաև բազմահմուտ թումանյանագետի նկատած այդ առանձնահատկություններն են հուշել ինձ, որ իրականության ճշմարտացի արտացոլումն ինքնին դեռևս բավարար հիմք չի կարող լինել Թումանյանի ստեղծագործական մեթոդի սպառիչ բնութագրության համար: Դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե բանաստեղծի բազմաբնույթ ու բազմաժանր ստեղծագործությունը դիտենք որպես անտրոհելի համակարգ և փորձենք գտնել այն գլխավոր հիմնախարիսխները, որոնց վրա բարձրանում է այդ համակարգը:

Թումանյանի գեղարվեստական աշխարհը բացառիկ ներդաշնակ ու միասնական կառույց է, որ ունի իր հաստատուն խարսխակետերը՝ իրենց գործող խորհրդանշաններով՝ լույս ու խավար, սև ու սպիտակ, վերև ու ներքև, բարձր ու ցածր, անանց ու անցավոր, պահ ու հավերժություն և այլն: Թումանյանական ցանկացած պոեմ կամ քնարական տրամադրություն սկիզբ է առնում այդ հակադրություններից և վերջիվերջո հանգում է դրանց: Կյանքից, սոցիալական ու ազգային իրականությունից, մարդկային հարաբերությունների ամենատարբեր ոլորտներից քաղված պոեմներն ու դրվագները, չկտրվելով իրենց իրական հիմքից, գեղարվեստական մեկնաբանությամբ իրենց առարկայական մասնավորությունը իմաստավորում են բարոյական արժեքների մի վերին բացարձակության մեջ: Իսկ այդ բացարձակի կենտրոնը Թումանյանի որոնած մեծատառով Մարդն է՝ ոչ այնքան որպես հասարակական կամ կենսաբանական երևույթ, որքան արարչական ստեղծագործություն, որ, հեռացած լինելով իր ծագումնաբանական կոչումից, վերջիվերջո պիտի վերադառնա դրան:

Թումանյանի գեղարվեստական համակարգում այդ բացարձակի տիրույթում են գործում նաև ժամանակն ու տարածությունը: Տեքստային իրականության սահմաններում գործողություններն ունեն իրենց որոշակի տեղը, կատարվում են որոշակի ժամանակամիջոցում, հոգեվիճակները, քնարական ապրումները ևս անցյալ կամ ներկա պահերի հետ են կապվում, տեղի են ունենում ինչ-որ հայտնի առարկայական իրադրության և սոցիալական ժամանակի մեջ: Բայց դրանք մեծ ժամանակի և մեծ տարածության մասնավորություններն են, որ ենթատեքստում միավորվում են բացարձակ ժամանակի, այսինքն՝ հավերժության, և բացարձակ տարածության, այսինքն՝ անսահմանի, անսկզբի ու անվախճանի մեջ: Թումանյանը միշտ աշխարհի իրերն ու երևույթները դիտում է տարածության բարձրից, հավերժության հեռվից, որպեսզի մասնավորությունները չքողարկեն բացարձակ էությունները: Այնպես որ, Թումանյանի ստեղծագործության մեջ հասարակական հարաբերությունների, սոցիալական միջավայրի, բարքերի իրական պատկերները նրա

ստեղծագործական աշխարհիմացության համակարգում իմաստավորվում են ռեալիզմի հետ անհամատեղելի նշանակություններով:

Թումանյանի ստեղծագործական մեթոդի հարցում կողմնորոշվելու համար կարևոր նշանակություն ունի նաև նրա այնքան հետևողական հետաքրքրվածությունը հեքիաթային սյուժեներով ու ժողովրդական ավանդություններով: Ռեալիստը կենսական փաստը վերլուծում ու մեկնաբանում է որոշակի ժամանակի սոցիալական խնդիրների ու բարոյական արժեքների տեսանկյունից: Ժողովրդի հավաքական գիտակցությունը նույն կենսական փաստը իմաստավորում է հազարամյակներով ստուգված հարակա ճշմարտությունների ու սրբագործված արժեքների դիտակետից: Թումանյանի ստեղծագործական մեթոդի հիմքը այս դիտակետն է: Եթե դրան, այնուամենայնիվ, անհրաժեշտ է որևէ անուն տալ, ինձ թվում է՝ ամենահարմարը կարող է լինել ժողովրդայնությունը: Իհարկե, ոչ այն նշանակությամբ, որով այդ հասկացությունը շրջանառում էր խորհրդային ժամանակներում և գործածվում է այսօր, այլ այն կոնցեպտուալ իմաստով, որ սահմանել են ֆրանսիական լուսավորիչները դեռևս 18-րդ դարում: Ըստ այդ սահմանումի, որ կարելի է գտնել ցանկացած գրական հանրագիտարանում, ժողովրդայնությունը բազմանշանակ հասկացություն է, որ ենթադրում է՝ 1. ժողովրդական բանահյուսությունից մոտիվների, թեմաների, կերպարների, պոետիկական ձևերի փոխառություն և դրանց ստեղծագործական յուրացում, 2. ժողովրդի ազգային դիմագծի արտացոլման հարազատություն և խորություն, 3. հանրության բոլոր խավերի համար հասանելիություն ու մատչելիություն: Սկզբնապես առանձին գեղարվեստական գործերի վերաբերող այս բնութագրերը Թումանյանի ստեղծագործության մեջ, գործնականորեն ընդարձակելով իրենց բովանդակային սահմաններն ու իմաստային նշանակությունը, դարձան համապարփակ ստեղծագործական մեթոդի սկզբունքային որոշիչ և մնացին անկրկնելի:

Ժամանակակից թումանյանագիտության երրորդ կարևոր խնդիրը բանաստեղծի պոետիկայի համակողմանի ուսումնասիրությունն է: Հարյուր տարուց ավելի է, որ Թումանյանի ստեղծագործությունը ուսումնասիրողներին հետաքրքրում է մեծ մասամբ հարուստ ու բազմաշերտ բովանդակությամբ, ձևը, որ շունչ ու հոգի է տալիս անկենդան գաղափարին, ներկայացվում է միայն ընդհանուր հիացական բնութագրումներով: Որքան ինձ հայտնի է, այդ հարցին հատուկ անդրադարձել է միայն Էդ. Ջրբաշյանը «Թումանյանի պոեմները» ուսումնասիրության մեջ և «Ուսումնասիրություններ և հրապարակումներ» հինգհատորյակում տպագրված մի քանի հոդվածներում:¹

¹Թումանյանի վարպետության հարցերից (ՌԻՀ, 1, էջ 85-132), Թումանյանի վարպետության հարցերից (բանաստեղծական տան կառուցումը) (ՌԻՀ 2, էջ 62-74), Թումանյանի արձակի սկզբունքները (ՌԻՀ 4, էջ 9-50, Թումանյանի երգիծանքը (ՌԻՀ 5, էջ 11-52):

Ձև աելով, իհարկէ, ես նկատի չունեմ գեղարվեստական խոսքի արտաքին պաճուճանքը միայն, որովհետեւ, ինչպէս բազմիցս զգուշացրել են բոլոր մեծ ստեղծագործողները, գեղարվեստում բովանդակություն ու ձև հասկացությունները ինչ-որ առանձին-առանձին գոյավիճակներ չեն. ձևը միաժամանակ բովանդակություն է, բովանդակությունը՝ ձև: Այս իրողությունը որքան հեշտ է տեսականորեն բացատրել ու սահմանել, նույնքան էլ դժվար է բուն գեղարվեստական բնագրում գործնականորեն ցույց տալ: Դա շատ հստակ գիտակցում էր Թումանյանը, գիտէր նաև հարկ եղած դեպքում այդ բարդ տեսական խնդիրը հասարակ հարցի ձևով ուղղել իր հակառակորդներին: Այսպէս, երբ հայտնի «դրամբյանիզմի» շրջանում նրան մեղադրում էին Հայկունու հրատարակած ժողովրդական հեքիաթները յուրացնելու մեջ, նա ուղղակի հարցնում էր՝ եթէ այդպէս է, հապա ինչու իր մշակած հեքիաթները անմիջապէս ընդունվում և տարածվում են ժողովրդի մեջ, իսկ Հայկունու հեքիաթները միայն հատ ու կենտ մասնագետներ են կարդում: Այս ճիսարակ՝ հարցի մեջ է Թումանյանի ստեղծագործության արտակարգ ժողովրդականության գաղտնիքը, հարց, որի լիարժեք պատասխանը մինչև այսօր էլ գրականագիտությունը չի տվել:

Ինձ թվում է՝ այդ կարևոր հիմնահարցի շարունակվող շրջանցումը երկու պատճառ կարող է ունենալ: Առաջին՝ որ թումանյանական տեքստի «հանրամատչելիությունը» յուրաքանչյուր ընթերցողի ընկալման հոգեբանության մեջ առաջ է բերում լիակատար հոգեկան բավարարվածություն, այսինքն՝ գեղագիտական հաճույք՝ հաճելի խաբկանք, որին ենթական են Թումանյանի բոլոր ընթերցողները՝ մանուկից մինչև ծեր, որովհետև բանաստեղծը միևնույն տեքստով ամեն մի ընթերցողի հետ կարողանում է խոսել նրա լեզվով:

Երկրորդ պատճառը ուսումնասիրողների բնագոյական երկյուղն է թումանյանական բառ-աշխարհների խորխորատները մտնելուց: Թումանյանի տեքստը, իրոք, աչքի նման պարզ է և աչքի նման բարդ: Ինչպէս աչքի այդ թափանցիկ վճիտության խորքում բարդ կառուցվածք տեսնելու համար ակնաբոյժի հմտություններ են պետք, այնպէս էլ թումանյանական տեքստը խորքից տեսնելու և տարբալուծելու համար հմուտ գրականագետի թափանցող միտք ու ներքին տեսողություն պետք է ունենալ:

Կարծում եմ՝ ժամանակն է այդ երկյուղը հաղթահարելու և լրջորեն ձեռնամուխ լինելու Թումանյանի պոետիկայի հիմնավոր և ամբողջական ուսումնասիրությանը. թումանյանագիտության դարավոր փորձը, ժամանակակից տեսության ընձեռած իմացական և մեթոդաբանական հնարավորությունները լիովին բավարար են այդպիսի ձեռնարկման համար:

Բանալի բառեր - Հովհաննէս Թումանյան, թումանյանագիտության պատմություն, ստեղծագործական ուղղություն, պոետիկա, ժողովրդայնություն:

Վլադիմիր Կիրակոսյան, Թումանյանագիտության արդի խնդիրները - Ձեկուցման մեջ թումանյանագիտության բազմաթիվ խնդիրներից առանձնացվում են երեքը՝ թումանյանագիտության պատմություն, ստեղծագործական ուղղություն, պոետիկա:

Հիշվում են ընթացքի մեջ գտնվող մի քանի գիտական նախաձեռնություններ, որոնք հիմք են ստեղծում թումանյանագիտության ավելի քան մեկդարյա պատմության ստեղծման համար: Շեշտվում է Թումանյանի ստեղծագործության որոշ մեկնաբանությունների, մասնավորապես գրական ուղղության վերանայման անհրաժեշտությունը: Ցույց է տրվում, որ այդ ուղղությունը ժողովրդայնությունն է հին դասական իմաստով, որ կապ չունի ռեալիզմի հետ: Դա հաստատվում է նաև Թումանյանի պոետիկայի յուրահատկությամբ, որի ամբողջական ուսումնասիրությունը արդի թումանյանագիտության երրորդ կարևոր խնդիրն է:

Владимир Киракосян, Современные проблемы туманяноведения - В отчете из трех многочисленных проблем туманяноведения выделяются три - история, творческое направление, поэтика туманяноведения.

Вспоминаются находящиеся в процессе несколько научных инициатив, которые создают основание для создания более, чем одновековой истории туманяноведения. Подчеркивается необходимость обзора некоторых комментариев работы Туманяна, в частности литературного направления. Показывается, что данное направление и есть народность в древнем классическом смысле, которое не имеет отношения к реализму. Это подтверждается также уникальностью поэтики Туманяна, полное изучение которой является третьей важнейшей задачей туманяноведения.

Vladimir Kirakosyan, Modern issues of Tumanyan Studies - In the report, three of the many problems of the Tumanyan Studies are separated from the history of Tumanyan Studies, creative work, poetics.

A number of scientific initiatives are being memorized, which create the basis for the creation of more than a century of history of Tumanyan Studies

It is emphasized some comments of work in particular the necessity of reviewing on the literary direction of Tumanyan.

It is shown that this direction is the folk in the old classic sense that has nothing to do with realism. It is also confirmed by the peculiarity of Tumanyan's poetics, the complete study of which is the third important issue of modern Tumanyan Studies.

**ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՔՐԻՍՏԻՆԵ ԴԱԴՅԱՆ**

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և
գրականության ամբիոնի ասիստենտ,

Հովհաննես Թումանյանը հայ ժողովրդական հեքիաթի ամենամեծ մշակողն է և Ղազարոս Աղայանի հետ ամենամեծ հեքիաթագիրը: Թումանյանը մեծ նշանակություն է տվել հեքիաթին, կարևորել դրա իմացաբանական, ճանաչողական նշանակությունը: Նա գրել է. «Հեքիաթի մասին ոչ միայն մեր «երջանիկ» աշխարհում, ավելի լավ երկրներում դեռ պարզ հասկացողություն չունեն: Կարծում են դա հեշտ ու հանաք բան է: Դա գրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են» [1. էջ 472]: Այս նշանաբանով էլ Թումանյանը ունի հայ ժողովրդական հեքիաթներից մշակած հեքիաթներ, ինքնուրույն հեքիաթներ և թարգմանական հեքիաթներ: Հեքիաթի ժանրին դիմել է, երբ գտնվում էր հասունության, վարպետության շրջանում: Այնքան մեծ պատասխանատվությամբ էր վերաբերվում հեքիաթի մշակմանն ու թարգմանությանը, որ շատ քչերն էին արժանանում նրա հավանությանը: Թումանյանը թարգմանել ու փոխադրել է ռուսական, գերմանական, ճապոնական, իտալական, իռլանդական, արաբական հնդկական և ամերիկյան հնդկացիների հեքիաթներ: Ռուսական հեքիաթներից թարգմանել է «Գեղեցկուհի Վասիլիսան», «Կարմիր ծաղիկը», «Արջն ու պառավը», «Երեք արջի հեքիաթը»: Եթե «Գեղեցկուհի Վասիլիսան» և «Արջն ու պառավը» ռուսական ժողովրդական հեքիաթների թարգմանություններ են, ապա «Երեք արջի հեքիաթը» թարգմանված է Լ. Տոլստոյի «Три медведя» հեքիաթից, որն անգլիական նույնանուն հեքիաթի վերամշակումն է: Իսկ ինչ վերաբերում է «Կարմիր ծաղիկին», ապա այս հեքիաթի թարգմանության համար հիմք է ծառայել ռուս գրող Ս. Ս. Ակսակովի «Ալվան ծաղիկը» («Аленький цветочек») հեքիաթը՝ ենթարկվելով որոշ կրճատումների:

Հեքիաթը հասցեագրված է երեխաներին, և թարգմանչի խնդիրն է ոչ միայն թարգմանել, այլ այնպես պատմել, որ դրանք հասկանալի ու հարազատ լինեն մանուկ ընթերցողին: Դա բարդ խնդիր է, քանի որ յուրաքանչյուր ժողովրդի հեքիաթ շատ քիչ է նման, կամ ընդհանրապես նման չէ թարգմանվող լեզվի հեքիաթի աշխարհաստեղծմանն ու աշխարհընկալմանը:

Գեղարվեստական թարգմանության մեջ ամենահետաքրքիր և կարևոր ուղղություններից մեկը բանահյուսական տեքստի թարգմանությունն է: Մեր ուսումնասիրության նյութը ռուսական հեքիաթների թումանյանական

թարգմանությունն է, որի վերլուծման համար հարկ է անդրադառնալ ռուսական հեքիաթների մի շարք առանձնահատկություններին:

Բանահյուսության, մասնավորապես հեքիաթի լեզուն, միշտ էլ գրավել է տարբեր ոլորտների գիտնականների ուշադրությունը՝ գրականագետների, պատմաբանների, ազգագրագետների, լեզվաբանների: Ռուսական ժողովրդական հեքիաթներն ուսումնասիրվել են Վ. Յա. Պրոպի (1928), Ա. Պ. Եվգենևի (1965), Վ. Ի. Սոբինինիկովի (1969), Պ. Գ. Բոգատիրևայի (1956), Ս. Գ. Լազուտինայի (1981), Է. Վ. Պոմերանցիևի (1971) և այլոց հետազոտություններում: Ժողովրդական հեքիաթի՝ լեզվի ոլորտում ունեցած հետազոտությունները կարևոր ներդրում են ազգային մշակույթը, արժեքները հասկանալու համար, որովհետև դրանք ազգային մտածելակերպի, աշխարհայացքի, հոգեկերտվածքի, ազգային լեզվամտածողության վառ դրսևորումներն են:

Գիտնականներ Ն. Վ. Գավրիշը (Գավրիշ, 2001), Ժ. Ա. Ռուդենկոն (Ռուդենկո, 2003), Օ. Ս. Ուշակովան (Ուշակովա, 1998) ընդգծում են, որ ռուսական ժողովրդական հեքիաթներին բնորոշ են պարզ, սեղմ (մակդիր, համեմատություն), ինչպես նաև ծավալուն ոճական հնարներ (փոխանություն, չափազանցություն, այլաբանություն): Հենց այս արտահայտչամիջոցներն են ապահովում խոսքային արտահայտչականությունը, և որոնք ավելի հաճախ են հանդիպում ժողովրդական հեքիաթներում: Այս բոլոր ոճական հնարներն ընդարձակում են խոսքի զգայական գույների սահմանները և խորացնում պատկերացումը այս կամ այն երևույթի վերաբերյալ: Այս հատկանիշներն անհրաժեշտ է հաշվի առնել թարգմանության ժամանակ:

Ժողովրդական հեքիաթը, որպես ժանր, սերտորեն առնչվում է *չափազանցությանը*, *Չափազանցության* միջոցով նկարագրված բանաձևերը առանձնանում են վառ արտահայտչականությամբ, հանդիսավորությամբ: *Չափազանցությունը*, հատկանիշը գործողությունը չափազանցնելով, օգնում է գեղարվեստական տպավորություն գործելու ուժեղացմանը:

Ահա *չափազանցության* մի օրինակ «Գեղեցկուհի Վասիլիսան» հեքիաթից.

«Скоро послышался в лесу страшный шум: деревья трещали, сухие листья хрустели; выехала из лесу баба-яга («Василиса Прекрасная») [2.]

Հովհ. Թումանյանը թարգմանել է. «Հանկարծ անտառից մի զարհուրելի աղմուկ է տարածվում, ծառերը ճոճոռում են, խաշամը խշխշում է. դու մի՛ ասիլ՝ Կախարդ պառավն է, անտառից դուրս է գալիս» [3. էջ 185-186]:

Թումանյանը *չափազանցության* այս պատկերը չի թարգմանել բառացի: Ուշադրություն դարձնենք «*դու մի՛ ասիլ*» բառակապակցությանը, որն իրականում չկա բնագրում: Դա պատմվող տեքստն ավելի առեղծվածային է դարձնում, ստեղծում սպասում անհավանականի, անսովորի, հեքիաթայինի: Իսկ «*сухие листья*» մակդրային բառակապակցությունը Թումանյանը չի թարգմանել

ուղղակի «*չորացած տերևներ*»: Նա օգտվել է հայերեն բառաֆոնդի հարստությունից՝ վերցնելով «*խաշամ*» բառը, որը նշանակում է աշնանը ծառերից թափված տերևներ և ինչ-որ մասով իր մեջ ունի *չորացած* իմաստը: Բացի այդ, «*խաշամը*» գործածական է ժողովրդական խոսքում, որը թարգմանվող նյութին բանահյուսական երանգներ է հաղորդում:

Ա. Զիվանյանը գրում է. «Պատկերավոր համեմատությունը՝ ոճական հնարներից պարզագույնն ու հնագույնը, ճանաչված է որպես հեքիաթի գերիշխող ոճական հնար» [4. էջ 18]:

«Գրիմների «Չյունանուշի» հեքիաթների հերոսուհիների անվան բացատրությունը հանդես է գալիս որպես անուղղակի սքողված համեմատություն, որ ոճագիտության մեջ առավել հայտնի է որպես զուգահեռականություն (պարալելիզմ)» [5. էջ 34]:

Ահա համեմատության մի օրինակ «Կարմի ծաղիկը» հեքիաթից.

«Отыскал он заветный гостинец для своей старшей дочери: венец с камнями самоцветными, а от них светло в тёмную ночь, как бы в белый день» [6.].

Թումանյանի թարգմությունն է. «Մեծ աղջկա ուզած անգին քարերով զարդարած ապարոշն էլ է գտնում, որ գիշերը ցերեկի նման լույս էր տալիս» [7. , էջ 3]:

Թումանյանը հավատարիմ է մնացել բնագիր տեքստին և համեմատությունը կազմել է «*նման*» կապի միջոցով:

Իսկ «...нос крючком, как у беркута, а глаза были совиные» [8.] նախադասությունը Թումանյանը թարգմանել է հետևյալ կերպ.

«... քիթը կեռ ուրուրի կտուցի նման, իսկ աչքերը ոնց որ բուրի աչքեր...» [9., էջ 11]:

Ռուսերեն բնագրում համեմատությունը կազմված է «*как*» բառի, հայերեն համեմատությունը՝ նման կապի միջոցով. «*քիթը կեռ ուրուրի կտուցի նման*»: Իսկ «... а глаза были совиные» բնագիր տարբերակի հայերեն ուղիղ թարգմանությունը կլինի «...իսկ աչքերը բլի էին» (Ք. Դադյան). Թումանյանը նախադասությունը կառուցել է համեմատությամբ. «...*իսկ աչքերը ոնց որ բուրի աչքեր*»: Օգտագործելով «*ոնց որ*» խոսակցական տարբերակը՝ նախադասությունը դարձել է սահուն հայերեն:

Ռուսական ժողովրդական հեքիաթն ունի իրեն հատուկ քերականական յուրահատկությունները, որոնք էլ նրան առանձնացնում են այլ հեքիաթներից. դրանք կարևոր տարրեր են, որ անհրաժեշտ է հաշվի առնել՝ թարգմանությունը նույնական դարձնելու համար, որպեսզի այն պահպանի իր յուրահատկությունը, հեքիաթի ազգային բնույթը, բայց միևնույն ժամանակ հասկանալի լինի, այս դեպքում հայալեզու ընթերցողին: Այդպիսի յուրահատկություններից կարելի է առանձնացնել հետևյալները.

Հեքիաթի լեզվին բնորոշ են ածականներ՝ տարբեր ածանցներով, որոնք փոքրացնող, քնքուշ երանգ են հաղորդում՝ «*мал-еньк-ий, брат-ец, петуш-ок, солн-ышк-о*»։ Այս ամենը շարադրանքը դարձնում են սահուն, կոկիկ, մեղեդային, զգացմունքային։ Այս նպատակով են ծառայում նաև տարբեր սաստկացնող-առանձնացնող մասնիկներ. «то, вот, что за, ка... (Вот чудо-то! Пойду-ка я направо. Что за чудо!)»։ Այս մասնիկները չեն թարգմանվում հեղինակների կողմից։ Հայոց լեզուն ունի իր փոքրացնող նվազական մասնիկները, -իկ, -ուկ, -ակ։ Խնդիրն այն է, որ դրանք գործածվում են սահմանափակ թվով բառերի հետ։ Թումանյանը թարգմանել է՝ ավելացնելով փոքր բառը՝ նպատակ ունենալով հավասարակշռել նվազաբերական ածանցը։ Մրա թերությունն այն է, որ կորչում է ազգային «յուրահատկություն» հասկացությունը, օրինակ՝ «*Иванушка Дурачок*»-ը թարգմանվել է «*Բվան-Հիւար*», կամ՝ «*у батюшки*» («Василиса Прекрасная») [10.] բառը՝ Թումանյանը թարգմանել է «*հորս*» [11. էջ 185]։ հոլովված ձևով։ Ռուսաց լեզվում *-ушк*» *և -ок* ածանցները արտահայտում են նվազական, փաղաքշական իմաստ և ցույց տալիս պատմողի բարի վերաբերմունքը դեպի այդ կերպարը։

Պատասխանատվության մեծ զգացումով մոտենալով հեքիաթների թարգմանական գործին՝ Թումանյանը միաժամանակ հանդես է բերել ստեղծագործական որոշ ազատություն, ինչպես օրինակ, «Գեղեցկուհի Վասիլիսան» հեքիաթի հերոսուհու դիմում-խնդրանքը տիկնիկին, ի տարբերություն բնագրի, վերածել է չափածոյի։

Ահա բնագիրը.

« - На, куколка, покушай, моего горя послушай! Живу я в доме у батюшки, не вижу себе никакой радости; злая мачеха гонит меня с белого света. Научи ты меня, как мне быть и жить и что делать?» [12.]

Եվ Թումանյանի տարբերակը.

«— Տիկնիկ ջան, ա՛ն, ա՛նուշ արա,

Իմ սև դարդին ա՛կանջ արա։

Հորս օջախումը ապրում եմ ես

Միշտ անխնդում ու լուռ էսպես։

Իմ խորթ մերը խաթուն-խանում

Ինձ աշխարհքից դուրս է անում։

Ասա՛, հո՛գիս, էս ցավի դեմ

Ես ի՞նչ անեմ, էս ո՞նց անեմ» [13. էջ 185]։

Թումանյանի այս չափածո հատվածը արժեքավոր է թարգմանաբանական վերլուծության տեսանկյունից։ Տեքստը աղբյուր լեզվից թիրախ լեզու տեղափոխելիս հեղինակը կատարել է մի շարք փոփոխություններ, որոնցից մեկն էլ բառերի ներմուծումն է, օրինակ՝ «*ա՛ն, անո՛ւշ արա, հոգիս, սև դարդ*», որոնք ոչ

միայն նպաստում են հանգ ստեղծելուն, այլև, վերջինի դեպքում (*սև դարդ*), «սև» ածականը «դարդ» բառին սաստկական երանգ է հաղորդել:

Մեծ դժվարություն են ներկայացնում հնարավոր անունները և մականունները, որոնցից մի քանիսն այնքան ինքնատիպ են և ազգային յուրահատկություններով, որ թույլ չեն տալիս «կրկնել անկրկնելին» մեկ այլ լեզվի միջոցներով: Այդ դեպքում լեզուն կարող է հարաբերականորեն մոտ կանգնել տվյալ բառին, իսկ համապատասխանությունը կախված է արդեն ոչ միայն թարգմանող լեզվի յուրահատկություններից, այլ նաև թարգմանչի հմտությունից և վարպետությունից:

Ուշագրավ է «*баба-яга*» [14.] ռուսական տարբերակը, որը բառացի նշանակում է «*ջաղու կին*»: «*Баба-яга*» ռուսական տարբերակը հնչյունաբանական մակարդակում առավել արժեքավոր է, քանի որ բառավերջի ձայնավորների կրկնության միջոցով ստեղծվում է հանգավորում, մինչդեռ Թումանյանի «*Կախարդ-պառավ*» [15., էջ 186] տարբերակում, թեև պահպանված է վանկերի քանակը, և այն փոխանցում է ռճական նրբերանգները, այնուամենայնիվ, կորցրել է երաժշտականությունը: Հատկանշական է «*Կախարդ*» բառի մեծատառով գրությունը, որը կերպար ստեղծելու միտում ունի: Բայց կարևոր է այն, որ Թումանյանը ստեղծել է հայերեն համարժեքը, որը բացբացում է երևույթի, առարկայի իմաստը և բառն ավելի հասկանալի դարձնում մանուկ ընթերցողին:

Ռուսական հեքիաթներում որոշիչը դրվում է որոշյալից հետո, որն էլ ստեղծում է յուրատեսակ երաժշտականություն, մեղեդայնություն.

«Дочери мои милые, дочери мои хорошие, дочери мои пригожие». «Государь ты мой батюшка родимый! дочь моя милая, хорошая и пригожая» [16.] Կամ հենց հեքիաթի վերնագիրը՝ «Василиса Прекрасная»: Թումանյանական տարբերակում ուղիղ շարադասություն է՝ «Գեղեցկուհի Վասիլիսան»: Իսկ վերը նշված շրջուն շարադասությամբ կոչականները Թումանյանը բաց է թողել, ուղղակի թարգմանել է. «Երեք աղջկանն էլ կանչում է, ասում է» («Կարմիր ծաղիկը») [17. էջ 3]:

Լև Տոլստոյի «Երեք արջի հեքիաթում» *օգտագործվել է գուգահեռականությունը* (պարալելիզմ): Այն խոսքի աստիճանային կառուցման ձև է: Վ. Շկլովսկու տեսակետի համաձայն՝ «Եզակի միավորը տրոհվում է երկու կամ երեք մասերի իր իսկ արտապատկերումների կամ հակադրությունների միջոցով» [18. стр. 44]: Նման մասնատում հնարավոր է ամենատարբեր մակարդակներում՝ խոսքի, հերոսի և այլն: Այս դեպքում մասնատումը հերոսի մակարդակում է կատարվել: Խոսքը արջերի եռապատկման մասին է:

Լև Տոլստոյի «Երեք արջի հեքիաթի» բնագրում նկարագրված է հայրը՝ Միխայլո Իվանովիչը՝ մեծ չափերով, մայրը՝ Նաստյա Պետրովնան, մի քիչ ավելի փոքր չափերով, և ամենափոքր արջուկը, որին կոչում էին Միշուտկա:

Թումանյանը բաց է թողել անունները և արջերի չափերի նկարագրությունը, նա ուղղակի գրել է. «Դու մի՛ ասիլ՝ էս տնակում երեք արջ են ապրում՝ հերը, մերը և իրանց քոթոթը» [19., 230]: «Քոթոթ» բառի գործածումն արդեն հուշում է, որ նա չափերով ամենափոքրն է: Այս հեքիաթը անգլիական հեքիաթի մշակումն է, և Լև Տոլստոյը ռուսական անուններ տալով՝ ինչ-որ չափով ազգայնացրել է այն: Թումանյանը, բաց թողնելով անունները, հեքիաթը դուրս է բերել ազգային շրջանակներից և հաղորդել համընդհանուր և համամարդկային երանգներ:

Հեքիաթի տեքստը «հնարավոր աշխարհ» է, և այդ այլաշխարհը օժտված է տարածաժամանակային անօրինակ կոորդինատներով, որոնք, որպես կանոն, արտացոլված են հեքիաթի «*բացող*» և «*փակող*» բանաձևերում: Ժողովրդական հեքիաթում «*բացող*» և «*փակող*» բանաձևերը կատարում են մի շարք նշանակալից գործառույթներ: Այդ բանաձևերն անում են ավելին, քան «*վաղեմիության*» գաղափարը փոխանցելն է [20. page151]: Մուտքի բանաձևն ընթերցողին է ներկայացնում հեքիաթի գլխավոր հերոսներին, իրադարձությունների վայրն ու ժամանակը, ինչպես նաև՝ պատմության ուրվագծային մոտավոր պատկերը: Վ. Բասքումն ընդգծում է, որ մուտքի բանաձևն ընթերցողին զգուշացնում է, որ պատումը երևակայական է, և պետք չէ այն ճշմարիտ համարել [21 page 6]:

«Գեղեցկուհի Վասիլիսան» («Василиси Прекрасная») հեքիաթի Թումանյանի թարգմանության մեջ միայն ժամանակային հասկացությունն է մատնանշվում: Ռուսական բնագրում այս երկուսը միահյուսված են. «В некотором царстве жил-был купец» [22.] («Аленький цветочек») հեքիաթն ունի նույնպիսի մուտք. «В некиим царстве, в некиим государстве жил-был богатый купец...» [23.] Մինչդեռ Թումանյանը երկու հեքիաթներն էլ բացում է «*լինում է, չի լինում*» ժողովրդական բանաձևով՝ բաց թողնելով «*В некотором царстве*» հատվածը. «Լինում է, չի լինում, մի վաճառական» [24., էջ 182], «Լինում է, չի լինում, մի հարուստ վաճառական» [25., էջ 3]: Թարգմանական տեքստում «*բացող*» բանաձևը նախադաս դիրքով է հանդես գալիս, իսկ ռուսերեն տեքստում այն գործածվել է միջադաս դիրքում: Ասացողը փաստում է հարաբերականորեն ճշգրիտ տեղանքը, ապա՝ հավելում անորոշ ժամանակը: Բացի այդ ռուսական հեքիաթի *բացող բանաձևը հոմանիշներից է կազմված «жил-был» (ապրում էր-կար)* և ցույց է տալիս անցյալ ժամանակ, իսկ հայերեն «*լինում է, չի լինում*» բացող բանաձևը հականշային գույգ է և արտահայտված է ներկա ժամանակով:

Ա. Զիվանյանն ընդգծում է, «հայկական հեքիաթի մուտքի այս բանաձևն, ըստ էության, կարող է ընդհանարպես համարվել երևակայական՝ անիրական աշխարհների նշանաբան՝ անկախ տվյալ տեքստի մշակութային պատկանելիությունից:» [26. էջ 14]:

Յուրաքանչյուր թարգմանություն բնագրի համեմատ կարող է պարունակել որոշակի փոփոխություններ, և այդ փոփոխությունների քանակից է կախված թարգմանության ճշգրտությունը: Դրա համար էլ այն պետք է հնարավորինս քիչ լինի:

Թումանյանը ռուսական այս հեքիաթների հայերեն կատարած իր թարգմանություններում ներմուծել է հայ ժողովրդական մտածողություն և լեզվական պատկերներ, չի կտրել դրանք հայ ազգային հողից, մինևույն ժամանակ դուրս է բերել նեղ ազգային շրջանակներից, քանի որ հեքիաթը չունի ժամանակ, չունի տարածություն: Դա են ապացուցում հեքիաթի մուտքի բանաձևը՝ «*լինում, է չի լինում*», տեղանքը մատնանշող «*յոթ սարնի ետև*» արտահայտությունը», որոնք էլ փաստում են հեքիաթի և հավերժության կապը: Եվս մեկ անգամ հիշենք. «Հեքիաթները հավերժական սիմվոլներ են» [27. էջ 472], -ասում էր Թումանյանը:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. V, Ե., 1945:

2. <https://deti-online.com/skazki/russkie-narodnye-skazki/vasilisa-prekrasnaja/> (10.03.2019)

3. Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, հ. 2-րդ, Ե., 1985, Գեղեցկուհի Վասիլիսան:

4. Ա. Ջիվանյան, Հրաշապատում հեքիաթի պոետիկան. Համեմատությունը հեքիաթի համատեքստում (հայկական հեքիաթի նյութի հիման վրա), սեղմագիր, Ե., 2008:

5. Նույն տեղում:

6. <http://armenianhouse.org/tumanyan/tales-am/red-flower.html> (14.03.2019)

7. Ռուսական հեքիաթներ, թարգմ. է Հովհ. Թումանյան, Թիֆլիս, տպ. Աղայանի, 1916:

8. <http://dlya-detey.com/skazki/skazki-aksakova/19-alenkiy-cvetochnik-chitat-online.html>

9. Ռուսական հեքիաթներ, թարգմ. է Հովհ. Թումանյան, Թիֆլիս, տպ. Աղայանի, 1916:

10. <http://dlya-detey.com/skazki/russkie-narodnye/8-skazka-vasilisa-prekrasnaya-chitat.html> (29.03.2019)

11. Ռուսական հեքիաթներ, թարգմ. է Հովհաննես Թումանյան, Թիֆլիս, տպ. Աղայանի, 1916:

12. <http://dlya-detey.com/skazki/russkie-narodnye/8-skazka-vasilisa-prekrasnaya-chitat.html> (29.03.2019)

13. Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, հ. 2-րդ, Գեղեցկուհի Վասիլիսան:

14. <http://dlya-detey.com/skazki/russkie-narodnie/8-skazka-vasilisa-prekrasnaya-chitat.html> (29.03.2019)

15. Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, հ. 2-րդ, Գեղեցկուհի Վասիլիսան:

16. <http://armenianhouse.org/tumanyan/tales-am/red-flower.htm> 1 (14.03.2019)

17. Ռուսական հեքիաթներ, թարգմել Հովհաննես Թումանյան, Թիֆլիս, տպ. Աղայանի, 1916:

18. В. Шкловский 1929.

19. Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, հ. 2-րդ, Երեք արջի հեքիաթը:

20. Z. Sutherland, Arbuthnot 1977.

21. J. Bascom 1965:

22. <http://dlya-detey.com/skazki/russkie-narodnie/8-skazka-vasilisa-prekrasnaya-chitat.html> (29.03.2019)

23. <http://armenianhouse.org/tumanyan/tales-am/red-flower.htm> 1 (14.03.2019)

24. Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, հ. 2-րդ, Գեղեցկուհի Վասիլիսան:

25. Ռուսական հեքիաթներ, թարգմ. է Հովհաննես Թումանյան, Թիֆլիս, տպ. Աղայանի, 1916:

26. Ա. Ջիվանյան, Հրաշապատում հեքիաթի պոետիկան. Համեմատությունը հեքիաթի համատեքստում (հայկական հեքիաթի նյութի հիման վրա:), Մեղմագիր, Ե., 2008:

27. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. V, Ե., 1945:

Բանալի բառեր – Հովհաննես Թումանյան, ռուսական հեքիաթ, «Գեղեցկուհի Վասիլիսան», «Կարմիր ծաղիկը», «Արջն ու պառավը», բնագիր, «Երեք արջի հեքիաթը», թարգմանություն, մակդիր, համեմատություն, չափազանցություն, քերականական յուրահատկություն, շարադասություն, հանգ, ազգայինմտածողություն, «բացող» և «փակող» բանաձևեր:

Քրիստինե Դադյան, Ռուսական հեքիաթների թումանյանական թարգմանությունը - Սույն հոդվածի ուսումնասիրության նյութը ռուսական հեքիաթների թումանյանական թարգմանությունն է: Ռուսական հեքիաթներից Հովհաննես Թումանյանը թարգմանել է «Գեղեցկուհի Վասիլիսան», «Կարմիր ծաղիկը», «Արջն ու պառավը», «Երեք արջի հեքիաթը»:

Թարգմանությունները վերլուծելու համար անդրադարձել ենք ռուսական հեքիաթների մի շարք առանձնահատկություններին: Ռուսական ժողովրդական

հեքիաթներին բնորոշ են պարզ, սեղմ (մակդիր, համեմատություն), ինչպես նաև ծավալուն ոճական հնարներ (փոխանունություն, չափազանցություն, այլաբանություն): Ռուսական ժողովրդական հեքիաթն ունի իրեն հատուկ քերականական յուրահատկությունները, որոնք էլ նրան առանձնացնում են այլ ժողովուրդների հեքիաթներից: Մեծ դժվարություն են ներկայացնում հնարավոր անունների և մականունների թարգմանությունները:

Հեքիաթի տեքստը «հնարավոր աշխարհ» է, և այդ այլաշխարհը օժտված է տարածաժամանակային անօրինակ կոորդինատներով, որոնք, որպես կանոն, արտացոլված են հեքիաթի «*բացող*» և «*փակող*» բանաձևերում: Քննվել է ռուսական հեքիաթներում գործածվող «*բացող*» բանաձևերը և թումանյանական տարբերակները:

Թումանյանի թարգմանությունների վերլուծությունը կատարվել է՝ հիմնվելով այս առանձնահատկությունների վրա և եկել ենք այն եզրակացության, որ Թումանյանը ռուսական այս հեքիաթների հայերեն կատարած իր թարգմանություններում ներմուծել է հայ ժողովրդական մտածողություն և լեզվական պատկերներ, չի կտրել դրանք ազգային հողից, միևնույն ժամանակ դուրս է բերել նեղ ազգային շրջանակներից, և իր հանճարեղ գրչով դրանք մղել դեպի հավերժություն:

Кристинаэ Дадян, Русские народные сказки в переводах Ованеса Туманяна -

Данная статья посвящена переводом Ованнеса Туманяна русских народных сказок. В переводах Туманяна вышли в свет такие сказки как «Василиса Прекрасная», «Аленький цветочек», «Медведь и старуха», «Три медведя». В процессе анализа данных переводов мы рассматривали некоторые особенности русских народных сказок.

Русским народным сказкам свойственны простые и скатые такие как эпитет и сравнение, а также такие объемистые стилистические приемы как метафора, гипербола и аллегория. В русской народной сказке свойственны особые грамматические конструкции, благодаря которым она отличается от других сказок народов мира. Определенную сложность представляет перевод вымышленных имен и кличек. Текст сказки это «вероятный мир» и этому другому миру свойственны особые пространственно-временные координаты, которые как правило отражены в сказках в виде начальных и конечных формул. В данной статье были рассмотрены используемые начальные формулы в русских сказках и в переводах Ованеса Туманяна. Анализ переводов Ованеса Туманяна был сделан на основе этих особенностей. Вследствие этого мы пришли к заключению, что в своих переводах русских народных сказок, Ованес Туманян широко использовал мышление армянского народа, а также речевые образы, не отрываясь от

национального, одновременно выходя из узких национальных рамок тем самым своим гениальным пером обрекая их на вечность.

Christine Dadyan, Tumanyan's translation of Russian fairy-tales - The present article puts a spotlight on the Armenian translation of Russian fairy-tales by all-Armenian writer Hovhannes Tumanyan. Among the works he translated, Vasilisa the Beautiful, the Scarlet Flower, the Bear and the Old Woman and the Story of the Three Bears are notably worthwhile in terms of translation peculiarities.

To shed light on the value of those translated pieces, an attempt has been made to bring out the translation nuances and subtleties that might go unnoticed for lay readers.

Russian folktales can be characterized by an abundant use of such stylistic devices as epithet, simile, metonymy, hyperbole and allegory. Russian folktales also stand out with their unique grammatical structures, which set them apart from the folktales of other nations. Especially challenging is the translation of conceived names and nicknames.

Fairy-tales feature a possible world, an alternate reality possessing unique spatial and temporal dimensions, which are distinctly expressed in the fairy-tale text through the opening and closing formulae. In the article, we have also examined the opening formulae used in the original and translated texts.

The in-depth analysis of Tumanyan's translation of Russian folktales revealed that while rendering them into Armenian Tumanyan imbued the texts with typically Armenian elements and verbal images making them a perfect fit for Armenian mentality. At the same time, he drew them out of the national confines extending them to eternity.

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ ԻՄ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ

Անհատներ կան, որոնք տվյալ ժողովրդի կյանքում չափազանց մեծ դեր են կատարում՝ դառնալով նրա դիմագիծը, նրա անցած ճանապարհի, նրա մշակութային արժեքների անդրադարձն ու հայելին: Հայ ժողովրդի մտավոր, գեղարվեստական, մշակութային կյանքում այդպիսի անգնահատելի դեր ունեցավ և իր ստեղծագործությամբ անջնջելի հետք թողեց Հովհ. Թումանյանը, որն իրապես Ամենայն հայոց բանաստեղծ դարձավ: Մեծածավալ չէ Թումանյանի գրական ժառանգությունը, սակայն մեծարժեք է ազգային արմատների իր անսահման զգացողությամբ, մարդու, բնության կատարյալ ճանաչողությամբ, տիեզերականին ձգտող իմաստությամբ: Եվ զարմանալի չէ, որ ինչքան ուսումնասիրում ես մեծ բանաստեղծի ստեղծագործությունը, այնքան ավելի ես զգում նրա անհատակ խորությունը, այնքան ավելի նոր ու անծանոթ շերտեր են բացվում, նոր երանգներ ես բացահայտում, նոր հորիզոններ են քեզ կլանում:

Հովհ. Թումանյանի ստեղծագործությունն ընթերցողին գրավում է նաև իր պարզ ու անմիջական, խիստ կենդանի ու բնական լեզվով: Այս լեզուն է, որ իր բյուրեղացած, կատարյալ բանաստեղծական ձև ընդունած կերպի մեջ, ինչպես անմշակ ալմաստն է հղկումից հետո վերածվում ադամանդի, արտացոլում է ժողովրդական լեզվամտածողության ողջ հմայքը: Մեծ բանաստեղծն իր լեզվական կատարելության բարձունքին հասել է ստեղծագործական հասունության, տարիների քրտնաջան աշխատանքի և բծախնդիր վերամշակումների շնորհիվ: Չէ՞ որ, ինչպես ինքն էր ասում, իսկական գեղագետի համար ճիշտ ընտրված բառը մի աշխարհ արժե: Տասնամյակների հեռավորությունից անհավատալի է թվում, որ ժամանակին Թումանյանն իր ստեղծագործությունների լեզվի համար քննադատվել է և հալածվել: Սակայն ամենակարող ժամանակն է տարբերում իրարից արժեքավորն ու անարժեքը: Ժամանակի դատին միայն իսկական արժեքներն են դիմանում: Այսօր էլ Թումանյանի գեղարվեստական խոսքն իր ժողովրդական կենդանի շնչով նույն թարմությունն ու կենսատու լիցքերն ունի, ինչ տասնամյակներ առաջ:

Բանաստեղծի ստեղծագործության լեզվական համակարգում ժողովրդական լեզվամտածողությամբ պայմանավորված բազմաթիվ միավորներ կան՝ ժողովրդախոսակցական, բարբառային բառեր և դարձվածային միավորներ,

օտարաբանություններ, հարադիր բառեր, գրական նորմայից շեղվող բառաձևեր և գուգաձևություններ, ժողովրդական լեզվին հատուկ շարահյուսական կառույցներ, խոսքի պատրաստի միավորներ: Որպես ուսումնասիրության առարկա՝ մենք անդրադարձել ենք հարադրություններին:

Հարադրությունները՝ որպես բարդությունների մի առանձին տեսակ, բավական մեծ գործածություն ունեն ժողովրդախոսակցական լեզվում, և բնական է, որ դրանք իրենց անփոխարինելի կիրառությունն են ունեցել նաև Թումանյանի ստեղծագործություններում: Այս միավորներն արտահայտվել են իրենց երկու տեսակով՝ անվանական հարադրություններով և բայական հարադրություններով:

Անվանական հարադրությունների մեջ առաջին հերթին առանձնանանում են կրկնավորները, որոնք հիմնականում արտահայտում են հատկանիշի խստացում կամ ընդգծում, ինչպես՝ ջուխտ-ջուխտ, ագահ-ագահ, նոր-նոր, անուշ-անուշ, լուս-լուս, էսպես-էսպես, տաք-տաք, նեղ-նեղ, վռագ-վռագ, փառ-փառ, վառ-վառ, վետ-վետ, կուշտ-կուշտ, շատ-շատ, մեծ-մեծ, սև-սև, հեռու-հեռու, օտար-օտար, կարմիր-կարմիր, լուռ-լուռ, հազար-հազար, վուշ-վուշ, պուտ-պուտ, հին-հին, բույլ-բույլ, խոր-խոր, ճի՛կ-ճի՛կ, հո-հո՛, վո՛ւյ-վո՛ւյ-վո՛ւյ-վո՛ւյ, տխուր-տխուր, համա-համա, բաց-բաց, իրեն-իրեն, առատ-առատ, ուրախ-ուրախ, կեռ-կեռ, լուռ-լուռ, փունջ-փունջ, թույլ-թույլ, մուշ-մուշ, քիչ-քիչ, չքփ-չքփ, վայ-վայ՝, դու-դո՛ւ, վույ-վո՛ւյ, կամաց-կամաց, թաքուն-թաքուն, պատառ-պատառ, ծվեն-ծվեն, թուխ-թուխ, հին-հին, թագա-թագա, շուտ-շուտ, բարձր-բարձր, լայն-լայն, քանի-քանի, երկար-երկար և այլն:

Օրինակ՝ Պախեն անցավ էն սարից՝

Շոգից հանած չոր լեզուն.

Կուշտ-կուշտ խմեց աղբյուրից,

Ապա նայեց աստծուն: (72)¹

Կամ՝ Մի օր էլ շեմքումը նստած է լինում, տեսնում է մի մարդ **վռագ-վռագ** փողոցով անց է կենում: (475)

Ինչպես տեսնում ենք, նշված կրկնավորների մեջ կան տարբեր խոսքիմասային պատկանելություն ունեցող միավորներ՝ ածականներ (վառ-վառ, սև-սև, օտար-օտար, կարմիր-կարմիր, լուռ-լուռ, հին-հին, նեղ-նեղ և այլն), մակբայներ (ագահ-ագահ, վռագ-վռագ, վետ-վետ, հեռու-հեռու, տխուր-տխուր, կամաց-կամաց, թաքուն-թաքուն և այլն), դերանուն (էսպես-էսպես, քանի-քանի), թվական (հազար-հազար), շաղկապ (համա-համա), ձայնարկություն (ճի՛կ-ճի՛կ, հո-հո՛, վո՛ւյ-վո՛ւյ-վո՛ւյ-վո՛ւյ, չքփ-չքփ, վայ-վայ՝ և այլն):

Կրկնավորներ կան, որոնցով արտահայտվում է երևույթի, հատկանիշի դրսևորման հաջորդականություն, ինչպես՝ ընտանիք-ընտանիք, շերտ-շերտ,

¹ Օրինակները բերված են հետևյալ հրատարակությունից՝ Հովհ. Թումանյան, Երկեր, հատոր I, Եր., Հայպոտհրատ, 1958: Օրինակների մոտ նշված են միայն էջերը:

հատված-հատված, կոպեկ-կոպեկ, տեսակ-տեսակ, տեղ-տեղ (հատվածական նշանակություն):

Օրինակ՝ Ու մեր քարվանը շրփոթ, սոսկահար,
Թալանված, ջարդված
Ու **հատված-հատված**
Տանում է իրեն վերքերն անհամար
Հայոց լեռներում,
Սուգի լեռներում: (98)

Կամ՝ Պատերի երկարությամբ տեղավորվել էին գաղթականները
ընտանիք-ընտանիք: (376)

Բաշխական հետևյալ թվականները կազմել են գրական և ժողովրդախոսակցական ու բարբառային գուգաձևություններ՝ մեկ-մեկ, մի-մի, մին-մին: Ի դեպ, **մեկ-մեկ**-ը գործածվել է նաև մակբայական իմաստով: **Գլուխ-գլուխ** կրկնավոր կազմությունը գործածվել է մակբայաբար՝ նշանակելով **լիքը** (-Ախչի, մի չափ այլուր դուրս բերեք, դռնից ձեն տվեց Ուհանես բիձեն.-**գլուխ-գլուխ** լցրեք (345)):

Երբեմն տարբեր հնչյունափոխություն ունեցող կրկնավորների միջոցով ևս արտահայտվում է իմաստի սաստկացում կամ խստացում, ինչպես՝ սուս ու փուս, չալիկ-մալիկ, վաշ-վիշ, արմանք ու զարմանք, մանր-մունր, առքով-փառքով, սուսիկ-փուսիկ, գողտիկ-մոդտիկ, խունջիկ-մունջիկ:

Օրինակ՝ Մըտնում է գերին, մըտնում մի ծերից,
Անցել է թիվը հարյուր հազարից,
Չի լըցվում սակայն հասարակ մի վանք...

Ապշում է թաթարն՝ **արմա՛նք ու զարմանք**: (265)

Կամ՝ Էսպես **առքով-փառքով** էլ բերում հրատարակում են իրենց թագավոր ու բազմեցնում են թագավորի թախտին: (505)

Սակայն առավել հաճախ այսպիսի հնչյունափոխված կրկնավորներով արտահայտվում է քամահրական վերաբերմունք խոսքի առարկայի վերաբերմամբ, ինչպես՝ պարապ-սարապ, աման-չաման, ցախ ու մախ, ծիտիկ-միտիկ, ծառիկ-մառիկ, պղտոր-մղտոր, գլտոր-մլտոր, սուտ ու մուտ:

Օրինակ՝ ...Հովվի գամփռը ժիր ու մտացի է լինում, որսկանի շունը՝ ճարպիկ ու հնարագետ. անբան, **պարապ-սարապ** պարոնի շունը՝ ծույլ ու քմապաշտ և գյուղացու անկիրթ շանից էլ ավելի կոպիտ: (420)

Կամ՝ Երեսը **ցախ ու մախտով** ծածկում են, վրեն միս են դնում, չորս կողմն էլ դեռ ցած ցանկապատում, որ գելը թոչի, հանկարծ ընկնի մեջը: (405)

Հարակատար դերբայի կրկնավոր ձևը՝ երկրորդ բաղադրիչի ժխտականի ձևով, որը խոսքում գործածվում է ածականական կամ գոյականական նշանակությամբ, արտահայտում է հատկանիշի կամ առարկայական ամբողջություն, ինչպես՝ ունեցած-չունեցած(ը), էլած-չէլածը:

Օրինակ՝ Դու մի՛ ասիլ՝ սրանց **ունեցած-չունեցած** չորստոնանին մի եզն է լինում, ունեցած փռշին էլ՝ մի քրոց ալյուր: (509)

Կամ՝ - Էլավ էլի, չորայինից հացը նվազ եկավ, **էլած-չէլածն** էլ ինչ մուշտարի եկավ, ծախեցինք...(283)

Ակնհայտ է, որ կրկնավորներն ընդհանրապես առավել ժողովրդախոսակցական բառապաշարային միավորներ են, որոնք խոսքին հաղորդում են յուրահաստուկ անմիջականություն և ժողովրդական ոգուն հաստուկ պարզություն:

Անվանական հարադրության մյուս տեսակները կազմված են միմյանց նկատմամբ տարբեր փոխհարաբերության մեջ գտնվող բառային միավորներով: Թումանյանի ստեղծագործության մեջ առավել տարածված են առնչակցական իմաստային հարաբերությամբ կազմված հարադրությունները, այսինքն՝ այն հարադիր բարդությունները, որոնց բաղադրիչներն իմաստով առնչակից բառեր են, ինչպես՝ արյուն-քրտինք, սար ու ձոր, աղ ու հաց, հողմ ու շանթ, ձեռք ու երես, հող ու ծաղիկ, ծաղիկ ու խոտ, խեղճ ու որբեր (կիրառությունը փոխանվանական է), հոգնած-ծարավ, կեսուր-կեսառ, հրեշ-հսկա, ձի-ձիավոր, ֆլան-ֆստան, հեր ու մեր, հող-մոխիր, թել ու ասեղ, ահ ու փախ, մազ ու միրուք, թուր ու թվանք կամ թուր-թվանք, ոտ ու ձեռ, հարց ու փորձ, ամպ ու հովեր, գուռնա-դիռ, ցորեն-գարի, հետք ու հիշատակություն, տուն ու տեղ, վար ու ցանք, դառն ու դատարկ, մարդ ու կնիկ, նազիր-վեզիր, քար ու քոլ, զենք ու զրահ, փառք ու պարծանք, փառք ու պատիվ և այլն:

Օրինակ՝
Տունըդ քանդվի, ա՛յ խանութպան,
Անխիդճ, լիրբ, չար, **ֆրլան-ֆրստան**,
Ո՞նց թե դու իմ շանը զարկե՛ս,
Դե, զարկելը հիմի դու տես...(259)

Կամ՝ Նամարդի համար մենք **թուր ու թվանք** ունենք, տղամարդի համար՝ աղուհաց...(303)

Հարադրությունների մյուս տարածված տեսակը նույնական կոչվողն է, որի բաղադրիչները նույն իմաստն ունեն կամ իմաստով մոտ են: Դրանցից են՝ ահ ու սարսափ, որոտ-ճայթյուն, կրակ ու բոց, մութ-մռայլ (գործածված է փոխանվանաբար), նիրհ ու թմբիր, վիշտ ու ցավեր, ցոլ ու շաղ, երգ ու տաղ, հարս ու աղջիկ, տեղ-տներ, հանդ ու արտ, գիրք ու գիր, ծիլ-ծաղիկներ, շար-շարուրիկ, սև ու սուգ, ախ ու վախ, նենգ ու դավ, մեն ու մենակ, լուս ու բարի, բուք ու բորան, դուռ-դրկից, տավար ու հոտ, օրոր-շորոր, երգ ու վեպեր, ահ ու դող, ծանր ու մեծ, թայ-թուշ, ահ ու վախ, կազմ ու պատրաստ, տխուր-տրտում, հուր-հրեղեն, լռիկ ու մնջիկ, բնով-տեղով, սուգ ու լաց, ճիչ-գոռոց, ահ-երկյուղ, ուշք ու միտք, շաշ ու գժեր, աղմուկ ու աղաղակ, ցավ ու կսկիծ, թոհ ու բոհ, ողջ-առողջ,

հարայ-հրոց, ոչ ու փուչ, կահ-կարասի, փուշ ու տատասկ, հուրի-հրեղեն, ինս ու ջինս, տըզ-պը՝ զզ:

Օրինակ՝ - Մովն էլ չի էս **շաշ ու գժերի** հախիցը գալիս, գլուխը պտտելով փնթփնթաց Անդրին և չիբուխը սկսեց լցնել: (286)

Կամ՝

Ինչքա՛ն ցավ եմ տեսել ես,

Նենգ ու դավ եմ տեսել ես,

Տարել, ներել ու սիրել,

Վատը լավ եմ տեսել ես: (150)

Նշենք, որ բերված օրինակում **նենգ** ածականը գործածվել է **նենգություն** գոյականի նշանակությամբ՝ համարժեք դառնալով **դավ** գոյականին և նրա հետ ձևավորելով հեղինակային հարադրություն:

Հարադրությունների վերը ներկայացված երկու խմբերի միջոցով գաղափարի սաստկացում է արտահայտվում:

Թումանյանի երկերում կան նաև իմաստով հակադիր բաղադրիչներով ձևավորված հարադրություններ, որոնք արտահայտում են երկու հակադիր ծայրերի միջև եղած ընդգրկումը, ինչպես՝ երկինք ու երկիր, երկար-բարակ, գիշեր-ցերեկ, դես-դեն կամ դես ու դեն, սրա-նրա, շահ ու գերի, ստրուկ ու տեր, էսօր-էգուց, վախտ ու անվախտ, էս ու էն, դեսից-դենից, դես ու դեն, ամառ-ձմեռ, տակից-գլխից, գնացող-եկող:

Օրինակ՝ Քեռի Խեչանը, **դեսից-դենից** խոսելով, թեյ խմեց, հաց կերավ, վերջը լռեց ու սկսեց չիբուխ քաշել: (367)

Կամ՝

Փըռվեց...Ու քանի որ կա

Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,

Զի լինելու երկրի վըրա

Ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր: (276)

Հանդիպում են նաև այլ կազմության անվանական հարադրություններ, մասնավորապես՝ քանակի մոտավորություն արտահայտող միավորներ՝ հազար ու մի, հինգ-վեց, երկու-երեք, ութ-տասը, ինը-տասը, քսան-երեսուն, տասը-քսան, լեզվում բավական մեծ կիրառություն ունեցող այլ կայուն կապակցություններ՝ աշխարհքով մին, արար աշխարհ, գիշերն ի բուն, չորս դին, չորս կողմը, սրանց բարբառային տարբերակը՝ չորս կուռը, ինչպես նաև դարձվածային արժեք ձեռք բերած **ցամաք հաց** և **ճակատի գիր** հարադրությունները: Կան նաև հեղինակային առանձնահատուկ դրոշմ ունեցող հարադրություններ՝ խոսքի իրադրությամբ ստեղծված, ինչպես՝ բաց-պատրաստ, շանով-բանով, օր ու կյանք, գույն ու ձև, ձագ-ընկեր, ճառ ու երգ, աշխարհք-արարած, իսկ-դև, սեր-ընկեր, աստղ-աչքեր:

Օրինակ՝

Եվ էս ծանոթ եմ այն հրաշալի

Գույն ու ձևերին արևագալի...(65)

Կամ՝

Մթնշաղը գետինն առել,

Լուռ է աշխարհք-արարած...(109)

Ինչպես տեսնում ենք, անվանական հարադրությունները բավական մեծ կիրառություն ունեն Հովհ. Թումանյանի ստեղծագործության մեջ: Սակայն անհամեմատ ավելի մեծ բազմազանությամբ են առանձնանում բայական հարադրությունները, որոնք բանաստեղծի խոսքին կենդանություն, շարժունություն, բազմաթիվ երանգներ ու ժողովրդի մտածողության շունչն ու ոգին են հաղորդում: Բայական հարադրությունների կազմության երեք տեսակներից՝ բուն հարադրավոր բայերից, գուգաբայական հարադրություններից, պատճառական հարադիր բայերից, հեղինակի ստեղծագործության մեջ առավել հաճախական գործածություն ունեն բուն հարադրավոր բայերը՝ կազմված որևէ անուն խոսքի մասից կամ ինքնություն, անկախ կիրառություն չունեցող բայական արմատից և բայական բաղադրիչից: Ընդ որում, որպես բայական բաղադրիչ՝ մեծ կիրառություն ունեն հատկապես հետևյալ բայերը՝ անել, տալ, լինել, ասել, գալ, առնել, ընկնել, ունենալ, դնել, բերել, դառնալ: Բերենք այս բայերով ձևավորված հարադրությունների օրինակներ. **անել**՝ վար անել, ճիպտին անել, ճար անել, թովջի անել (նշ. հարկաբաշխում կատարել), քեֆ (քեփ) անել, ման անել, դարման անել, վայ-վայ անել, խաղ անել, սուգ անել, բաց անել, աղոթք անել, դեմ անել, վարուցանք անել, գանգատ անել, հույս անել, ձեռքով անել, մտիկ անել, ոտքի կոխան անել, հարցմունք անել, գլուխը քաշ անել, փուչ անել, քնահարամ անել, աչքը խուփ անել, քարաբաղնիս անել, կրակ անել, երեսին մտիկ անել, թող անել, ուրախ անել, դուրս անել, թնին անել, ոտին անել, ուսին անել, առուտուր անել, պատարագ անել, միտք անել, աշխատանք անել, կետ անել (նշ. անասունի՝ ճանճի խայթելուց դեսուդեն փախչելը), լաց ու կոծ անել, ջանք անել, որոճ անել, հարսանիք անել, արոտ անել, խորհուրդ անել, թաղում անել, զրույց անել, քուջուջ անել, արյունլվիկ անել, հրաման անել, մի կերպ անել, ծերպ անել, պարտք անել, կտոր-կտոր անել, թամահ անել (նշ. ազահորեն ցանկանալ), միտք անել, հարևանություն անել, աչքով անել, հանաք անել, դալմադալ անել, գլուխները կախ անել, քանդ անել, տակոռապոկ անել, առաջն անել, արջախնդռուկի անել (նշ. արջի նման խնդալ), (իրան) թոփ անել (նշ. գնդակի պես առաջ նետվել), իրար անել, ձեռնաքաշություն անել (նշ. գողություն անել), քոռ ու փուչ անել, սիրտ անել, հոգին տապ անել, տապ անել, կում անել, քոթքաթաղ անել, աչքը ծերպ անել, թու հա թու անել, անուշ անել, չեմ ու չում անել, ներս ու դուրս անել, հալալ անել, փետակոփվ անել, ձվար անել (նշ. ծվարել, հաստատվել), տակնուվրա անել, կես անել, հարայիրոց անել, հարց ու փորձ անել, վաշ ու վիշ անել, տուն անել, խախալ-խախալ անել (նշ. դեսուդեն փախչել), հա անել (նշ. արագացնել), պատմություն անել, թեժ անել, ցինգր-ցինգր անել (նշ. ոտքերը քարշ տալով, մի կերպ քայլել), դարդ անել, սրախոսություն անել, տակով անել, գողություն անել, անհամություն անել, տանու անել (նշ. տնային դարձնել), վար ու ցանք անել,

տեղահան անել, հավասար աչքով մտիկ անել, մեկին ավար անել, մյուսին՝ խավար, շնորհակալություն անել, խոսքը մեկ անել, աղաչանք-պաղատանք անել, իմաց անել, տակն ու վրա անել, աչքերը չորս բաց անել, քոր անել, աչքերը չորս անել, ազատ անել, բաց ու խուփ անել, տնաքանդ անել, հիս անել (նշ. շներին գրգռել՝ հարձակվելու մեկի վրա), դատաստան անել, խայտառակ անել, խոնարհություն անել, արևկող անել, շնորհ անել, արմատահան անել, ժամ ու պատարագ անել, տակն անել (նշ. սուզվել, թաքնվել), **տալ**՝ ձայն (ձեն) տալ, հանգիստ տալ, ողորմի տալ, վայ տալ, ցույց տալ, անունը տալ, լույս տալ, զրույց տալ, ուժ տալ, լող տալ, բարև տալ, շաղ տալ, մտիկ տալ, պատասխան տալ, հրաժեշտ տալ, պնդոցը տալ (նշ. պատասպարվել ժայռերի մեջ՝ ապահով տեղ), հարց տալ, նշանց տալ (նշ. ցույց տալ), հոգու հետ կոիվսը տալ, շունչը տալ, չիբխին գոռ տալ, թափ տալ, շուռ տալ, ժած տալ, թափ-թափ տալ, ցրցամ տալ (նշ. բերանով ջուր փչել), խելք խելքի տալ, ետ տալ, հույս տալ, թնին տալ, կոիվ տալ, համբույր տալ, վազ տալ, մեջք մեջքի տալ, նշան տալ, ալիք տալ, գլուխ տալ, պատվեր տալ, սուտմեռուկի (ստամեռնուկ) տալ, հարայ տալ, հարկ տալ, հորձանք տալ, սև հողին տալ, աղջիկ տալ, հրաման տալ, թինկը տալ, ձեռք տալ, ուշունց տալ, խորհուրդ տալ, արյունը գլուխը տալ, ձեռք ձեռքի տալ, տեղի տալ, վրա տալ, ոտի տակը տալ, ուժ ու եռանդ տալ, խաբսը տալ, ընկերախաղի տալ, ցալքուն տալ, զանգը տալ, հուպ տալ, աչքերը կայծակին տալ, քաշ (քարշ) տալ, ծափ տալ, արձագանք տալ, պատ տալ, փորսող տալ, ոտնատակ տալ, հոգին տալ, գիլահաչ տալ, փախսը տալ, քրտինքը վրա տալ, կաղին տալ, պահ տալ, ձեն ձենի տալ, վնաս տալ, օգուտ տալ, աչքալույս տալ, գլխին տալ, շալակը տալ, (մեկին) փորձանքի տալ, դուրս տալ, կուլ տալ, քելեխը տալ, դչողու տալ (նշ. աղմկել), **լինել**՝ ցավի տեր լինել, հնար լինել, մասնակից լինել, լաց լինել, ցանուցիր լինել, ծառս լինել, փուչ լինել, երևույթ լինել, ուժասպառ լինել, հանգիստ լինել, աչքը ճամփին լինել, ճար լինել, դադարգուն լինել (տնից-տեղից կտրված լինել), տակով լինել, ճղնակոտոր լինել, աչքը քաղցր լինել (մեկի վրա), (մեկի) թայը լինել, բաց ըլնել, տեղները նեղ լինել, ոտնահան լինել, հարեհաս լինել, հալալ լինել, կտրկան լինել (ոչխարի հոտի մի մասը մի բանից խրտնելով փախչել), ականջը ձենի լինել, սուտը բաց լինել, ծուլ լինել, ցրտատար լինել, ներկա լինել, հնար լինել, մին լինել, լեղապատառ լինել, **ասել**՝ տաղ ասել, երգ ասել, խաղ ասել, սուտ ասել, ողորմի ասել, թթու խոսք ասել, քաղցր խոսք ասել, ճառ ասել, **գալ**՝ եռ գալ, կուչ գալ, ման գալ, քաշ գալ, միտը գալ, ետ գալ, աչքերին լույս գալ, շուռ գալ, եփ գալ, պար գալ, առաջ գալ, մոտ գալ, ցած գալ, վեր գալ, սուտ դուրս գալ, ժած գալ, ուշքի գալ, դուրս (դուս) գալ, հախիցը գալ, պոկ գալ, պտիտ գալ, ներս գալ, շունչը տեղը գալ, գլուխ գալ, գրագ գալ, շունչը ետ գալ, մեղքը գալ, թավալ գալ, կծիկ գալ, խեղճ գալ (նշ. խղճալ), մեռած տեղներիցը ետ գալ, սիրտը փուլ գալ, (մեկի) գլուխը (ինչ) գալ, **առնել**՝ ավարի առնել, համն ու

հոտն առնել, ճեմ առնել, աչքը առնել, կանգ առնել, ուսում առնել, ձեռք առնել (նշ. ծաղրել), լեզու առնել, վեր առնել, թն(եր) առնել, սիրտ առնել, փոխ առնել, շունչ առնել, թափ առնել, դեմ առնել, ձեռն առնել (նշ. հրաժեշտ տալ), փախս առնել, հոտն առնել, վտանգի հոտ առնել, վրեժն առնել, քունն առնել, **ընկնել**՝ ետևից ընկնել, հավարն ընկնել (նշ. տագնապ առաջանալ), կրակն ընկնել, խոսք ընկնել, վայր ընկնել, վեր ընկնել, շառավ ընկնել, կոտրն ընկնել, ջուրն ընկնել, սար ու ձոր ընկնել, ճանապարհ (ճամփա) ընկնել, ներս ընկնել, մահիճ ընկնել, հարևանների դռներն ընկնել, աղմուկ ընկնել, տունը կռիվ ընկնել, ետ ընկնել, դես-դեն ընկնել, մեջ ընկնել, անկողին ընկնել, ցավի մեջ ընկնել, գլխի ընկնել, հարայիրոցն ընկնել, հյուր ընկնել, չափ ընկնել (նշ. մեծ արագությամբ սուրալ), կողք կողքի ընկնել, առաջն ընկնել, սիրտը ահ ընկնել, սիրտը երկյուղ ընկնել, ականջովը ձեն ընկնել, աչքովն ընկնել, ձեռ ընկնել, դեմ ընկնել, կրակի մեջ ընկնել, հետքի վրա ընկնել, հյուր ընկնել, ականջն ընկնել, լուս ընկնել, **ունենալ**՝ տեղ ու դադար չունենալ, հանգիստ չունենալ, հոգս ունենալ, պարտք ունենալ, ամոթ, արուռ, ահ ունենալ, հույս ունենալ, իշտահ չունենալ, իրավունք ունենալ, հաշիվ ունենալ, **դնել**՝ նշան դնել (**բռնել** իմաստով), հարց դնել, պայման դնել, տուն-տեղ դնել, ճամփու դնել, ճանապարհ դնել, ճամփա դնել, վեր դնել, ականջ դնել, հույս դնել, ոտը ոտի առաջ դնել, **բերել**՝ խաբար բերել, գլխին փորձանք բերել, միտը բերել, բերան բերել, սիրտը շուռ բերել, լուր բերել, **դառնալ**՝ օրը ճաշ դառնալ, ետ դառնալ, ցավ դառնալ, տնպահ դառնալ, ընկեր դառնալ, փախստական դառնալ, մարդ դառնալ, փալաս դառնալ, գիլի փայ դառնալ:

Բացի նշված բայերով կազմված միավորներից, կան նաև այլ բայական հարադրություններ, ինչպես՝ հոգոց քաշել, երկյուղ քաշել, չիբուխ քաշել, շունչ քաշել, շունչն իրեն քաշել, սրի քաշել, հոգս քաշել, պոչն իրան քաշել, ձեռք քաշել, դուրս քաշել, նեղություն քաշել, հոգին ավանդել, շունչը պահել, ճամփա պահել, գլուխը պահել, դուրս թափվել, դուրս թռչել, վեր թռչել, դես-դեն թռչել, խելքը թոցնել, անց կենալ, վեր կենալ, հավան կենալ, սուս կենալ, արխեին կենալ, դոչաղ կենալ, հանգիստ կենալ, խաչ հանել, ձագ հանել, ճուտ հանել, անուն հանել, դուրս հանել, հոգին հանել, ձեն հանել, դուրս ձգվել, դուրս պրծնել, աչք ձգել, խոսք բացել, ճամփու գցել, աչք աչքի գցել, ձին չափ գցել, վեր գցել, շունչը փորը գցել, ձենը փորը գցել, ձենը գլուխը գցել, մտից գցել, ահ ու սարսափ գցել, սիրտը հովացնել, աչքը ճպել, ջուր կտրել, լեղին ջուր կտրել, դուռը կտրել, ճար(ներ)ը կտրել, ձենը կտրել, շունչը կտրել, ապուշ կտրել, ճամփա կտրել, չորս կողմը կտրել, խոսքը կտրել, առաջը կտրել, մեկի (կնգա) կողքը կտրել, քար կտրել, դեր խաղալ, ծափ զարկել, հողին հանձնել, ճար գտնել, զահլեն փախչել, գլուխ տանել, քունը տանել, զահլա տանել, վրա վազել, վիզը ծռել, ձեռ մեկնել, բախտը բանել, հույսը հատնել, շունչը հատնել, վեր հատել, պալին կանգնել, ծառ-ծառս կանգնել, թամաշավոր կանգնել, վեր թափել, արտասուք թափել, պայման կապել,

սև կապել, օրդու կապել (նշ. Բանակ հավաքել), ջուրը կապել, հոգին բերանը հասնել, վրա հասնել, մայիլ մնալ, հայիլ-մայիլ մնալ, հուս-հուս ուտել, գլխից ձեռք վերցնել (վեր ունել), ձեռը վեր ունել (նշ. քաշել), վրա նստել, սուգ նստել, ճամփա ելնել, ճամփեն կորցնել, կյանքի ձենն ածել, ձեն ածել, աչք ածել, պար ածել, ման ածել, վեր ածել, չարչու կերպ մտնել, սիրտը հովանալ, վեր ունել, ծերը ծերին հասցնել, աչք տնկել, սիրտը կոտրել, գետինը մտնել, թնի տակը մտնել, դարան մտնել, ներս մտնել, մեջ մտնել, մեր մտնել, ոտ կոխել, ուշք դարձնել, գրի սևն ու սպիտակը ջոկել, սիրտը էրել, հիշողության թելը կորչել, գիլի գլխին ավետարան կարդալ, իրարով անցնել, իրար անցնել, հավար կանչել (նշ. օգնություն կանչել), ականջները սրել, իրար երես պահել, ուրախ պահել, թրի-թվանքի հետ խաղալ, միտը մնալ, գլուխն ուտել, կուշտ փորով հաց գտնել, պատրաստություն տեսնել, գլխի ճարը տեսնել, մի դուռ բացել, գործ բռնել, դուրս գնալ, սիրտը կպչել, վախից պոռշը ճաքել, իրար խառնել, գդակ ծածկել, մատը կծել, տեղները սառած մնալ, փորումը սիրտ չմնալ, թուքները ցամաքել, լեզուն բացվել, վրեն երգ կապել, մարդի գնալ, ձախ գնալ, ծոծրակը քորել և այլն:

Ինչպես տեսնում ենք, բուն բայական հարադրությունները բավական մեծ թիվ են կազմում և իրենց կարևոր ու անփոխարինելի կիրառությունն ունեն Հովհ. Թումանյանի ստեղծագործության մեջ: Դրանց մեջ ակնառու կերպով առանձնանում են դարձվածային արժեք ունեցող կառույցները, որոնք պատկերավորման համակարգում իրենց ուրույն դերն են խաղում՝ կենդանություն, պարզ անմիջականություն հաղորդելով ասելիքին, գեղարվեստական խոսքը դարձնելով շարժուն ու դիպուկ, վառ ու գունագեղ: Ծագման առումով դրանք իհարկե ժողովրդախոսակցական ակունքներից առաջացած դարձվածային միավորներ են: Կարելի է գտնել մեկ-երկու գրական ձևավորում ունեցող միավորներ, ինչպես՝ հոգին ավանդել, շունչը պահել, խոսք բացել, ահ ու սարսափ գցել, դեր խաղալ, հողին հանձնել, արտասուք թափել, սիրտը կոտրել, պատրաստություն տեսնել, ուժ ու եռանդ տալ, ուշքի գալ, շունչը տեղը գալ, ավարի առնել, ճեմ առնել, մահիճ ընկնել, ցավի մեջ ընկնել, հիշողության թելը կորչել և այլն: Սակայն, ինչ խոսք, հետաքրքրություն են ներկայացնում ժողովրդական և հատկապես բարբառային ընդգծված երանգ ունեցող միավորները, որոնք անչափ տպավորիչ ու գունագեղ են, լոռեցու բառուբանի համն ու հոտն են բերում գեղարվեստական խոսք: Դրանց մեջ կան իրենց կազմության մեջ բարբառային կամ օտար ծագման բառային միավորներ ունեցող , ինչպես նաև հնչյունափոխված բառաձևեր ունեցող դարձվածային միավորներ, ինչպես՝ թովջի անել, մտիկ անել, կետ անել, թամահ անել, քոթքաթաղ անել, թինկը տալ, ուշունց տալ, գիլահաչ տալ, պնդոցը տալ, ցալքուն տալ, նշանց տալ, շալակը տալ, քելեխը տալ, դչրդու տալ, դադարգուն լինել, հալալ լինել, կտրկան լինել, ժած գալ, կոտրն ընկնել, հավարն ընկնել, իշտահ չունենալ, գիլի փայ

Օրինակ՝
 Հրացանները որոտացին,
 Ոչխարն եղավ ցանուցիր,
Հավարն ընկավ, ողջ զարթնեցին...

Կամ՝ Մի քար գցեցի թփուտը. մին էլ տեսնեմ մի պախրի ճուտի
ականջները ցլկեցին, էլ ետ ցածացան, ու սկսեց թփերը **ժած տալ**, ճամփա բաց
անել, որ փախչի: (359)

Հա՞յրեն կորավ, էն կորչիլն էր...(197)

Դու մի՛ ասիլ անտերր **ստամեռնուկ է տված** եղել: (395)

Ամեն միևր առած մի բան...(260)

Բերի գեղին մոտեցրի, մին էլ տեսնեմ՝ ոչխարը դես ու դեն **խախալ-խախալ**
է անում։ Դունն էլ **հա է անում**, թե ոչխարի մեջն ընկնի։ (388)

78

Մի անգամ էլ՝ գարնան սկզբին, երբ Սպիտակ դեր տանից դուրս է գնում, աղջիկը **վեր է կենում փախչում:** (492)

Կամ՝ Հենց էս ժամանակ սալդաթը տեղիցը վեր կացավ, էն կողմից կասկարենքը **վեր կալավ բերեց**, որ գցի կրակին՝ թաղած կրկենու վրա: (341)

Խոսքին արագություն, գործողության անհետաձգելիություն են հաղորդում միևնույն բայի դրական և ժխտական ձևերից կազմված հարադրությունները, ինչպես՝

Ասավ-չասավ,
Մին էլ տեսավ
Սանրը գըլխին
Հարսն առաջին
Հոպոպ դառավ
Ու վերացավ,
Վե՛ր, հեռացավ: (216)

Կամ՝ էս անգամ արդեն **ուզեր-չուզեր՝** մեր երգիչը դուրս էր գալիս արևի տակ: (381)

Բայական հարադրության երրորդ տեսակը՝ պատճառականի կազմությունը **տալ** բայի հարադրությամբ, հազվադեպ է կիրառվել Թումանյանի ստեղծագործության մեջ, կիրառությունն էլ, բնականաբար, քերականական նշանակություն ունի, ոչ ոճական, ինչպես՝ բաց թողնել տալ, բաց անել տալ: Օրինակ՝

Իմ հարցին պատասխանեցին, թե գողություն է արել: Ես միջամտեցի, **բաց թողնել տվի** նրան: (413)

Գնում է կարասի բերանը **բաց անել է տալի**, տեսնում՝ ի՞նչ ոսկի. Կարասը լիքը օձ... (448)

Ինչ խոսք, բայական հարադրության այս վերջին երկու տեսակներն այն նշանակությունն ու դերը չունեն լեզվում, ինչ առաջին տեսակը: Այս իրողությունն իր արտահայտությունն է ստացել նաև Հովհ. Թումանյանի ստեղծագործության մեջ: Հարադիր բայերն իրենց ոճական ողջ հմայքով և հնարավորություններով գեղարվեստական պատկերի ստեղծման համակարգում իրենց առանձնահատուկ տեղն են զբաղեցրել:

Ահա այսպիսին էր հարադրությունների գործածությունը մեր մեծ բանաստեղծի ստեղծագործության մեջ: Մնում է հավելել, որ Թումանյանի ստեղծագործությունը ուսումնասիրության անսպառ շտեմարան է՝ լուսաբանման ենթակա իր դեռևս անհայտ բազմաթիվ շերտերով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայոց լեզվի բարբառային բառարան, ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., 2001-2012:
2. Մարգարյան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Եր., 1990:
3. Պողոսյան Պ. Մ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Գիրք առաջին, ԵՊՀ հրատ., Եր., 1990:
4. Սուքիասյան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Եր., 1982:
5. Թումանյան Հովհ., Երկեր, I հատոր, Հայպետհրատ, Եր., 1958:

Բանալի բառեր - Հովհ. Թումանյան, բառապաշար, ժողովրդախոսակցական բառաշերտ, բարբառային բառեր, դարձվածային միավորներ, անվանական հարադրություններ, կրկնավորներ, անվանական բաղադրիչով բայական հարադրություններ, գուգաբայական հարադրություններ:

Կարինե Պողոսյան, Հարադրությունները Հովհ. Թումանյանի ստեղծագործություններում - Հայ ժողովրդի մտավոր, մշակութային և հասարակական կյանքում անգնահատելի դեր ունեցավ և իր ստեղծագործությամբ անջնջելի հետք թողեց Հովհ. Թումանյանը, որն իրապես Ամենայն հայոց բանաստեղծ դարձավ: Նրա ստեղծագործությունը մեծածավալ չէ, սակայն ազգային ինքնագիտակցության և արժեքների մի մեծ շտեմարան է, որի մեջ ուսումնասիրության համար բազմաթիվ շերտեր կան: Հոդվածում քննության են առնվել անվանական և բայական հարադրություններն իրենց ենթատեսակներով, կառուցվածքային առանձնահատկություններով և ոճական նշանակությամբ:

Каринэ Погосян, Аналитические сложные слова в произведениях Ов. Туманяна - В интеллектуальной, культурной и общественной жизни армянского народа Ов. Туманян сыграл неоценимую роль и своим творчеством оставил неизгладимый след, воистине став Поэтом всех армян. Его творчество не очень широкомасштабное, но является большой сокровищницей национальных ценностей и самосознания, в которой есть множество слоев для изучения. В статье рассматриваются именные и глагольные аналитические сложные слова своими подвидами, структурными особенностями и стилистическим значением.

Karine Poghosyan, Composition in Hovhannes Toumanyan's Works - In the intellectual, cultural and social life of Armenian people had an unparalleled role and with his works left a permanent vestige - Hovhannes Toumanyan, who became a real Poet of All Armenians. His work is not vast in volume, still it is a repository of national identity and value system, in which there is an array of layers to analyse. The article

touches upon nominal and verbal composition with their respective subtypes, structural peculiarities and stylistic value.

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱՆՈՒՇ» ՊՈԵՄՈՒՄ
ԱՒԴԱ ՍԱՐՀԱՏՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ ԻՄ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ

Նախաբան

Ի՞նչ ասել Թումանյանի մասին, որ ասված չլինի. ասել, որ *բազում պոետների մեջ նա՞ է անհաս Արարատը մեր նոր քերթության* - այս միտքը վաղուց բանաձևել է Մեծն Չարենցը, կրկնել հայ և այլազգի գրականագետների ու նրա լեզվարվեստը մեկնող լեզվաբանների՝ արդեն 100 տարի հնչող գնահատանքի ու մեծարման խոսքե՞րը նրա «Անուշ»-ի և մյուս պոեմների մասին, «Գիքորի» ու մյուս պատմվածքների մասին, նրա հրաշալի հեքիաթների, մանկական բանաստեղծությունների ու բնագրերին անգամ գերազանցող թարգմանությունների՞ մասին, գնահատել կյանքի ու մահվան, չարի ու բարու խորհուրդը իմաստավորող քառյակնե՞րը, հաստատել այն միտքը, որ յուրաքանչյուր ընթերցող իր Թումանյա՞նն ունի ու նրա արձակ ու չափածո երկերում գտնո՞ւմ է իրեն, սիրում ու ընկալում նրան յուրովի՞, անկախ տարիքից՝ մանուկ, թե տարե՞ց...

Ու թող որ նորեն ասենք՝ նրա թե՛ արձակ, թե՛ չափածո ստեղծագործությունները ունեն թեմային համահունչ լեզվական - րտահայտչական անփոխարինելի բացառիկ միջոցներ, նրանց քերականական-շարահյուսական կառույցները ընտրված են անգերազանցելի ընտրությամբ ու վարպետությամբ, նրա քնարերգությունը միջնադարյան մանրանկարչության գույներն ու ճարտարապետական կառույցների անձեռակերտ շինվածքն են հիշեցնում և դարձել են ժողովրդի սեփականությունը դարձած մեղեդիներ՝ մերթ որպես այնքա՞ն մերը դարձած օպերային նախերգանք, մեներգեր ու խմբերգեր, մերթ որպես սիրուց խենթացած Սարոյի շվիի թախծամրմունջ ելևեջներ, մերթ հոգուց հնչող ու տիեզերական անհուններին հասնող խոր հառաչանք ու հոգեհանգստյան նվագներ...: Մերթ էլ կինոկադրեր կենդանի ու հարազատ Գիքորին՝ խոշոր աչքերում արցունքի վճիտ կաթիլներ:

Ո՞վ է մեզ համար Թումանյանը...

Նա մերթ հառնում է որպես պատանի, որ սերը սրտում դաս է սերտում, մերթ որպես գյուղի Գիքորների ու Մարոների կորուստը սգացող ընկեր կամ ձեռքերը խոնարհ կրծքին դրած ժիր մի մանուկ, որ հասակ է առնում՝ պապերի օրհնանքը շուրթերին, որ հետո ինքը էլ կրկներ՝ «Ապրե՛ք, երեխե՛ք, բայց մեզ պես չապրեք...»: Մերթ հառնում է նա արևոտ մի ժպիտով՝ արևոտ մի պատգամ շուրթին՝ «Արևի՛ պես նայեք մարդկանց», մերթ տեսնում ենք նահապետական

գյուղաշխարհին ու նրա չարքաշ մարդկանց հոգսաշատ կենցաղը, աղաթներն ու ավերված երազանքները հանրագիտարանային խորություն ունեցող գրական գոհարներ դարձնող մեծ պոետին, մերթ հասարակական գործչին, մերթ էլ անկրկնելի թամադային՝ հաշտության ու խաղաղության պատգամ հնչեցնելիս...

Ամենայն հայոց բանաստեղծի ու նրա ստեղծագործությունների մասին հրապարակված ուսումնասիրությունների ահռելի հարստության կա, բայց նրա մասին ասելիքն անսպառ է. քննության է արժանի նրա յուրաքանչյուր բառ ու տող՝ գրականագիտական ու լեզվաբանական ուսումնասիրությունների առումներով...

Թումանյանին պոետ սահմանող **Կնքահայրը** նրան աստվածային անկրկնելի ձիրքերի հետ պարգևել է նաև ժողովրդի բանաստեղծը լինելու մենաշնորհը...

Մեր նպատակը շարահյուսական մի քանի կառույցների ոճական արժևորումն է «Անուշ» պոեմում: Մի հոդվածում հնարավոր չէ քննության առնել պոեմում գործածված բոլոր կառույցները. դրանք քերականորեն ու ոճական առումով տարբեր են և բազմաբնույթ: Մենք դրանցից կառանձնացնենք հուզաարտչական հարուստ ելեջումներ ունեցող ու քերականորեն ինքնատիպ մի շարք կառույցներ, որոնք կրկնվում են որպես ասացվածքներ, կայունացած դարձվածքներ, մաղթանքի ու անեծքի խոսքեր, ժողովրդական իմաստուն խորհուրդներ ...

Նրա ստեղծագործությունների լեզվական արվեստին բազմակողմանիորեն անդրադարձել են շատ հայ լեզվաբաններ ու ոճագետներ, որոնց կարծիքները միասնական են. Թումանյանի խոսքը ժողովրդական լեզվամտածողության անհատակ ծով գանձերից ու բառուբանից է հյուսվել...

Ու մենք՝ Թումանյանի ողջ ստեղծագործությանը քաջածանոթ ընթերցողներս, երբ մի պահ փորձում ենք այս տեսանկյունից դիտարկել պոեմի լեզուն, զգում ենք այն անթերի ու անձեռակերտ սահունությունը, այն անձեռակերտ կատարելությունը, որի մեկ տառն ու բառն անգամ ավել ու պակաս չեն: Նա պեղել և ժողովրդի բառապաշարի ընդերքային հարստությունից վերցրել է նրա լեզվամտածողությանը բնորոշ և իր խոսքին աղ ու համեմունք հաղորդող բառերն ու քերականական կառույցները:

Սակայն Թումանյանի ողջ գրական ժառանգությունը լեզվական բարձրարվեստ մշակույթի առումով չի կարելի նույնացնել: Բնականաբար, դրանց մի մասը դուրս են մնում ուսումնասիրողների ուշադրությունից, չեն դառնում գրականագիտական ու լեզվաոճական քննության առարկաներ: Նրանք չունեցան «Անուշի» բախտը՝ տարիներ շարունակ հղկվելու աղամանդ դառնալու չափ՝ չնայած նրանցում ժողովրդի դժվարին կյանքն ու երազանքներն արտահայտելու հեղինակի անթաքույց միտումներին...

Հայտնի է, որ նախադասությունը լեզվական միավոր է, հաղորդակցության միջոց, որի ձևավորումը պայմանավորված է խոսողի ու խոսակցի անձով, նրանց հարաբերությամբ, տրամադրությամբ, կրթական մակարդակով, տարիքով ու սեռով և այլն: Ու հաճախ նույն միտքը՝ արտահայտված տարբեր հնչերանգներով ու անդամների տարբեր շարադասությամբ, նախադասությունների կառուցվածքային տարատեսակությամբ, դրսևորում, ընդգծում են տարբեր հեղինակների ոճական ինքնատիպությունը...

Մ. Աբեղյանի բացատրությամբ՝ «Խոսքը կամ նախադասությունը բառերով արտահայտված մտածությունն է, որի մեջ մի ստորոգում է լինում, այսինքն մի առարկայի վերագրվում է մի հատկանիշ: Խոսքն ուրեմն պարունակում է ամենաքիչը երկու գաղափար՝

ա/ Մի առարկայի գաղափար, որի վրա մի ստորոգում է լինում:

բ/ Մի հատկանիշի գաղափար, որ ստորոգվում է առարկայի վրա: Առարկան և հատկանիշը, սակայն, բավական չեն կազմելու համար, այլ հարկավոր է նաև

գ/ Ստորոգում, այսինքն՝ հատկանիշի վերագրելն առարկային»¹:

«Ստորոգումն է ահա այն կախարդական գավազանը, որը սովորական բառին կամ բառակապակցությանը մի հատուկ կյանք ու էություն է ներշնչում՝ դրանք դարձնելով մտքի ձևավորման ու հաղորդակցման միջոց»², - **ասում է Մ. Ասատրյան:**

«Կառուցվածքային տեսակետից նախադասությունները միատարր չեն. մի դեպքում իրենց կազմում ունենում են միայն գլխավոր անդամներ, մի դեպքում՝ դրանց լրացնող անդամներ, մի դեպքում լինում են միաբնեռ կամ երկբնեռ, մի այլ դեպքում մեկից ավելի ստորոգումներ են ունենում և այլն և դասակարգվում են տարբեր հիմունքներով.

1. Հստ գերադաս անդամների առկայության /**միակազմ և երկկազմ**/:

2. Հստ միայն գլխավոր կամ դրանց հետ երկրորդական անդամների Առկայության /**համառոտ և ընդարձակ**/:

3. Հստ արտահայտած մտքի և իրականության հարաբերության /**դրական և ժխտական**/:

4. Հստ խոսքի նպատակադրման և հնչերանգի/**պատմողական, հարցական, հրամայական, ըդձական, բացականչական**/:

5. Հստ ստորոգումների թվի /**պարզ և բարդ**/»³

Նախադասության՝ կառուցվածքային մի քանի տասնյակի հասնող տեսակները շարահյուսական մակարդակում իրենց քերականական կարգերով հանդես են գալիս և՛ անխառն, և՛ փոխկապակցված: Ե՞րբ և ո՞ր դեպքում դրանցից ո՞րը ընտրել: Հենց այստեղ է երևում գրողի վարպետությունը, ձևի և

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 359-360:

² Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1987, էջ 119:

³ Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան 2003, էջ 115:

բովանդակության ներդաշնակությունն ստեղծելու մեծագույն տաղանդը, որից Հ. Թումանյանին տրվել է առավելագույն չափով... Մենք քննության կառնենք պարզ նախադասության մի քանի տեսակներ

ա/ լրիվ և թերի նախադասություններ,

բ/ հաստատական և ժխտական նախադասություններ,

գ/ նախադասության հնչերանգային տեսակներ:

դ/ միակազմ նախադասություններ:

Սրանցից յուրաքանչյուրը լեզվաբանական առանձին ուսումնասիրության առարկա է արդեն իսկ: Մեր նպատակը, սակայն, նախադասության նշված տեսակների լեզվագիտական քննությունը չէ, այլ նրանց ոճական արժևորումը պոեմում:

Լրիվ և թերի նախադասություններն իրարից տարբերվում են

ա/ հնարավոր բոլոր անդամների առկայությամբ և

բ/ նրանց վերականգնելի բացակայությամբ:

Այս պոեմի լեզվական հարստությունն ու ճկունությունը մեծապես պայմանավորված են նաև նախադասությունների կառուցվածքային բազմազան տեսակներով, որոնց մեջ մի բառն անգամ մի այլ բառով, կառուցվածքային տվյալ տեսակը մի այլով, շարադասությունը մի ուրիշով փոխարինել չենք կարող, հնարավոր չէ, որովհետև Թումանյանական ոգին ու շունչը քերականական այլ ձևերի մեջ փորձելն իսկ իմաստագուրկ է:

«Անուշ» պոեմում քիչ են այն հատվածները, քառատողերը, որոնցում բոլոր նախադասությունները նույն կառուցվածքն ունենան. նրանք տարակառույց են ու տարաելևէ, ինչպես իր հերոսների տրամադրությունը. Ահա դրանցից մեկը, որի երեք բաղադրիչներն էլ, որպես նաև ընթերցողին ուղղված չարագույժ բոթ, այլայլված Մոսիի կերպարանքն առած, հառնում են մեր աչքերի առաջ **երկկազմ ու լրիվ**, բայց անդամների շարադասությամբ տարբերվող նախադասությունների տեսքով:

Այստեղ որպես մտքերի արտահայտման հիմնական եղանակ գործածվել են **հաստատական, ժխտական, լրիվ ու թերի, երկկազմ ու միակազմ** նախադասություններ.

➤ Ու մարդասպանը դուրս եկավ ձորից՝

Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.

Մարսափ է կաթում արնոտ աչքերից,

Եվ **կերպարանքը փոխված է** բոլոր: /Ա-96/

Քառատողի երեք նախադասությունները **հաստատական** են՝ պատմողական նկարագրությամբ, բայց դրանք դրամատիկ հույզերի մի ամբողջ աշխարհ, գյուղի ծաղրի առարկան չղառնալու և սողամարդկային արժանապատվությունը փրկելու համար մտերիմ ընկերոջը սպանած մարդու

սարսափ, գուցե անգամ զոջու՞մ են արտահայտում թե՛ դիպուկ, անփոխարինելի բնութագրումներով, թե **փոխաբերության ու սովորական ու շրջուն շարադասության** ոճական հնարքներով:

Ոճականորեն **անթերի են և ժխտական թերի** նախադասությունները .

➤ Ինձ **չես սիրում,**

Չես ամստում,

Էլ **չես ասում՝**

Ի՞նչ կլնեմ ես.../Ա/

➤ -Դու ինձ **չես սիրում, չես սիրում** ինձ պես,

Հենց ես եմ մենակ լալիս ու տանջվում.../79/ /ժխտական/

Բանաստեղծական հատվածին պատկերավորություն ու արտահայտչականություն է հաղորդել **հակադրության** ոճական միջոցը և ոչ միայն. այստեղ առկա է նաև **ժխտական դիմավոր բայերի կրկնությունը, շրջուն շարադասությունը**, հանգավորումը և այլն:

Ոճական միօրինակությունից խուսափելու համար ժխտումն արտահայտվում է հաճախադեպ կիրառվող այլ միջոցներով՝ ժխտական դերանուններով, ժխտական ցուցիչներ համարվող մակբայներից մի քանիսով՝ **այլևս, էլ, րբեք, բնավ և այլն:**

➤ -Ա՛խ , **չէ՛**, ես գիտեմ, որ ես բախտ **չունեմ**.

Ես **երբեք, երբեք** բախտ **չեմ ունեցել**.../84/

Բանաստեղծը ժխտման իմաստն արտահայտում է նաև հարցական հնչերանգով: Անուշի՝ իրեն չսիրելու մեղադրանքը Սարոն հերքում է այնքա՛ն նրբորեն, այնքա՛ն **մեղմասացությամբ**.

➤ ...Ա՛խ, Անու՛շ, Անու՛շ, էդ ի՞նչ ես ասում,

Բա դու **չե՞ս** լսում.

Էն, որ գիշերով շրհու եմ փըչում,

Էն ու՞մ եմ կանչում...

Էն, որ մոլորված նըստած եմ մնում,

Ու՞մ հետ եմ լինում...

Էն որ հառաչում ու ախ եմ քաշում

Էն ու՞մ եմ հիշում...

Էն, որ լանջերին խաղեր եմ ասում, **ու՞մ հետ** եմ խոսում.../81/

Նույն միտքը շարահյուսական տարբեր կառույցներով արտահայտելը լեզվական ճկունության երաշխիքն է, որը մեծապես հատուկ է Թումանյանին: Ժխտումով հաստատում կա նաև Անուշի՝ Մոսիին ուղղված դիմումի մեջ. և ժխտումն այնքա՛ն աղերսագին է, այնքա՛ն խղճահարույց.

➤ Ինձ մի՛ սպանիր, դամեղ տա՛ր հեռու...

Քո քույրը **չե՞մ ես**, իմ Մոսին **չե՞ս դու...**

Հարցական կառույցներով ժխտում արտահայտելը «Անուշ»-ի ոճական առանձնահատկություններից մեկն է՝ բնորոշ նրա հերոսների խոսքին:

Այլ օրինակ՝

➤ -Աղջի՜, սևասի՜րտ, քու ահը կտրի,

Աղջիկը մենակ ձո՞րը կմտնի.

Հազար չար ու շատ, հազար հարամի

Հազար ջահելներ վխտում են հիմի .../Ա-86

Շարահյուսական ինքնատիպ կառույց ունեն հատվածի նախադասությունները. **հռետորական** հարցումը **աղջի** ժողովրդալեզու կոչականով, ժողովրդախոսական **սևասիրտ** անեծքը, **դու** անձնական դերանվան սեռական հոլովի **քո**-ի փոխարեն **քու** **ձևը**, **հազար** բառի հաղորդած **չափազանցության** արտահայտչամիջոցը, **նաև հանգավորումը** նրա խոսքը դարձրել են կենդանի, գունեղ, բնական ու սրտահույզ...Ըստ ավանդապաշտ ու նախապաշարված մոր՝ աղջիկը մենակ ձորը չի մտնի, որովհետև թուրքին հավասար վտանգ էին ներկայացնում նաև ջահելները...

Խոսքի տնտեսման օրենքից և դարձյալ խոսքի ոճական բազմազանության պահանջից ելնելով՝ անհրաժեշտաբար զեղչվում են մտքից հասկացվող անդամները՝ ենթական ու ստորոգյալը, առանձին բառեր ու բառակապակցություններ՝ վերածվելով **թերի նախադասությունների**: Հայտնի է՝ ենթական զեղչվում է, երբ այն խոսողն է կամ խոսակիցը, և ստորոգյալն արտահայտվում է բայի առաջին կամ երկրորդ դեմքի եզակի թվով: «Անուշը» հարուստ է այդպիսի օրինակներով.

➤ -Հերի՛ք է Անուշ, **նե՛րս արի** դագեն,

Քանի՛ **դուրս թոչես**, **նայես** դես ու դեն...

➤ **Հանգի՛ստ կաց**, Անու՛շ, դու հասած աղջիկ,

Ի՞նչ **ունես** ջահել չոբանների հետ,

Նատի՛ր վրանում, քու գործին **մտիկ**,

Պարկեշտ կաց, աղջի,՝ ամոթ է, ամո՛թ.../77/

Երկում քերականական նման կառույցները նպաստել են խոսքի սեղմությանն ու հակիրճությանը, թեթևացրել խոսքը, ազատել ավելորդ բառերից ու դրանով խոսքը զերծ պահել ոճի միօրինակությունից՝ կառույցը դարձնելով անփոխարինելիության չափ կառուցիկ, անբռնազբոս, մեղեդային համարվելու չափ ռիթմիկ, շեշտադիր ու բարեհունչ:

Դրամատիկ ու վշտամոռմոք մի պատկեր է «Անուշ» պոեմի չորս տողանոց հետևյալ հատվածը, որում ութ կախման կետերով ու նախադասության կառուցվածքային մի քանի տեսակներով նահապետական գյուղաշխարհում տիրող աղաթների բերած ողբերգական հետևանքներն է խտացնում Թումանյանը.

➤ - Ի՛նչ են **հառաչում**...էն ո՞վ էր, **մի տե՛ս**,

Որ դուրսը հանկարծ աղմկեց էսպես...

Ո՞վ է սպանել... Մոսի՞ն... ու՞մ... ու՞ր...

-Անու՛շ, հե՛յ Անու՛շ... ջուր հասցրե՛ք, ջու՛ր.../Ա-45/

Առաջին տողում երեք նախադասություններից երկուսը դիմավոր միակազմ են՝ **Ի՞նչ են հառաչում...**, **մի տե՛ս**, երրորդ տողում՝ երեք անդամ անվանական՝ **Մոսի՞ն, ում՞, ու՞ր**, չորրորդ տողում՝ **Անու՛շ, հե՛յ Անու՛շ**, երկու անվանական անդամ, մեկ դիմավոր միակազմ՝ **ջու՛ր հասցրե՛ք, և ջու՛ր** անվանական անդամ նախադասություններ կան, **որոնք այլ կառույցներով** փոխարինելու անկարելիության աստիճան դիպուկ են ու անկրկնելի...

Դիմավոր միակազմ նախադասությունները տարբերվում են զեղչված ենթականերով **թերի նախադասություններից**, որոնցում ենթակաները հեշտությամբ վերականգնվում են, իսկ դիմավոր միակազմում՝ ոչ:

Թումանյանի հերոսուհիները ասելիքի բերումով գործածում են նաև **դիմավոր միակազմ նախադասություններ**, որոնց ստորոգյալն արտահայտվում է բայի հոգնակի թվի երրորդ դեմքով: Ահա դիմավոր միակազմի մի երկու օրինակ՝

➤ **Ասում են՝** ուռին աղջիկ էր ինձ պես.../Ա- 80/

➤ **...Տեսնողն էլ կասի՝** ինչ աղջիկ է սա,

Հազար մարդի հետ կերթա,կխոսա.../Ա-77/

Անվանական անդամ նախադասությունների գործածությամբ խոսքը ոչ միայն կարճվում է, այլև հարստանում չբացահայտված կամ անթաքույց հույզերով, անասելի խորունկ դրամատիզմով.

➤ **-Ամո՛թ քեզ , Մոսի՛, թու՛ք ու նախատինք,**

Ամոթ քեզ նըման գոված իգիթին.../Ա-89/

Հերոսների ու կատարված իրադարձությունների նկատմամբ զգացական-հուզական վերաբերմունքով ու տրամադրություններով՝ սիրով ու ասելությամբ, ցավի ու վշտի հուզախոռով մորմոքով լի է բանաստեղծի ու իր հերոսների հոգին, և նրանք մեկ ուզում են բացել այն ընթերցողի առաջ, մեկ՝ իրարից ու աշխարհից ստանալ այն բազում հարցերի պատասխանները կամ հրճվանքից, սիրուց ու կարոտից, հաճույքից ու ողբերգության լեփ-լեցուն զգամունքներից ուզում են լիցքաթափվել՝ դիմելով նախադասության՝ ասելիքից բխող հնչերանգային այս կամ այն տեսակին, որոնց բնույթն այլևս փոխել և հոմանիշ կամ հականիշ այլ կառույցով փոխարինելն անհնար է... Հարյուրավոր տարահնչերանգ նախադասություններից, որպես մեր ասածների ապացույց, բերենք մի քանի օրինակ՝

Պատմողական

➤ Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,

Երկընթի մթնած ամպերից իջներ,

Ինչպես փոթորիկ սաստիկ սրընթաց,
Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ:/Ա-95/

Հարցական

-Մի՛ լար իմ աղջի՛կ, ինձ խոստովանի՛ր,
Միրու՞մ ես նըրան, քո **կամքո՞վ** փախար.../95/

Բուն հրամայական

- Դե իմ անունով **երդվի՛ր**, անըզգա՛մ,
Որ էլ Սարոյին դու չես սիրելու...

Հորդորական հրամայական

➤ **Ե՛տ դառ, ե՛տ, իգի՛թ,**
Ե՛տ դառ, անիրա՛վ.../Ա-100/

Բացականչական

➤ -Գալ՛իս եմ, գալի՜ս, գալիս եմ , նանի՜,-
Ձորից աղջկա ձենն է դողանջում.../Ա/
➤ **Վա՜յ, Վա՜յ,** Մոսի ջան, ինձ մի՛ ըսպանիր,
Սրանից հետո չեմ սիրիլ նրան.../Ա/

Ըղձական

➤ Դու՛րս գնա, կորի՛, ա՛յ լիրբ անըզգամ,
Սև ու սուգ լինի թագ ու պսակդ.
Կորի՛, չերևաս աչքիս մյուս անգամ
Գետինը մտնի երկար հասակդ .../Ա-94/

Ակնհայտ է, որ շարահյուսական կառույցների հարուստ ու բազմազան համակարգը գրողին լայն հնարավորություն է տվել ստեղծելու գեղարվեստական հզոր հնչեղություն ունեցող մի պոեմ, ուր ներկայացվել է նահապետական հայ գյուղը՝ իր օրենքներով ու ադաթներով և հյուսվել այդ միջավայրի հարազատ զավակների հավերժական սիրո պատմությունը:

Բանալի բառեր - Շարահյուսական կառույցներ, ոճական արժեք, լրիվ և թերի, հաստատական և ժխտական, միակազմ, նախադասության հնչերանգային տեսակներ, ժողովրդախոսակցական լեզվի տարրեր, լեզվաոճական կատարելություն:

Աիդա Սարհատյան , Շարահյուսական կառույցների ոճական արժեքը Հովի. Թումանյանի «Անուշ» պոեմում - Հոդվածի նախաբանում գեղարվեստական հնչեղությամբ սեղմ ներկայացվում ու յուրովի է գնահատվում Հովի. Թումանյանը՝ իր գրական ժառանգությամբ: Ապա հակիրճ ներկայացվում է նախադասությունը իր սահմանումներով, դասակարգման հիմունքներով, շարահյուսական և ոճական առանձնահատկություններով: Քերականական այդ հիմքի վրա էլ

«Անուշ» պոեմում դիտարկվում են շարահյուսական մի քանի կառույցվածներ՝ լրիվ, թերի, հաստատական և ժխտական, միակազմ և հնչերանգային տարբերակներ՝ պոեմին հաղորդած ոճական բարձրակարգ նշանակությամբ: «Անուշ»-ի լեզուն անզուգական, բարձրարվեստ կատարելություն է՝ համահունչ իր բովանդակությանը:

Аида Саргатыан, Стилистическое значение синтаксических конструкций в поэме Ов. Туманяна «Ануш» - В предисловии статьи в удожественном звучании представляется и по-своему оценивается пройденный путь и художественное наследие Ов.Туманяна. Затем кратко представляется предложение со своим определением, основами классификации, синтаксическими особенностями, грамматическими категориями.

На основе этой грамматической категории в поеме рассматриваются несколько типов структуры предложений со своими стилистическими значениями.

Языковая культура поэмы Ануш безупречное, несрвненное и высокохудожественное совершенство, созвучное его содержанию.

Aida Sarhatyan, Stylistic use of syntactic stryktyres in «Anysh» poem by Hovhannes Tumanyan - In the of introdiktion the present article Hovhannes Tumanyan is represented with artistic sonority and is uniquely appreciated due fo his literary inheri tance. Then sentence ls briefly represented with its definitions,classification bass, syntactic peculiarities, grammatical aspects. Ob tht grammatical base,certain structural tyres of sentences are observed in Anush poem, such as complete and incomplete, affirmation and negative, one-member and nominative variants with their examples. The language of Anush poem is perfect, income parable and highly artistie as its content.

**ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՑԱՆԻ
ՉԱՓԱԾՈՅՈՒՄ
ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆՑԱՆ**

Լոռու մարզի Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

Գեղարվեստական խոսքում կրկնավոր կապակցությունները լեզվառճական արժեքով կրկնություններ են: «Կրկնությունը այն բանադարձումն է, որի դեպքում միևնույն բառը, բառակապակցությունը կամ նախադասությունը ասվում է երկու կամ ավելի անգամ՝ խոսքն ավելի արտահայտիչ դարձնելու, նրա հուզականությունն ուժեղացնելու նպատակով»¹: Կրկնավոր կապակցություններ ձևավորելու հնարավորություն ունեն գրեթե բոլոր արմատները. այդ կապակցությունները մեծ մասամբ հեղինակային արտահայտություններ են և, ինչպես և սպասելի էր, մնում եք *տեսական-հնարավորի* միջակայքում:

Հովհ. Թումանյանի չափածո ստեղծագործությունների ուսումնասիրության արդյունքում առանձնացրել ենք կրկնություններով ձևավորված արտահայտությունները՝ կիրառելով վերլուծության, վիճակագրության և համադրության մեթոդները:

Ուսումնասիրված չափածո ստեղծագործություններում կրկնավոր կապակցություններ են ձևավորել հետևյալ արմատները՝ *ազատ*², *անց*, *ապուր*³, *բարձր*, *գանձ*, *գետ*⁴, *գերի*, *գիր*, *դաշն*, *դարդ*, *եկ*, *եղեգն*, *երագ*, *երգ*, *գարկ*, *գուսպ*, *թիռ*, *լույս*, *խաբ*, *խաղ*, *խոս*, *խորհ*, *ծաղիկ*, *կալ*, *կանչ*, *կապ*, *կարմիր*, *կույս*, *կուրծ*, *հզոր*, *հին*, *ձայն*, *ձեռ*, *ճանապարհ*, *մագ*, *մահ*, *մաճ*, *մատ*, *մարդ*, *մեծ*, *միտ*, *նկար*, *շող*, *շունչ*, *որս*, *չափ*, *պատճառ*, *պատում*, *պար*, *ջուր*, *սեղան*, *սեր*⁵, *սիրտ*, *սկիզբ*, *վախճան*, *վառ*, *տալ* (*բայ*), *տանջ*, *տես*, *տոն*, *ուխտ*, *փոշի*, *փորձ*, *քար*, *քուն*:

Այս արմատները հանդես են գալիս ինչպես հնչյունափոխված, այնպես էլ անհնչյունափոխ տարբերակներով, պարզ-արմատական կամ բաղադրյալ կազմությամբ:

¹ **Ջահուկյան Գ., Խղաթյան Ֆ.**, Հայոց լեզու, Երևան, 1994, էջ 36:

² Արմատները քննել ենք ըստ Հ. Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ի (Երևան, 1926):

³ Սա «ապրել» բառի արմատն է (տե՛ս Աճառյան Հ., Հայերէն արմատական բառարան, Երևան, 1926, էջ 239):

⁴ Սա գրաբարյան «գէտ» արմատն է՝ «Գիտակ, գիտուն» իմաստով, որը գրությամբ տարբերվում էր մյուս «գետ» արմատից՝ ի տարբերություն ժամանակակից արևելահայերենի, որտեղ սրանց գրությունը նույնացված է, ինչը համանունության պատճառ է դառնում: Տարբերությունն այն է, որ առաջին արմատն ինքնուրույն գործածություն գրեթե չունի, իսկ երկրորդն ունի:

⁵ «Սեր» արմատը «զգացմունք» իմաստով գրաբարում, միջին հայերենում և արևմտահայերենում գրվում էր «է» տառով՝ տարբերվելով մյուս «Սեր» արմատներից՝ ի տարբերություն ժամանակակից արևելահայերենի, որտեղ այն համանունության եզր է կազմում նշված արմատների հետ, և վերջիններիցս այն կարելի է տարանջատել միայն համատեքստում ունեցած համապատասխան գործառնությունից ելնելով:

Ըստ հաճախադեպության ցուցանիշի՝ առավել շատ գործարկվող արմատներն են՝ *երգ (26)*¹, *ձայն (4)*, *բարձր (3)*, *լույս (3)*, *խոս (3)*, *մարդ (3)*, *շունչ (3)*, *ծաղիկ (2)*, *կալ (2)*, *մաճ (2)*, *միտ (2)*, *շող (2)*, *պար (2)*, *սեր (2)*, *տես (2)*, *քար (2)*, *քուն (2)*: Մնացած բոլոր արմատները հանդիպում են միայն մեկ անգամ:

Մեր կողմից ուսումնասիրված բնագրային օրինակներում կրկնավոր կապակցություններն այսպիսի գործառական հարաբերակցություններ են ձևավորել.

Ա. *Ենթակա-ստորոգյալ՝ «գոյական + դիմավոր բայ» և «փոխանուն + դիմավոր բայ» ձևաբանական կաղապարներով.*

Առանձնացված օրինակներում միննույն արմատի կրկնությանը մի քանի դեպքերում հանդիպում ենք ենթակա-ստորոգյալ կապակցությունների մեջ: Այլ կերպ ասած՝ սա «գլխավոր անդամ + գլխավոր անդամ» հարաբերակցության դրսևորումն է:

Բերենք համապատասխան բնագրային մի քանի օրինակներ.

1.«Զուր եմ փախչում, ինձ խաբում,

Հազար կապ է ինձ կապում» (1, 18)²:

2.«Լուսը լուսացավ,

Բարին շատացավ» (1, 228):

3.«Է՜յ անխելք մարդ, ե՞րբ տի թողնես ապրողն ապրի սրտալի,

Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի» (2, 39):

4.«Նըրանց տունը երբ մի օր

Եկան երկու եկավոր» (3, 10):

5.«Զըմրուխտ դալարի միջում գունագեղ,

Քընքուշ, վառվրոն ծաղիկներ ծաղկում» (4, 123):

Ինչպես կարելի է նկատել, վերոբերյալ օրինակների ենթականերն արտահայտված են գոյականներով՝ բացի երրորդ օրինակից, որում ենթական («ապրողն») արտահայտված է փոխանվանաբար գործածված ենթակայական դերբայով:

Բ. *Ստորոգյալ-լրացում՝ «բայ+գոյական» ձևաբանական կաղապարով.*

Հ. Թումանյանի չափածոյում արմատի կրկնությունները մեծամասամբ հենց այս միջակայքում են դրսևորվում, մասնավորապես՝ օրինակների մեծ մասում արմատները կրկնվում են «ստորոգյալ + ուղիղ խնդիր» և «ստորոգյալ + միջոցի անուղղակի խնդիր» շարահյուսական հարաբերակցությունների մեջ:

Օրինակները, ըստ այդմ էլ, բաժանել ենք հետևյալ խմբերի.

¹ Փակագծերում նշված են օրինակներում արմատների հաճախադեպության ցուցանիշները՝ ըստ Հովհ. Թումանյանի չափածո ստեղծագործությունների (Տե՛ս Հղում 1):

² Այսուհետև օրինակների վերջում փակագծերում կնշվի Հ. Թումանյանի Երկերի լիակատար ժողովածուի համապատասխան հատորի համարը և տվյալ մեջբերման համապատասխան էջը:

1) «Մտորոգյալ + ուղիղ խնդիր» կապակցություններ, որոցում ուղիղ խնդիրը անվանվում է նաև ներքին ուղիղ խնդիր:

1. «Ո՛չ, քեզ համար այսպիսի երգ
Երգելու չեմ ես երբեք» (1, 115):
2. «Էլ ո՞ւմ առաջին սիրտըդ բաց անես,
Ո՞ւմ համար երգես սրբտալի երգեր» (1, 197):
3. «Ոտիդ արա, ուսիդ արա,
Կալք կալեսնք, անձրև չըգա» (1, 238):
4. «Եվ տոն կըտոնենք էսպես խնդագին,
Եվ թող իմանա բովանդակ երկիր– » (1, 265):
5. «Հառաչանքով սրբոյի խորքից խոսք ես խոսում Աստծո հետ» (1, 269):
6. «Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ» (1, 269):
7. «Էլ աշխարհի չեմ գալու հո նոր,
Իր տըվածն եմ տալիս իրեն» (1, 298):
8. «Ես շընչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր,
Ես լըսում եմ Նրա անլուռ կանչն ու հունչը ամենուր» (2, 48):
9. «Ես էլ անհոգ խընդում, ցընծում,
Տեսակ-տեսակ պարեր պարում» (2, 177):
10. «Ահա պատմեմ ձեզ մի դեպք,
Մի պատմություն, որ երբեք... » (3, 9):
11. «Մեհրուն ու ծերին հուսադրական
խոսքեր խոսացին, կամաց հեռացան» (3, 41):
12. «Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա՛, ջան գյուլում ասա» (3, 91):
13. «– Ո՛վ դու փառապանձ հըսկա դյուցազուն,
Փորձ փորձի մի առ իմ բեռը չընչին» (4, 166):
14. «Էսպես հըրաշքի դեռ չեմ հանդիպել,
Էսպես մի տեսիք չեմ տեսել երբեք» (4, 167):

Վերոբերյալ օրինակներում ուղիղ խնդիրներն արտահայտված են իրանիշ գոյականներով (և՛ որոշյալ, և՛ անորոշ առումներով)՝ բացի յոթերորդ օրինակից, որում ուղիղ խնդիրն արտահայտված է փոխանունով, այն է՝ գոյականաբար գործածված հարակատար դերբայով («տվածն»):

2) «Մտորոգյալ + միջոցի անուղղակի խնդիր»¹.

Բերենք համապատասխան բնագրային օրինակներ.

1. «Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ,

¹ Բերված օրինակները միջոցի անուղղակի խնդիրներ են, որոնք, սակայն, իրենց խորքում ունեն նաև ձևի պարագայի նշանակություն:

Հեռվից անթիվ ձեռքերով» (1, 31):

2. «Ինչպես ծերունին, ձենով պառաված,
Չայնակցում է ժիր թոռնիկի երգին» (1, 70):

3. «Հիշեցնեն անցած օրերի սերը
Եվ քեզ քո սիրած տանջանքով տանջեն» (1, 87):

4. «Լողացրե՛ք, պահեք ընտրած հատիկով,
Աղբյուրի վրճիտ ջրով ջրեցեք» (2, 243):

5. «Եվ լքում է, որ սեպ բլրի վրա
Մահու սև քնով վաղ է քնել նա» (2, 243):

6. «Կարծես թե մեկը անընդհատ գարկով
Զարկում է կրծքիս ծանր երկաթով» (4, 148):

Գ. *Գոյականով արտահայտված նախադասության որևէ անդամ-լրացում՝ «գոյական+գոյական», «գոյական+ածական» և «գոյական+բայ» ձևաբանական կադասարներով.*

Գոյականով, ինչպես գիտենք, կարող են արտահայտվել նախադասության ենթական, հատկացուցիչը, որոշիչը, բացահայտիչը, ստորոգելիական վերադիրը, խնդիրները և պարագաները: Հովհ. Թումանյանի չափածո ստեղծագործություններում, սակայն, վերոբերյալ ոչ բոլոր շարահյուսական գործառույթներում ենք հանդիպում արմատների կրկնությունների, ինչպես բացահայտիչը, որը կրկնությունների միջոցով չի արտահայտվում:

Քննենք այն բնագրային օրինակները, որոնցում հանդիպում ենք արմատների կրկնությունների. դրանք տասն են.

1.«Մի հզորություն հզորեղ

Ինձ հուսադրում է հանկարծ» (1, 43):

2.«Նրանք չերգած իմ երգերն են,

Որ սրտումբս ես տարա» (1, 150):

3.«Դուն ավետեցիր ժամը տեսության

Այն սիրատենչիկ սիրահարներին» (1, 156):

4.«Գիտե՞ս ինչ գարդ է թաղման հանդեսին,

Եվ կամ ի՞նչ արժե մատի մատնիքը» (1, 252):

5.«Մինչև վախճանն անվախճանի քնընում է դարեդար» (2, 54):

6.«Եկե՛ք ջահել սիրահարի

Սերը ողբանք վաղամեռ» (3, 81):

7.«Անմահացա՜՞մ մահկանացուն՝

Միանալու իր աստըծուն» (3, 120):

8.«Մնացեք բարով, օրեր հեծության.

Եվ հիմար ցնորք անմեծ մեծության» (3, 143):

9.«Մինչև պատճառն սկզբնական՝ ծագման խորհուրդն էս կյանքի,

Մինչև սկիզբն սկիզբների՝ ակն ու աղբյուրն ամենքի» (4, 85):

10. «– Էդ ամենը հրաշալի, կանչեց արքան անհամբեր.

Բայց ասացեք, ո՞վ խորհմաստ, ո՞վ բազմագետ դուր գետեր¹» (4, 87):

Ինչպես կարելի է նկատել վերը բերված այս տասը օրինակներից.

ա) Սրանցից յոթը որոշիչ–որոշյալ կապակցություններ են, որոնցից մեկը շրջուն շարադասությամբ է հանդես եկել (*հզորություն հզորեղ*), երկուսը հարակատար դերբայներով են կազմվել, որոնցից մեկը՝ ժխտականով (*չերգած երգեր, անմահացած մահկանացու*), չորսը՝ ածականներով, որոնցից մեկը՝ ժխտականով, ինչը ոչ կանոնիկ ձև է տվյալ՝ «մեծ» բառի համար (*հզորություն հզորեղ, սիրատենչիկ սիրահարներ, անմեծ մեծություն, բազմագետ գետեր*), մեկը՝ գոյականով, մասնավորապես՝ գոյականի սեռական հոլովածով (*մատի մատնիք*):

բ) Օրինակներից երեքը հատկացուցիչ–հատկացյալ կապակցություններ են, ընդ որում՝ սրանցից երկուսը շրջուն շարադասությամբ են հանդես եկել, ինչը չափածոյին հատուկ երևույթ է (*սիրահարի սեր, վախճանն անվախճանի, սկիզբն սկիզբների*):

Դ. *Հարաբերության եզրեր չունեցող նախադասության անդամներ (և ոչ միայն).*

Հաջորդ խումբը, որն առանձնացրել ենք, ներառում է առաջին հայացքից իրար հետ չհարաբերվող նախադասության անդամներ, որոնց համար, սակայն, հարաբերության եզր է դառնում որևէ արմատ:

Բերենք համապատասխան բնագրային օրինակներ.

1. «Ների՛ր, ո՛վ կույս, որ հուզեցի

Խաղաղ կուրծքդ կուսական» (1, 41):

Այս օրինակում «կույս» կոչականը և «կուրծք» բառի որոշիչ «կուսական» ածանցավոր բառը, որոնք իրար հետ հարաբերվել չեն կարող այն պարզ պատճառով, որ առաջին բառն, ինչպես արդեն նշեցինք, կոչական է, իսկ երկրորդը՝ նախադասության այլ անդամի՝ ուղիղ խնդիր–լրացյալի որոշիչ–լրացումն է:

2. «Նրա մարդիկն առած ջիդեն՝

Մարդագոհ են պտըրտում» (1, 73):

Այստեղ էլ «մարդ» արմատն ունենալու շնորհիվ հարաբերվում են «մարդիկն» ենթական և «մարդագոհ» ուղիղ խնդիրը. վերջին բառի դեպքում նշված արմատը իսկական բարդության երկու արմատներից մեկն է:

3. «Մարդը ժպտերես

¹ Այս օրինակում առկա «գետ» արմատը «գիտակ, գիտուն և այլն» բառերի արմատն է: Սրա մասին տե՛ս նաև հղում 4-ում: Մենք վերը նշել ենք, որ այս արմատը առանձին կիրառություն չունի. վերոբերյալ օրինակում, սակայն, տեսնում ենք ասվածի հակառակ երևույթը: Սա նշված արմատի ինքնուրույն կիրառության հեղինակային օրինակ է:

Արադ է գիշատում» (1, 86):

Վերոբերյալ օրինակում էլ «մարդը» ենթական աղերսվում է «գիշատում է» ստորոգյալի լրացում ուղիղ խնդրի, այն է՝ «մարդ» բառի հետ, քանի որ երկուսն էլ համարմատ բառեր են:

4. «Որսկանը անտառում որս էր որոնում, կանգնեց» (2, 287):

Ինչպես կարելի է նկատել, այս օրինակում «որս» արմատն է հարաբերության եզր ստեղծել «որսկան» բառով ներկայացված ենթակայի և «որոնում էր» ստորոգյալի համար բայական անդամի լրացում (տվյալ դեպքում՝ ուղիղ խնդիր) դարձած «որս» գոյականի միջև:

Նույն տրամաբանությամբ ներկայացնենք այլ բնագրային օրինակներ.

5. «Արեգակի շողերի հետ

Ահա շողաց և մի բան,– » (1, 74):

6. «Գնա՛ս բարով, ա՛յ ուխտավոր,

Երանի քեզ, հայ ուխտավոր,

Որ կարոտով ու սիրառատ

Ուխտ ես գնում դեպ Արարատ» (1, 140):

7. «Այնուհետև գրչով ապրող

Կարգին գրող կրլինենք» (1, 172):

8. «Բարձրացի՛ր Հայոց բարձր լեռների

Ամենից բարձր գագաթն ու նայիր» (1, 272):

9. «Դաշնակահար պոետն երբոր

Էլ չըգրի դաշնակներ»¹ (1, 362):

10. «Ապա պոկեց իրեն ձեռքով

Քարահանքից մի կտոր քար» (4, 159):

և այլն:

Այսպիսով, ինչպես կարելի է նկատել, հիմքում միևնույն արմատն ունենալու նախապայմանով իրար հետ հարաբերվում են *կոչականը և ուղիղ խնդրի որոշիչ լրացումը* (1-ին օրինակում), *կոչականը և ուղիղ խնդիրը* (6-րդ օրինակում²), *ենթական և ուղիղ խնդիրը* (2-րդ, 3-րդ և 4-րդ օրինակներում), *ենթական և դերբայական դարձվածի կազմում հանդես եկող որոշիչը* (7-րդ օրինակում), *կայի հետ կապվող բառը և ստորոգյալը* (5-րդ օրինակում), *ստորոգյալը և որոշիչը* (8-րդ օրինակում³), *ենթակայի որոշիչ լրացումը և ուղիղ*

¹ Տվյալ օրինակում ընդգծված բառերի ընդհանուր արմատը «Դաշն»-ն է (տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1926, էջ 622):

² Այս դեպքում կապակցությունը եռաստիճան է. *եռաստիճան* տերմինը պայմանականորեն ենք առանձնացնում:

³ Այս դեպքում ևս ունենք եռաստիճան կապակցության դեպք՝ միևնույն՝ «բարձր», արմատով արտահայտված որոշիչ «լեռների» գոյականով արտահայտված հատկացուցչի և «գագաթն» գոյականով արտահայտված տեղի պարագայի համար:

խնդիրը (9-րդ օրինակում), *անջատման անուղղակի խնդիրը* և *ուղիղ խնդիրը* (10-րդ օրինակում):

Այս և նման այլ օրինակներում տվյալ արմատը յուրօրինակ հանգույց է դառնում խոսքի և այդ խոսքի արդյունքում ձևավորված մտապատկերի միջև՝ ստիպելով ընթերցողին կենտրոնանալ կոնկրետ իրավիճակի կոնկրետ դրսևորման վրա: Հեղինակի նպատակը նման դեպքերում, ըստ էության, կամ ուշադրություն հրավիրելն է երևույթի որոշակի հատկանիշի, կամ գործողության և վերջինիս կրողի նույնության, կամ էլ գործողության և դրա կատարման վայրի, ձևի, կոնկրետ առարկայի կամ հատկանիշի վրա ուղղվածության և այլնի վրա:

Այսպիսով, ուսումնասիրելով կրկնություններով ձևավորված քերականական արտահայտությունների հարաբերակցությունը Հովհ. Թումանյանի չափածո ստեղծագործություններում, ինչը միտված էր կրկնավոր կապակցությունների բացառարգմանն ու դրանց քերականական առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրմանը՝ հանդիպեցինք ուշադրության արժանի օրինակների, որոնց մեծ մասը առաջին հայացքից կարող է անհանձնարարելի թվալ, սակայն Հովհ. Թումանյանի ստեղծագործություններում նմանատիպ միավորներն իրենց տեղն ու նպատակային կիրառությունն ունեն, քանի որ հեղինակի կողմից նմանատիպ միավորները ստեղծագործություններում ներառելը բնականաբար ինքնանպատակ չի եղել, և դրանց առկայությունը տվյալ գեղարվեստական ստեղծագործության մեջ ավելորդաբանություն չի դառնում: Դա նպաստում է խոսքի ազդեցության ուժեղացմանը, մտասկզբում՝ հետապնդելով գերազանցապես ոճական և հեղինակի կողմից առաջադրված հարցադրումների ճիշտ նշանակետին հասնելու նպատակներ:

Կրկնավոր կապակցությունների բազմատիպությունը, հետապնդելով ոճական որոշակի նպատակներ կամ լուծելով խնդրո առարկա գրական երկի կառուցման այս ձևին՝ չափածոյին հատուկ տաղաչափական որոշակի հարցեր (ոտք, հանգ, ուղիղ և այլն)՝ նպաստում է ասելիքի հնչեղության խորացմանը, շարադրվող հարցի կամ արծարծվող թեմայի՝ ուշադրության արժանի կողմերի կամ հատկանիշների վրա վերահասության նպատակային կենտրոնացմանը: Եվ այս ամենը ևս մեկ անգամ գալիս է վկայելու լիակատար ճշմարտությունն այն մասին, որ Հովհ. Թումանյանի գրելաձևը շատ դեպքերում *պարզություն-ոչ պարզունակություն* յուրահատկությունն ունի:

Բանալի բառեր - գեղարվեստական խոսք, ոճական արժեք, շարահյուսական և ձևաբանական արտահայտություններ, բայական և գոյականական բառակապակցություններ:

Անահիտ Վարդանյան, Կրկնությունների քերականական արտահայտությունները Հովհաննես Թումանյանի չափածոյում - Կրկնությունները Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում ունեն լեզվատճական նշանակություն, դրանցով հեղինակը իր խոսքն ավելի արտահայտիչ է դարձրել՝ ուժեղացնելով հուզականությունը:

Կրկնությունները արտահայտվել են տարբեր խոսքիմասային արժեքով արմատներով, որոնց արդյունքում ձևավորվել են ենթակա+ստորոգյալ, ստորոգյալ+կաչական կապակցություններ և բայական, գոյականական բառակապակցություններ:

Ուսումնասիրելով կրկնավոր կապակցությունների հարաբերակցությունը Հովհ. Թումանյանի չափածո ստեղծագործություններում՝ բացահայտեցինք գեղարվեստական նոր պատկերներ, որոնք իրենց տեղն ու նպատակային կիրառությունն ունեն:

Анаит Варданян, Выражения грамматических повторов в поэзии Ованеса Туманяна - Повторы имеют лингвистическую и стилистическую ценность в произведениях Ованеса Туманяна, так как автор использовал их для того, чтобы, повысив эмоциональность, сделать свою речь более выразительной.

Повторы выражены корнями, имеющими различное словесное и семантическое значение. В результате были сформированы подлежащее+сказуемое, сказуемое + вокатив структуры, а также глагольные и субстантивные фразы.

Anahit Vardanyan, The grammatical expressions of repetitions in Hovhannes Tumanyan's verse - Repetitions have a linguistic and stylistic value in Hovhannes Tumanyan's works. The author used them to make his speech more expressive and to enhance emotionality.

The repetitions were expressed by root words having a different verbal and semantic value. As a result, subject+predicate, predicate+vocative structures, as well as verbal and noun phrases were formed.

Examining the ratio of repetitive word formations in H. Tumanyan's verse, we revealed new artistic images that have their place and purposeful usage.

**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Բանասիրական գիտությունների թեկնածու,
Վանաձորի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

Ունենալով հազարամյա պատմություն՝ Գրիգոր Նարեկացու նորաբանությունները կրել են բազմաթիվ փոփոխություններ՝ պատմության տարբեր ժամանակներում գտնվելով բառապաշարի տարբեր շերտերում:

Նորաբանություններից շատերը ձևի և բովանդակության տեսանկյուններից հանդես են բերել կենսունակություն և դիմանալով ժամանակի քննությանը՝ հասել են մինչև մեր օրերը և այսօր էլ կիրառվում են ժամանակակից հայերենի տարբեր ոճերում: Վերջին փաստարկը ճշտված է՝ ըստ «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանի»¹:

Հ. Թումանյանի ստեղծագործություններում որոշակի քանակությամբ նորաբանություններ կան գործածված, որոնք դասակարգել ենք մի քանի ենթախմբերով:

1. Նորաբանություններ, որոնք ներքին բովանդակային կողմով՝ արտահայտած իմաստներով, նույնը կամ գրեթե՝ նույնն են մնացել հին հայերենի համեմատությամբ:

Մահագոյժ նորաբանությունը «Հրեշտակ **մահագոյժ**» (ԳՆ, 488)² բառակապակցության մեջ նշանակում է «Մահու բոթ բերող» (ԱԲ, 535)³: Հ. Թումանյանի «Դեպի անհունը» պոեմում էլ այն իմաստային փոփոխության չի ենթարկվել, ինչպես՝ «Սիրտդ մի համառ կասկած է մտնում, Թ» մի **մահագոյժ** սև բոթ է գալու»⁴ (ՀԹ, 3, 114)⁵:

Անտխրական նորաբանությունը նույնպես կիրառվել է «Դեպի անհունը» պոեմում՝ առանց իմաստային տեղաշարժի՝ «Անտխուր, անտրտում» (ԱԲ, 94) իմաստով: Հմմտ. «Ապալինություն նորոգ և **անտխրական** երանութեան» (ԳՆ, 470) և «...Ուր են Ենովք և Եղիաս, Աղավնակերպ կան ծերացած, Այն աշխարհում անտխրական Արդարքն ապրում են հավիտյան» (ՀԹ, 3, 120)⁶:

¹ Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, հ.1, 1969, հ.2, 1972, հ.3, 1974, հ.4, 1980:

² Գրիգոր Նարեկացի, Մատենանոց տպարան, Երևան, 1985, այսուհետ՝ ԳՆ:

³ Առձեռն բառարան Հայկազեան լեզուի, Անթիլիաս, 1988, այսուհետ՝ ԱԲ:

⁴ Նորաբանությունը նույն իմաստով կիրառել է նաև Սիսմանյան. «Ու **մահագոյժ** զանգակներու, ոսկեհնչուն Հսկա քայլերը ցնորաբեր Ոգեկոչող ու դիվական»:

⁵ Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, հ. 1, 1988, հ. 3, 1989, հ. 4, 1991, հ. 6, 1994:

⁶ **Անտխրական** նորաբանությունը «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանում» չկա:

Յուսադրական նորաբանությունը և՛ «Մատեան ողբերգութեան» երկի «Ահա, արդարև, արհնեալ է հատուած բանի **Յուսադրական** սրտի այսր Մեղայի» (ԳՆ, 349) և՛ Հ. Թումանյանի «Մեհրի» պոեմի «Մեհին ճամփու դնելու համար Հավաքվածները, իբրև մխիթար, Մեհրուն ու ծերին **հուսադրական** Խոսքեր խոսացին, կամաց հեռացան» (ՀԹ, 3, 41) արտահայտության մեջ նորաբանությունը լրացնելով *բան, խոսք* բառերին, նշանակում է «Հուսադրող, քաջալերական»:

Հոգեսեր նորաբանությունը «Յարգեսցես լսել, միայն բարեգործ, **հոգեսեր**, հգաւր, մարդասէր» (ԳՆ, 508) արտահայտության մեջ, բնութագրելով Տիրոջը, նշանակում է «Հոգի սիրող» (ԱԲ, 501)¹: Հ. Թումանյանը նորաբանությունը առանց իմաստային տեղաշարժի կիրառել է «Կտակ» բանաստեղծության մեջ՝ բնութագրելով իրեն. «Լավ, տեր հայր, այդ էլ քեզ եմ կտակում, Որ ինձ միշտ հիշես քո պատարագում, Դագաղիս վրա մի քարոզ ասես, Թ» ինչ **հոգեսեր**, մեծ մարդ էի ես» (ՀԹ, 1, 181):

Ոսկեհեր նորաբանությունը «Ոյր հերքն են ի գոյն ոսկւոյ, ոսկեվարս, ոսկեթել» իմաստով գործածվել է գանձերում՝ «Ո՛վ **ոսկեհեր** մօրուս վարդագոյն, որ ներկեցար արեամբն Յորդանու» (ՆՀԲ, 2, 519): Հ. Թումանյանը, պահպանելով նորաբանության «Ոսկեգույն մազեր ունեցող, ոսկեգանգուր» իմաստները, այն «Արուսյակ» բանաստեղծության մեջ կիրառել է իբրև *նաժիշտներ* գոյականի որոշիչ, ինչպես՝ «Ահա ծագեց, Ահա զարկեց Արուսյակը Աչագեղ, Լուս... Ու **ոսկեհեր** Նաժիշտներով իր շըքեղ» (ՀԹ, 1, 427):

Անսասան նորաբանությունը «....որ ոչ սասանի անյողողող, անշարժ, անդդուելի» (ՆԲՀԼ, 1, 234)² իմաստով է կիրառվել «....որով ամենայնիւ ամենապատրաստ պնդութեամբ ի կարծրականումդ **անսասան** վիմիդ յարակայեցեալ» (ԳՆ, 635) արտահայտության մեջ: «Թմկաբերդի առումը» պոեմում նորաբանությունը պահպանել է «Կայուն, ուժեղ, անխորտակելի» իմաստները, ինչպես՝ «Գլխովը շատ ամպեր կանցնեն, սարը միշտ կա **անսասան**» (ՀԹ, 4, 48):

Բառիմաստի պահպանմամբ, բայց գոյական > ածական խոսքիմասային փոփոխությամբ է կիրառվել «Որ սասանէ, դդրդիչ» (ՆԲՀԼ, 2, 696) իմաստով **սասանիչ** նորաբանությունը Հ.Թումանյանի «Դեպի անհունը» պոեմի մեջ: Հմմտ. «Ոչ ձայն արձակեցեր **սասանիչ** երկրի» (ԳՆ, 558) և «Դագաղը շարժվեց, թնդաց ահագին **Սասանիչ** երգը մահվան սարսափի» (ՀԹ, 1, 121):

Ուրուաձայն հնչումն վերլուծական բարդությունը Գ. Նարեկացին կիրառել է «....ո՛չ հեթանոսարէն **ուրուաձայն** հնչման» (ԳՆ, 616) բառակապակցության մեջ

¹ 21-րդ և 48-րդ գլուխներում Գ.Նարեկացին Ասվածաշնչի՝ «Սողոմոնի առակների» նմանությամբ դիմում է Աստծուն. «Զի քո եմ, Տէր ոգեսեր» (ԳՆ, 431), «Այլ ի քեզ, տեր իմ ոգեսեր»: Այնուհետև բառակապակցությանը հանդիպում ենք 12-րդ դարի հեղինակ Հովհաննէս Սարկավազ վարդապետի «վայելուչ հայկաբանութեամբ» (ՆԲՀԼ, 1, 18) երկերում. «Զխայթոց մահուն գնոյն իսպառ սատակեա՛, տեր ոգեսեր»:

² Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հ. 1, 1836, հ. 2, 1837, այսուհետ՝ ՆՀԲ 1, 2:

«Մուտումուտ ձայներ» (ԱԲ, 665) իմաստով: Առանց իմաստային տեղաշարժի Թումանյանը, բառաբարդման առաջին բաղադրիչը գործածելով նույնությամբ, «Լոռեցի Սաքուն» պոեմի մեջ խոսքիմասային փոփոխության է ենթարկում երկրորդ բաղադրիչը. «Ու տատի խոսքերն անցյալի հեռվից **Ուրվաձայն**, երկշոտ **հնչեցին** նորից» (ՀԹ, 3, 20):

2. Նորաբանություններ, որոնք Հ. Թումանյանի ստեղծագործություններում կիրառվել են տարբեր իմաստափոխություններով՝ մասնավորապես բառիմաստի ընդլայնմամբ և նեղացմամբ¹:

Բառիմաստը ժամանակի ընթացքում տարբեր փոփոխությունների է ենթարկվում, քանի որ գտնվում է պատմականորեն տեղի ունեցող փոփոխությունների գործընթացում և ունի իր պատմական զարգացումն ու օրինաչափությունները²:

2. 1. Նարեկացու նորաբանությունների իմաստների ընդլայնումը Հ. Թումանյանի ստեղծագործություններում կարելի է ներկայացնել մի քանի ենթախմբերով.

ա. Նորաբանություններ, որոնք, իրենց նախնական իմաստը պահպանելով հանդերձ, հարստացել են նոր փոխաբերական իմաստներով:

Ալետանջ նորաբանությունը Գ. Նարեկացին կիրառել է ուղղակի «Ալեօք տանջող, ալիս հարուցանող» (ՆԲՀԼ, 1, 13) իմաստով «Ի ծուփս բազմավտանգս **ալետանջ** հողմոյ» (ԳՆ, 461) բառակապակցության մեջ: (Հմտ. ժամանակակից հայերենում **ալետանջ ծով՝ նավ** բառակապակցությունները): Հ. Թումանյանը «Պոետն ու մուսան» պոեմում կիրառել է փոխաբերական «Խիստ հուզված, հուզմունքից տանջված, տակն ու վրա եղած» իմաստով, ինչպես՝ «Թաքքրու՛, պոետ, վշտերդ ամբարված Մեծ գաղտարանում **ալետանջ** հոգուդ» (ՀԹ, 1, 437):

բ. Նորաբանություններ, որոնք, իրենց նախնական՝ փոխաբերական իմաստը պահպանելով հանդերձ, գործածվել են նոր ուղղակի իմաստով:

Բազմաբուրեան նորաբանությունը «Մատեան»-ում հանդես է գալիս «Բազումս կամ պէս պէս բուրօղ» (ՆԲՀԼ, 1, 402) իմաստով՝ իբրև **այլայլություն** բառի որոշիչ. «Ոչ յոլովից խառնից՝ զանազան ծաղկանց՝ ըստ հնոյն **բազմաբուրեան** այլայլութեանէ: Հ. Թումանյանը «Դեպի անհունը» պոեմում այս բառը գործածում է ուղղակի իմաստով. «Ահա ծաղկած **բազմաբուրյան** մշտադալար թփերից Մի նազանի հուրի-փերի ճեմ է առնում դեպի ինձ» (ՀԹ, 1, 216):

գ. Նորաբանություններ, որոնք, իրենց ուղղակի իմաստը չպահպանելով, հարստացել են նոր փոխաբերական իմաստներով:

Ախտաբորբորք նորաբանությունը Գ. Նարեկացին կիրառել է ուղղակի «Որ ինչ բորբոքէ զախտս» (ՆՀԲ, 1, 17) նշանակությամբ՝ իբրև **նիւթ** գոյականի

¹ Հ. Թումանյանի ստեղծագործություններում «Մատեան»-ի նորաբանությունների բառիմաստի շրջման չենք հանդիպել:

² Տե՛ս **Է. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 73:

հատկանիշ, օրինակ՝ «....Պոռնկակերտ կերպարան, **ախտաբորբոք** նիւթ» (ԳՆ, 435), իսկ Հ. Թումանյանի «Լաւձում ես դու էլ....» բանաստեղծության մեջ կիրառվել է «Մաստիկ բորբոքված կրքից վառվող» փոխաբերական իմաստով, ինչպես՝ «Հիշում եք արդյոք Այն **ախտաբորբոք**, Միշտ զվարթ գույգին. Սիրահար էին...» (ՀԹ, 1, 122)¹:

դ. «Մատեան ողբերգութեան» երկում մի շարք բառեր՝ **համագուգութիւն, տաժանական, սրբախուրդ** և այլն, ունեն գուտ կրոնական բովանդակություն, բայց ժամանակակից հայոց լեզվում չեն պահպանել իրենց նախնական ոճական նշանակությունը և ձեռք են բերել նոր՝ աշխարհիկ բովանդակություն: Իր իմաստային զարգացումով սրանց հակադրվում է **վեհափառ** նորաբանությունը, որը Հ. Թումանյանը կիրառել է երկու տարբեր նշանակություններով: Գ. Նարեկացին բառ կիրառել է իբրև **թագաւոր** գոյականի որոշիչ՝ «Մեծափառ, գերագույն» (ԱԲ, 755) իմաստով. «Նոր և չքնաղ թագաւորաց **վեհափառ**, որ ոչ ցուցաւ ի դարս» (ԳՆ, 387): Հ. Թումանյանը «Կտակ» բանաստեղծության և «Լոռուց» հոդվածի մեջ նորաբանությունը, գրելով մեծատառ, կիրառել է իբրև կաթողիկոս բառի շրջասույթ, այսինքն՝ իբրև գոյական, ինչպես՝ «Այն էլ տալիս եմ մեր մայր աթոռին, որ **Վեհափառը** գրի մի կոնդակ» (ՀԹ, 1, 182), «Այս բոլորի մասին հեռագրված է **Վեհափառ** կաթողիկոսին....»:

Իսկ ուրիշ դեպքերում նորաբանությունը կիրառվել է իբրև ածական, ինչպես՝ «Նահապետի ողբը» բանաստեղծության մեջ. «Մշո սուլթան սուրբ Կարապետ մեր տաճարը **վեհափառ** Ինչ սև սգո քուրձ է հագել, ողբում է անմխիթար» (ՀԹ, 1, 326), ապա «Հառաչանք» պոեմի «Նախերգանքումե. «Քեզ մոտ եմ գալիս, իմ հին տրտմություն, **Վեհափառ** դայակ մանուկ օրերիս» (ՀԹ, 3, 67):

2. 2. Նորաբանություններ, որոնք բառիմաստի նեղացման հետևանքով կորցրել են իրենց փոխաբերական իմաստները և կիրառվում են ուղղակի իմաստով:

Անթարթափ նորաբանությունը «....**անթարթափ** ի նոյն վերասլացեալ ի յաջ և յահեակ՝ սեպհականել....» (ԳՆ, 642), «Վասն ուղիղ հաւատոյն ի քեզ՝ **Անթարթափ** բացութիւն աչաց» (ԳՆ, 588), «Ըստ կարգաբանութեան խօսից **անթարթափ** լեզուոյ յոյժ պատկանաւոր» (ՆԲՀԼ, 1, 150) արտահայտություններում Գ. Նարեկացին կերտել է «1. Անքթիթ: 2. Անթարթելի: 3. Անշարժ» իմաստներով՝ իբրև **վերասլացեալ, բացութիւն աչաց, լեզու** բառաձևերի հատկանիշ: Ինչպես ժամանակակից հայերենում այնպես էլ Հ. Թումանյանի ստեղծագործություններում, մասնավորապես «Տիեզերքի ընթերցումը» բանաստեղծության մեջ, նորաբանությունը պահպանել է իր նախնական իմաստներից միայն երկրորդը, ինչպես՝ «**Անթարթափ** աչքով, անխարխափ հոգով Կարդում եմ քո վեհ ազդումներն անվերջ» (ՀԹ, 1, 307):

¹ Բառն ունի նաև փոխաբերական այլ նշանակություն, որի կիրառությանը հանդիպել ենք Վ. Տերյանի «Քո մազերի ցնորական փայլը պայծառ» բանաստեղծության մեջ. հմմտ. «Քո խենթ մարմնի սարսուռները երջանկության **ախտաբորբոք** արևներ են բոցավառում» արտահայտությունը, որտեղ նորաբանությունը ունի «Ախտեր, վատ ցանկություններ բորբոքող, կրքեր առաջացնող, գրգռող» իմաստը:

Բառակազմական տեսակետից՝ նորաբանությունը, հաճախ պահպանվելով նույնությամբ, զուգահեռաբար գործածվում է նաև հնչյունական կամ այլաձևաց տարբերակներով:

Այսպես՝ **գուրկ** արմատը հին հայերենում գործածական է եղել **գիրկ** ձևով՝ «գրկուած, անմասն, անբաժին» իմաստներով: Գ. Նարեկացին արմատը՝ որպես բառաբաղադրիչ, կիրառել է **զգայագիրկ** նորաբանության մեջ. «Ուշամոռաց և հանճարազրաւ, **զգայագիրկ** և իմաստասպառ» (ԳՆ, 329): Հետագայում, ինչպես վկայում է Հ. Աճառյանը, ավելի գործածական է դառնում արմատի «ռամիկ ձևը»՝ **գուրկ**¹:

Զգայագիրկ նորաբանությունն էլ, արևմտահայերենում պահպանվելով նույնությամբ, հնչյունային փոփոխության է ենթարկվել արևելահայերենում: Հ. Թումանյանը նորաբանությունը «Երգչին» բանաստեղծության մեջ կիրառել է «...անզգա, անտարբեր» իմաստներով, ինչպես՝ «...Շատ թաքցրի սրտիս միջին **Զգայագուրկ** մարդկանցից, Այժմ ուզում եմ քո առաջին Ողջ դատարկել իմ սրտից...» (ՀԹ, 1, 71):

Նկատենք նաև, որ Գ. Նարեկացու կերտած նորաբանությունները հետագայում հիմք են հանդիսացել նոր բառերի կերտման համար: Մասնավորապես **զգայագուրկ** նորաբանությունից են առաջացել **զգայագրկ(վ)ել**, **զգայագրկություն**, **զգայագրկում** ածանցավոր բառերը:

Աննահանջելի նորաբանությունը Գ. Նարեկացին կիրառել է «Ետ չքաշուող» (ԱԲ, 80) իմաստով «**Աննահանջելի** հրաման» (ԳՆ, 255) բառակապակցության մեջ: Առանց վերջածանցման և իմաստի ընդլայնմամբ է կիրառվել Հ. Թումանյանը 1890-ական թվականների սևագրություններում: Այսպես՝ «...Ամեն բան երկրում ունի մի սահման, Որտեղից որ նա ետ է նահանջում. **Աննահանջ** է միայն սիրտը սիրահար, սերը չէ միայն սահման ճանաչում...» (ՀԹ, 1, 373) քառատողում նորաբանությունը նշանակում է նաև «Անդիմադրելի» (ԺՀԼԲԲ, 1, 123):

Սիրատենչակ նորաբանությունը գործածվել է «Պատմութիւն և ճառ խաչի» ստեղծագործության մեջ՝ «Սիրալիր» (ԱԲ, 723) իմաստով: Բառը հոմանիշ վերջածանցով է գործածվել «Գիշերային առաջին աստղի դիմաց» (ՀԹ, 1, 39) բանաստեղծության «Դուն ավետեցիր ժամը տեսության Այն **սիրատենչիկ** սիրահարներին» արտահայտության մեջ՝ «Սիրով ու տենչանքով լի, սեր տենչացող, սիրատարփ» ընդլայնված իմաստով:

Հայոց լեզվի զարգացման տարբեր շրջանների բառապաշարային ընդհանրությունների հայտնաբերումը և կարգայնացումը լուսաբանում և նորովի են ներկայացնում ճանաչողական լեզվաբանության մշակված ուսմունքները: Գ. Նարեկացու նորաբանությունները գրական աշխարհաբարում կոնցեպտներ են՝ որոշակի վերաիմաստավորմամբ իմաստակիր միավորներ՝ «ամրակայված

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 110, 97:

նշանով»: Նորաբանություն-կոնցեպտները իմաստաբանական կազմավորումներ են, որ հատկանշում են լեզվամշակութային յուրահատկություններով և բնութագրում են Վերածննդի և նորագույն շրջանի մշակույթների կրողների լեզվամտածողության ընդհանրություններն ու տարբերությունները: Գ. Նարեկացու նորաբանություն-կոնցեպտները շրջապատված են զգացական, արտահայտչական և բնութագրական բառերով ինչպես իր, այնպես էլ հետագա դարերի հեղինակների երկերում:

Բանալի բառեր - բառապաշար, բառիմաստ, օրինաչափություն, արտահայտություն, իմաստափոխություն, բառիմաստի նեղացում, բառիմաստի ընդլայնում:

Լիլիթ Պետրոսյան, Գրիգոր Նարեկացու նորաբանությունների կիրառությունները Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում - Հայոց լեզվի զարգացման տարբեր շրջանների բառապաշարային ընդհանրությունների հայտնաբերումը և կարգայնացումը լուսաբանում և նորովի են ներկայացնում ճանաչողական լեզվաբանության մշակված ուսմունքները:

Գրիգոր Նարեկացու նորաբանությունները Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում կիրառվել են հեղինակային իմաստի պահպանմամբ և ինքնատիպ վերաիմաստավորումներով: Վերաիմաստավորումը կատարվել է երկու ճանապարհով՝ իմաստի ընդլայնմամբ և իմաստի նեղացմամբ, որոնց արդյունքում նորաբանությունների փոխաբերական կիրառությունները դարձել են ուղիղ կամ ուղիղ իմաստները դարձել են փոխաբերական:

Գ. Նարեկացու նորաբանությունները գրական աշխարհաբարում որոշակի վերաիմաստավորմամբ իմաստակիր միավորներ՝ «ամրակայված նշանով», որ հատկանշում են լեզվամշակութային յուրահատկություններով և բնութագրում են Վերածննդի և նոր շրջանի մշակույթների կրողների լեզվամտածողության ընդհանրություններն ու տարբերությունները:

Лилит Петросян, Использование неологизмов Григора Нарекаци в работах Ованеса Туманяна - Выявление и классификация общих черт армянского языка на разных этапах его развития позволяют по-новому интерпретировать доктрины когнитивной лингвистики.

В произведениях Ованнеса Туманяна неологизмы Григора Нарекаци сохранили свое первоначальное значение или же претерпели уникальные семантические изменения. Семантические изменения приняли две формы: семантическое обобщение и семантическое сужение, в результате чего метафоры приобрели прямой смысл, в то время как прямые значения приобрели метафорический смысл.

В литературном ашхархабаре неологизмы Григора Нарекаци с некоторыми семантическими изменениями являются «закрепленными знаком» осмысленными единицами, характеризующие языковые и культурные особенности, общие черты и различия между носителями ренессансной культуры и культуры новой эпохи.

Lilit Petrosyan, The use of Grigor Narekatsi's neologisms in the works of Hovhannes Tumanyan - The identification and classification of the common features of the Armenian language in its different development stages allow interpreting the doctrines of cognitive linguistics in a new way.

Grigor Narekatsi's neologisms either preserved their original meanings or underwent unique semantic changes in Hovhannes Tumanyan's works. The semantic changes took two forms, semantic generalization and semantic narrowing. As a result, metaphorical usages of neologisms became direct while direct usages became metaphorical.

In literary ashkharhabar, with some semantic changes, Grigor Narekatsi's neologisms are meaningful units "fixed with a sign" that denote the linguistic and cultural peculiarities and characterize the common features and differences between the bearers of the Renaissance culture and new culture.

**ՌՈՒՄԱՑ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ
ԻՆԵՍԱ ԳԱՐԴԻՇՅԱՆ**

Վանաձորի պերական համալսարանի հենակետային վարժարանի
ուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի

Առաջնորդվելով օտար լեզվի ուսուցման կառուցողական հիմունքներով՝ ժամանակակից դպրոցի ռուսերենի դասագրքի հեղինակները՝ Ն. Բայբուրտյանը, Ռ. Գոդգեյանը, Ի. Մանուչարյանը, Ի. Մելիք-Օհանջանյանը, Ա. Չիթչյանը կարևոր նշանակություն են տալիս քերականական թարգմանության մեթոդին, որը լեզուն դիտում է որպես քերականական միավորների՝ միմյանց կապակցված համակարգ և կարևորում է գրավոր թարգմանությունն ու զուգադիր ընթերցանությունը¹:

Անուն խոսքի մասերի ուսուցման գործընթացում դասագրքային թարգմանական տեքստերը վերաբերում են հայցական հոլովին, ածականներին, թվականներին դերանուններին և դրանց հնարավոր կապակցելիություններին և կիրառություններին: 10-րդ դասարանում թարգմանական վարժություններն սկսվում են հայցական հոլովի բացատրությունից հետո: Հանձնարարվում է թարգմանել բայական բառակապակցություններ, որոնց լրացումն արտահայտված է հայցական հոլովով.

Обратить внимание, бросить вызов,
соблюдать дисциплину, высказать
замечание, вызвать интерес,
осуществить мечту, держать ответ,
совершить подвиг, допустить ошибку,
выиграть время (12).

Ուշադրություն դարձնել,
մարտահրավեր նետել,
կարգապահություն պահպանել,
դիտողություն անել, հետաքրքրություն
առաջացնել, երազանքն իրականացնել,
պատասխան տալ, սխրագործություն
կատարել, սխալ թույլ տալ, ժամանակ
շահել:

Մյուս հոլովների ուսումնասիրության շրջանակներում թարգմանական վարժություններ հանձնարարված չեն: Այստեղ մենք առաջարկում ենք գոյականների հոլովների զուգադրական քննությունը կատարել ռուս գրականության ընթերցանության դասերին՝ պարզելու ռուսերենի հոլովի և թվի քերականական կարգերի արտահայտությունները ժամանակակից հայոց լեզվում:

Ածականի վերաբերյալ թարգմանական վարժություններում հանձնարարվում է հայերեն բնագիրը պատմել ռուսերեն՝ կիրառելով ածականներ²: Մենք սրան

¹ Ս. Երիցյան, Օտար լեզվի ուսուցման մեթոդները, <https://funnyenglishforyou.wordpress.com> Հասանելի է 18.07.2018:

² Н. А. Байбуртян, Р. Р. Грдзелян, И. К. Манузарян, И. М. Мелик-Огаджанян, А. А. Читчян, Русский язык, Դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 10-րդ դասարանի համար, Երևան, Ման մար հրատարակչություն, 2010, էջ 28:

զուգահեռ առաջարկում ենք հանձնարարել կիրառված ածականների տարբերակում և որակական ածականների համեմատության աստիճանների կազմում հայերենում և ռուսերենում: Այսպիսով ապահովվում է ուսումնական ծրագրի ինտեգրման նպատակը՝ աշակերտների առաջադիմության մակարդակի բարձրացումը¹:

Հարաբերական ածականների ուսուցման շրջանակներում հանձնարարվում է «սեռական հոլով + լրացյալ» կապակցությունները թարգմանել ռուսերեն:

<i>Առյուծի երախ, աքլորի կատար, կկվի</i>	Львиная пасть, петушиный гребень,
<i>բույն, կատվի աչք, ուղտի բուրդ,</i>	кукушечье гнездо, кошачий глаз,
<i>Մերթժայի պապիկը, արջի որջ, աղվեսի</i>	верблюжья шерсть, серёжин дедушка,
<i>խորամանկություն, գորտի թաթիկներ,</i>	медвежья берлога, лисья хитрость,
<i>շան հաչոց, սիրամարգի փետուր,</i>	лягушачьи лапки, собачий лай,
<i>հայրիկի աշխատասենյակը</i> ² (29):	павлинье перо, отцовский кабинет.

Օրինակներից պարզ է դառնում, որ նման կադապարների թարգմանության ժամանակ ի հայտ է գալիս խոսքիմասային փոխանցում, որը հատուկ է տարբեր լեզուներին:

Հաջորդ հանձնարարությունը վերաբերում է ածականների հոմանշային շարքերին: Նույն իմաստով ածականները խոսքում տարբերակվում են իրենց կապակցելիական հնարավորություններով: Կապակցական հնարավորությունները հատկապես սահմանափակ են առած-ասացվածքներում, դարձվածային միավորներում, որտեղ բառաբաղադրիչները անփոխարինելի են: Այսպես 1. *Вывести на (холодный, грязный, **чистый**) воду.* 2. *Выйти (мокрый, **сухой**, чистый) из воды.* 3. *У него (медвежий, **волчий**, лисий) аппетит.* 4. *Ворона в (куриный, гусиный, **павлиний**) перьях.* 5. *Ловить рыбку в (**мутный**, грязный, чистый) воде.* 6. *Птица (низкий, **высокий**, средний) полета.* 7. *Шишка на (**ровный**, сухой, мокрый) месте.* 8. *Обещать (серебряный, бриллиантовый, **золотой**) горы.* 9. *Через час по (столовый, **чайный**, десертный) ложке.* 10. *Остаться без (передний, чужой, **задний**) ног.* 11. *Встать с (правый, задний, **левый**) ноги* (30). նախադասություններում տրված են երեք հոմանիշ բառեր, որոնք բոլորն էլ կարելի է օգտագործել ուղիղ իմաստով, բայց դրանցից միայն ընդգծվածներն ունեն փոխաբերական իմաստ և իրենց մեջ ամփոփում են ժողովրդական իմաստություններ՝ որոշակի վերաիմաստավորմամբ: Թարգմանական վարժություններ կատարելու համար նպատակահարմար է բառարանների կիրառությունը, քանի որ բառարանային աշխատանքները աշակերտներին սովորեցնում են հատկապես համագործակցված

¹ Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՌԵՔԻ հրատարակչություն, Երևան, 2004, էջ 63:

² **Н. А. Байбуртян, Р. Р. Грдзелян, И. К. Манучарян, И. М. Мелик-Огаджанян, А. А. Читчян**, Русский язык, Դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 10-րդ դասարանի համար, Երևան, Ման մար հրատարակչություն, 2010:

աշխատանք կատարելու հմտություններ՝ զարգացնելով թիմային մտածելակերպը (322): Այս դեպքում հանձնարարվում է օգտվել ռուս-հայերեն դարձվածաբանական բառարանից¹:

Թվական անունների կիրառության ժամանակ նույնպես հանձնարարվում է առած-ասացվածքների ընթերցանություն, դրանց հայերեն գուգահեռների քննարկում: Այսպես ներկայացնելով «1. Двумя ложками кашу не едят. 2. Одна пчела немного меду натаскает. 3. Одной рукой и узла не завяжешь. 4. Два медведя в одной берлоге не живут. 5. В одно ухо влетает, в другое вылетает. 6. За двумя зайцами погонишься – ни одного не поймаешь. 7. Лиса семерых волков проведет. 8. Не имей сто рублей, а имей сто друзей. 9. Один в море не рыбак. 10. Один глупый камень в воду бросит, десять умных не вытащат» (40) առած-ասացվածքների բացատրությունը, հանձնարարվում է աշակերտներին գտնել դրանց հայերեն գուգահեռները և պարզել թվական բառերի կիրառությունները:

Դերանունների կիրառության առանձնահատկությունների ուսուցումը նույնպես առաջարկվում է կատարել առած-ասացվածքների թարգմանական վարժությունների կատարմամբ: Համապատասխան հոլովաձևերով դնելով անձնական դերանունները՝ աշակերտները պետք է կարողանան գտնել հայերենում դրանց համապատասխան առած-ասացվածքները և պարզել դերանունների արտահայտած քերականական իմաստները (48):

Ստացական դերանունների ուսուցման շրջանակներում հանձնարարվում է կարդալ Ա. Պուշկինի «Ձմռան իրիկունը» բանաստեղծությունը և դրա հայերեն թարգմանությունը:

*Буря мглою небо кроет,
Вихри снежные крутя,
То, как зверь, она завоет,
То заплачет, как дитя.
Наша ветхая лачужка
И печальна и темна.
Что же ты, мая старушка,
Приумолкла у окна?
Или бури завываньем
Ты, мой друг, утомлена,
Или дремлешь под жужжаньем
Своего веретена?
Выпьем, добрая подружка
Бедной юности моей,*

*Հողմը մեգով երկինք առնում,
Գալարում է բուրբ ձյան,
Մին՝ մանկան պես լաց է լինում,
Մին՝ ոռնում է զերդ զազան:
Մեր խրճիթը, աղքատ ու հին,
Ե՛վ մըթին է, և՛ տխուր,
-Ի՞նչ ես նըստել պատի տակին,
Ի՛մ պառավս, էղպես լուռ:
Հոգնել ես դու փոթորիկի
Ոռնոցներից խելազար,
Թե՞ նիրհում ես քո իլիկի
Բըզզոցի տակ միալար:
Արի խմենք, բարի ընկեր
Իմ սև ջահել օրերի,*

¹ Բ. Լ. Мелкумян и П. М. Погвсзя, Русско-армянский словарь фразеологизмов, Ереван, Изд-во Ереван, ун-та, 1975 с.

*Выпьем с горя: где же кружка:
Сердцу будет веселей (51).*

*Խմենք դարդից, բաժակդ բեր,
Միրտներըս բաց կըլինի:*

Ընթերցանությունից հետո աշակերտները պետք է ներկայացնեն իրենց զգացողությունները, որոնց հիման վրա էլ տեղեկացվում է բառացի և գեղարվեստական թարգմանությունների մասին, և աշակերտներին հանձնարարվում է նախագծման մեթոդով ստեղծել գեղարվեստական թարգմանությունների գրքույկ՝ թարգմանելով զուգահեռ ռուս գրականության դասերը: Յուրաքանչյուր թարգմանություն ունենում է իր հեղինակը, որը պետք է պատրաստ լինի պատասխանելու ընթերցողների հարցերին: Տարվա վերջում կազմակերպում ենք թարգմանական գրքույկի շնորհանդես, որտեղ աշակերտները կարողում են իրենց թարգմանությունները, բացատրում գեղարվեստական պատկերների էությունը:

Դերանվանական հաջորդ թարգմանական վարժությունը վերաբերում է **ինքր, ամենա** դերանունների կիրառություններին: Ռուսերենում **сам** (*ինքր*) դերանունը նշանակում է *իր ուժերով, առանց օգնության*, իսկ **самый** (*հենց, ինքր, նույնը*) դերանունը կիրառվում է *այս, այն* դերանունների իմաստի հստակեցման նպատակով: Մյան զուգահեռ այն նշանակում է նաև *ուղղակի, պարզապես* (53):

Բառապաշարի յուրացման նպատակով անվանական քերականական իրողություններին զուգահեռ ուսուցանվում են նաև բառերի ձևախմբատային խմբերի՝ համանունների և հարանունների առանձնահատկությունները, որպեսզի խոսքային իրադրություններում ապահովվի բառի գործածության կամ տեքստում բառի ճանաչման հիմությունների ու կարողությունների զարգացումը¹:

Համանունների կիրառությունը առնչվում է բառերի ճիշտ կապակցելիությանը, քանի որ դրանք, արտահայտելով տարբեր իմաստներ, կապակցվում են տարբեր իմաստներով լրացումների և լրացյալների հետ:

*Крутой берег – крутой кипятик, дверной
ключ – горный ключ, кисть руки – кисть
винограда, луч света – части света,
профессиональный бокс – больничный
бокс, зеленый лук – натянутый лук (44).*

Ուղղաբերձ ափ-եռման ջուր, դռան
բանալի-լեռնային աղբյուր, ձեռքի
դաստակ-խաղողի ողկույզ, լույսի շող-
աշխարհամասեր, պրոֆեսիոնալ
բռնցքամարտ-հիվանդանոցի
մեկուսարան, կանաչ սոխ-ձգված
աղեղ

*Составьте с данными омонимами
предложения: месяц – луна, месяц –
двенадцатая часть года, коса – орудие
для косьбы травы, коса – сплетенные*

Ի՜ս-за облаков выплыл молодой месяц.
В течение нескольких месяцев от него
не было вестей.
Косарь наточил косу. Мама заплела

¹ Մ. Աստվածատրյան, Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1985, էջ 93:

волосы, коса – узкая волоса берега, ключ – дверной, ключ – родник, ключ – к шифру, коду, ключ – нотный знак, ключ – инструмент: Переведите предложения на армянский язык (45).

дочке косу. Коса вывела нас на дорогу. Я заперла дверь на ключ. Бьющая ключом вода была очень холодная. Ключ к шифру был разгадан. В начале нотной строки пишут скрипичный ключ. Для завинчивания гаек мастеру нужен был гаечный ключ.

Հարանունների ուսուցման շրջանակներում հանձնարարվում է կազմել բառակապակցություններ և դրանք թարգմանել հայերեն:

1. Длинный – имеющий большую длину и рост; длительный – долговременный (командировка, рукав, платье, поиски, улица, хвост)
2. Удачливый – такой, которому все удается; удачный – успешный, хороший, правильный (человек, поездка, покупка, выбор).
3. Эффектный – производящий сильное впечатление; эффективный – действенный, дающий эффект (платье, жест, механизм, технология).
4. Вбежать – бегом проникнуть куда-либо; взбежать – бегом подняться (класс, комната, третий этаж)
5. Каменный – каменистый (дом, почва, сооружение, берег, фундамент, соль,

1. Длительная командировка, длинный рукав, длинное платье, длительные поиски, длинная улица, длинный хвост.
2. Удачливый человек, удачная поездка, удачная покупка, удачный выбор
3. Эффектное платье, эффектный жест, эффективный механизм, эффективная технология
4. Вбежать в класс, вбежать в комнату, взбежать на третий этаж.
5. Каменный дом, каменистая почва, каменное сооружение, каменистый берег, каменный фундамент, каменная соль, каменное выражение лица, каменистая земля, каменный уголь, каменное сердце, каменистое дно; обсудить новый проект,

1. Երկարատև գործուղում, երկար թևք, երկար զգեստ, երկարատև որոնումներ, երկար փողոց, երկար պոչ:
2. Հաջողակ մարդ, բարեհաջող ուղևորություն, հաջող գնում, բարեհաջող ընտրություն:
- 3 Տպավորիչ զգեստ, տպավորիչ ժեստ, արդյունավետ մեխանիզմ, արդյունավետ արտադրություն
4. Ներս վազել դասարան, ներս վազել սենյակ, վազելով բարձրանալ երրորդ հարկ
5. Քարե տուն, քարքարոտ բնահող, քարե կառույց, քարքարոտ ափ, քարե հիմք, քարաղ, դեմքի քարացած արտահայտություն, քարքարոտ հող, քարածուխ, քարսիրտ, քարքարոտ հատակ. քննարկել նոր նախագիծ, դատապարտել

выражение лица, земля, уголь, сердце, дно); обсудить – осудить (новый проект, на длительный срок, поступок друга, грабителя, поведение учеников); рыбий – рыбный (хвост, запах, жир, котлеты, чешуя, промышленности, глаза, ловля) (57).

осудить на длительный срок, осудить поступок друга, осудить грабителя, обсудить поведение учеников; рыбий хвост, рыбий запах, рыбий жир, рыбы котлеты, рыба чешуя, рыбная промышленность, рыбы глаза, рыбная ловля

երկարատև ժամկետով, դատապարտել ընկերոջ վարմունքը, դատապարտել կողոպտիչին, քննարկել աշակերտների վարքը. ձկան պոչ, ձկան հոտ, ձկան յուղ, ձկան կոտլետներ, ձկան թեփ, ձկնային արդյունաբերություն, ձկան աչքեր, ձկնորսություն:

Շարունակելով բառերի կապակցելիության մասին դիտարկումները ներկայացվում են նաև բայական հարանունները, հանձնարավելով կազմել նախադասություններ և նշել դրանց կապակցելիական տարբերությունները:

Դասագրքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ժամանակակից դասագրքերում ներառված չեն աուդիո-լեզվական մեթոդով իրականացվող վարժություններ: Այս դեպքում մենք առաջարկում ենք ռուս գրականությանը զուգահեռ ներկայացվող անուն խոսքի մասերի ուսուցման ժամանակ կազմակերպել ռուսերեն բնագրերի լսումներ՝ լեզվի ուսուցմանը զուգահեռ զարգացնելով ճանաչողական, նյարդաբանական և լսողական գործընթացները: Այս դեպքում սովորողը բանավոր խոսքն օգտագործում է անընդհատ, նույնիսկ գրավոր աշխատանքներ կատարելիս: Նման դեպքերում ավելի ակնհայտ է լինում լեզվի դերը՝ որպես որոշակի գործառնությունների արտահայտման և իրականացման միջոց:

Թարգմանական վարժություններն ըստ էության հիմնված են կրկնության վրա, նույն միտքը աշակերտը կրկնում է տարբեր լեզուներով, դրանցով կազմում է բառակապակցություններ կամ նախադասություններ և վերհիշում է՝ արդյոք ճիշտ է կիրառել տվյալ արտահայտությունը տվյալ խոսքային միջավայրը այլ լեզվով ներկայացնելիս: Ուղղորդված փորձառության մեթոդաբանության հիմունքով անընդհատ կրկնվող արտահայտությունները դառնում են հիմնական և բազային տվյալ լեզուն սովորողի համար: Այն աստիճանաբար վերածվում է ինտերակտիվ մոտեցման, ըստ որի լեզուն գործածվում է ցանկացած իրավիճակում: Իրավիճակներ ստեղծելու նպատակով կազմակերպում ենք դերային խաղեր, որտեղ կարևոր նշանակություն ունեն թարգմանիչ-աշակերտները:

Մեր ուսուցչական գործունեության ընթացքում մենք հիմնականում կիրառում ենք լեզվի ուսուցման բնական մեթոդը՝ օտար լեզուն դասավանդելով մայրենի լեզվի նման՝ սովորեցնելու գործընթացը իրականացնելով օտար լեզվով՝

մայրենի լեզվի կիրառումը կատարելով միայն թարգմանական վարժություններ իրականացնելիս:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Մ. Աստվածատրյան**, Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1985:

2. **Ս. Երիցյան**, Օտար լեզվի ուսուցման մեթոդները, <https://funny.english.foryou.word.press.com> Հասանելի է 18.07.2018:

3. Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՌԵՔՄ հրատարակչություն, Երևան, 2004:

4. **Գ. Քոչարյան**, «Բառարանագրություն» թեմայի ուսուցումը համագործակցային ուսումնառության մեթոդներով, ՎՊՀ-ի գիտական տեղեկագիր, Պրակ Ս, Երևան, ԱԶ «Արման Ասմանդուլյան» հրատարակչություն, 2016:

5. **Н. А. Байбуртян, Р. Р. Грдзелян, И. К. Манучарян, И. М. Мелик-Огаджанян, А. А. Читчян**, Русский язык, Դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 10-րդ դասարանի համար, Երևան, Ման մար հրատարակչություն, 2010, 184 էջ:

6. **Р. Л. Мелкумян и П. М. Погвсая**, Русско-армянский словарь фразеологизмов, Ереван, Изд-во Ереван, ун-та, 1975, 615 с.

Բանալի բառեր - օտար լեզու, կառուցողական կրթություն, անուն խոսքի մասեր, դասագիրք, կապակցելիություն, խոսքիմասային փոխանցում, բառապաշար, աուդիո-լեզվական մեթոդով:

Ինեսա Գարդիշյան, Ռուսաց և հայոց լեզվի դասերի ինտեգրումը թարգմանական վարժությունների միջոցով (10-րդ դասարան) - Մույն հոդվածում առաջնորդվել ենք օտար լեզվի ուսուցման կառուցողական հիմունքներով՝ կարևորելով քերականական թարգմանության դերը:

10-րդ դասարանում ուսուցանվում են անուն խոսքի մասերը, որոնց յուրացման գործընթացում կարևորվում են թարգմանական վարժությունները: Քերականական թարգմանություններին զուգահեռ ներկայացվում են նաև բառապաշարի հարստացման վերաբերյալ վարժություններ, որոնցում կարևորվում են բառերի ձևախմբատային խմբերի ճիշտ կիրառությունները և բառերի կապակցելիական հնարավորությունները:

Խոսքի ուսուցման գործընթացում կարևորվում են նաև առած-ասացվածքների թարգմանությունները՝ որպես ժողովրդական լեզվամտածողության արտահայտություններ, որոնք ունեն նաև մշակութային արժեք և հաճախադեպ են բանավոր խոսքում:

Թարգմանական վարժություններն ըստ էության հիմնված են կկնության վրա, նույն միտքը աշակերտը կրկնում է տարբեր լեզուներով, դրանցով կազմում է բառակապակցություններ կամ նախադասություններ և վերհիշում է՝ արդյոք ճիշտ է կիրառել տվյալ արտահայտությունը տվյալ խոսքային միջավայրը այլ լեզվով ներկայացնելիս: Ուղղորդված փորձառության մեթոդաբանության հիմունքով անընդհատ կրկնվող արտահայտությունները դառնում են հիմնական և բազային տվյալ լեզուն սովորողի համար:

Մեր ուսուցչական գործունեության ընթացքում մենք հիմնականում կիրառում ենք լեզվի ուսուցման բնական մեթոդը՝ օտար լեզուն դասավանդելով մայրենի լեզվի նման:

Инеса Гардышян, Особенности переводных упражнений в процессе изучения частей речи (10-ый класс) - В этой статье руководствовались структурными принципами обучения иностранного языка, придав важное значение роли грамматического перевода.

В 10-ом классе изучаются части речи, в процессе усвоения которых важное значение придается переводным упражнениям. Параллельно с грамматическими переводами представляются и упражнения по обогащению словарного запаса, в которых важное место уделяется правильному употреблению формообразующих групп слов и возможности сочетания слов.

В процессе обучения говорения важное место уделяется и переводу пословиц и поговорок как выражение народного языкового мышления, которые имеют также культурную ценность и часто встречаются в устной речи.

По сути переводные упражнения основаны на повторении, ученик одинаковую мысль повторяет на разных языках, ими составляет словосочетания или предложения и вспоминает, правильно ли употребил данное выражение в данной языковой среде на другом языке. Руководствуясь принципом опытности методологии постоянно повторяющиеся выражения становятся основными и базовыми для изучающего данный язык.

Преподавая иностранный язык как родной язык, мы в течение нашей учительской деятельности в основном употребляем естественный метод обучения языка.

Inesa Gardishyan, The peculiarities of translation exercises in the learning process of the part of speech - In this article we were guided by the structural principles of learning of foreign language giving importance to the role of grammatical translation.

The parts of speech are studied in the 10th firm and translation exercises are an essential part of their assimilation process.

Exercises to enrich vocabulary are also presented parallel with grammatical translations. In these exercises we give importance to the correct use of the formative groups of words and the opportunities of combining words. The translation of proverbs and sayings is also vital in the speech learning process as they are considered to be expressions of folk linguistics, have cultural value and are frequently used in oral speech.

In fact translation exercises are based on repetition. The pupil expresses the same idea in difficult languages, makes word-combinations or sentences with them and then tries to find out if he has used that very expression in that very language environment correctly.

Guided by the principle of experience of methodology, frequently repeated expressions become basic for the learner of that very language.

During our teaching activity we mainly use the natural method of language lie teaching a foreign language like a native one.

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՄԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԷՄՄԱ ԹԵՄՐԱԶՅԱՆ

ԵՊՀ ԻՄ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և
գրականության ամբիոնի ասիստենտ

Այս տարի ողջ հայ ազգը նշում է իր ժողովրդական բանաստեղծի՝ մեծն Թումանյանի ծննդյան 150-ամյակը: Գրեթե մեկ դար ապրելով առանց Թումանյանի, հայ ժողովուրդն ամեն օր ինքն իր համար նորից ու կրկին բացահայտել է իր Թումանյանին, դարերից եկող իր իմաստությունը նորից ու կրկին վերագտել թումանյանական քառյակներում, նորից ու կրկին օրհնել իր գավակներին՝ ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրե՛ք:

Գրեթե մեկ դար է անցել, սակայն դեռևս ամբողջովին չեն ուսումնասիրվել Հ. Թումանյանի թարգմանություններն ու փոխադրությունները, չի գնահատվել Թումանյան թարգմանիչը հայ թարգմանական մշակույթի պատմության մեջ հավուր պատշաճի: Մեր խոնարհումը բերելով Ամենայն Հայոց Բանաստեղծի պայծառ հիշատակին, կցանկանայինք մեր այս հոդվածով մի փոքր ներդրում ունենալ այդ ուսումնասիրությունների մեջ:

1880-ական թվականներից մինչև իր կյանքի վերջը Հ. Թումանյանը կատարել է արձակ և չափածո թարգմանություններ: Այդ ընթացքում այլ ժողովուրդների պոեզիայից նա թարգմանել է մոտ 80 ստեղծագործություն՝ բանաստեղծություններ, մանկական ոտանավորներ, պոեմներ, բալլադներ, ժողովրդական վիպերգության նմուշներ, որոնց մեծ մասը տպագրվել է բանաստեղծի կենդանության ժամանակ: Դրանք և՛ ժանրային և՛ աշխարհագրական առումով բավականին բազմազան են:

Թումանյանը միշտ էլ կարևորել է իր թարգմանությունները և զետեղել դրանց իր ժողովածուների մեջ՝ սկզբում խառը կարգով, հետագայում՝ հատուկ բաժիններում: 1903թ. Թիֆլիսում հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուի 300 էջից 80-ը թարգմանություններ էին, 1908թ. Բաքվում և 1922թ. Կ. Պոլսում հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուների մեջ՝ համապատասխանաբար՝ 60 էջ և 50 էջ:

Ավելի մեծ տեղ են զբաղեցնում թարգմանությունները և փոխադրությունները Հ. Թումանյանի գեղարվեստական արձակում, որի հիմնական մասը կազմում են տարբեր ժողովուրդների հեքիաթները՝ գերմանական, ռուսական, իտալական, իռլանդական, հնդկական, ճապոնական և արաբական: Հ. Թումանյանը համոզված էր, որ «լավ թարգմանությունը համարժեք է ինքնուրույն ստեղծագործության»¹: Եվ հենց դա էլ խթան է

¹ Ն. Թումանյան, Հովհաննես Թումանյանը և ռուս գրականությունը, Երևան, 1956թ., էջ 122

հանդիսացել, որ նա գրադվի թարգմանությամբ իր գրական գործունեության բոլոր շրջաններում:

Մայրենի լեզվից բացի Հ. Թումանյանը տիրապետում էր միայն ռուսերենին և դա հնարավորություն է տվել նրան այլ ազգերի գրականության երկեր թարգմանելիս դիմել ռուսերենին, որպես միջնորդ լեզու: Սակայն միայն դրանով չի բավարարվել, դիմել է նաև լեզուների գիտակ մարդկանց օգնությանը և օգտվել է տողացի թարգմանություններից: Յավոք, այդ տողացի թարգմանությունները չեն պահպանվել: Հայտնի է, որ 1890-ականների սկզբին Հ. Թումանյանը անգլերենի դասերի համար դիմել է Թիֆլիսի անգլիական փոխհյուպատոս Մուրտազին: Այդ առիթով Գևորգ Ասատուրը գրել է, որ Թումանյանն անգլերեն էր սովորում, որպեսզի կարողանա «Շիլիոնի կալանավորը» անմիջապես բնագրից թարգմանել և այդ գործում նրան օգնում էր պարոն Մուրտազը:

1914թ. իր ելույթներից մեկի ժամանակ Հ. Թումանյանն ասել է, որ ազգերին լավ ճանաչելու և նրանց մեջ փոխադարձ սեր ու հարգանք սերմանելու գործում առանձնակի կարևոր դեր ունի գրականությունը, որի մեջ հանդես են գալիս նրանց լավագույն զգացմունքները, ազգային հանճարն ու ոգին: Եվ նա թարգմանությանը նայում էր հենց այս դիտանկյունից, թարգմանչի հիմնական խնդիրը համարելով բնագրի բույրն ու հրապույրը այլ լեզվի միջոցներով վերարտադրելը:

Հ. Թումանյանը հատկապես շատ դժվար էր համարում բանաստեղծության թարգմանությունը: 1916 թվականին նա գրել է, որ բանաստեղծության նույնիսկ լավ թարգմանության համար ասված է, թե նա ապակու տակ դրված մի վարդ է և մեկնաբանել, թե՝ ձևը կարելի է տեսնել, բայց բուրմունքը զգալ հնարավոր չէ, քանզի դրա համար շնորհք է հարկավոր, իսկ շնորհքի հետ՝ նաև սեր:

Ըստ ստեղծագործական աշխատանքի Հ. Թումանյանի թարգմանությունները կարելի է բաժանել երեք խմբի:

Առաջինն այն բանաստեղծություններն են, որ Հ. Թումանյանը պատրաստել է «Լուսաբեր» դասագրքերի և «Հասկեր» մանկական ամսագրի համար 1907-1911թթ.-ին: Նա օգտվել է արտասահմանյան գրականությունից, հիմնականում ռուսերենից: Դրանք փոխադրություններ են, որ Հ. Թումանյանը հայացրել է, հայ մանուկներին հասկանալի դարձնելու համար և դրանց մեջ այնպիսի հանրահայտ ոտանավորներ են, ինչպես՝ «Գրիչ», «Առաջին ձյունը», «Մարտ», «Ծաղիկները», «Փիսիկի գանգատը», «Ամենից լավ տունը», «Թռչունի մտածմունքը», «Բզեզի դպրոցը» և այլն: Այս առիթով Հ. Թումանյանը նշում է, որ «Լուսաբերը» կազմելու համար օգտվել են ժողովրդական նյութերից և ոչ միայն մեր ժողովրդականից, այլև օտար աղբյուրներից՝ ռուսական, ֆրանսիական, գերմանական, լեհական, բայց ավելի շատ՝ անգլիական և ամերիկյան, հարմարեցնելով մեր ինքնությանն ու մեր մտածողության եղանակին:

Երկրորդը Հ. Թումանյանի հայացքած օտարազգի հեքիաթներն են, որտեղ, ինչպես մանկական բանաստեղծությունների մեջ, Հ. Թումանյանը շատ բան փոխել է, ավելացրել կամ կրճատել հատվածներ կամ արտահայտություններ՝ գեղագիտական և դաստիարակչական նպատակներից ելնելով:

Կովկասի հայ հրատարակչական ընկերությունից Հ. Թումանյանը պատվեր է ստանում թարգմանելու Գրիմ եղբայրների գրի առած ավելի քան 200 հեքիաթները: Սակայն ռուսերեն թարգմանության միջոցով նրանց ժողովածուին ծանոթանալուց հետո Հ. Թումանյանը ընտրում և թարգմանում է միայն 9 հեքիաթ, պարզաբանելով, որ Գրիմները հազիվ մի քանի հեքիաթ ունեն մշակած, մնացածը խառնած, աղավաղած ու փչացրած ժողովրդական հեքիաթներ են:

Հ. Թումանյանի թարգմանական ժառանգության երրորդ և ամենամեծ խումբը կազմում են բուն թարգմանությունները: Դրանք պատվածքներ են, արձակ բանաստեղծություններ և չափածո թարգմանություններ, որոնց վրա աշխատելիս Հ. Թումանյանը փորձել է հավատարիմ մնալ ստեղծագործության իմաստին և գեղարվեստական կառուցվածքին, ինչպես պահանջում էր ռեալիստական թարգմանության իր սկզբունքը: Հ. Թումանյանը միշտ ձգտել է հաղթահարել թարգմանական ամեն մի պայմանականություն, խոսքը հնչեցնել հայկական լեզվամտածողության օրենքներին լիովին համապատասխան: Հ. Թումանյանի լավագույն թարգմանությունների ուժի և հմայքի գաղտնիքը դրանց կատարյալ հայեցիությունն ու անկաշկանդ բնականությունն է:

«Էս էն է» (The House that Jack built) բրիտանական ժողովրդական մանկական բանաստեղծության թումանյանական փոխադրությունը վերոնշյալի հավաստումն է: Փոխադրության ինքնագիրը չի պահպանվել: Հ. Թումանյանն այն առաջին անգամ տպագրել է 1909թվականին:

Ոտանավորի մեր ներկայացրած տարբերակը հավանաբար ամենատարածվածն է: Այն ժողովրդական մանկական ոտանավոր է և աստիճանական ավելացող պատում: Որոշ տարբերակներում օգտագործված է "cheese" բառը "malt"-ի փոխարեն, "priest" բառը "judge"-ի փոխարեն, "cock" բառը "rooster"-ի փոխարեն, "crowed" բայի անցյալ ժամանակի ավելի հին "crew" տարբերակն է օգտագործված, կամ "killed" բայի փոխարեն "chased" բայը: Նաև որոշ տարբերակներում բացակայում է 12-րդ հատվածը:

Պատումը ուղղակիորեն չի նկարագրում Ջեքի տունը կամ էլ նույնիսկ Ջեքին, ով կառուցել է այդ տունը, այլ ներկայացնում է, թե տունը ինչպես է անուղղակիորեն կապված այլ իրերի կամ մարդկանց հետ և այս մեթոդով պատմում է մաշված և պատառոտված հագուստով տղամարդու ու դժբախտ միայնակ օրիորդի պատմությունը, ինչպես նաև մի քանի այլ, ավելի փոքր իրադարձություններ և դրանց փոխկապակցությունը:

Վիճահարույց է այն փաստարկը, որ ոտանավորը փոխառված է հրեական “Chad Gadya” (բառացի՝ Մի փոքրիկ այծ) հիմնից, որն առաջին անգամ տպագրվել է 1590թ.։ Չնայած սա վաղ շրջանի աստիճանական պատում է, որը հնարավոր է իր ձևով ոգեշնչած լինի բրիտանացիներին, սակայն բովանդակությունը տարբեր է։ Դա հիմք է տվել Ջեյմս Օրչարդ Հոլիվելլին (James Orchard Halliwell) առաջարկելու, որ “priest all shaven and shorn” արտահայտությունը վկայում է անգլիական տարբերակի շատ ավելի հին լինելու մասին՝ վերագրելով այն 16-րդ դարի կեսերին։

Ոտանավորն առաջին անգամ տպագրվել Լոնդոնում 1755թ. «Գիրք գրքոց մանուկների համար» ժողովածուի մեջ։ Հետագայում տպագրվել է բազմաթիվ հավաքածուների մեջ 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին։ Անգլիայի Հյուսիսարևելյան Շրոփշիրում մի գեղեցիկ գերանակերտ տուն կա՝ Չերինգթոն Մանորը (Cherrington Manor), որը հայտնի է որպես այն տունը, որ կառուցել է Ջեքը։ Այդ տան մերձակա հողամասում կա ոտանավորի մեջ նշված “malt house”-ը՝ ածիկի ստացման և պահպանման շինությունը։ Ոտանավորը շատ մեծ ժողովրդականություն է վայելում և պարբերաբար ընդգրկվում է մանկական պատկերազարդ գրքերում։

Ոտանավորի ժողովրդականությունը արտահայտվում է նաև տարբեր մշակութային և այլ համատեքստերում կիրառմամբ, ինչպիսիք են՝ գրականություն և լրագրություն, քաղաքականություն և հեռուստատեսություն, ֆիլմարտադրություն և երգ-երաժշտություն։

Թումանյանական այս փոխադրությունը հայ բանաստեղծի հանճարի ևս մեկ վկայություն է։ Ավելի քան հարյուր տարի առաջ հայերեն փոխադրված այս փոքրիկ մանկական ոտանավորը այժմ էլ իր ազդեցիկ տեղն ունի անգլախոս հասարակության մեջ։

Ներկայացնելով և վերլուծության ենթարկելով թումանյանական փոխադրության մեր համեմատությունը բնագրի հետ, կարծում ենք նաև, որ Թումանյան-հանճարը արժանվույն կերպով կգնահատվի նաև որպես թարգմանիչ-փոխադրող։

1. This is the house that Jack built.

Էս էն տունն է, որ շինել է վարպետ Օհանը։

Հ. Թումանյանը հենց առաջին տողից արդեն հայերեն է հնչեցրել բրիտանական Jack (Ջեք) անունը և ավելացնելով անվանը «վարպետ» բառը, ժողովրդին ավելի հոգեհարազատ կերպար է ստացել։

2. This is the malt that lay in the house that Jack built.

Էս էն ցորենն է, որ պահած է էն տանը, որ շինել է վարպետ Օհանը։

Թումանյանը “malt”՝ հայերեն «ածիկ» բառը փոխարինել է «ցորեն»-ով, իսկ “lay”՝ «դնել» բայը փոխարինել է «պահել» բայով: Եվ սա առավել բնորոշ է հայի մտածողությանը:

3. This is the rat that ate the malt
That lay in the house that Jack built.

Էս էն մուկն է, որ կերել է էն ցորենը, որ պահած է էն տանը,
Որ շինել է վարպետ Օհանը:

Հ. Թումանյանը “rat” «առնետ» բառը այստեղ փոխարինել է «մուկ» բառով և դա, հավանաբար, կատարել է վերոնշյալ «ցորեն» բառի հետ կապելով:

4. This is the cat
That killed the rat that ate the malt
That lay in the house that Jack built.

Էս էն կատուն է, որ բռնել է էն մկանը, որ կերել է էն ցորենը,
Որ պահած է էն տանը, որ շինել է վարպետ Օհանը:

Թումանյանի կողմից “kill” «սպանել» բայը փոխարինվել է «բռնել» բայով, դարձյալ ելնելով մեր լեզվամտածողությունից:

5. This is the dog that worried the cat
That killed the rat that ate the malt
That lay in the house that Jack built.

Էս էն շունն է, որ զզել է էն կատվին,
Որ բռնել է էն մկանը, որ կերել է էն ցորենը,

Որ պահած է էն տանը, որ շինել է վարպետ Օհանը:

Այստեղ «զզել» բայը բավականին հաջող փոխադրություն է:

6. This is the cow with the crumpled horn
That tossed the dog that worried the cat ...

Էս էն կովն է կեռ պոզավոր, որ հարու է տվել էն շանը ...

Թումանյանը «պոզահարել»՝ “toss” բայը փոխարինել է ժողովրդական լեզվին ավելի հարագատ «հարու տալ» արտահայտությամբ:

7. This is the maiden all forlorn

That milked the cow with the crumpled horn ...

Էս էն աղջիկն է, որ կթել է էն կովը, որ հարու է տվել էն շանը ...

Աղջկան նկարագրող “all forlorn”՝ «բոլորովին դժբախտ» բառերը բացակայում են թումանյանական փոխադրության մեջ:

8. This is the man all tattered and torn
That kissed the maiden all forlorn ...

Էս էն տղան է, որ ուզել է էն աղջկանը ...

Տղային նկարագրող “all tattered and torn”՝ մաշված և պատառոտված հագուստով, բառերը բացակայում են փոխադրության մեջ: Իսկ բնագրի “kiss”՝

«համբուրել» բայը Հ. Թումանյանը փոխարինել է իր ապրած ժամանակի իրականությունն արտահայտող «ուզել» բայով:

9. This is the priest all shaven and shorn
That married the man all tattered and torn
That kissed the maiden all forlorn ...

Էս էն տերտերն է, որ պսակել է էն տղին ...

“Priest”` «քահանա` խսկց. տերտեր»-ին նկարագրող “all shaven and shorn” բառերը տեղ չեն գտել Հ. Թումանյանի փոխադրության մեջ:

10. This is the rooster that crowed in the morn
That woke the priest all shaven and shorn ...

Էս էն աքլորն է, որ զարթեցրել է էն տերտերին ...

“Rooster”` «աքլոր»-ին նկարագրող “that crowed in the morn”` «որ ծուղրուղու կանչեց առավոտյան» երկրորդական նախադասությունը ընդգրկված չէ թումանյանական փոխադրության մեջ:

11. This is the farmer sowing his corn
That kept the rooster that crowed in the morn ...

Էս էլ էն վարպետ Օհանը, որ մորթել է էն աքլորին ...

“Farmer”` «ագարակատեր» բառի փոխարեն Հ. Թումանյանն օգտագործել է «վարպետ Օհանը» բառակապակցությունը, ինչպես փոխադրության սկզբում, “keep”` «պահել» բայի փոխարեն օգտագործել է «մորթել» բայը և «էլ» բառը ավելացնելով, մտքի ավարտվածություն հաղորդել ամբողջ պատումին, որը բացակայում է բնագրում:

12. This is the horse and the hound and the horn
That belonged to the farmer sowing his corn
That kept the rooster that crowed in the morn
That woke the judge all shaven and shorn
That married the man all tattered and torn
That kissed the maiden all forlorn
That milked the cow with the crumpled horn
That tossed the dog that worried the cat
That killed the rat that ate the malt
That lay in the house that Jack built.

Բնագրային այս վերջին հատվածին Թումանյանն ընդհանրապես չի անդրադարձել և դա մեզ թույլ է տալիս ասելու, որ բանաստեղծի ներքին ձայնն ու զգացողությունը ավելի կատարյալ ու ավարտուն են դարձրել փոխադրությունը, ինչը չի կարելի ասել բնագրի մասին:

Բոլոր հատվածներում կրկնվող «էս, էն» ժողովրդախոսակցական բառերը առավել բնական ու կենդանի են դարձնում պատումը, քան բնագրի “this is the...” արտահայտությունը:

Թումանյան-բանաստեղծի ներքին զգացողությամբ ու հարուստ կենսափորձով կատարված այս փոփոխությունները ոտանավորի հայերեն փոխադրված տարբերակն ավելի թեթև ու սահուն են դարձնում, տեմպը և ռիթմը՝ ավելի հստակ ու հնչեղ: Ոտանավորի հայ ընթերցողը երբևէ չի կարող պատկերացնել, որ այն փոխադրություն է, և ոչ թե Հ. Թումանյանի ստեղծագործությունը: Եվ հենց դա էլ ևս մեկ անգամ վկայում է Թումանյան-հանճարի մասին:

Մեր եզրակացության մեջ ավելի վստահ զգացինք, երբ Արսեն Տերտերյանի խոսքը կարդացինք Թումանյան-թարգմանչի մասին, որով էլ կգերադասեինք ամփոփել մեր ուսումնասիրությունը:

«Շատ քիչ բանաստեղծների է հաջողվում թարգմանել օտար գրականությունից այնպիսի երգեր, որոնք հարազատ լինեին նրանց ստեղծագործությանը, այսինքն՝ թարգմանական տողերը նրանց գրչի տակից դուրս ելնեին իբրև ինքնուրույն, ինքնաբույս և սեփական ստեղծագործություն: Հովհաննես Թումանյանը պատկանում է բախտավոր բացառությունների թվին: Այն բոլոր թարգմանությունները, որ նա արել է, մի զարմանալի զուգադիպությամբ՝ թարգման են հանդիսանում նրա զգացումներին և հույզերին»¹:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հովհաննես Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. II (Քառյակներ, բալլադներ, թարգմանություններ), Հայաստանի ԳԱ հրատարակչություն, Երևան 1990

2. Հովհաննես Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. IV (Պոեմներ), Հայաստանի ԳԱ հրատարակչություն, Երևան 1990

3. Արսեն Տերտերյան. Հովհաննես Թումանյան. Հայրենի եզերքի քնարերգուն, Վաղարշապատ, 1911

4. Ն. Թումանյան, Հովհաննես Թումանյանը և ռուս գրականությունը, Երևան, 1956թ.

ՀՂՈՒՄՆԵՐ

1. D. L. Ashliman. The House That Jack Built: an English nursery rhyme of folktale type 2035 (<http://www.pitt.edu/~dash/type2035.html>)

¹ Արսեն Տերտերյան. Հովհաննես Թումանյան. Հայրենի եզերքի քնարերգուն, Վաղարշապատ, 1911, էջ 8

2. James Orchard Halliwell, Popular Rhymes and Nursery Tales: A Sequel to the Nursery Rhymes of England, p. 6 (<https://books.google.com/books?id=F0P4O6K5zIAC&pg=RA1-PA6>)

3. English Translation of Hebrew source (<http://books.google.com/books?id=zGsKAAAAIAAJ&pg=PA288>)

Բանալի բառեր - Հովհաննես Թումանյան, գրականություն, փոխադրություն, թարգմանություն, անգլիական ժողովրդական մանկական բանաստեղծություն

Էմմա Թեմրազյան, Թումանյանական մի փոխադրության մասին - Հոդվածում խոսվում է Հ. Թումանյանի գրական գործունեության ավելի քիչ ուսումնասիրված և ընթերցող հանրությանը պակաս հայտնի իրողության մասին: Հեղինակը ներկայացնում և վերլուծում է Հ. Թումանյանի «Էս էն է» վերնագրով ստեղծագործությունը, որ բրիտանական ժողովրդական մանկական “This is the House that Jack Built” բանաստեղծության հայերեն փոխադրությունն է ու հանգում այն եզրակացության, որ մեծն բանաստեղծի փոխադրությունը առավել կատարյալ ու ավարտուն է, քան բնագիրն ինքը:

Эмма Темразян, Об одном туманяновском изложении - В статье обсуждается менее исследованная и менее известная читательскому кругу действительность литературной деятельности Оганнеса Туманяна. Автор представляет и анализирует произведение О. Туманяна «Это тот», которое является армянским изложением британского народного детского стихотворения “This is the House that Jack Built” и приходит к выводу, что изложение великого поэта более совершенное и завершённое, чем сам оригинал.

Emma Temrazyan, About a rendering by H. Tumanyan - The paper discusses the less studied and less known for the readership reality of Hovhannes Tumanyan's literature activity. The author presents and analyzes the work of Hovhannes Tumanyan “This is the”, that is an Armenian rendering of the British national nursery rhyme “This is the House That Jack Built” and comes to a conclusion, that the rendering of the great poet is more perfect and complete, than the original one.

Ֆ. ԲԵԳԲԵԴԵՐԻ «99 ՖՐԱՆԿ» ՎԵՊԸ ԹԱՐԳՄԱՆՉԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ
ՌՈՒԶԱՆ ՄԻՐԶՈՑԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ դոցենտ

Համաշխարհային գրականության մեջ արտացոլված կյանքի փոքր կամ մեծ դեպքերի, իրադարձությունների, երևույթների շուրջ մարդկության խոկումի փոխանցումը, փոխանակումը կատարվում է գրական թարգմանության շնորհիվ: Գեղարվեստական գրականությունն, ինքնին, մշակույթ է, իսկ գեղարվեստական թարգմանությունը մի գործողություն, որը մեկ այլ լեզու է փոխանցում այլ մշակույթի տեսլականը: Որևիցե ստեղծագործություն թարգմանել՝ նշանակում է ընդառաջ գնալ մի տեսլականի, որն արմատացած է ժամանակ-տարածությունում գտնվող քաղաքակրթության, մշակույթի մեջ, նշանակում է օտարագրի ընթերցողի համար ստեղծել մշակութային տարածք, ներթափանցել գրողի մտածողության, երևակայության, ինչպես նաև նրա ապրած ժամանակի մտքի մեջ:

Հոգվածում կփորձենք ներկայացնել արդի ֆրանսիական գրականության մշակութային տարածքի մաս կազմող, գրող Ֆրեդերիկ Բեգբեդերի «99 ֆրանկ» գիրքը՝ փորձելով վեր հանել հեղինակի մոտեցումներն իր առջև դրած խնդիրների (ներկայացնել գովազդի գոհ դարձած զարգացած երկրների սպառողական հասարակությունն իր կենցաղով, հոգեբանությամբ, ձգտումներով) հանդեպ, որն իրականացվում է Բեգբեդեր գրողին հատուկ համարձակությամբ, երբեմն՝ ցինիզմով:

«Գովազդատուները ցանկանում են, որ ամեն ինչ նախապես ծամծմված, թեստավորված լինի, նրանք չեն ուզում, որ ձեր ուղեղը հանկարծ ինքնուրույն գործի, նրանք ցանկանում են ձեզ ոչխար դարձնել. չկարծեք, թե կատակում եմ, կտեսնեք՝ մի օր էլ կող կղաջեն ձեր թնի վրա»: (էջ 37)

«Գրում եմ այս գիրքը, որ ինձ գործից հանեն»: (էջ 11)

Ֆրեդերիկ Բեգբեդերը, որի «հոբբիներն» են հարբեցողությունը, ամուսնական դավաճանությունը, միայնության մեջ ընթերցանությունը և մակերեսային զրույցները, ներկայիս ֆրանսիական գրականության մեջ համարվում է շատ հակասական և վիճահարույց գրող:

Կառուցվածքային առումով վեպը բաղկացած է՝ Ես, Դու, Նա, Մենք, Դուք, Նրանք վեց գլուխներից, որոնց գլխավոր դերակատարը Օկտավն է: Լինելով ամբողջի մասեր՝ գլուխներն իրենց մոտեցումներով, հայեցակարգերով տալիս են հերոսի կյանքի, ինչպես նաև նրա զայրույթի ու անհանդուրժողականության տարբեր նկարագրերը: Ներկայացնելով իր պատմությունը բազմակողմանի տեսանկյուններից, Բեգբեդեր-Օկտավը բովանդակության մեջ ներառել է կյանքի բարոյական, տնտեսական, հոգեբանական, սոցիալական կողմերը, կամաց-

կամաց բացահայտելով գովազդի ազդեցություններն ու հետևանքները: Արդյունքում ստեղծվում է մի վեպ, որը կարելի է նաև էսսե, պամֆլետ անվանել: Վեպն ավարտվում է գովազդների պլեադով, որը եզրափակվում է «Բարի գալուստ լավագույնն աշխարհներից» գովազդով, որը կարծես թե դառնում է գովազդին բնորոշ կեղծ, լավագույն կյանքի խոստման ամփոփում մի հասարակության, իրականության մեջ, որտեղ երջանկության փնտրտուքը համակցվում է գովազդային պատկերի հետ:

Գրաֆիկական առումով սա մի գիրք է, որտեղ հեղինակը, ցանկանալով դուրս գալ հրատարակչական նորմերից, կիրառել է բառերի մեծատառ, շեղատառ, թավատառ, franglais (անգլերեն արտահայտություններով լեցուն ֆրանսերեն) գրություններ, կարծես թե նպատակ ունենալով առանձնացնել, կենսունակ, հիշելի դարձնել իր պատմությունը:

«Եվ հենց Շ.Ֆ.-ի ներկայությամբ մեկ վայրկյանում Չարլին ու դու սարքում եք գովազդը, որը բոլոր պատվիրատուների բաղձալի երազն է՝ գեղեցիկ, նուրբ, անվնաս, խաբուսիկ՝ հասցեագրված հասարակության լայն շերտերին ու մկկացող հորթերին (քանի որ գենետիկ փոփոխություններն այսուհետ կարող են խոշոր եղջերավորներին էլ բարձր ձայնով մկկացնել): Նրա համար բարձրաձայն կարդում էր գլուխգործոցը: Դյուրթիչ մի կին (ոչ ծեր, ոչ երիտասարդ), ՄՊԻՏԱԿԱՄՈՐԹ, շագանակագույն մագերով (ոչ շիկահեր, ոչ թխահեր) Côte Sud ոճով կառուցված գյուղական մի գեղեցիկ տան (տաք գույներով, բայց ոչ ճչացող) բակում նստած է ձռնաթոռի մեջ»: (էջ 93)

Վեպը ռեալիստական է, որտեղ կոնցեպտուալիստ խմբագիրը ներկայացնում է իր մասնագիտության ցինիզմը, որի պատճառով իր մասնագիտությունից և սեփական տաղանդից զզված նա դիմում է չափազանցված արարքների աշխատանքից հեռացվելու նպատակով:

«Վաղուց ուզում էի ամեն ինչ թողնել, հեռանալ այստեղից մի ինչ-որ տխմար, անմարդաբնակ կղզի՝ հետս տանելով կուտակածս փողը, թմրանյութ, մի քանի պոռնիկ... Բայց ես հրաժարական տալու պլոճիկ չունեմ: Դրա համար եմ գրում այս գիրքը: Աշխատանքից հեռացնելը թույլ կտա, որ փախչեմ այս ոսկե բանտից: Ես վտանգավոր եմ, կանգրեցրե՛ք ինձ, քանի դեռ շատ ուշ չի, թեկուզ՝ խղճահարությունից: Շպրտե՛ք երեսիս հարյուր կտոր հրաժարագիր, ու կչքվեմ, երդվում եմ: Մեղավո՞ր եմ, ինչ է, որ մարդկությունն Աստծո փոխարեն ընտրել է լայն սպառման ապրանքները»: (էջ 17)

Այդ փորձերն անհաջողությամբ են պսակվում, դեռ ավելին՝ Կաննի «Առյուծներ» փառատոնում փայլուն հաջողության է հասնում մի գովազդի համար, որտեղ, վերջապես, կարողացել էր ներկայացնել լիարժեքորեն իր ստեղծագործական միտքը: Սակայն այն պահին, երբ նրան պետք է շնորհվեր մրցանակը՝ ձեռքակալվում է կատարած սպանության համար:

Վեպը վերնագրված է «99 ֆրանկ», որը նաև գրքի արժեքն է: Գլխավոր հերոսը՝ Օկտավ Պարանգոն, թափառում է փողի գերակայության ճոխ աշխարհում և կորցնում է իր մարդկային կողմնորոշիչները և այլևս չգիտի, թե ինչպես գտնել երջանկությունը, չնայած, թերևս նաև անչափ մեծ աշխատավարձի: Թմրանյութերը և բարձրակարգ անբարոյական կանայք, որոնք նրա և իր մասնագիտության մարդկանց առօրյայի մասն են կազմում, նրան այլևս չեն բավարարում: Նա նոր գրգիռներ է փնտրում՝ անցնելով բարոյականության սահմանները:

«99 ֆրանկ» վեպում Բեգբեդերը հատկապես ընդգծված կերպով ներկայացնում է այն միտքը, որ գովազդն այնքան շատ է ներթափանցել սոցիալական կյանքի մեջ, որ անհատը, միգուցե նաև՝ հեղինակը, կորցրել են ինքնություն մտածելու կարողությունը: Նա վերաորակավորում է, վերամշակում է, իրար է կպցնում գովազդներից ծնված արդեն լսված, պատրաստի արտահայտությունները, որոնք թմբկահարում են մարդկանց լսողությունը մանկությունից սկսած:

«Հըմմ, այնքան լավ բան է ձեր ուղեղի մեջ մտնելը: Ըմբռնում եմ ձեր աջ կիսագունդը: Դուք այլևս ձեր ցանկության տերը չեք, ես իմն եմ պարտադրում: Արգելում եմ ցանկանալ՝ ինչ սիրտներդ ուզի: Ձեր ցանկությունը ներդրման արդյունք է, որ հաշվվում է միլիարդ եվրոներով: Ես եմ այսօր որոշում, թե վաղն ինչ եք ցանկանալու»: (էջ 16)

«Գլամուրը մի երկիր է, որտեղ երբեք չեն լինում: Ձեզ «նորույթ» թմրանյութն եմ ներարկում, և դրա առավելությունն այն է, որ երբեք նոր չի մնում: Միշտ մի այլ «նորն» է հայտնվում, որը խամրեցնում է նախորդը: Ստիպել, որ ձեր լոգերը միշտ թափվեն՝ դա է իմ դավանանքը: Բոլոր մասնագիտության մեջ ոչ մեկը չի ուզում, որ երջանիկ լինեք, որովհետև երջանիկները չեն սպառում»: (էջ 13)

Վեպում Բեգբեդերն արևմտյան աշխարհի մասին վիճելի մտքեր է արտահայտում, որոնց պատճառով գրաքննադատները դժվարանում են նրան լրջորեն ընդունել:

«Այս գործունեությունը (գովազդը) այժմ մեր կյանքի տիրակալն է՝ ֆինանսավորում է հեռուստատեսությունը, թելադրում է գրավոր մամուլին, իշխում է սպորտաձևերի վրա (Ֆրանսիան չէր, որ Սոխարիի գավաթի եզրափակչում հաղթեց Բրազիլիային, այլ՝ Adidas-ը Nike-ին), ձևավորում է հասարակությունը, ազդում է սեքսուալության վրա, պաշտպանում է բարեկեցության աճը: ...1998 թ. գովազդային ներդրումն ամբողջ աշխարհում հաշվվում է 2340 միլիարդ ֆրանկ...: Կարող եմ վստահեցնել, որ այս գնով ամեն ինչ կարելի է վաճառել, հատկապես՝ ձեր հոգին»: (էջ 49)

Ըստ Բեգբեդերի, քաղաքական դեկավարները լծակներ չունեն որոշում կայացնելու հարցում, նրանք վեր են ածվել տնտեսությունը տնօրինողների խամաճիկների, որի ստրուկն են դարձել շնորհիվ գովազդի: Փաստերի, կոնկրետ

թվերի առկայության շնորհիվ, որի իրական լինելը հավաստի է թվում՝ ելնելով Բեգբեդերի գովազդային գործակալությունում աշխատելու փաստից, գրողը հնարավորություն է ընձեռել ընթերցողին հետադարձ հայացք գցել այն համակարգին, որը եղել է և գոյություն ունի ներկայում, բայց որը մինչ այդ չէր պատկերացրել և լիովին հասկացել: Ներկայացնելով գովազդային բիզնեսի իրական դեմքը՝ հեղինակը ոչ մի առաջարկ չի անում:

«Զգվում եմ ձեզնից, ամենաչնչին քմահաճությներիս ենթակա ողորմելի ստրուկներ: Բնչո՞ւ թույլ տվեցիք, որ դառնամ Աշխարհի Տիրակալը: Կցանկանայի հասկանալ այդ առեղծվածը: Բնչպե՞ս պատահեց, որ ցինիկ դարի գազաթնակետին գովազդը Կայսրուհի դարձավ»: (էջ 16)

Որպեսզի թարգմանությունը ծառայի իր նպատակին՝ այն է՝ ստեղծագործությունը թիրախ լեզվի ընթերցողներին հնարավորինս համարժեք ներկայացնելը, միտք, որը չպետք է լքի թարգմանչին որևիցե ստեղծագործության թարգմանության գործին լծվելուց առաջ, պետք է հանգամանալից ուսումնասիրել հեղինակին, նրա ասելիքը, ստեղծագործության նպատակը, կիրառած լեզուն: Բեգբեդերի նման հեղինակ թարգմանելիս պետք է պատրաստ լինել մեծ անակնկալների, դրանք կարող են լինել լեզվական, բարոյական, գաղափարական և այլն:

Գիտակցում էի, որ գեղարվեստական առումով գիրքը մեծ արժեք չի ներկայացնում, բայց հասկանում էի, որ գործ ունեմ շատ համարձակ, արտասովոր և խելացի ստեղծագործողի հետ, որը քաջություն է ունեցել լինել չափազանց անկեղծ ոչ միայն իր անձին վերաբերող հատվածներում, այլև արևմտյան աշխարհում տիրող շահադիտական, սպառողական մտածելակերպն անողորմաբար ներկայացնող շարադրանքում: Գիտակցում էի նաև, որ իմ գերինոլիդներից է ներկայացնել հեղինակի կամ գրքի էներգետիկան, որն այլ կերպ, ըստ իս, կարելի է ոգի ասել: Բեգբեդերը տարբեր միջոցներով է հասել ստեղծագործության ոգուն՝ ստեղծել է դինամիկ, լարված ռիթմիկ դաշտ, որտեղ մերթընդմերթ ներկայացնում է գովազդային ոլորտի համաշխարհային մակարդակի կրեատիվների, նրանց կյանքը գովազդային գործակալությունում և դրանից դուրս, ստեղծագործական գործընթացը, շեֆերի, գործատուների և ծառայողների փոխհարաբերությունները, որոնք հիմնված են սպառողական հոգեբանության վրա՝ չմոռանալով իր և Սոֆիի սիրո պատմությունը, որտեղ նույնպես սպառողական հոգեբանությունը գերիշխող է: Բեգբեդերի լեզուն թարգմանության առումով բավականին բարդ է, բայց զգում էի, որ ոճի և բառապաշարի ճիշտ ընտրությամբ կկարողանամ հայ ընթերցողին համարժեք ներկայացնել այդ ինքնատիպ հեղինակին: Չափազանց խոսակցական լեզուն ենթադրել էր տալիս կիրառել նույնպիսինը թիրախ լեզվում՝ գործածելով երևանյան խոսելալեզուն՝ «է» օժանդակ բայի փոխարեն «ա» օգտագործելով,

սակայն վեպում այնքան շատ են վուլգար բառերը, մտածելակերպը, արտահայտությունները, որ նման ընտրությունը շատ կհասարակացներ ստեղծագործությունը, ինչպես նաև գլխավոր հերոսին, որը համաշխարհային մակարդակի կրեատոր է: Ի վերջո ընտրեցի «է-ի» տարբերակը՝ փորձելով բառապաշարի միջոցով արտահայտել հեղինակի մերժողականությունը, ասելությունը, ժխտողականությունը, վախերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Frédéric Beigbeder, « 99 francs », Grasset & Fasquelle, août 2000
2. Ֆրեդերիկ Բեգբեդեր, « 99 ֆրանկ », Անտարես 2017
3. <http://zone-critique.com/2014/10/12/le-cas-beigbeder-profondeur-ou-desinvolture/>
4. [https://fr.wikipedia.org/wiki/99_francs_\(roman\)](https://fr.wikipedia.org/wiki/99_francs_(roman))
5. <https://revue.leslibraires.ca/articles/litterature-etrangere/frederic-beigbeder-quand-le-cynisme-devient-marque-de-commerce>

Բանալի բառեր - գեղարվեստական թարգմանություն, մշակութային տարածք, ոճ, բառապաշար, խոսակցական լեզու:

Ռուզան Միրզոյան, Ֆ. Բեգբեդերի «99 ֆրանկ» վեպը թարգմանչի մեկնաբանությամբ - Հոդվածում փորձել ենք ներկայացնել մեր ժամանակների ֆրանսիացի համարձակ և արտասովոր մի ստեղծագործողի՝ **վեպը**, որտեղ հեղինակը չափազանց անկեղծորեն ներկայացրել է արևմտյան աշխարհում տիրող շահաղիսական, սպառողական մտածելակերպն ու կենսակերպը, ինչպես նաև անդրադարձել ենք թարգմանչի կողմից լուծումներ պահանջող որոշ խնդիրների:

Рузан Мирзоян, Роман Ф. бегбедера "99 Франк" в интерпретации переводчика

- В этой статье мы постарались представить роман французского смелого и необычного создателя нашего времени, где автор искренне представил наемников, потребительский менталитет и образ жизни в западном мире, а также решил некоторые проблемы, которые требуются переводчику.

Ruzan Mirzoyan, The translator's rendering of F. Begbeder's novel '99 francs'- The article "The translator's rendering of F. Begbeder's novel '99 francs'" deals with the in-depth analysis of the work of a unique, courageous French writer of modern times Frederique Begbeder. In his novel '99 francs' Begbeder truly and openly presents the selfish, mercenary consumer mentality and lifestyle prevailing in the western world. The article also looks at certain translational issues that require the translator's mastery for solutions and clues.

ЛИНГВИСТИЧЕСКИЕ ТРУДНОСТИ ПЕРЕВОДА ФРАЗЕОЛОГИЗМОВ, ПОСЛОВИЦ И ПОГОВОРК

РУЗАННА ЗАРГАРЯН

преподаватель русского языка в ИФ ЕГУ

Художественный перевод – это особый, своеобразный и самостоятельный вид словесного искусства. Это искусство перевыражения оригинала в материале другого языка. Однако полного тождества между оригиналом и переводом достичь нельзя. Перевод может быть лишь адекватным, относительно равнозначным оригиналу литературным произведением. У перевода есть свой языковой материал и своя жизнь в языковой и социальной среде, отличающейся от среды подлинника.

Лингвистическое изучение перевода дало возможность выявить лингвистические проблемы, с которыми сталкиваются при переводе с одного языка на другой, в данном случае с русской на армянский.

Круг этих проблем широк. Это проблема передачи слов, обозначающих национально-специфические реалии, проблема передачи собственных имен, прозвищ, фразеологические средства, в том числе пословицы и поговорки, и их перевод, проблема перевода архаизмов, просторечных слов и выражений, профессионализмов и т.д.

Важное место занимает вопрос о переводимости устойчивых словосочетаний (фразеологизмов), в том числе пословиц и поговорок. В художественной литературе они встречаются и в речи действующих лиц, и в авторском повествовании. Передача большого числа фразеологизмов облегчается наличием готовых соответствий в языке перевода. Задача заключается в нахождении имеющихся соответствий и выборе из их числа наиболее подходящих к данному контексту.

Что касается трудностей с пословицами и поговорками, то их можно буквально перевести в случае отсутствия соответствия в языке перевода. Другой способ передачи пословиц и поговорок – видоизменение вещественного смысла отдельных составных частей пословицы, вызывающее впечатление сходства с пословицей оригинала. В статье мы проанализировали перевод фразеологизмов, пословиц и поговорок из нескольких рассказов А.П.Чехова.

Для рассказов Чехова характерно широкое использование просторечий, фразеологизмов, пословиц и поговорок, что является отличительной чертой стиля автора. Именно через частные детали, эмоционально окрашенную лексику он насыщает небольшое произведение огромным содержанием, достигает яркости языка. При этом увеличивается семантическая нагрузка на каждое слово. Поэтому столь сложен перевод произведений Чехова. Он связан с определенными

трудностями лингвистического характера и в особенности с вопросом о точности передачи каждого слова без утраты смысловой и эмоциональной информации.

Рассмотрим переводы некоторых рассказов А.П.Чехова¹ и проследим, какими трудностями столкнулись переводчики.

Так, переводчик А.Хондкарян заменяет фразеологизм “известный народ” эквивалентным армянским. В данном контексте это вполне уместно.

“Ты ведь... известный народ” (“Хамелеон”, т. 1, стр. 33)²

«Դու, փյր... ձեր ցեղը հայտնի է»: (հ. 1, էջ 70):

Аналогичный случай и в рассказе “Спать хочется”:

“...говорит так громко, что звенит в ушах” (т. 1, стр. 346)

«...այնքան բարձր է խոսում, որ ականջներդ խլանում են»: (հ. 1, էջ 443).

Очень редки случаи буквалистического перевода фразеологизмов. Например, в рассказе “Соседи”:

“Ну, завел свою шарманку”. (т. 2, стр. 44)

«Է, շարմանկան լարեց»: (հ. 2, էջ 51)

Но в основном в переводах теряется экспрессия фразеологизмов. Переводчики передают их нейтральными словами. Функция фразеологизма, как такового, в переводе исчезает. Например:

“Я буду тебе табак тереть, богу молиться, а если что, то секи меня как сидорову козу”. (“Ванька”, т. 1, стр. 218)

«Ես քեզ համար թուրուն կտրորեմ, կաղորեմ աստծուն, իսկ թե մի վատ բան արի, ծեծիր ինձ ինչքան ուզես»: (հ. 1, էջ 296)

Трудный случай и в рассказе “Хамелеон”.

“Я ему покажу кузькину мать...” (т. 1, стр. 33)

«Ես նրան կծանոթացնեմ կարգ ու կանոնի հետ...» (հ. 1, էջ 69)

Аналогичного фразеологизма на армянском языке переводчик, видимо, не нашел, буквалистически передать нельзя (եւ նրան ցույց կտամ կուզկայի մորը), остается передать значение фразеологизма приблизительно, что и сделал переводчик А.Хондкарян.

Выражение “сколько зим, сколько лет” (“Толстый и тонкий”, т. 1, стр. 12) тоже потеряло свою экспрессию в переводе. А.Поланджян предпочел перевести его следующим образом:

«Ինչքան ժամանակ է, որ միմյանց չենք տեսել»; (հ. 1, էջ 20).

Утрачена экспрессия фразеологизма “утереть нос” в рассказе “Капитанский мундир”.

«...կտա կանցնի»: (հ. 1, էջ 85)

¹ Отсюда и далее все примеры приведены из сборника Ա.Պ. Չեխով, «Ընտիր երկեր», երեք հատորով, Երևան, 1953:

² А.П. Чехов, “Собрание сочинений в трех томах”, Москва, 1953.

Фразеологический оборот в рассказе “Соседи” переведен следующим образом:

«И, чтобы подложить ему свинью...» (т. 2, стр. 49)

«Եվ, քաշելու համար անարժեքըն ցանկանեն...» (h. 2, էջ 85)

Фактически, в переводе речь героя теряет свою образность, эмоциональную окраску, язык бледнеет. Но приходится мириться с такими явлениями и считать их издержками перевода.

Таким образом, трудность перевода фразеологизмов заключается в том, что не всегда в обоих языках имеются одинаковые по лексическому наполнению выражения, или имеются аналогичные, но не точные, или вообще таких фразеологизмов на переводящем языке нет. Потому зачастую переводчику приходится заменять яркий фразеологический оборот невыразительными средствами, нейтральной лексикой. Этот вопрос остается творческой задачей художественного перевода.

Что касается пословиц и поговорок, они встречаются реже у Чехова. Армянские переводчики подбирают соответствующую пословицу с тем же лексическим наполнением на армянском языке. Например, в рассказе “Анна на шее” перевод пословицы “Копейка рубль бережет”:

«Կոպեկը ռուբլի է խնայում»:

Так же просто переведена пословица:

“Дураку закон не писан.” (т. 1, стр. 64) из рассказа “Злоумышленник”.

«Հիմարի համար օրենք չկա գրված» (h. 1, էջ 124)

В рассказе “Мужики” поговорка

“Дома стены помогают” (т. 2, стр. 391) передана аналогичной на армянском языке:

«Տանը աստերն էլ են օգնում» (h. 2, էջ 124)

В том же рассказе «...слезами горю не поможешь» (т.2,стр.344):

«...արցունքներով դարդիդ դարման չես անի» (h.2, էջ 237)

Вот удачный пример замены русской поговорки армянской, имеющей то же значение, но с другим лексическим наполнением.

“Легко на помине” (т. 2, стр. 393)

«Անունը տուր, տվիրեն գցի» (h. 2, էջ 236)

Итак, как показал наш анализ, переводчикам не всегда удавалось легко подбирать аналоги этой лексической группы, так как в армянском языке отсутствуют эквиваленты некоторых русских пословиц, поговорок и фразеологизмов.

Вопрос перевода устойчивых словосочетаний, пословиц и поговорок представляет собой лингвистическую проблему и требует от переводчика высокого профессионализма и творческого подхода, стремления приблизиться к подлиннику и передать его национальное своеобразие.

Ключевые слова - художественный перевод, лингвистические проблемы, фразеологизмы, пословицы, поговорки, устойчивые словосочетания, национальное своеобразие.

Рузанна Заргарян, Лингвистические трудности перевода фразеологизмов, пословиц и поговорок - В статье представлены лингвистические трудности, связанные с переводом фразеологизмов, пословиц и поговорок. Делается попытка сравнить их перевод с русского языка на армянский язык и выявить проблемы, связанные с переводом фразеологизмов, пословиц и поговорок. Задача заключается в том, что переводчик должен стремиться приблизиться к оригиналу и передать его национальное своеобразие.

От переводчика требуется высокое мастерство и творческий подход.

Ռուզաննա Զարգարյան, Դարձվածքների, առածների և ասացվածքների թարգմանության լեզվական խնդիրները – Հոդվածում ներկայացված են դարձվածքների, առածների և ասացվածքների թարգմանության հետ կապված լեզվական խնդիրները: Փորձ է արվում համեմատել դրանց թարգմանությունը՝ ռուսերենից հայերեն և վեր հանել այն դժվարությունները, որոնք կապված են դարձվածքների, ասացվածքների ճշգրիտ թարգմանության հետ:

Խնդիրը նրանում է, որ թարգմանիչը պետք է ձգտի մոտենալու սկզբնաղբյուրին, փոխանցելու ազգային առանձնահատկություններն ու իրողությունները:

Թարգմանչից պահանջվում է բարձր վարպետություն և ստեղծագործական մոտեցում:

Ruzanna Zargaryan, Linguistic problems of translation idioms, proverbs and sayings – Linguistic problems connected with the translation of idioms, proverbs and sayings are represented in the article. Trying comparing their translation from Russian into Armenian and finding the difficulties connected with the exact translation of idioms and proverbs.

The problem is that the translator must try to approach the origin passing the national peculiarities and realities.

High skill and creative approach are demanded from the translator.

LES ANIMAUX DANS LES EXPRESSIONS ET DANS LES PROVERBES FRANÇAIS

AÏDA MARDANIAN

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆրանսերեն լեզվի և գրականության
ամբիոնի ասիստենտ

L'objectif de notre article est de présenter le rôle des expressions et des proverbes du français avec les noms des animaux qui contiennent beaucoup d'éléments interculturels.

Jusqu'à l'époque récente qui correspond peu ou prou à l'ère industrielle et à l'exode rural, l'homme a toujours vécu dans une proximité étroite avec les animaux. Ceux-ci jouent un rôle important non seulement dans la faune, mais aussi dans l'enrichissement des langues.

Il est à noter qu'après les expressions somatiques, les expressions formées avec les noms des animaux sont à la deuxième place dans la plupart des langues.

Le sujet est toujours moderne puisque les traits du loup avare et de l'agneau naïf, de la cigale paresseuse et de la fourmi laborieuse, du renard rusé et flatteur, du corbeau ambiteux sont toujours présents dans le caractère de l'homme bien que la vie humaine se développe sans cesse à tout moment.

En prêtant un peu d'attention aux mœurs prétendus des animaux on en apprend beaucoup de choses sur l'homme.

Prenons l'exemple de la Fourmi qui indique une personne laborieuse et économe, le symbole de l'activité laborieuse et abstinée et de la prévoyance.

Dans son «Essai sur les mœurs et l'esprit des nations» Voltaire écrit: «Les artisans et les marchands que leur obscurité dérobe à la fureur ambiteuse des grands sont les fourmis qui se creusent des habitations en silence, tandis que les aigles et les vautours se déchirent».¹

Ou le coucou étant le symbole de la jalousie est celui de la paresse en raison du fait qu'il pond ses œufs dans la demeure d'autrui et que l'on suppose incapable de modifier, c'est pourquoi on dit: «Paresseux comme un coucou».

Les expressions liées aux animaux constituent un grand nombre dans la langue française. Le problème important concernant ces expressions est celui de traduction.

Un grand nombre de ces expressions ont leurs équivalents parallèles en arménien. Elles sont traduites par une locution de même structure, de même forme lexicale et de même sens.

Ex. Nager comme un poisson.

Ձկանպեսլողալ:

Vivre comme chien et chat.

¹ Voltaire, «Essai sur des mœurs et l'esprit des notions», Paris, Arvensa Edition, 2004 p. 410

Մուկնուկատվիպեսապրել:

Ce parallélisme tient à différentes causes dont les principales sont la source commune et l'emprunt à une autre langue.

Il existe aussi des parallèles apparues dans plusieurs langues indépendamment l'une de l'autre.

Le plus souvent les proverbes et les expressions sont traduits en arménien par un équivalent non parallèle, c'est-à-dire par des expressions de forme (surtout lexicale) et de sens identique.¹

Ex. Sauter du coq à l'âne.

Միթեմայիցմուսինանցնելառանցպատճառի:

Chat échaudé craint l'eau froide.

Միօձինտեսնողըսկսեցելկվախենա:

Vivre comme un coq en pâte.

ԱպրելինչպեսԱբրահամիզոզու:

Et enfin il arrive fréquemment qu'une expression n'ait pas d'équivalents phraséologiques dans les autres langues.

Dans ce cas elle est traduite par un syntagme libre, moins souvent par un lexème.

Ex. Entre chien et loup.

Մթնշաղին:

Pas de nouvelles, bonnes nouvelles.

Լուրջունենալնեղլավլուր:

Chacun s'amuse à sa guise.

Ամենմարդհրուզածիպեսէզվարճանու:

Il y a bien sûr beaucoup d'animaux qui ont une grande influence sur la vie des hommes. Tel est l'hérisson. Cette boule d'épine est mêlée à tout ce qui ressortit à la fécondité. Ainsi la jeune femme qui par mégarde pose son pied sur le petit mammifère insectivore, devient de ce fait féconde.

Il est à noter qu'en utilisent les particularités caractéristiques des animaux, les peuples les attribuent aux hommes.

Ainsi un homme rusé est caractérisé par les traits du renard. Un homme avare et méchant est comparé avec le loup. Les gens malveillants et jaloux sont caractérisés par les traits caractéristiques des serpents.

Si l'on prête volontiers aux animaux des sentiments humains et même surhumains, on doue quelquefois les plus petits d'entre eux d'une force herculienne, hors de proportion avec leur taille. C'est le cas, par exemple, de l'orvet qui passait en Auvergne pour redoutable.

«s'il n'était aveugle, dit-on, il descendrait un homme de cheval».¹

¹ A. Nazarian, «Proverbes et dictons française» Erévan, Hellos, 1994

C'est aussi le cas de rémoria qui n'est qu'un modeste poisson marin d'une quarantaine de centimètres. Il possède sur la tête un disque formant ventouse, ce qui lui permet de se faire transporter par d'autres poissons, par des cétacés ou par des bateaux parfois. Ainsi il se montre capable de ralentir, voire d'immobiliser, les navires les plus rapides et les plus gros.

Malgré leur ambivalence qui fait souvent d'eux des affichés de Satan, ces animaux ne sont ni bons, ni méchants.

Les Gaulois répugnaient bien sûr à accorder quelques vertus aux allouettes, les accusant même d'être la cause d'une des trois vaines la taille de Bretagne. Cependant pour les Gaulois l'allouette était un oiseau sacré et bénéfique.

On ignore si c'est grâce à l'imagination des peuples ou encore il y a quelque manière dans le réel, plus inquiétante est la faune que nous allons maintenant découvrir. Ainsi, de l'hyène:

«Si elle vient à regarder un homme ou un chien dormant, elle s'étend tout de son long auprès de lui et si son corps dépasse celui du dormant en longueur, elle le rend insensé et afin qu'il ne lui puisse nuire ou tenir tête, elle lui ronge les mains. Mais si elle est de même longueur, prestement elle s'enfuit. Lorsqu'elle vient furieuse au devant de vous, gardez-vous bien de recevoir du côté droit, car elle vous causera une grande frayeur qu'il ne vous sera pas possible de lui résister. Mais si vous l'assaillez du flanc gauche, vous la rendrez impuissante et vous le tuerez facilement.

Beaucoup de bêtes ont longtemps figuré au banc d'infamie. Il y a eu des procès d'animaux jusqu'au XVIII^e siècle. Selon Jean Vartier, la Suisse en a eu le monopole: La république de Berne s'attaqua judiciairement aux chenilles en 1470».²

Sous la révolution française on est allé même jusqu'à juger un perroquet que l'on soupçonnait de manquer de patriotisme.

Nombreux étaient par ailleurs les porcs, les chats, les chiens, les vaches et surtout les chèvres qui durent subir avec leurs maîtres le supplice du bûcher, souvent sous l'accusation de bestialité, considérée alors comme le pire des crimes. Les tribunaux d'Eglise avaient toute compétence pour prononcer les peines spirituelles comme l'anathème, la malédiction, l'excommunication contre les insectes, rongeurs, chenilles et petits invertébrés prédateurs.

Parmi les animaux, il en est qui semblent détenir tout particulièrement les faveurs de Diables. Ainsi du bétier du bouc, du serpent, du crapeaud, du chien jaune, de crabe, du scorpion, du basilic, ce reptile auquel était attribué le pouvoir de tuer par son seul regard et plus généralement, des repaces, des aragnées.

¹ P. Vigéra, «La symphonie animale» Paris, Larousse, 1992

² J. Vartier, La vie quotidienne au XIX^e siècle, Académie française, 1974, Paris

Les Arabes font de l'autruche l'instrument des démons qui empruntent sa forme ou qui se servent d'elle, comme monture. Selon le bestiaire démonique européen, les sorciers parfois se transforment en chats noirs. Ils attendent le moment propice pour s'introduire subrepticement dans les étables, et le Diable aide les bêtes taries pour toujours. Il ne reste plus qu'à les abattre. Aussi les éleveurs font-ils le guet pour occire les chats noirs d'un bon coup de fourche.

Nos études nous amènent à une conclusion que les expressions avec les animaux domestiques sont plus nombreuses, parce que ceux-ci sont proches à l'homme.

Vivaces ou sortis de l'usage, élogieuses ou moqueuses, les expressions inspirées par les animaux, certaines immortalisées par des écrivains célèbres, reflètent notre fascination pour le monde animal, trésors d'idées et de comparaisons.

BIBLIOGRAPHIE

1. P. Vigérie « La symphonie animale » Larousse ; Paris 1992
2. A. Nazarian, « Proverbes et dictons française » Erévan, Hellos, 1994
3. J. Vartier, La vie quotidienne au XIX^e siècle, Académie française, 1974, Paris
4. A. Nazarian, « Les locutions comparatives de la langue française » Erevan 1997
5. M. Maloux, Dictionnaire des proverbes, Larousse, 1992
6. M. Rat « Dictionnaire des locutions françaises » Larousse, Paris 1981
7. Voltaire, « Essai sur des mœurs et l'esprit des notions », Paris, Arvensa Edition, 2004 p. 410
8. Իւ. Բաղդիկյան « Ժամանակակից հայերենի դարձվածային միավորներ » Երևան 1986թ.

Mots clés- interculturel, refléter, somatique, équivalent, parallélisme, emprunt, attribuer, ambivalence, procès d'animaux, prévoyance.

Aïda Mardanian, Les animaux dans les expressions et dans les proverbes français-

Dans les champs phraséologiques des langues les expressions avec les noms occupent la deuxième place après les proverbes somatiques.

Il est à noter que les peuples caractérisent les gens, leurs actions, par les traits de caractère des animaux.

Le thème de l'article reste toujours moderne, puisque les traits du loup avare et de l'agneau naïf, de la cigale paresseuse et de la fourmi laborieuse, du renard rusé et du corbeau ambiteux sont toujours présents dans le caractère de l'homme.

L'objectif de notre article est de révéler les noms des animaux les plus employés dans les expressions et les proverbes et de les analyser dans le contexte interculturel.

Nos recherches montrent que les animaux domestiques sont les plus présents dans les phraséologismes. Ils reflètent notre fascination pour le monde animal.

Աիդա Մարդանյան, Կենդանիների անուններով կազմված արտահայտությունները և ասացվածքները ֆրանսերենում-Դարձվածքային համակարգում կազմախոսական (սոմատիկ) դարձվածքներից հետո կենդանիների անուններով կազմված դարձվածքները երկրորդ տեղն են զբաղում աշխարհի գրեթե բոլոր լեզուներում:

Հարկ է նշել, որ ժողովուրդները կենդանիներին բնորոշ հատկանիշներով վերախմաստավորված ձևով բնութագրում են մարդկանց և նրանց արարքները:

Մեր հոդվածի թեման արդիական է, որովհետև հանդուգն գայլին միամիտ գառան, աշխատասեր մրջյունի ու անբան ճպուռի, խորամանկ աղվեսի ու փառասեր ագռավի հատկանիշները այսօր էլ առկա են մարդկային բնավորության մեջ:

Մեր նպատակն է հոդվածում ուսումնասիրել և առանձնացնել այն կենդանիներին, թռչուններին, որոնք ավելի հաճախ են երևան գալիս ասացվածքներում, արտահայտություններում և դրանք վերլուծել միջմշակութային համատեքստում:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆրանսերենում, իչպես նաև հայերենում առավել տարածված են ընտանի կենդանիների անուններով արտահայտությունները:

Դրանք արտացոլում են մեր հրապուրվածությունը կենդանական աշխարհի հանդեպ:

Aida Mardanyan, Animals in French expressions and proverbs-Animal idioms are the second in phraseological system only after the anatomical (somatic) phrases in almost all the languages of the world.

It should be noted that nations qualify people, their features and deeds by re-interpreting the characteristic features of animals.

The topic of our paper is on contemporary lines as the characteristic features of the impudent wolf and innocent lamb, the hard-working ant and idle dragon-fly, the sly fox and conceited crow are present in human nature today.

The aim of our paper is to study and distinguish which names of animals and birds more frequently appear in proverbs and expressions as well as to analyze them in intercultural context.

Our studies show that the expressions with the names of domestic animals are widespread both in French and Armenian.

They represent our fascination towards the animal world.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ և ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ

Անկախացման 27 տարիների ընթացքում, չնայած պետական կառավարման մարմինների կառուցվածքը բազմիցս փոփոխվել է, սակայն դա չի ծառայել երկրի տնտեսական համակարգի գործունեության բարելավմանը: Պատճառներից մեկը այդ տարիների ընթացքում պետական կառավարման համակարգի կառուցվածքը այս կամ այն անձին պաշտոն տալու կամ պաշտոնից ազատելու՝ օրվա իշխանությունների որդեգրած «հարմարեցնելու», քաղաքականությունն է եղել: Այլ կերպ ասած, պետական կառավարման կառուցվածքի փոփոխությունը ոչ թե պետական մարմինների գործունեության բարելավման նպատակ է հետապնդել, այլ եղել է անձնական կամ կուսակցական խնդիրներ լուծելու միջոց: Նյութը չձանրաբեռնելու համար չեմ բերի դրա հետևանքով մասնագետներին հայտնի՝ երկրի սոցիալ-տնտեսական ոլորտներին հասցված վնասի վիճակագրական ցուցանիշները: Առավել ևս, որ դրանց վերաբերյալ եղել են մասնագիտական տարբեր հրապարակումներ, որոնցում պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումների և կառավարության գործունեության արդյունավետության բարձրացման հարցադրումներ և լուծումներ են առաջարկվել¹:

Կսահմանափակվեմ այն առաջարկություններով, որոնք, իմ կարծիքով, կենթադրեն և՛ ինստիտուցիոնալ բարեփոխումներ, և՛ կհանգեցնեն կառավարման պետական մարմնի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Խոսքը՝ տնտեսական մրցակցության պաշտպանության և հանրային ծառայությունները կարգավորող պետական մարմիններին է վերաբերում: Ներկայումս Հայաստանում գործող երկու պետական մարմինները՝ ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովը (ՏՄՊՊՀ) և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովը (ՀԾԿՊՀ) առանձնապես աչքի չեն ընկել թե՛ մասնագիտական դրական որակներով, թե՛

¹ Տե՛ս, օրինակ, Մերուժան Միքայելյան, Հայաստանն արդիականացման մարտահրավերի առջև, ՎԷՄ համահայկական հանդես, 2011, թիվ 3 (35), էջ 156-203, Միքայել Միքայելյան, ՀՀ ապրանքային շուկաների համակենտրոնացման մակարդակները և մրցակցության պաշտպանության առաջնահերթությունները; Микаелян М.В., Защита конкуренции в Армении и механизмы обеспечения независимости регулирующего органа и лиц принимающих решения в этом органе, В кн. Проблемы и перспективы сотрудничества между странами Юго-восточной Европы в рамках черноморского экономического сотрудничества и ГУАМ, часть 2, с.494-498 և այլն:

օբյեկտիվ և անաչառ գործունեությամբ: Մեր երկրի նման փոքր տարածք ունեցող երկրներում շոալյություն է հարկատուների հաշվին գործող այդ երկու պետական անկախ մարմինների առանձին գոյությունը, որոնց գործառնությունը որոշակի հարթությունում հատվում են՝ առաջ բերելով գերատեսչական շահերի բախում¹: Այդ երկու պետական մարմինների գործառնությունը մեկ միասնական մարմին ունենալու դեպքում նաև 12-15 տոկոսով կկրճատվեն դրանց պահպանման ծախսերը²:

Կարգավորման ինքնավար ինստիտուտի գոյությունը (Սահմանադրության 122-րդ հոդված), մեր կարծիքով, պետք է հաշվի առնի մի շարք սկզբունքներ.

1. Կարգավորող մարմինը գերատեսչական շահ չպետք է հետապնդի,

2. Այն պետք է գերծ լինի պետական այլ մարմինների ազդեցությունից՝ չպետք է առաջնորդվի վերջիններիս թելադրանքով,

3. Կարգավորող մարմնի ձևավորման և գործունեության մեխանիզմը չպետք է կախված լինի տվյալ ժամանակահատվածի իշխանության կամայականությունից /ույնը լինի բոլոր իշխանությունների համար),

4. Որոշումների կայացումը պետք է լինի կոլեգիալ,

5. Որոշում կայացնողները (կոլեգիալ մարմնի անդամները) պետք է անկուսակցական լինեն և հավասար իրավասություն ունենան (հավասար ձայնի հետ միասին) և որոշումներ կայացնելիս լինեն անկախ,

6. Կարգավորող մարմինն իր տարեկան ծախսերի նախահաշիվը կազմելիս և բյուջեն ձևավորելիս պետք է անկախ լինի,

7. Կարգավորող մարմնի ձևավորումը պետք է թափանցիկ լինի,

8. Կարգավորող մարմնի անդամների ընտրության օբյեկտիվություն, որը պետք է հիմնված լինի մասնագիտական որոշակի չափանիշների բավարարելու պահանջի վրա:

9. Կարգավորող մարմնի անդամների ընտրությունը պետք է կատարվի իշխանության պետական մարմիններին առընթեր 8-րդ կետի պահանջներին համապատասխան ձևավորվող կադրային բանկերից:

10. Կարգավորող մարմնի անդամների և աշխատակազմի աշխատավարձերը պետք է սահմանվեն պետական այլ մարմինների միջին աշխատավարձերից բարձր:

Կարգավորող մարմինը գերատեսչական շահ չի հետապնդի, եթե պետական այլ մարմինների ենթակայությունից դուրս է (և՛ ՏՄՊՀ-ն, և՛ ՀԾԿՊՀ-ն

¹ Միջազգային պրակտիկայում նման դրական փորձ կա: Մասնավորապես ԵՍՏՍ-ում՝ Ղազախստանում (ՂՀ կառավարության 17.02.2017թ. 71 որոշմամբ՝ ՂՀ ազգային էկոնոմիկայի նախարարության կազմում միաձուլման միջոցով ստեղծվել է Բնական մենաշնորհների կարգավորման և մրցակցության ու սպառողների իրավունքների պաշտպանության պետական կոմիտեն):

² Մեկ միասնական այդպիսի մարմին ունենալու անհրաժեշտության մասին գրել եմ դեռևս 1996թ. (տե՛ս. Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, թիվ 246 (1685), 03.12.1996թ.):

պետական որևէ մարմնի կազմում չեն): Բայց չենք կարող պնդել, թե երբևիցե վերադաս պետական մարմնի (հանրապետության նախագահ, վարչապետ) թելադրանքով չեն առաջնորդվել (հակառակը՝ կարող ենք):

Գործող օրենքներով երկու պետական մարմիններն էլ կոլեգիալ են, անդամները հավասար ձայն ունեն: Բայց երկու մարմինների գործունեությունն էլ աչքի են ընկել կոռուպցիոն ռիսկերով¹,

Ապրանքային շուկաների վերաբերյալ կարգավորող մարմինների որոշ գնահատականներում և որոշումներում, հաշվետվություններում և տարեկան գործունեության ծրագրերում առկա են մասնագիտական սխալներ (առանձին դեպքերում՝ աղաղակող): Օրինակ, բենզինի և դիզվառեյի շուկաների վերաբերյալ 2018 թ. հունվարի սկզբներին ՏՄՊՊՀ-ի գնահատականը և միայն հարկային օրենսդրության փոփոխություններով մեկնաբանությունը²:

Ամենայն հավանականությամբ, Կարգավորող մարմնի ու տնտեսվարողների միջև ձևավորված «ես քեզ, դու ինձ» փոխադարձ «բարյացակամությունը» և հարկատուներիս մոտ իրավացիորեն կոռուպցիոն կասկած հարուցող հարաբերություններով պայմանավորված՝ Հանձնաժողովի որոշումները չէին լինի, եթե Հանձնաժողովի ձևավորման և գործունեության մեխանիզմը կամայականության և սուբյեկտիվության համար նպաստավոր սողանցքներ չունենար:

Կարգավորող մարմնի անդամներին առաջադրելիս չպետք է բացառել սուբյեկտիվ գործոնի դերը՝ անկախ նրանից, թե ով է Հանձնաժողովը ձևավորող պետական մարմնի ղեկավարը: Ի վերջո, Հանձնաժողովի անդամների նշանակումը կատարվում է իրավասու անձի ճանաչած շրջապատից: Պատահական չէ, որ շատ դեպքերում հանրությունը ոչ միշտ է դրական գնահատում այս կամ այն նշանակումը: Իմ սուբյեկտիվ գնահատմամբ, օրինակ, ՏՄՊՊՀ-ի նշանակված 6 նախագահներից վերապահումով միայն մեկի պարագայում կարելի է այն հաջողված համարել³: Նույնը (ավելի լավ կամ վատ) կարելի է ասել հանձնաժողովի մյուս անդամների նշանակման վերաբերյալ:

¹ Այդ մասին տե՛ս. տե՛ս, օրինակ, <http://hetq.am/arm/news/66495/mrcakcutyan-pashtpanutyanyan-barelavman-anhrazheshtutyuny.html/>, կամ “Վիոլա ջուր” ընկերության հետ կապված գործուղման պատմությունը, հավատ չներշնչող սակագների սահմանումը (օրինակ, 1000 խ.մ գազի սակագինը սահմանին, որը ներառում է գազի արդյունահանման հետ կապված ծախսերը, հազարավոր կիլոմետրերով տեխափոխումը միջև սահման, ինչպես նաև վաճառողի շահույթը: Գրեթե նույն մեծությունն է կազմում երկրի սահմանին այդ գազի ձեռքբերման սակագինը, մաքսատույթը և ձևակերպումները, ընդամենը միջին հաշվով 300 կմ այն տեղափոխելու ու վերջնական սպառողներին բաշխելու հետ կապված ծախսերն ու «Գազպրոմ Արմենիայի» շահույթը): Գուցե այդ առումով ընդդիմախոսներս ասեն, որ Հայստանում գազի վաճառքը սպառողների տարբեր խմբերի համար տարբեր սակագներով է կատարվում, դրանով է պայմանավորված սահմանին գազի ձեռքբերման և վերջնական սպառողներին հասցնելու հետ կապված մարժայի այդքան մեծ լինելը: Այնուամենայնիվ, հաշվարկով պետք է այն հիմնավորել, որին ես կանդիդատանս իմ այլ ուսումնասիրության մեջ:

² Տե՛ս http://competition.am/index.php?page=news_cases&newsID=1489&lng=1:

³ Համոզմունքս ձևավորվել է 8 տարի որպես ՏՄՊՊՀ-ի անդամ աշխատելու ընթացքում:

Առանձին դեպքերում, մյուս անդամների նշանակման ժամանակ «կարևորվել է» Հանձնաժողովի նախագահի կարծիքը, ինչը, կոլեգիալ մարմինների ձևավորման պարագայում որոշումների կայացման օբյեկտիվությունն ապահովելու տեսանկյունից սխալ է: Հանձնաժողովի նախագահը հակված է հանձնաժողովի անդամ «անցկացնել» իր շրջապատից (որպես կանոն, Հանձնաժողովի աշխատակազմից, որին ինքն է ժամանակին աշխատանքի ընդունել¹): Իսկ դա Հանձնաժողովի նախագահին հնարավորություն է տալիս Հանձնաժողովի որոշումներում «իր լրացուցիչ ձայնն ունենալ»: Պատահական չէ, որ այդ որոշումներում վճռական է լինում նրա նախագահի կարծիքը:

Կոլեգիալ մարմիններում օբյեկտիվորեն որոշակի հակասություններ են առաջանում մարմնի ղեկավարի և մյուս անդամների կամ դրանց մի մասի միջև²:

Պետական կոլեգիալ մարմինների փորձը ցույց է տալիս, որ, ինքնուրույն կարծիք ունեցող «անհնազանդ» անդամները և աշխատակազմի լավագույն, բայց ոչ յուրաքանչյուր կադրերը աստիճանաբար դուրս են մղվում դրանից³: Բնականաբար, աչքի առաջ ունենալով դուրս մնալու հեռանկարը՝ այդ մարմնի նորընտիր անդամները իրենց նախորդների ճակատագրին չարժանանալու համար, կդառնան առավել «հնազանդ»:

Ճիշտ է, խմբագրված Սահմանադրության 122-րդ հոդվածը նախատեսում է ինքնավար մարմինների անդամների՝ ԱԺ-ում ընտրության ընթացակարգ, սակայն դրանով Հանձնաժողովի ձևավորման սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը չի վերանում:

Կարգավորող մարմնի գործունեության արդյունավետությունը կախված է նաև աշխատողների արհեստավարությունից: Իսկ նման աշխատողներ կարելի է ներգրավել միայն բարձր աշխատավարձերի միջոցով: Այդ է վկայում կարգավորող մարմինների գործունեության համաշխարհային փորձը: Օրինակ, Գերմանիայի դաշնային կարտելային ծառայության աշխատողների միջին աշխատավարձը 2.5 անգամ գերազանցում է գործադիր իշխանության մյուս մարմինների միջին աշխատավարձը. մասնագետների գնահատմամբ, դա արվում է կոռուպցիոն ռիսկերը մեղմելու, լավագույն մասնագետներին պահելու

¹ Իրավական առումով աշխատակազմում աշխատողը մրցույթի հիման վրա է աշխատանքի անցնում: Գործնականում միայն առանձին դեպքերում է, որ անձը կկարողանա աշխատանքի անցնել՝ առանց պետական մարմնի ղեկավարի նախնական համաձայնության:

² Կոլեգիալությունը ենթադրում է, որ ձայնի իրավունք ունեցող յուրաքանչյուր քվեարկող կողմնորոշվում է իր գիտելիքներին, հարցի ըմբռնման աստիճանին և իր խղճին համապատասխան: Մինչդեռ նման «պահվածքը» միշտ չէ, որ դուր կգա մարմնի ղեկավարին: Սա էլ հանգեցնում է որոշակի հակասությունների, որի աստիճանը պայմանավորված է ոչ միայն քվեարկողների ինտելեկտով, այլև հարաբերությունները կարգավորող մեխանիզմի հստակությունով: Հայաստանի «անկախ» մարմինների փորձը ցույց է տալիս, որ կոլեգիալ բոլոր մարմիններում էլ, առանց բացառության, նման հակասություններ կան մի մասում ավելի ցայտուն, մյուսներում՝ առավել քողարկված:


³ Վերջին 7-8 տարիների ընթացքում,՝ չնայած լինելով քաղաքացիական ծառայող, ՏՄՊՊՀ –ի աշխատակազմի ավելի քան 70 տոկոսը փոխվել է:

միտումով (կարգավորվող սուբյեկտները խոշոր բիզնեսի ներկայացուցիչներն են, որոնք ջանք չեն խնայի ոչ միայն կարգավորող մարմնի աշխատողներին կաշառելու, այլև՝ այդ մարմնից բարձր վարձատրությամբ լավագույն կադրերին հրապուրելու համար)¹:

Մեր կարծիքով, որոշումներ կայացնելիս թե՛ կարգավորող մարմնի և թե՛ դրա յուրաքանչյուր անդամի անկախության աստիճանի բարձրացման նպատակով ճիշտ կլինի կիրառել Հանձնաժողովի ձևավորման ներքոհիշյալ մեխանիզմը: Հանձնաժողովը պետք է ձևավորեն օրենսդիր և գործադիր իշխանության մարմինները (Ազգային ժողով, ՀՀ նախագահ, ՀՀ կառավարություն՝ թափանցիկ և անկախ կադրային բանկերի (4 խումբ) միջոցով (յուրաքանչյուրում 10-ական թեկնածու): Հանձնաժողովի 11 անդամներից երեքը պետք է լինեն Ազգային ժողովում մեծամասնություն կազմող կուսակցության (կամ կոալիցիա կազմած կուսակցությունների) կադրային բանկի ներկայացուցիչները, երեքը՝ փոքրամասնություն կազմող կուսակցությունների ներկայացուցիչները (համամասնորեն դրանցից յուրաքանչյուրի ունեցած բաժինը այդ կուսակցությունների պատգամավորների ընդհանուր թվի նկատմամբ), երեքը՝ ՀՀ կառավարության, երկուսը՝ ՀՀ նախագահի, որոնք նշանակվում են 11 տարի պաշտոնավարման ժամկետով՝ Սահմանադրության 122 հոդվածի համաձայն Ազգային ժողովում ընտրության հիման վրա (տե՛ս գծապատկեր 1):

Կադրային բանկում Ազգային ժողովի և Կառավարության խմբերի երեքական թեկնածուները (յուրաքանչյուր խմբում ընդգրկված առաջին երեք թեկնածուները) և Նախագահի խմբի առաջին երկու թեկնածուները անձեռնմխելի են (սրանք կարող են փոխվել միայն օրենքով սահմանված դեպքերում)՝ չեն կարող կադրային բանկից դուրս մնալ: Նոր իշխանության ձևավորման (պետական մարմնի փոփոխության՝ խորհրդարանական նոր ընտրությունների, Ազգային ժողովում նոր կոալիցիայի ստեղծման, կառավարության նոր կազմի) դեպքում մնացած թեկնածուները կարող են փոխվել, եթե առաջարկվող նոր թեկնածուների միավորները ավելի բարձր լինեն: Ընդ որում, առավել բարձր միավորի դեպքում նոր թեկնածուների և անձեռնմխելի թեկնածուների տեղերը ևս պետք է փոխվեն:

¹ **Ирина Соколова**, Антимонопольная политика ведет к повышению конкурентноспособности, “Конкуренция и рынок” Информационно-аналитический журнал, 2004, N 3, с. 14.



Գծապատկեր 1. Կադրային բանկից հանձնաժողովի ձևավորման սխեման

Անկաշկանդ որոշում կայացնելու համար Հանձնաժողովի շարքային անդամի և Հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի միջև պետք է իրավական հավասարություն լինի: Իսկ նման բան կարող է լինել, եթե Հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը Հանձնաժողովի անդամներից՝ սահմանադրության 122 հոդվածի 2-րդ մասի պահանջին համապատասխան ընտրված, նշանակվեն ռոտացիոն սկզբունքով: Հանձնաժողովի այն անդամը, որի աշխատանքային ժամկետը լրանում է մյուսներից ավելի շուտ, պետք է ծառայի որպես Հանձնաժողովի նախագահ:

Կադրային բանկերում ընդգրկելու համար թեկնածուների միավորների հաշվարկման համար առաջարկվում է հետևյալ բանաձևը.

$$ԸՄ = Գ_{\text{առ}} \cdot (Բ_{\text{կ}} \cdot Մ_{\text{բկ}} + Մ_{\text{կմ}} + Մ_{\text{կս}} + Գ_{\text{Հ.Մ.Սկմ. Սկս}})$$

Որտեղ՝ ԸՄ-ն ընդհանուր միավորներն են, Գ_{սս}-ը գիտական աստիճանի գործակիցն է (տնտեսագիտության կամ իրավագիտության դոկտորի դեպքում՝ 1.2, իսկ տնտեսագիտության կամ իրավագիտության թեկնածուի դեպքում՝ 1.1): Բ_կ-ն բազային կրթության (տնտեսագիտության կամ իրավագիտության) գործակիցն է՝ 1 միավոր, չունենալու դեպքում՝ "0" միավոր, Մ_{բկ}-ն բազային կրթությամբ աշխատանքային ստաժի գործակիցն է՝ 3-5 տարվա դեպքում՝ 1.1, 6 տարուց ավելի դեպքում՝ 1.2: Ս_{կս}-ն և Ս_{կս}-ն համապատասխանաբար՝ ՏՄՊՊՀ-ում կամ ՀԾԿՊՀ-ում և կարգավորվող սուբյեկտներում աշխատանքային ստաժի գործակիցներն են՝ 3-5 տարվա դեպքում՝ 1.3, 6 տարուց ավել լինելու դեպքում՝ 1.4: Կարգավորվող սուբյեկտներ են՝ որևէ ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտները (ներառյալ՝ կարգավորվող հանրային ծառայություններ մատուցողները):

Գ_չ-ն տնտեսական մրցակցությանը կամ կարգավորվող հանրային ծառայություններին վերաբերող գիտական խորհրդի երաշխավորությամբ հրատարակված մենագության, դասագրքի, ուսումնական կամ ուսումնամեթոդական ձեռնարկի (յուրաքանչյուր 5 մամուլը՝ 1 միավոր) կամ գրախոսվող պարբերականում (ժողովածուում, գիտաժողովի նյութերում) տպագրված հոդվածը (յուրաքանչյուր 10 հոդվածը՝ 1 միավոր): Մ-ն հրատարակված յուրաքանչյուր 5 մամուլի կամ տպագրված հոդվածների տասնյակների թիվն է:

Կադրային բանկ ունեցող յուրաքանչյուր պետական մարմին իր կայք-էջում պետք է տեղադրի կադրային բանկի ներկայացուցիչների միավորները ըստ դրա բաղադրիչների (տե՛ս Աղյուսակ 1) և դրանց հաշվարկման հիմքերը:

Աղյուսակ 1 .Կադրային բանկում ներառված թեկնածուները և դրանց միավորները ըստ բաղադրիչների*

Թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը	Մ	սս	կ	բկ	կմ	կս	չ	
1								
2								
3								
4								
5								
6								
7								
8**								

* $\text{ԸՄ}=\text{Գ}_{\text{սս}}\cdot(\text{Բ}_{\text{կ}}\cdot\text{Մ}_{\text{բկ}}+\text{Ս}_{\text{կս}}+\text{Ս}_{\text{կս}}+\text{Գ}_{\text{չ}}\cdot\text{Մ}\cdot\text{Ս}_{\text{կմ}}\cdot\text{Ս}_{\text{կս}})$
 ** Լրացվում է միայն ՀՀ նախագահի կադրային բանկում:

Բանալի բառեր - պետական մարմին, կադրային բանկ, գործունեության անկախություն, հանձնաժողովի անդամ:

Միքայել Միքայելյան, ՀՀ պետական ինքնավար մարմինների ձևավորման և գործունեության անկախության ապահովման հարցի շուրջ - Ներկայումս Հայաստանում գործող ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովը և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետև՝ Հանձնաժողով) առանձնապես աչքի չեն ընկել թե՛ մասնագիտական դրական որակներով, թե՛ օրյեկտիվ և անաչառ գործունեությամբ: Մեր երկրի նման փոքր տարածք ունեցող երկրներում շոայություն է հարկատուների հաշվին գործող այդ երկու պետական անկախ մարմինների առանձին գոյությունը, որոնց գործառույթները որոշակի հարթությունում հատվում են՝ առաջ բերելով գերատեսչական շահերի բախում:

Միասնական Հանձնաժողովի ձևավորման և գործունեության անկախության ու արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է որոշակի չափանիշներով կադրերի 4 անկախ բանկ ձևավորել և դրա անդամների ընտրությունը (Սահմանադրության 122 հոդվածի 2-րդ մասի պահանջին համապատասխան) կատարել այդ բանկերից՝ կախվաց այն բանից, թե որ բանկի տեղն է թափուր մնացել կամ մնալու (Հանձնաժողովի անդամի ժամկետը լրանալու պատճառով):

Այդ երկու պետական մարմինների գործառույթներով մեկ միասնական մարմին ունենալու դեպքում նաև 12-15 տոկոսով կկրճատվեն դրա պահպանման ծախսերը:

Микаел Микаелян, К вопросу обеспечения независимости формирования и деятельности государственных самостоятельных органов - В настоящее время Государственная комиссия по экономической конкуренции РА и Комиссия по регулированию общественных услуг Армении (далее - Комиссия) особо не отличаются профессиональными положительными качествами или объективной и беспристрастной деятельностью. В странах с меньшими территориями, таких как наша страна, существование этих двух независимых государственных органов, функции которых на некоторых плоскостях пересекаются, приводят к столкновению ведомственных интересов.

В целях повышения независимости и эффективности формирования и деятельности Единой комиссии необходимо создать 4 независимых кадровых банков из преставителей которых надо выбирать членов комиссии (в соответствии с требованиями части второй статьи 122 Конституции) - в зависимости от того, для ддя представителей какого банкаобразовалось вакантное место.

В случае единого органа с функциями этих двух государственных органов расходы на содержания Гос органа будут снижены на 12-15%.

Mikael Mikaelyan, To the question of ensuring the independence of the formation and activities of the state self-associative bodies -At present, the State Commission on Economic Competition of the Republic of Armenia and the Commission on Regulation of Public Services of Armenia (hereinafter - the Commission) do not particularly distinguish themselves with professional positive qualities or objective and impartial activities. In countries with smaller territories, such as our country, the existence of these two independent state bodies, whose functions intersect on some planes, leads to a clash of departmental interests.

In order to increase the independence and efficiency of the formation and activities of the Unified Commission, it is necessary to create 4 independent personnel banks from whose representatives it is necessary to select members of the commission (in accordance with the requirements of the second part of Article 122 of the Constitution) - depending on which representatives of bank the vacancy was formed for.

In the case of a single body with the functions of these two state bodies, the cost of maintaining the State Body will be reduced by 12-15%.

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի և «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»

ՓԲԸ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ

ՆԱԽՇՈՒՆ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրանտ


Ցանկացած երկրում, այդ թվում՝ Հայաստանում, տնտեսության մեջ բանկային համակարգը, կազմելով երկրի ֆինանսական համակարգի կարևորագույն ուղղորտներից մեկը, համարվում է վերջինիս զարգացմանը նպաստող ամենահիմնական գործոններից: Ուստի՝ դրանով է պայմանավորված է բանկային համակարգի արդյունավետ գործունեության անհրաժեշտությունը:

Առևտրային բանկերի միջև մրցակցության անընդհատ խորացումը՝ մի կողմից, ոչ բանկային ֆինանսական կառույցների աստիճանական ձևավորումն ու զարգացումը՝ մյուս կողմից, ստիպում են բանկերին մշտապես իրականացնել գործունեության գնահատում, անընդհատ մշակել և ներդնել նոր՝ ժամանակակից ֆինանսական ծառայություններ:

Առևտրային բանկերի գործունեության վերլուծությունը կարևոր նշանակություն ունի ինչպես իրենց՝ բանկերի, այնպես էլ նրա բաժնետերերի ու հաճախորդների, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի համար: Այդպիսի վերլուծության հիման վրա ԿԲ-ը կարող է ուսումնասիրել ֆինանսավարկային շուկայի իրավիճակը, վերահսկել սահմանված կարևորագույն տնտեսական նորմատիվների կատարումը, ստուգել իրականացվող դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում ճշգրտել այն: Առևտրային բանկերը իրենց, ինչպես նաև մյուս բանկերի գործունեության վերլուծության հիման վրա կարող են գնահատել իրենց աշխատանքի արդյունավետությունն ու որակը և որոշել դրանց բարելավման ուղղությունները: Բանկի բաժնետերերն ու հաճախորդները այդպիսի վերլուծության հիման վրա հնարավորություն են ստանում գնահատելու բանկի հուսալիությունն ու եկամտաբերությունը՝ իրենց հետագա փոխհարաբերությունների նպատակահարմարության իմաստով:

Իրականացրել ենք առևտրային բանկերի գործունեության գնահատման ցուցանիշների վերլուծություն «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի և «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի օրինակով՝ միջանկյալ համապարփակ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա, որից պարզ է դարձել, որ նախորդ ֆինանսական տարվա վերջի դրությամբ Կոնվերս բանկում գրանցվել է


ընդհանուր ակտիվների նվազում 1 201 մլն դրամով կամ 0.47%-ով, քանի որ համախառն վարկային պորտֆելը, որը կազմել է ընդհանուր ակտիվների 61.7%-ը նվազել է 6.02%-ով: Տարեսկզբին բանկի հաճախորդների նկատմամբ պարտավորությունները նախորդ տարվա համեմատ նույնպես նվազել են մոտ 1 645 մլն դրամով կամ 0.76%-ով: Սա նշանակում է, որ բանկը պետք է մանրամասն վերլուծության ենթարկի մատուցվող ծառայությունների որակը, վարի ճկուն գնային քաղաքականություն և բանկի նկատմամբ բարձրացնի հաճախորդների վստահությունը: Սեփական կապիտալը ավելացել է՝ կազմելով 36 452 մլն դրամ, ընդ որում կանոնադրական կապիտալի մեծությունը մնացել է անփոփոխ:




Գծապատկեր 1: Կոնվերս բանկի ֆինանսական դիրքի հիմնական ցուցանիշները¹

Ակնհայտորեն Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի ֆինանսական դիրքի ցուցանիշները գերազանցում են Կոնվերս բանկի համապատասխան ցուցանիշներին: Բանկը նախորդ տարվա համեմատ ունեցել է ընդհանուր ակտիվների զուսպ աճ՝ 2.8% կամ 8 738 մլն դրամ, չնայած 60.27% կազմող հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների 0.89% նվազմանը: Տեղի է ունեցել պարտավորությունների ավելացում նախորդ տարվա նկատմամբ 2.1%-ով, ինչպես նաև պարտավորությունների կազմում ավանդների ավելացում 1.7%-ով:

¹ Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն, 31.12.2017թ., 31.03.2017թ., 31.03.2018թ., Կոնվերս բանկ ՓԲԸ:




Գծապատկեր 3: Կոնվերս բանկի ֆինանսական արդյունքների հիմնական ցուցանիշներ¹



Գծապատկեր 4: Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի ֆինանսական արդյունքների հիմնական ցուցանիշներ¹

¹ Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն, 31.12.2017թ., 31.03.2017թ., 31.03.2018թ., Կոնվերս բանկ ՓԲԸ:


Համարժեքության նորմատիվը Կոնվերս բանկի և Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի համար 2018թ. առաջին եռամսյակում նվազել է համապատասխանաբար կազմելով 16.19% և 17.38%, որը սակայն բավարարում է նորմատիվային պահանջներին, այսինքն կարելի է ասել բանկերն իրենց վրա նորմայից բարձր ռիսկեր չեն վերցնում:



Գծապատկեր 5: Կոնվերս բանկի ֆինանսական հիմնական գործակիցներ²

Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի սեփական կապիտալի շահութաբերության և ակտիվների շահութաբերության ցուցանիշների զգալի բարձր մակարդակը վկայում է ակտիվների և սեփական կապիտալի արդյունավետ օգտագործման մասին: Սակայն երկու բանկերում էլ դիտվող առաջին ցուցանիշի գերազանցումը երկրորդի նկատմամբ նշանակում է, որ բանկերում բարձր է դեպոզիտների մասը և ցածր է սեփական կապիտալի մասը: Եվ հնարավոր է, որ բանկերը վտանգի տակ են դնում դեպոզիտների հուսալիությունը, հետևաբար անհրաժեշտ է իրականացնել ակտիվների որակի ավելի մանրամասն վերլուծություն³:

¹ Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն, 31.12.2017թ., 31.03.2017թ., 31.03.2018թ., Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ:
² Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն, 31.03.2018թ., Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ, Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն, 31.12.2017թ., 31.03.2017թ., 31.03.2018թ., Կոնվերս բանկ ՓԲԸ:
³ Վարդանյան Գ., Վարդանյան Հ., Առևտրային բանկերի շահութաբերության վերլուծությունը: Հոդված, Երևան, Տնտեսագիտություն հրատ., էջ 192:



Գծապատկեր 6: Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի ֆինանսական հիմնական գործակիցներ¹

Դիտարկվող ժամանակահատվածում դիտվել է այս ցուցանիշների աճ երկու բանկերում էլ, որը գնահատվում է դրական կերպով, քանի որ ROE-ի և ROA-ի նվազման դեպքում բաժնետերերի և ներդրողների համար բանկերը, որպես բիզնես, կկորցնեն գրավչությունը:

Առևտրային բանկերի շահութաբերության բարձրացմանն ուղղված կառավարչական որոշումների կայացման ժամանակ հարկավոր է ի նկատի ունենալ այն հանգամանքը, որ շահութաբերության բարձրացման վրա ազդում են ակտիվային գործառնությունների գծով տոկոսադրույքների բարձրացումը և պասիվային գործառնությունների գծով դրանց իջեցումը, եկամուտ չբերող ակտիվների տեսակարար կշռի նվազեցումը, այլ եկամուտների ավելացումը և այլ ծախսերի պակասեցումը, ինչպես նաև բանկի սեփական և ներգրավված միջոցների հարաբերակցության փոքրացումը:

Հարկավոր է նաև ի նկատի ունենալ, որ ամբողջությամբ վերցրած բանկի շահութաբերությունը որոշվում է նրա առանձին գործառնությունների գծով ունեցած շահութաբերությունների մակարդակներով, այդ իսկ պատճառով էլ օգտագործելով քանակական վերլուծության արդյունքները միաժամանակ դրանք պետք է առանձնացնել ըստ գործառնությունների խմբերի, ժամկետների, հաճախորդների խմբերի, բանկի մասնաճյուղերի և այլն: Այդպիսի մանրակրկիտ վերլուծությունների արդյունքների հիման վրա կարելի է առաջարկություն անել

¹ Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն, 31.03.2018թ., Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ, Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն, 31.12.2017թ., 31.03.2017թ., 31.03.2018թ., Կոնվերս բանկ ՓԲԸ:

առավել շահութաբեր գործառնությունների ավելացման և նվազ շահութաբեր (կամ էլ վնասաբեր) գործառնությունների կրճատման (ընդհուպ մինչև դրանց դադարեցումը), բանկի ներքին կառուցվածքի վերակազմավորման, նրա անձնակազմի կրճատման ուղղությամբ: Ընդ որում, բնականաբար, բանկի հեռանկարում իրականացվելիք գործառնությունների գծով որոշումները պետք է ընդունվեն հաշվի առնելով նրա մարքեթինգային գործունեությունը և հնարավոր ռիսկի գնահատականները¹:

Ընդհանուր առմամբ, ՀՀ տարածքում 2018թ. մարտի վերջի դրությամբ գործել են 17 առևտրային բանկեր՝ 506 մասնաճյուղերով:

2018 թվականի երեք ամիսների ընթացքում բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն ավելացնել են 0.83%-ով կամ 30 մլրդ դրամով և մարտի վերջին կազմել 3 690 մլրդ դրամ: Դրան նպաստել է ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդների, բանկերի (ներառյալ ՀՀ ԿԲ), այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների, ինչպես նաև այլ պարտավորությունների (մասնավորապես՝ բանկի կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր, տարանցիկ հաշիվներ, ակրեդիտիվների գծով հաշվարկային պարտավորություններ և այլ հաշիվներ) աճը:

Աղյուսակ 1. Բանկային համակարգի ցուցանիշների փոփոխություն 2017-2018թթ.²

	01.10.17- 31.12.17թ. մին ՀՀ դրամ	01.01.18- 31.03.18թ. մին ՀՀ դրամ	Շեղում	Աճի տեմպ (%)
Ակտիվներ	4 357 042	4 416 180	59 138	1,357
Վարկեր	2 645 652	2 677 941	32 289	1,220
Պարտավորություն ներ	3 659 862	3 690 251	30 389	0,830
Ավանդներ	2 555 778	2 567 738	11 960	0,468
Ընդհանուր կապիտալ	696 734	725 926	29 192	4,190
Կանոնադրական կապիտալ	428 725	428 936	211	0,049

¹ **Վարդանյան Գ., Վարդանյան Հ.** Առևտրային բանկերի շահութաբերության վերլուծությունը: Հոդված, Երևան, Տնտեսագիտություն հրատ., էջ 198:

² ՀՀ բանկերի 31.12.17թ., 31.03.17թ., 31.03.18թ. համապարփակ ֆինանսական հաշվետվություններ:

Աղյուսակ 2. Բանկային համակարգի ցուցանիշների փոփոխություն 2017-2018թթ.
(շահութաբերություն)

	01.01.17- 31.03.17թ. մլն ՀՀ դրամ	01.01.18- 31.03.18թ. մլն ՀՀ դրամ		
Ընդհանուր եկամուտ	106 065	111 567	5 502	5,187
Տոկոսային եկամուտ	88 948	90 347	1 399	1,573
Զուտ պահուստային ծախսեր	-10 846	-2 135	8 711	-80,315
Զուտ շահույթ հարկումից հետո	10 772	24 111	13 339	123,830

Ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդները աճել են 0.47%-ով (12 մլրդ դրամով):

2018թ. երեք ամիսների ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալի աճի տեմպը գերազանցել է պարտավորությունների և ակտիվների աճի տեմպերը՝ նպաստելով «կապիտալ/ակտիվներ» հարաբերակցության 2.8 տոկոսային կետով ավելացմանը: Ընդհանուր կապիտալն ավելացել է 4.19%-ով կամ 29 մլրդ և 31.03.18 դրությամբ կազմել 725,9 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում կանոնադրական հիմնադրամ են համալրել 2 բանկեր: Բանկային համակարգի կանոնադրական հիմնադրամը ավելացել է 211 մլն դրամով:

ՀՀ շուկայում գործող 17 բանկերն էլ այս տարվա առաջին եռամսյակը փակել են շահույթով: Տարվա երեք ամիսների ընթացքում համակարգն ապահովել է 24 մլրդ դրամի շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի շահույթի մեծությունը գերազանցել է 123%-ով: Նախորդ տարվա համեմատ բանկային համակարգի շահույթի բարձր մակարդակը հիմնականում պայմանավորվել է տնտեսությանը տրամադրված վարկերի արագատեմպ աճի պայմաններում զուտ տոկոսային եկամուտների աճով, նաև զուտ պահուստային ծախսերի էական կրճատմամբ:

2018թ. երեք ամիսների ընթացքում բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 1.36%-ով կամ 59.14 մլրդ դրամով, որի 60.6% -ը բանկային համակարգը նախընտրել է ներդնել տնտեսությանը տրամադրվող վարկերում: 31.03.18 դրությամբ բանկային համակարգի ակտիվների մեծությունը կազմել է 4 416.2 մլրդ դրամ: Տնտեսությանը տրամադրված վարկերի աճի տեմպը գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը՝ կազմելով 1.22%:

Սկսած 2007թ.՝ ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելն ավանդների համեմատ փոփոխությունների է ենթարկվել և արդյունքում այդ թվականից ընդհանուր ավանդների և վարկային պորտֆելի մեծության տարբերությունը եղել է հոգուտ վարկային պորտֆելի ու 2018 առաջին եռամսյակում կազմել 110 203 մլն ՀՀ դրամ: Մեկ միավոր ավանդներին համահունչ՝ վարկային պորտֆելի գերազանցումը 1.36 գործակցով կամ 136%-ով նկատվել է 2008 թվականին, իսկ ուսումնասիրվող տարիների առումով՝ 2018 թվականին՝ 1.07 անգամ: Ընդ որում, 2008թ. արդյունքն ուսումնասիրված տասը տարիների ընթացքում եղել է առավելագույնը: Հաշվարկը կատարվել է վարկային պորտֆելի մեծությունը հարաբերելով ավանդների մեծությանը և ոչ թե հակառակը՝ նպատակ ունենալով ամբողջ թվերով ցույց տալ, թե ինչպես են ավանդները «ապահովում» վարկերի առաջընթացը:

Ընդհանուր բանկային համակարգն աշխատել է բավականին արդյունավետ, քանի որ դրական փոփոխություններ են արձանագրվել բոլոր ցուցանիշների դեպքում:

Ամփոփելով թեման իրականացրել ենք բանկերի գործունեության SWOT վերլուծություն:

Աղյուսակ 3. Բանկերի գործունեության SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	ԹուօՑԼ կողմեր
1.ԿԲ-ի կողմից կանոնակարգված և հետևողական վերլուծությունների իրականացումը, անընդհատ ռիսկերի որակական վերլուծություն և գնահատում,	1.Չաշխատող վարկերի առկայություն,
2.ՀՀ բանկային համակարգը նորմավորող կանոնակարգերի առկայությունը և վերլուծությունը,	1.Չաշխատող վարկերի առկայություն,
3.Բանկերի կապիտալով հագեցվածության բարձր կամ բավարար մակարդակ, ռիսկերի կառավարման արդյունավետ և ամբողջական համակարգ, ներգրավված և տեղաբաշխված միջոցների բազմազանեցում (դիվերսիֆիկացիա),	2.Որոշ ժամկետային խմբերում ակտիվների և պարտավորությունների միջև առկա բացասական ճեղքվածքներ,
	3.Նոր տեխնոլոգիաներին դանդաղ հարմարեցում, հաշվապահական հիմնական ծրագրի ոչ ամբողջական ճկունություն, նորագույն տեխնոլոգիաների կիրառման ցածր մակարդակ,
4.Վարկավորման ծավալի	4.ՓՄՁ ծառայությունների վաճառքի

ընդլայնմանը նպաստող ավելցուկային իրացվելիության առկայություն կամ բարձր իրացվելիության մակարդակ,

5.Ֆինանսական ցուցանիշների կայունություն, ընդհանուր կապիտալի համարժեքության բարձր մակարդակ, հիմնական ցուցանիշների բարելավում և շարունակական աճ,

6.Բանկերի կառավարման հստակ կանոնակարգվածություն, տարածքային արդյունավետ քաղաքականության իրականացում, մասնաճյուղերի լայն ցանց,

7.Վարկային պորտֆելի բազմազանեցում և գնային ճիշտ քաղաքականության վարում, բազմաբնույթ ծառայությունների և գործառնությունների առկայությունը:

մոդելների ներդրման գործընթացների անավարտություն, բիզնես գործընթացների ավտոմատացման ցածր մակարդակ,

5.Հաճախորդների սպասարկման նոր պահանջներին համապատասխան IT տեխնոլոգիաների թերի ներդրում,

6.Զուտ ոչ տոկոսային եկամտի գծով նկատվող բացասական ճեղքվածք, քիչ ծախսատար և երկարաժամկետ միջոցների բացակայություն,

7.ՓՄՁ հատվածի բիզնես-հաճախորդների ոչ բավարար մակարդակ,

8.Ընդհանուր բանկային համակարգի համակարգվածության ու ամբողջականության բարձր աստիճան:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
1.ՀՀ տնտեսության հնարավոր աճ,	1. ՀՀ-ի աշխարհաքաղաքական անբարենպաստ դիրքով պայմանավորված վտանգների առկայություն,
2.Ինտերնետի, կապի արագ զարգացում, վաճառքի էլեկտրոնային հնարավորություն,	2.Օրենքների հաճախակի փոփոխությունները,
3.Բնակչության եկամուտների, տրանսֆերտների և սպառման ծավալների հնարավոր աճ,	3.Ոչ կայուն տնտեսաքաղաքական վիճակ,
4.Գյուղատնտեսության ոլորտի հնարավոր զարգացում, նաև վարկերի պահանջի ավելացում,	5. Տեղական շուկայում ֆինանսական ծառայությունների զարգացման ցածր մակարդակ,
5.Թույլ մրցակցություն	6.Մակրոտնտեսական վիճակի

ցյուղատնտեսության վարկավորման
գործում,

6.Նոր և գործող որոշ
ինստիտուտների զարգացում՝
ավանդների երաշխավորման
հիմնադրամ, վարկային ռեզիստր,
վարկային բյուրո,

7.Արտաքին առևտրի դրական
կանխատեսումներ,

8.Միջազգային
կազմակերպություններից էժան
ռեսուրսների ներգրավվում,

9.Կենսաթոշակային
հիմնադրամների և կապիտալի
շուկայի զարգացում,

10.Բանկային համակարգը
կարգավորող ՀՀ օրենքների
կանոնակարգվածություն:

վատթարացում, ՀՀ տնտեսական աճի
դանդաղում, բնակչության ցածր
եկամուտների մակարդակ,

7.Տնտեսությունում առկա
սոցիալական խնդիրներ, ստվերային
տնտեսության բարձր մակարդակ,

8.Ներքանկային մրցակցության
ուժգնացում,

9.Փոխարժեքների տատանումներ,
անբարենպաստ դինամիկա

10.Բնակչության պահպանվող
անվտանգությունը ավանդների ներդրման
նկատմամբ, տեղեկատվության թերի
մակարդակը:

Բանալի բառեր - առևտրային բանկ, ֆինանսական հաշվետվություն,
ֆինանսական դիրքի ցուցանիշներ, բանկի շահութաբերություն, տնտեսական
նորմատիվ, SWOT վերլուծություն:

**Գայանե Ավետիսյան, Նախշուն Մելքումյան, «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի և
«Ալֆա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի ֆինանսական դրության համեմատական
վերլուծությունը** - Առևտրային բանկերի գործունեության վերլուծությունը
կարևոր նշանակություն ունի ինչպես իրենց՝ բանկերի, այնպես էլ նրա
բաժնետերերի ու հաճախորդների, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի համար:
Սույն հոդվածում ներկայացված է «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի և «Ալֆա-Կրեդիտ
Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի գործունեության վերլուծությունը շահութաբերության,
իրացվելիության, կապիտալի համարժեքության և շրջանառելիության
գործակիցների միջոցով: Տրվել է նաև բանկային համակարգի ընդհանուր
գնահատականը 2018թ. առաջին եռամսյակում:

Շատարվել է բանկերի գործունեության SWOT վերլուծություն՝ բացահայտելու համար արդի բանկային համակարգի ուժեղ և թույլ կողմերը, վերջինիս հնարավորությունները և վտագները:

Гайане Грачиковна Аветисян, Нахшун Мелкумян, Сравнительный анализ финансового положения ЗАО «Конверс Банк» и ЗАО «АКБА-Кредит Агриколь Банк» - Анализ деятельности коммерческих банков имеет большое значение как для самих банков, так и для их акционеров и клиентов, а также для Центрального банка Армении. В данной статье анализируется деятельность ЗАО «Конверс Банк» и ЗАО «АКБА-Кредит Агриколь Банк» с помощью коэффициентов рентабельности, ликвидности, достаточности капитала и оборачиваемости. Также был дан общий рейтинг банковской системы в первом квартале 2018 года. Был проведен SWOT-анализ деятельности банков с целью выявления сильных и слабых сторон современной банковской системы, ее возможностей и угроз.

Gayane Avetisyan, Nakhshun Melkumyan, Comparative analysis of the financial position of CJSC "Converse Bank" and CJSC "ACBA-Credit Agricole Bank" - Analysis of the activities of commercial banks is of great importance both for the banks themselves, and for their shareholders and customers, as well as for the Central Bank of Armenia. In this article, the activity of "Converse Bank" CJSC and "ACBA-Credit Agricole Bank" CJSC is analyzed with the help of coefficients of profitability, liquidity, capital adequacy and turnover. The general rating of the banking system in the first quarter of 2018 was also given. A SWOT analysis of banks was conducted to identify the strengths and weaknesses of the modern banking system, its capabilities and threats.

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ ԱՆԱՀԻՏ ԲՐՈՒՏՑԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի առաջատար մասնագետ

2019 թվականը հայ գրական-մշակութային և կրթագիտական կյանքում իրավամբ կարելի է համարել հոբելյանական: Տարին նշանավորում են մեծն Թումանյանի, Կոմիտասի, Շանթի, Օտյանի ծննդյան 150-ամյակները, հայոց մայր բուհի՝ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակը: Նշանակալից այդ իրողությունները ևս մեկ առիթ են՝ անդրադառնալու հոբելյարների այն մեծ դերին ու վաստակին, որով նրանք ոչ միայն հավերժորեն հիշվելու ու փառաբանվելու են, այլև սնելու, ապրեցնելու ու զարգացնելու են հայ միտքն ու ոգին, կրթելու և դաստիարակելու են բազում սերունդների:

Ներկա հոդվածը նվիրված է Հովհաննես Թումանյանի 150 և Երևանի պետական համալսարանի 100-ամյակներին: Հոդվածում ներկայացվում են մեր ժողովրդի կյանքում անփոխարինելի դեր ու նշանակություն ունեցող հայոց համալսարանի ստեղծման առնչությամբ մեծն Թումանյանի իրապարակումներում, ելույթներում և նամակներում արտահայտված մտահոգությունների ու մտադրությունների, ձեռնարկումների ու գործունեության վերաբերյալ որոշ դիտարկումներ:

Հարյուրամյակներ շարունակ պետականությունից զրկված Հայաստանում, չնայած բոլոր առումներով անբարենպաստ պայմաններին, կրթական-մշակութային հարցերը միշտ օրակարգային են եղել: Արդեն 19-րդ դարի երկրորդ կեսին հայ հասարակական-քաղաքական բազմաթիվ գործիչներ ու մտավորականներ տարաբնույթ խնդիրների շարքում բարձրացնում էին նաև ազգային դպրոցների կազմակերպման, դրանց առաքելության ու դերի կարևորման հարցերը: Ժամանակ առ ժամանակ տարբեր հարթակներում, մասնավորապես մամուլում քննարկվում էր նաև հայկական բարձրագույն տիպի դպրոց ունենալու անհրաժեշտության հարցը: Թեման ակտիվորեն արծարծվում և հրատապ է դառնում նոր հարյուրամյակի սկզբներին: Խնդրով լրջորեն մտահոգվածներից էր նաև Հովհաննես Թումանյանը: «Քսաներորդ դարի առաջին քառորդում հայ իրականության մեջ հասարակական-մշակութային մի շարք կարևոր նախաձեռնումներ, այդ թվում նաև հայկական համալսարան ստեղծելու նախափորձերը, կապված են մեր ազգային մեծագույն բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի

անվան հետ»¹,- գրում է գրականագետ Ա. Ինձիկյանը: Իր ժողովրդի ճակատագրով մտահոգ, նրա ցավով այրվող ու նրա համար վառ ապագա՝ նոր կյանք ակնկալող մտավորականը բազմիցս է անդրադարձել կրթության ու դաստիարակության հասարակական դերին, դպրոցի՝ իբրև երկրի շենացման, ժողովրդի բարօրության, ազգային ինքնության կարևոր գրավականներից մեկի անհրաժեշտության հարցերին:

Աշխարհաճանաչության և ինքնաճանաչության, առաջընթացի ու զարգացման կարևոր նախապայմաններից մեկը կրթությունն է, մասնավորապես դպրոցական կրթությունը, ինչին ևս անդրադարձել է Թումանյանն իր թե՛ գեղարվեստական ու հրապարակախոսական ստեղծագործություններում և թե՛ գործնականում: Այս առումով հատկանշական է նրա մասնակցությունը «Ծիածան» աշակերտական ընկերության գաղտնի պարապմունքներին, որտեղ ուսանելու էին հավաքվում տարբեր դպրոցների բազմաթիվ աշակերտներ: Ընկերության առաջնահերթ խնդիրն էր ուսումնասիրել հայոց լեզուն, գրականությունը, պատմությունը, ինչպես նաև ծանոթանալ քաղաքական ուսմունքներին: Քննարկվում էր նաև հայկական հարցը: Գրականագետ Հ. Թամրազյանը նշում է, որ այդ շրջանում արդեն գրական, քաղաքացիական վերելք ապրող երիտասարդ գրողը հաճախ էր մասնակցում ընկերության ընդհանուր ժողովներին, գաղտնի, բայց բազմամարդ հավաքներին, ինչը ոգի և շունչ էր բերում պատանեկությանը: Նա այդ ընկերության «Մայր խմբի» դասախոսներից էր, դասավանդում էր հայ գրականություն, դասերի ընթացքում ունկնդիրների հետ ազատ, անկաշկանդ զրուցում գրական տարբեր շրջանների հեղինակներին շուրջ, և դա մեծ հաճույք էր պատճառում ուսանողներին²:

Հայրենասեր գործիչը բազմիցս է անդրադարձել հայ գրականության, հայոց լեզվի, ազգային պատմության ու մշակույթի՝ որպես ազգային ինքնագիտակցության ու ինքնաճանաչության կարևոր պայմանների հարցին: Խորապես հավատալով հայի «կուլտուրական ուժին»՝ Թումանյանը գրում է. «Ունենալ հարուստ, ապահով դպրոցներ և ուժեղ գրականություն՝ կնշանակի ամուրի ու պատվավոր կանգնել լուսավոր ազգերի շարքում»³: Դպրոցն ու գրականությունը դիտարկելով որպես անբաժանելի հասկացողություններ՝ նա նշում է. «Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը դպրոցի բովանդակությունը, երկուսը միացած են պայծառ ու լուսավոր ուժով, որով հզոր ու անխորտակելի են դառնում ժողովուրդները ու մտնում են կուլտուրական ազգերի եղբայրության մեջ»⁴: Մեծ ազգասերը ինքնաճանաչությամբ է պայմանավորում նաև այլ ժողովուրդների,

¹ Ա. Ինձիկյան, Հ. Թումանյանը և հայկական համալսարանը, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 2, 1967, էջ 185:

² Տե՛ս Հ. Թամրազյան, Հովհաննես Թումանյան, Բանաստեղծը և մտածողը, Եր., 1995, էջ 74:

³ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու չորս հատորով, հ. 4, Եր., 1969, էջ 183:

⁴ Հովհ. Թումանյան, Ընտիր երկերեկու հատորով, հ. 2, Եր., 1985, էջ 341:

մասնավորապես հարևաններին մեր ճանաչելու և նրանց կողմից ճանաչվելու գործոնը: Հոգվածներից մեկում անդրադառնալով այն խնդրին, որ «մեր հարևան ժողովուրդները մեզ չեն ճանաչում, մենք էլ նրանց ու հաճախ ընկնում ենք ցավալի թյուրիմացությունների մեջ»¹, նա ավելի մեծ ցավ է համարում այն, որ մենք մեզ էլ չենք ճանաչում: «Երկիր ունենք - չենք ճանաչում, պատմություն ունենք - չենք ճանաչում, ժողովուրդ ունենք - չենք ճանաչում, գրականություն ունենք - չենք ճանաչում, լեզու ունենք - չենք իմանում»², - գրում է նա: Դառնալով լեզվի խնդրին՝ ժողովրդական խոսքի մեծ վարպետը գրավոր և հատկապես գեղարվեստական ստեղծագործությունների համար պահանջում է ոչ թե «մաքուր» հայերեն, այլ գրագետ հայերեն: Այդ հարցում կարևորում է մասնավորապես լեզվական փոխառությունների և բարբառների դերը, երբ գրում է. «... թե՛ ժողովրդական, թե՛ գրական լեզվի մեջ լեզվական փոխառությունները եղել են միշտ, կլինեն միշտ, և շատ է գեղեցիկ, որ եղպես է. միայն թե պետք է իմանալ շնորհքով, խելացի առնել ու տեղը գործածել, ահա խնդիրը: Իսկ ինչ վերաբերում է ժողովրդական բարբառներից օգտվելուն, դա ոչ թե «դատապարտելի» է, այլ հենց դա է բնական ճանապարհը կայտառ ու կենդանի լեզու ստեղծելու»³: Այս առումով ուշագրավ առաջարկություն է ներկայացնում նաև «Հայկազյան ընկերությունը» հոդվածում. «Գրականություն ունենք, բայց դեռ մի ընդհանուր գրական լեզու չունենք: Եղածն էլ աղքատ ու աղճատ և անկազմակերպ: Պետք է հավաքել հայոց բարբառների, բովանդակ հայության լեզվական գանձերը, բառերն ու ոճերը, ամբարել, ուսումնասիրել ու օգտագործել, կազմել հայոց կենդանի բառարանը, ստեղծել հայոց ազգային գրական լեզուն»⁴:

Դիտարկելով 1916 թ. մայիսին գրողների ընկերությանը կից հայ գրականության դասընթացներ կազմակերպելու Թումանյանի մտադրության փաստը՝ Ա. Ինձիկյանը, վկայակոչելով Թումանյանի նամակները և բազմաթիվ վավերագրեր, նշում է, որ նույն թվականի աշնանը «վերաբարձրվում է հայկական ակադեմիա և հայկական համալսարան ստեղծելու խնդիրը և հիմք է դրվում մի ընկերության, որը հիշյալ հաստատությունների համար պիտի ապահովեր անհրաժեշտ միջոցները»⁵: Բնականաբար, խոսքը Հայկազյան ընկերության մասին է:

Ազգապահպանության, ազգային ինքնաճանաչության հարցում Թումանյանը առաջնային դեր էր վերապահում ինչպես դպրոցական, այնպես էլ համալսարանական կրթությանը և, իհարկե, գիտությանը: Վերջինիս առումով մեծ մտահոգություն ուներ հատկապես հայագիտության հետ կապված, ինչն արտահայտել է նաև վերոնշյալ «Հայկազյան ընկերությունը» հոդվածում:

¹ **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ չորս հատորով, նշվ. հ., էջ 75:

² Նույն տեղը:

³ **Հովհ. Թումանյան**, Ընտիր երկեր երկու հատորով, հ. 2, Եր., 1985, էջ 280:

⁴ **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ չորս հատորով, նշվ. հ., էջ 287:

⁵ **Ա. Ինձիկյան**, նշվ. աշխ., էջ 186:

Պատասխանելով հոետորական իր իսկ հարցադրմանը, թե ինչու է ստեղծվում Հայկազյան ընկերությունը, Թումանյանն անդրադառնում է նաև ազգային գիտության վատթար վիճակին: «Գիտություն չկա մեր մեջ,- գրում է նա:- Ե՛վ դպրոց, և՛ գրականություն, և՛ հրապարակախոսություն, և՛ հասարակական ու ազգային գործեր մեծ մասամբ հիմնված են տգիտության վրա: Կենտ ու հատիկ հայ գիտնականներն էլ փախչում են մեր մթնոլորտից, զբաղվում են ուրիշ գործերով կամ հեռանում, օտարանում են ու օտար լեզվով են զբաղվում գիտությամբ»¹: Խնդրի լուծման ճանապարհներից մեկը Թումանյանը համարում է հայ գիտնականներին համախմբելը, հայերեն գիտություն, հայ գիտնականների կաճառ, գիտության օջախ, Հայկական ակադեմիա ստեղծելը:

Անշուշտ, հայերենով գիտության զարգացման կարևոր նախապայմանը և հաջողության գրավականը հայեցի բարձրագույն կրթությունն է, ինչն անհրաժեշտ էր կազմակերպել հայոց համալսարանում, որի մասին երագում էր մեծ հայրենասերը: «Եվ պետք է ստեղծել Հայոց համալսարանը, ուր կարելի լինի բարձրագույն գիտությունները ավանդել ու սովորել հայերեն լեզվով: Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցանել ու պահել մի գիտության տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի մեծ ջահ,- Հայկական Համալսարան»²,- գրում է Թումանյանը՝ համոզված, որ հայ ժողովուրդը կարող է դա անել: Ազգապահպան կարևոր այդ գործում հայրենակիցներին ներգրավելու, թերևս նրանց մեջ պատվախնդրությունը բորբոքելու նպատակով նա վկայակոչում է իտալացիների օրինակը՝ նշելով. «Եթե իտալացին կարող է պատերազմի դաշտում-խրամատում համալսարան բաց անի և զբաղվի գիտությունով ու գեղարվեստով՝ մենք ինչո՞ւ չենք կարող խրամատներից էսքան հեռու զբաղվել նույն գիտությունով ու գեղարվեստով»³: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Թումանյանը համալսարանը տեսնում է ժողովրդից անբաժան: Դա արտահայտվում է նշված հոդվածի եզրափակիչ տողում. «Ինչ որ մենք կլինենք՝ մեր Համալսարանն էլ մեզ հետ»⁴:

Թումանյանը՝ իբրև մեծ հումանիստ, մտահոգվում էր նաև այլ ժողովուրդների, հատկապես հարևանների խնդիրներով, ոգևորվում նրանց հաջողություններով: Այս առումով ուշագրավ փաստեր կան՝ կապված Թիֆլիսում վրացական համալսարանի ստեղծման հետ: Վրաց մտավորական Մերգո Ջորբենաձեն «Հովհաննես Թումանյանը և Թիֆլիսի համալսարանը»⁵ հրապարակման մեջ երախտագիտության մեծ զգացումով է ներկայացնում

¹ «Հորիզոն», 1917, թիվ 94:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ «Ուղեցույց աստղը (Վրաց մտավորականները Հովհաննես Թումանյանի մասին)», ժողովածու, կազմ. և վրացերենից թարգմ. Հ. Բայրամյան, Եր., 1999, էջ 168-174:

Թումանյանի վերաբերմունքը այդ խնդրի նկատմամբ: Հրապարակման մեջ կարդում ենք, որ 1917 թ. դժվարին պայմաններում վրաց ժողովուրդը ևս տոգորված էր ազգային համալսարան ստեղծելու բուռն ցանկությամբ: Նույն թվականի հոկտեմբերի 25-ին Հովհ. Թումանյանը վրացական համալսարանի ընկերության վարչությանն է նվիրում հարյուր ռուբլի (ոսկով) և ընկերության վարչության ակտիվ անդամներից մեկի անունով ուղարկում է ջերմաշունչ մի նամակ, որում մասնավորապես գրում է. «Միայն գիտությունը, գրականությունն ու արվեստն են լցնում ժողովուրդներին բաժանող անդունդը, և միայն դրանք կստեղծեն լավագույն կյանքն ու ճշմարիտ մարդուն»¹:

Հայոց համալսարան ստեղծելու անխուսափելի պահանջի մասին Թումանյանը խոսում է նաև «Ուղիղ ճանապարհը» հոդվածում, որտեղ անդրադառնալով 1917 թ. մայիսի 11-ին Մոսկվայում տեղի ունեցած ռուս առաջադեմ գիտնականների ու արվեստագետների համաժողովին՝ նշում է. «Բոլորը միաձայն իրենց ճառերում Ռուսաստանի հիմնական դժբախտությունը որոնում են ու գտնում են ետամնացության մեջ, որի մեջ պահում էր հին բռնապետական կառավարությունը»²: Այս առնչությամբ Մաքսիմ Գորկու արտասանած ճառը համարելով «մի կրակոտ ջատագովություն գիտությանը»՝ Թումանյանն ընդգծում է ռուս գրողի այն միտքը, ըստ որի՝ հոգեկան ստրկությունն ինչ միայն գիտությունը կարող է ազատել: Դառնալով այն խնդրին, որ մենք շատ ու շատ ավելի ենք հետամնաց, ուստի ավելի խոր պիտի զգանք մեր հոգևոր ստրկությունը՝ մեծ հայասերը գտնում է, որ հետամնաց վիճակից դուրս գալու և հոգևոր ստրկությունից ազատվելու համար պետք է հետևել աշխարհի առաջավոր ժողովուրդների ու նրանց լավագույն զավակների փորձին, հիմնել ու ազգովին պաշտպանել Հայոց համալսարանը, Հայոց ակադեմիան, զարգացնել ու ծավալել գիտությունը, գրականությունն ու գեղարվեստը³: Թումանյանը հավատացած էր, որ իր և շատ-շատերի երազանքն իրականանալի է, և ապավինում էր հայի հզոր ներուժին, նրա անկոտրում կամքին, հարատևելու նրա բնական, բայց յուրօրինակ ձգտումին: «Եվ մենք ամեն կողմից ընդունակ ենք էս բարձր նպատակներին հասնելու, լավագույն ազգերի բարձրությանը հասնելու, իսկ էս ամենին հասնելու համար արդեն ճանապարհը բաց է մեր առջև, ուղիղ ու պայծառ»⁴, - գրում էր նա:

Համալսարանի հիմնադրումը, սակայն, կապված էր բազում խնդիրների հաղթահարման հետ, որոնցից մեկն էլ պրոֆեսորադասախոսական անհրաժեշտ կազմ չունենալն էր: Այդ մասին Թումանյանը նշում է Հրաչյա Աճառյանին հասցեագրված՝ 1917 թ. օգոստոսի 11-ի թվակիր նամակում՝ միաժամանակ

¹ Նույն տեղում, էջ 169:

² **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ չորս հատորով, նշվ. հ., էջ 289:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 291:

⁴ Նույն տեղում:

հայտնելով, որ պրոֆեսուրայի բացակայության պատճառով «Որոշվեց՝ փոխանակ համալսարանը բանալու՝ առայժմ մեր գիտության մարդկանցից ոմանց հնարավորություն տալ Հայկազյան Ընկ. միջոցներով՝ Ռուսաստան թե արտասահման՝ պատրաստվելու առաջիկա համալսարանի համար»¹:

Ստեղծված բարդ ու դժվարին պայմաններում համալսարանի հիմնադրումը թեև հնարավոր չեղավ, սակայն Թումանյանի և նրա գաղափարի համակիրների ջանքերը իզուր չանցան: Դրանք հիմնավոր հող նախապատրաստեցին այն մեծ գործի համար, որ պիտի իրականացվեր կարճ ժամանակ անց իր պետականությունը վերագտած ժողովրդի կյանքում: Վերջապես, 1919 թ. մայիսի 16-ին Հայաստանի առաջին հանրապետության Նախարարների խորհուրդը ընդունեց որոշում՝ Երևանում համալսարան հիմնելու մասին²: Հիմնադրվեց Հայաստանի համալսարանը, իրականացվեց հայ ժողովրդի լավագույն գավակների, նրանց թվում և Հովհաննես Թումանյանի մեծագույն երագանքներից մեկը: Եվ արդեն շուրջ հարյուր տարի հայոց համալսարանը՝ իբրև մի մեծ ու վառ ջահ, իր կենսատու անսպառ լույսն է սփռում դարերից եկած և դեպի դարեր գնացող հայ ժողովրդի ճանապարհին:

Բանալի բառեր – Ամենայն հայոց բանաստեղծ, հայկական համալսարան, կրթություն, գիտություն, գրականություն, լեզու, ժողովուրդ, ինքնաճանաչություն:

Անահիտ Բրուտյան , Ամենայն հայոց բանաստեղծը՝ հայոց համալսարանի ստեղծման հարցի շուրջ - Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը Արարատի նման անհաս էր ոչ միայն իր գրական-գեղարվեստական ստեղծագործություններով, այլև իր ազգասիրական-հասարակական գործունեությամբ: Վերջինիս առումով անուրանալի են նրա ջանքերը կրթամշակութային օջախների հասարակական դերի կարևորման, ազգային դպրոցի, մասնավորապես բարձրագույն դպրոցի՝ հայկական համալսարանի ստեղծման ուղղությամբ: Հռչակվածում դիտարկվում են Թումանյանի բազմաթիվ հրապարակումներում, նամակներում ու ելույթներում այդ կարևոր խնդրի առնչությամբ արված առաջարկները, հարցադրումները, վերլուծություններն ու եզրահանգումները:

Анаит Брутян , Всеармянский поэт о создании армянского университета – Всеармянский поэт Ованес Туманян был недоступен, как Священная гора Арарат, не только своими литературно-художественными произведениями, но и патриотическо-общественной деятельностью. Последняя проявилась в стараниях поэта, направленных на поощрение роли образовательно-культурных учреждений

¹ **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ չորս հատորով, հ. 4, Եր., 1969, էջ 411:

² Տե՛ս **Լ. Պ. Ղարիբջանյան**, Երևանի պետական համալսարանը 1919-1930 թթ., Եր., 1994, էջ 35:


и создание национальной школы высшего типа – армянского университета. В данной статье рассматриваются предложения, вопросы, анализы и выводы, сделанные в многочисленных публикациях, письмах и выступлениях Туманяна по этому важному вопросу.

Anahit Brutyan, The All-Armenian Poet, reflecting upon the issue of the establishment of the Armenian university – The All-Armenian Poet Hovhannes Tumanyan was as unreachable as the Holy Mount Ararat not only for the fictional works that he created but also for the patriotic-social activities undertaken by him. As to the latter, it is worth mentioning his efforts directed towards the promotion of social role of educational-cultural establishments and creation of national school, particularly of a higher education institution - the Armenian university. The suggestions, issues, analyzes and conclusions concerning the mentioned important problem highlighted in Tumanyan's various publications, letters and speeches are observed in the present article.

**«ՈՉ ՄԻ ՇԱԲԱԹ ԱՌԱՆՑ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ». ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՑԱՆՔԻ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՆՈՐ ԶԵՎԱԶԱԾՈՒ
ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

Բանասիրական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ, հայ գրականության ամբիոնի դոցենտ

Ինչպե՞ս հայ մեծ գրողների ստեղծագործությունները, նրանց կյանքի ուսանելի ու դաստիարակչական մեծ նշանակություն ունեցող դրվագները դարձնել ժամանակակից տեխնոլոգիապես հագեցած, տեղեկատվական աղմուկով, ագրեսիվ գովազդով ու ժամանց-գլարճանքներով լցված աշխարհում ապրող մարդուն հոգեհարազատ ու հետաքրքիր: Ինչպե՞ս է ընդհանրապես հնարավոր գեղարվեստական գրականությունը դարձնել մարդկանց օրվա, շաբաթվա, տարվա բաղադրիչը, վերադարձնել ընթերցանության սովորությունը: Այս հարցերը, հայ գրականությունը ժամանակակից մարդու պահանջներին համապատասխան ներկայացնելու ցանկությունը ծնունդ տվեցին մի հետաքրքիր, իր բնույթով նմանը չունեցող գրքի՝ ընտրանի-օրագրի ձևաչափին, որի վերնագիրն է՝ «Ոչ մի շաբաթ առանց բանաստեղծության»:




Այս խորագրով երկու գրքերը՝ իմ կազմությամբ, խմբագրությամբ և առաջաբաններով հրատարակել է «Զանգակ» հրատարակչությունը՝ 2016¹ և 2017

¹ Ոչ մի շաբաթ առանց բանաստեղծության, ընտրանի-օրագիր 2017(կազմ. և խմբագ. Հ. Համբարձումյան), Երևան, «Զանգակ» 2016:

թվականներին¹: Իսկ արդեն այս՝ թումանյանական տարվանն ընդառաջ հրատարակվեց «Ոչ մի շաբաթ առանց Թումանյանի»² ժողովածուն: Ինչո՞ւ ընտրանի, ինչո՞ւ օրագիր և ո՞րն է այս ձևաչափի նորությունը:

Սոաջին «Ոչ մի շաբաթ...» նվիրված էր անցած երկու և կես տասնամյակի բանաստեղծությանը: Գրքում ընդգրկված էին գրական մամուլում, առանձին գրքերում նաև անտիպ 52 բանաստեղծների 52 բանաստեղծություն: Այսինքն՝ մեկ հեղինակի մեկ գործ, տարվա յուրաքանչյուր շաբաթին համապատասխան: Ընդ որում, ստեղծագործություններին կողքին մեկ ամբողջական էջ նախատեսվում է առօրյա գործերի և նշումների համար, ըստ շաբաթվա օրերի: Ըստ այդմ էլ ստացվում է բանաստեղծական ընտրանի-օրագիր:



Անկախության բանաստեղծության ընտրանի հրատարակելու նպատակը գրական պարբերականներում, կամ գրադարակներում նիքիող գրքերում տեղ գտած և հանրության լայն շրջանակներին ու հատկապես նոր ընթերցողին անձանոթ անկախության շրջանի պոեզիայի ներկայացումն էր նոր ձևաչափով:

Ցանկություն կար մեկտեղել հայտնի ու անհայտ բանաստեղծներին, հիշել նրանց ժամանակին գրական քննարկումների առիթ տված գրքերը, առանձին արժեքավոր ստեղծագործություններ, որոնք այսօր գրական շրջանառության մեջ չեն, սակայն կարևոր դերակատարություն են ունեցել հետանկախության պոեզիայի ձևավորման ու զարգացման գործում:

¹ Ոչ մի շաբաթ առանց բանաստեղծության, ընտրանի-օրագիր 2018(կազմ. և խմբագ. Հ. Համբարձումյան), Երևան, «Զանգակ» 2017:

² Ոչ մի շաբաթ առանց Թումանյանի, ընտրանի-օրագիր 2019 (կազմ. և խմբագ. Հ. Համբարձումյան), Երևան, «Զանգակ» 2018:

Միաժամանակ ժողովածուն անկախության շրջանի պոեզիան վերաբժնորելու հնարավորություն էր տալիս ու նաև որոշակի հարգանքի տուրք էր այն հեղինակներին, որոնք արդեն մեզ հետ չեն: Ես ցանկանում էի, որ որ բանաստեղծությունը, որը ցավոք մեր կյանքում օրստորե ավելի քիչ տեղ է գրավում, նահանջում իր դիրքերից, կորչում տեղեկատվական հոսքերի ու սոցիալական, տնտեսական, քաղաքական կարևոր ու անկարևոր քննարկումների մեջ, նաև այս ժողովածուի շնորհիվ գտներ իր ընթերցողին, դառնար նրա տարվա, շաբաթվա, օրվա կարևոր մասը, ծառայեր իր նախնական նպատակին՝ վեհացներ ընթերցողին, բարձրացներ նրա հայացքը կենսական ու կենցաղային տարաբնույթ հարցերից, բացահայտեր հոգեմտավոր նոր տարածքներ:




Նախագիծը մեծ հետաքրքրություն առաջացրեց և հաջորդ տարի հրատարակվեց արդեն երկրորդ նույնանուն ժողովածուն, որն այս անգամ ներկայացնում էր հայ պոեզիայի շուրջ մեկ և կես հարյուրամյակը: Ընտրանիում ներառված ամենից վաղ թվագրվող բանաստեղծությունը Սմբատ Շահագիզի «Երազն» (1864 թ.) էր, իսկ ժամանակագրորեն վերջինը՝ Վահագն Աթաբեկյանի «Voca Me»-ն (2017 թ.):

Այս մեծ ընդգրկումը, ժամանակակից ընթերցողին, ըստ իս հնարավորություն էր տալիս հետևելու հայ պոեզիայի զարգացմանը արևմտահայ-սփյուռքահայ, արևելահայ-խորհրդահայ և հետանկախության գրական-մշակութային իրա-կանություններում, վերստին ընթերցելու հայտնի ու սիրված, արևմտահայ ու արևելահայ դասական հեղինակների ստեղծագործությունները, վերհիշելու խորհրդահայ պոեզիայի այսօր արդեն

մոռացվող անուններ, ժամանակին սիրված, նույնիսկ երգերի վերածված գործեր, նաև բացահայտելու ընթերցողների լայն շրջանակին անհայտ հեղինակների և ստեղծագործություններ: Այս տեսանկյունից ընտրանին հնարավորություն էր տալիս ստուգելու նախկին տպավորություններն ու զգայությունները:

Ոգևորվելով նախորդ ժողովածուների հաջողություններից և ցանկանալով հարգանքի տուրք մատուցել Ամենայն հայոց բանաստեղծի հիշատակին, 2018 թվականի վերջին նույն ձևաչափով լույս տեսավ արդեն նախագծի երրորդ՝ «Ոչ մի շաբաթ առանց Թումանյանի» գիրքը:

Պահպանելով արդեն հրատարակված ժողովածուների ձևաչափը, այն է՝ շաբաթվա օրերն ընդգրկող, ամենօրյա նշումների համար նախատեսված հատված և գրական մաս, նոր ժողովածուում ներառված են Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները, նաև շաբաթվա որոշակի օրերի հետ կապված՝ նրա կյանքի դրվագներ, կարևոր իրադարձություններ, հատվածներ նամակներից, հուշերից, լուսանկարներ և այլն:



Գրքում ընդգրկված նյութերին ծանոթությամբ ընթերցողը կարող է հետևել երևելի հայի, հանճարեղ բանաստեղծի և մեծ մարդու կյանքի ու ստեղծագործության ընթացքին: Տեսնել բնության, արվեստի ու մարդկանց հետ շփումներից ծնվող հիացմունքն ու ներշնչանքը, նաև հայ իրականության, կյանքի ու կենցաղի տարբեր երևույթներից առաջացած հիասթափությունները: Ծանոթանալ Հովհաննես Թումանյանի բանաստեղծական փնտրումների ընթացքին, գրականության ու արվեստի նկատմամբ հայացքներին և, իհարկե, կարդալ հայտնի ու սիրված, երբեմն էլ լայն ընթերցողին ոչ այնքան ծանոթ ստեղծագործությունները:

Ընդ որում, նյութերը դասավորված են տարվա որոշակի շաբաթներին համապատասխան, այսինքն մենք տեսնում ենք, թե այդ շաբաթվա ընթացքում, բայց տարբեր տարիներին ինչ ստեղծագործություններ է գրել կամ հրատարակել հեղինակը, ում հանդիպել, ինչ նամակներ գրել կամ ստացել, ինչ հոդված գրել, ընտանեկան ու հասարակական ինչ իրադարձությունների մասնակից դարձել: Նյութերի դասավորման այս սկզբունքը, կարծես հրավեր է ժամանակակից ընթերցողին ճանապարհորդելու Հովհ. Թումանյանի հետ նրա կյանքի օրերում:

Աշխատել եմ գրքում ընդգրկել Հովհաննես Թումանյանի կյանքի այն դրվագներն ու ստեղծագործությունները, որոնք դպրոցական դասագրքերում չկան, հետևաբար ծանոթ չեն լայն հանրությանը, սակայն դաստիարակչական ու ճանաչողական մեծ նշանակություն ունեն, նպաստում են բանաստեղծի ստեղծագործության նկատմամբ նոր վերաբերմունքի ձևավորմանը, նրա՝ որպես մարդ ու բանաստեղծ տեսակի ճանաչողությանը:

Օրինակ, մայիսի 20-26-ն ընկած շաբաթվա էջին, տեսնում ենք, որ 1898 թվականի մայիսի 22-ին Հովհ. Թումանյանը գրում է ոչ այնքան հայտնի «Մոռացված վարդեր» բանաստեղծությունը, որը նվիրված է նրա մտերիմ ընկեր՝ Փիլիպոս Վարդապարյանի քրոջը՝ Մարիամին¹: Համառոտ ներկայացված է բանաստեղծության ստեղծման կենսական շարժառիթը, առկա է Մարիամի լուսանկարն ու այն բացիկը, որի վրա Հովհ. Թումանյանը գրել է բանաստեղծությունը: Նպատակն այն է, որ ընթերցողը ոչ միայն կարդա բանաստեղծությունը, այլ իմանալով դրա ստեղծման նախապատմությունը, տեսնի թե ինչպես է կենցաղային սովորական միջադեպը, մեծ բանաստեղծի գրչի տակ վերածվել պոեզիայի: Բանաստեղծության, որը կարող ես ընթերցել ու վերլուծել նույնիսկ առանց նրա ստեղծման շարժառիթներն իմանալու: Այն խորհրդածել է տալիս մարդու ու նրա զգացմունքների նկատմամբ ուշադրության, լավ վերաբերմունքի հանդեպ շնորհակալության, անտարբերության մերժման, կյանքի յուրաքանչյուր պահը ճիշտ ժամանակին գնահատելու թեմաների մասին:

Առավել հայտնի է ու սիրված Հովհ. Թումանյանի մեկ այլ բանաստեղծություն՝ «Սիրիոսի հրաժեշտը» (ԵԼԺ, 1, 308, 641), սակայն քչերը գիտեն վերջինիս ստեղծման նախապատմությունը: Բանաստեղծությունն ուշագրավ է նրանով, որ գրվել է 1922 թվականին հունիսին, երբ Հովհ. Թումանյանին է այցելել ապագա մեծ աստղագետ Վիկտոր Համբարձումյանը, որն այդ ժամանակ 14 տարեկան էր, սակայն արդեն դասախոսություններով էր հանդես գալիս Թիֆլիսում: Վ. Համբարձումյանը Հովհ. Թումանյանին պատմել է Սիրիոս անունով աստղի մասին և այդ պատմությունը այնքան է տպավորել բանաստեղծին, որ ստեղծվել է երկրից մեծ արագությամբ հեռացող աստղի մասին չքնաղ բանաստեղծությունը՝ մարդկային

¹ **Հովհ. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 1, Երևան, 1988, էջ 168: Նախապատմությունը տե՛ս նույն տեղում, էջ 594: Նույն աղբյուրին հետագա հղումների դեպքում՝ հատորն ու էջերը կտրվեն տեղում փակագծերի մեջ:

կյանքի կարճատևության, անցողիկության և տիեզերական հավերժական ժամանակի հարաբերության մասին:

Ժամանակակից ընթերցողներին հատկապես հետաքրքրում են Հովհ. Թումանյանի կյանքի, ճանապարհորդությունների, նախասիրությունների մասին պատմությունները: Գրքում դրանք ներկայացվել են համապատասխան լուսանկարների, ժամանակակիցների հուշերի ուղեկցությամբ: Օրինակ, օգոստոսի 12-18-ն ընկած շաբաթվա էջում ներկայացվում է նույն օրերին, սակայն 1901 թվականի բանաստեղծի ճամփորդությունը Ջավախք՝ ստեղծագործական հղացման փուլում գտնվող «Թմկաբերդի առումը» և «Փարվանա» երկերի հետ կապված վայրերը՝ Թմուկ բերդի ավերակները և Փարվանա լիճը տեսնելու: Կից տրվում է նաև բանաստեղծի լուսանկարը, որտեղ նա հեռադիտակով դիտում է Թմուկ բերդի ավերակները և ներկայացվում են Ջ. Տեր-Գրիգորյանի և Վ. Շահպարտյանի հուշերը: Հաջորդ էջում կարող ենք գտնել «Թմկաբերդի առումը» պոեմից հատված: Շարունակության մեջ ներկայացվում է Հովհ. Թումանյանը Փարվանա լճի ափին լուսանկարը և տրվում է նրա այս այցի մասին Ավ. Իսահակյանի հուշը: Հայտնի ստեղծագործության ներկայացման այս կերպը՝ լուսանկարի, ստեղծագործության, ժամանակակիցների հիշողությունների համադրությունը, հնարավորություն են տալիս ընթերցողին առավել ամբողջական ու խորությամբ ընկալել ստեղծագործությունը, ճանաչել նրա ստեղծման ակունքները, միաժամանակ տեսնել Թումանյան մարդուն իր հետաքրքրություններով ու սովորություններով:

Այս տեսանկյունից մի քանի առումներով ուշագրավ է գրքում ընդգրկված մի լուսանկար. լուսանկարում Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկն է, նկարն արվել է Դսեղում՝ 1900 թվականի հուլիսի կեսերին և հեղինակը Հովհ. Թումանյանն է: Գրքի այս հատվածը պատկերացում է տալիս մեծ բանաստեղծի՝ լուսանկարելու նախասիրության, Խրիմյան Հայրիկի հետ մտերմության, նրան նվիրված ստեղծագործությունների մասին: Նույն էջին կարող ենք գտնել Հովհ. Թումանյանի՝ նույն օրերին Մարիամ Թումանյանին այս առիթով գրված նամակի հատվածը, որտեղ բանաստեղծը պատմում է կաթողիկոսի հետ հանդիպման ու զրույցի մասին, նաև ցավում, որ ժողովուրդը պատշաճ մակարդակով չի ընդունում նրան. «Պետք է ասեմ, որ սաստիկ անշուք անցավ Հայրիկը, և ժողովուրդը՝ գյուղացին, գրեթե տեղից չշարժվեց: Որքան ցավալի էր այս երևույթը, սրանից ավելի տխուր տպավորություն էր անում Վեհի՝ իրան սվիտան ըստ ամենայնի: Զարմանալի է. մեր կյանքում իսկի լուսավոր, մխիթարական բան չկա, բարձր բան չկա: Արդյոք իմ հոռետեսությունի՞ց է այսպես, բայց ես հոռետես չեմ. իսկապես չկա»(ԵԼԺ, 9, 225):

Ընտրանի-օրագրի տարբեր էջերին կարելի է գտնել նաև ընթերցողական տարբեր սերունդների կողմից սիրված քառյակները, հայրենքի, հայ ժողովրդի

ժողովրդի ու իրականության ամենակնճռոտ հարցերը: Մեծ բանաստեղծը հստակորեն գիտակցում էր իր շնորհի գործությունն ու բանաստեղծի մեծ առաքելությունը՝ ստեղծագործությամբ, կյանքով ու գործունեությամբ լինել առաջնորդ անառաջնորդ ժողովրդի համար, բարձրաձայնել խնդիրների մասին ու հասարակությանը սթափության կոչ անել:

Մշտապես արդիական է Հովհ. Թումանյանի՝ գրքում բերված՝ 1907 թվականին «Փայլակ» օրաթերթում հրատարակված «Անկեղծ չենք» հոդվածը. «Երբեք այսքան մեծ չի եղել անկեղծության կարիքն ու կարոտը, ինչպես այսօր, և երբեք այսքան ահռելի չափերով չի հայտնվել կեղծիքը, ինչպես այսօր: Դարավոր կարգերի ու հասկացողությունների հեղաշրջումի օրը, պատմության ահավոր դատաստանի օրը»(ԵԼԺ, 6, 150):

Եվ այս ամենով հանդերձ, ապրելով բուռն ու դժվարին կյանքով Հովհաննես Թումանյանը մնաց պայծառ մարդ ու մտավորական՝ ժամանակակիցներին ու հետագա սերունդներին պարզեցնելով չքնաղ գրականություն, աշխարհին ու մարդուն պայծառ հայացքով, հոգատարությամբ ու սիրով վերաբերվելու մեծ պատգամ. «Եթե գրականությունը կյանքի հայելին է ասենք, ապա գրականության ամեն տեսակի ստեղծագործությունների աղբյուրը ամենից առաջ մարդու սիրտն է: Եվ երբ էսպես է, աշխատեցեք ձեր սրտերը պահել մաքուր ու լիքը ամենալավ ու ամենաբարի զգացմունքներով և աշխարհքին ու մարդուն նայեցեք բարի սրտով ու պայծառ հայացքով: Եվ արդեն իրեն ստեղծագործական շնորհքի, բանաստեղծության բնությունն էղպես է իր ծնունդից: Դիցաբանությունն ասում է, թե Ապոլլոնը, որ բանաստեղծությունն է ներկայացնում և արևն է միաժամանակ, իր կյանքում երբեք մութն ու մռայլ չի տեսած: Որովհետև արևն է ինքը և իր հայացքն արևի, և ամեն մռայլ չքանում է նրա հայացքից: Արևի նման նայեցեք աշխարհքին»(ԵԼԺ, 7, 32-33):

Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության ներկայացման այս ձևաչափն, ըստ իս, հնարավորություն է տալիս ընդգրկուն պատկերացում տալու հեղինակի մասին, նոր կողմերից ներկայացնելու մեր մշակույթի մեծին, նրա ստեղծագործությունը դարձնելու ընթերցողի օրվա, շաբաթվա ու տարվա մշտական ուղեկիցը:

Վստահ ենք, որ հայ մեծերի ստեղծագործությունների նմանատիպ հրատարակությունները մշտապես կգտնեն իրենց ընթերցողին, կլցնեն նրա օրը, շաբաթն ու տարին բարձրարժեք բանաստեղծություններով, նուրբ զգայություններով, կօգնեն նրան անցողիկ օրվա, հոգսաշատ շաբաթների մեջ խորհելու ժամանակի ու հավերժի, գեղեցիկի ու վեհի, մարդու և հայրենիքի ճակատագրի մասին. այն ամենի, ինչի շնորհիվ պոետիկ խոսքը բոլոր ժամանակներում ապրեցնում է մարդուն և փոխում է աշխարհը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 1, «ՀՄՍՀ ԳԱ հրատ.», Երևան, 1988:

2. Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 6, «Գիտություն», Երևան, 1994:

3. Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 7, «Գիտություն», Երևան, 1995:

4. Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 9, «Գիտություն», Երևան, 1997:

5. Ոչ մի շաբաթ առանց բանաստեղծության, ընտրանի-օրագիր 2017, Երևան, «Զանգակ», 2016:

6. Ոչ մի շաբաթ առանց բանաստեղծության, ընտրանի-օրագիր 2018, Երևան, «Զանգակ», 2017:

7. Ոչ մի շաբաթ առանց բանաստեղծության, ընտրանի-օրագիր 2019, Երևան, «Զանգակ» 2018:

Բանալի բառեր - Հովհաննես Թումանյան, ոչ մի շաբաթ առանց Թումանյանի, Թումանյանի կյանք և ստեղծագործություն, մոռացված վարդեր, Սիրիուսի հրաժեշտը, Վիկտոր Համբարձումյան, Խրիմյան Հայրիկ:

Հայկ Համբարձումյան, «Ոչ մի շաբաթ առանց Թումանյանի», Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության ներկայացման նոր ձևաչափը - Հոդվածը նվիրված է Հովհաննես Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունը ներկայացնող «Ոչ մի շաբաթ առանց Թումանյանի» օրագիր-ընտրանուն: Գիրքը նոր ձևաչափով՝ այն է՝ շաբաթվա օրերն ընդգրկող, ամենօրյա նշումների համար նախատեսված հատված և գրական մաս, ներկայացնում է Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները, նաև շաբաթվա որոշակի օրերի հետ կապված՝ նրա կյանքի դրվագներ, կարևոր իրադարձություններ, հատվածներ նամակներից, հուշերից, լուսանկարներ և այլն:

Փաստվում է, որ գրքում ընդգրկված նյութերին ծանոթությամբ ընթերցողը կարող է հետևել երևելի հայի, հանճարեղ բանաստեղծի և մեծ մարդու կյանքի ու ստեղծագործության ընթացքին: Տեսնել, թե այդ շաբաթվա ընթացքում, բայց տարբեր տարիներին ինչ ստեղծագործություններ է գրել կամ հրատարակել հեղինակը, ում հանդիպել, ինչ նամակներ գրել կամ ստացել, ինչ հոդված գրել, ընտանեկան ու հասարակական ինչ իրադարձությունների մասնակից դարձել:

Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության ներկայացման այս ձևաչափը, ընդգրկուն պատկերացում է տալիս հեղինակի մասին, նոր

կողմերից ներկայացնում է մեր մշակույթի մեծին, նրա ստեղծագործությունը դարձնում է ընթերցողի օրվա, շաբաթվա ու տարվա մշտական ուղեկիցը:

Айк Амбарцумян, “Не недели без Туманяна”. Новый формат представлений жизни и творчества Ованнеса Туманяна - Статья посвящена книге-ежедневнике "Не недели без Туманяна", которая представляется как новый и интересный формат для презентации жизни и творчества великого армянского поэта. Уникальность книги в том, что жизнь и произведения Ованеса Туманяна представляются параллельно с ежедневником и с соответствием с той неделей года, в котором произошло то или иное событие или была создано произведение.

Hayk Hambardzumyan, “Not a week without Tumanyan. New format of the representation of life and literature of Hovhannes Tumanyan - "The article is devoted to the diary book "Not a week without Tumanyan", which is presented as a new and interesting format for the presentation of the life and work of the great Armenian poet. The uniqueness of the book is that the life and works of Hovhannes Tumanyan are presented in parallel with the diary and with the accordance with the week of the year in which that event occurred or the work was created.

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԴԻԱՆ՝ ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԱՌԴԱ ԱՆԱՍՏԱՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ

ԳԱԼՈՒՍՏ ՍԱՐՈՅԱՆ

ՀԹԿՊԻ, Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետ,
3-րդ կուրս, ՀԱՀ, Բիզնեսի բաժին,

Մուտք

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցան խաղաղ գործողություններով ուղեկցված ցույցեր, երթեր, քաղաքացիական անհնազանդության զանգվածային դրսևորումներ, որոնց արդյունքում երկրի վարչապետի պաշտոնում Սերժ Սարգսյանին փոխարինեց Նիկոլ Փաշինյանը: Այս քաղաքական շարժումը ստացավ «Թավշյա հեղափոխություն» անվանումը:

Թավշյա հեղափոխության կայացման գործում մեծ ներդրում ունեցավ հայաստանյան մեղիան: Ընդ որում, մեղիայի դերն առկա էր ինչպես հեղափոխության նախօրեին, այնպես էլ ընթացքում և հետհեղափոխական շրջանում: Կարծում ենք՝ այդ դերակատարության գիտական քննությունը կարող է որոշակիորեն բացահայտել հայաստանյան թավշյա հեղափոխության կայացման ընթացքն ու յուրահատկությունները:

Ուսումնասիրության համար նյութ են հանդիսացել 2017-2018 թթ. հայաստանյան մեղիադաշտի այն հրապարակումները, որտեղ շրջանառվել են Նիկոլ Փաշինյանի անունը, «Իմ քայլը» շարժումը կամ հեղափոխության իրականացման փաստը:

«Թավշյա հեղափոխություն». տեսական ակնարկ

Գիտական գրականության մեջ կան հեղափոխության տարբեր ընկալումներ: Որոշ քաղաքագետներ հեղափոխությունը սահմանում են որպես իշխանության բռնի փոփոխություն, մյուսները՝ սոցիալապես անապահով խավի պայքար հարուստների դեմ, երրորդները՝ հասարակ քաղաքացիների ընդվզում արտոնյալների դեմ¹, չորրորդները ընդհանրապես հեռուն են գնում և հեղափոխությունն անվանում հսկա «Տարտյուֆ»², քանի որ «այն կարողանում է զարմանալի հանճարեղությամբ բառերով կոծկել իր ահավոր գործերը, նա ստիպում է մարդկանց իր մասին դատել ոչ թե գործով, այլ խոսքով»³:

¹ Goldstone J. A., Revolutions. A Very Short Introduction. Oxford University Press, 2013, p. 3.

² Մելիերի նույնանուն կատակերգության հերոսը, որը հայտնի է որպես կեղծ բարեպաշտ:

³ Сорокин П. А., Социология революции, М.: РОССПЭН, 2005, стр. 308.

Հեղափոխության այսքան տարակերպ ներկայացումներն, ըստ էության, պայմանավորված են այն հանգամանքով, որ այն, պատմական զարգացումների ընթացքում, ունեցել է խիստ տարբեր դրսևորումներ: Ամեն դեպքում, եթե փորձենք համադրել տեսական դաշտում առկա հիմնական մոտեցումները, ապա հեղափոխությունը կսահմանենք որպես իշխանության մերժում, որը տեղի է ունենում զանգվածների մոբիլիզացման միջոցով՝ ի շահ սոցիալական արդարության և նոր քաղաքական ինստիտուտների ստեղծման¹: Ահա մոտավորապես այս փաստարկներն էլ դրված էին Նիկոլ Փաշինյանի հրապարակային տեքստերում: Դրանցում կար ևս մեկ կարևոր գիծ, որը մինչև վերջ շեշտադրում էր հեղափոխության առաջնորդը, այն է՝ հեղափոխական պաքարի ոչ բոլի լինելը: Դրանով պայմանավորված էլ այս հեղափոխությունն անվանվեց «թավշյա»:

Ինչ վերաբերվում է «թավշա հեղափոխություն» տերմինին, ապա այն մինչև այժմ առավելապես կապվում էր Չեխոսլովակիայում 1989 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցած ժողովրդական խաղաղ պայքարի հետ, որը հանգեցրեց կոմունիստական իշխանությունների համեմատաբար արագ օտարման և սոցիալիստական ռեժիմի ապամոնտաժման այս երկրում²: Ըստ էության, այն խորհրդանշում է իշխանության անցնում, ոչ բռնի փոփոխություն և ունեցել է տարբեր «հոմանիշներ» տարբեր ժամանակների հեղափոխություններում՝ վարդերի հեղափոխություն (Վրաստան), նարնջագույն հեղափոխություն (Ուկրաինա), կակաչների հեղափոխություն (Լրդգստան), դեղին հեղափոխություն (Ֆիլիպիններ) և այլն:

Ըստ էության, բռնությունից խուսափող բոլոր հեղափոխությունները որոշ իմաստով նման են իրար. դրանցում առկա է գործողությունների տրամաբանության միանման սկզբունք՝ տեխնոլոգիաների կիրառման որոշակի հաջորդականությամբ, բողոքի ակցիաներով և հակաիշխանական ելույթներով³: Ընդ որում, դրանք ոչ միայն ուսումնասիրության նյութ են տարբեր տեսաբանների համար, այլ հաճախ հենց տեսաբաններն են մշակում նման մեխանիզմներ: Օրինակ, ամերիկացի հասարակական գործիչ Ջին Շարպը մշակել է իշխանությունների դեմ պայքարի ոչ բռնի մեթոդների հաջորդականություն, որը կօգնի պայքարել դիկտատուրայի դեմ՝ չստեղծելով նոր դիկտատուրաներ: Շարպը վստահ է՝ դիկտատուրայի դեմ բռնի մեթոդներ կիրառելն անիմաստ է, զինված հեղափոխությունները երբեք չեն բերում

¹ Goldstone J. A., *Revolutions. A Very Short Introduction*. Oxford University Press, 2013., p. 4.

² Как рушатся диктатуры: 20 лет «бархатной» революции в Чехии и Словакии, Хартия '97, <https://charter97.org/ru/news/2009/11/17/23740/> 17.11.2009 г.

³ Наумов А. О., «Мягкая сила», «цветные революции» и технологии смены политических режимов в начале XXI века. М.: АРГАМАК-МЕДИА, 2016., ст.48.

հրավիճակի թեթևացման և դեմոկրատիայի հաղթանակի¹: Ուրեմն, պետք է գործել տրամաբանված և դիկտատուրայի թույլ կողմերի հաշվարկումով:

Ըստ էության, հայաստանյան թավշյա հեղափոխությունը ևս բխում էր այս տրամաբանությունից և հստակ օգտագործում էր նշված մեթոդները: Ընդ որում, այս մեթոդներն հիմնականում կիրառվում էին մեդիայի միջոցով:

Մեդիան սկսում է թավշյա հեղափոխել

Մեդիան թավշյա հեղափոխությունը սկսել էր փոքր-ինչ ավելի վաղ: Եթե մենք ապրիլն ենք նախանշում, որպես հեղափոխական գործողությունների նախադուռ, ապա մեդիայում հեղափոխության առաջնորդի մասին հիշատակումներն աճ արձանագրեցին 2017-ի դեկտեմբերից:

Այսպես, 2017 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին առկա են քիչ թվով հրապարակումներ՝ Փաշինյանի մասնակցությամբ: Մասնավորապես հայկական մեդիան ներկայացնում է նրա բացասական կարծիքը Լ. Տեր-Պետրոսյանի խաղաղության ծրագրի մասին², որոշ հրապարակումներ՝ կապված նրա խորհրդարանական ելույթների հետ³, ԱԺ միջանցքում Արտաշես Գեղամյանի բռնկումներով հարձակումը Նիկոլ Փաշինյանի վրա⁴ և այլն: Այս հրապարակումներում դեռևս չկա որևէ ակնարկ հեղափոխության մասին, չկա նաև Նիկոլ Փաշինյանի հեղափոխական կերպարը. նա սափրված է, ոչ սպորտային մարզավիճակում:

2017 թ. դեկտեմբերին, «Միվիլներ» հեռուստաընկերությամբ Թաթուլ Հակոբյանին տված հարցազրույցի ընթացքում Ն. Փաշինյանն արդեն ավելի նիհարակազմ է, իսկ խոսքը՝ փաստարկված է և հավասարակշիռ⁵:

Նույն ժամանակահատվածում Փաշինյանը կնոջ հետ հյուրընկալվում է ժամանցային բնույթի 2 հաղորդումների՝ Հանրային հեռուստաընկերության «Առավոտ լուսո» և «Շանթ» հեռուստաընկերության «Մամայի եփածն ուրիշ է»: Այս, առաջին հայացքից շատ անմեղ, հաղորդումներում շրջանառվում են հեղափոխության որոշ ատրիբուտներ. ամանորի անմիջապես նախօրեին հանրայինի եթերից հնչում է՝ «Զմեռ պապիկը ժողովուրդն է և քաղաքացին, և այդ Զմեռ պապիկն է որոշում ամեն ինչ»⁶: Իսկ հաջորդ օրը «Շանթ»

¹ Gene Sh., The Albert Einstein Institution, From Dictatorship to Democracy, A Conceptual Framework for Liberation, Fourth Edition, May 2010, p. 4-5.

² Մարտիրոսյան Ն., Նիկոլ Փաշինյան. Տեր-Պետրոսյանի ծրագրով հայկական կողմը երբեք չի հասնի Արցախի անկախությանը, Արմինֆո, http://arminfo.info/full_news.php?id=25030&lang=1, 30.03.2017թ.:

³ «Քուսնիկը պարոն գլխավոր դատախազին». Նիկոլ Փաշինյանը 4 դրվագ ներկայացրեց, «Երկիր մեդիա», <http://yerkirmedia.am/1political/nikol-pashinyan-quansh-datakhaz/>, 10.07.2017 թ.:

⁴ Հովհաննիսյան Բ., Բմ բռնկմանը քո խոսքին վնաս չէ, «Երկիր Մեդիա», <http://yerkirmedia.am/1political/nikol-pashinyan-aj-hardzakum/>, 05.10.2017 թ.:

⁵ Սերժ Մարգարյանը ինչու պետք է հեռանա. Նիկոլ Փաշինյան, «Միվիլներ», <https://www.youtube.com/watch?v=j2MIOCu2YkA>, 27.12.2017 թ.:


⁶ «Առավոտ լուսո», Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, <https://www.youtube.com/watch?v=DlyTZ13Vvoo>, 31.12.2017թ.:

հեռուստաընկերության եթերում, իբրև ամանորյա մաղթանք, Փաշինյանը հնչեցնում է՝ «Ուզում եմ, որ մյուս տարի, դեկտեմբերի վերջին ասենք արդեն, որ մենք ունենք լավ պետություն, ունենք հաղթանակ...»: Հաղորդման վերջում հնչում են՝ «Հենո՛, դուխո՛վ» բառերը հաղորդավարի և Փաշինյանի կողմից¹:

Արդեն մարտ ամսին Փաշինյանը հանրայինի եթերից ներկայանում է իբրև մարդ, ով չունի կուռքեր և չի ուզում նմանվել որևէ մեկին, ով ազդվել է Աշոտ Բլեյանից, Բաբկեն Արարքցյանից, Վազգեն Մանուկյանից, Լևոն Տեր-Պետրյանից, Վանո Սիրադեղյանից, հեռակա կարգով՝ Նելսոն Մանդելայից և Էռնեստո Չե Գևարայից: Նա երեխաների ուսմանը հետևող հայր է և սիրող ամուսին, հավատացյալ է և չնայած նրան, որ մշտապես ենթարկվել հետապնդումների, անգամ բանտարկվել, այդուհանդերձ երբեք չի հեռանա Հայաստանից²:

Ինչպես նկատեցինք, Նիկոլ Փաշինյանի անունն անհամեմատ ավելի է շրջանառվում հայաստանյան մեդիադաշտում՝ սկսած 2017-ի դեկտեմբերից (Տե՛ս դիագրամ 1): Ընդ որում, այս դեպքում ոչ թե ուշադրության կենտրոնում են իր քաղաքական ելույթները, այլ հայրենասեր, ընտանիքին և պետությանը նվիրված, մտածող քաղաքացին և մարդը: Իհարկե, սրան մեծապես նպաստում է հենց իր՝ Փաշինյանի անկեղծ կերպարը. խոսքում չի զգացվում ոչ մի կեղծիք, համարձակ է և անկաշկանդ:

Դիագրամ 1. Նիկոլ Փաշինյանի անունը շրջանառող հրապարակումների թվի շարժը



¹ Մամայի եփածն ուրիշ է», «Շանթ», <https://www.shanttv.com/shows/my-mom-cooks-better-than-yours/videogallery/programs/program28.html>, 01.01.2018 թ.:

² «Կեսգիշերն անց», Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, <http://www.ltv.am/hy/videos/Public/17#video88406-Կեսգիշերն%20անց.%20Նիկոլ%20Փաշինյան>, 14.03.2018թ.:

«Քայլ» դեպի հեղափոխություն. մեղիաարձագանքներ

Մարտի վերջին հայկական մեղիադաշտը սկսեց քննարկել նախատեսվող քաղաքական շարժումը: Մասնավորապես քննարկվում էր, թե ինչու են «Ելք»-ի մյուս երկու՝ «Հանրապետություն» և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները միայնակ թողել «Քաղաքացիական պայմանագիր»-ին¹: Զուգահեռ ներկայացվում էին նախաձեռնության նպատակն ու խնդիրները. «Այն ուղղված է ընդդեմ Սերժ Սարգսյանի երրորդ ժամկետի: Ըստ անհրաժեշտության՝ այն կարող է ներառել քաղաքացիական անհնազանդության բոլոր քաղաքակիրթ ձևերը»², հայտարարում էր Փաշինյանը: Հրապարակվում էին «Իմ քայլը» շարժման 4 հիմնական նպատակները՝ Սերժ Սարգսյանի հրաժարականը, վարչապետի պաշտոնում ժողովրդի թեկնածուի նշանակումը, ժամանակավոր կառավարության կազմումը և վաղաժամկետ խորհրդարանական ընտրությունների անցկացումը³:

Արդեն մարտի 31-ին արձանագրվեց «Իմ քայլը» խորագրով 14-օրյա քայլարշավի մեկնարկը Գյումրիից⁴ դեպի Երևանի Ազատության հրապարակ: Թեև ոչ շատ ակտիվորեն, բայց հայրենական մեղիան լուսաբանեց Քայլարշավի ընթացքը՝ լուսանկարներով, տեսանյութերով, երթուղու քարտեզով⁵: Ապրիլի 13-ին արձանագրվեց «Իմ քայլը» շարժման մասնակիցների մուտքը Երևան⁶ և ապա Ազտության հրապարակի հանրահավաքի մեկնարկը⁷:

Պետք է փաստենք, որ եթե քայլարշավի ընթացքում հատկապես ակտիվ էին մի քանի ԶԼՄ-ներ, մասնավորապես «Հետք» և «Ազատություն» առցանց պարբերականները, ապա արդեն Երևանյան հանրահավաքներն ու տարաբնույթ ակցիաները բոլոր լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում էին: Իհարկե, այս դեպքում ևս առցանց հեռուստաընկերությունների դերակատարությունը պետք է առանձնացնել, քանի որ վերջիններս աշխատում էին՝ ապահովելով շուրջօրյա ուղիղ եթերներ:

¹ Սուքիասյան Լ., «Մեզ միայնակ չեն թողել». Նիկոլ Փաշինյան, «Առավոտ», <https://www.aravot.am/2018/03/23/944736/>, 23.03.2018 թ.:

² Սուքիասյան Լ., «Այդ մեկ շաբաթում իշխանափոխությունը հրապարակում «զցած» է լինելու». Փաշինյան, <https://www.aravot.am/2018/03/23/944729/>, 23.03.2018 թ.:

³ Փաշինյան. «Մենք կյանքի ենք կոչելու մեր բոլոր նպատակները», <https://www.azatutyun.am/a/29190101.html>, 24.04.2018 թ.:

⁴ Մարտիրոսյան Տ., Նիկոլ Փաշինյանը Գյումրիից քայլարշավով գալիս է Երևան, <http://www.tert.am/am/news/2018/03/31/Nikol-pashinyan/2651841>, 31.03.2018 թ.:

⁵ Ղուկասյան Ս., Նիկոլ Փաշինյան. «Եթե քաղաքացին իր կամքը ցույց տա Ազատության հրապարակում, համոզված ենք՝ կհասնենք քաղաքական արդյունքի», <http://hetq.am/arm/news/87067/nikol-pashinyan-ete-qaxaqacin-ir-kamqy-cuyc-ta-azatutyun-hraparakum-hamozvats-eng-khasneng-qaxaqakan-ardyunqi.html>, 03.04.2018 թ.:

⁶ Հարությունյան Տ., «Եթե Տարոն Մարգարյանենց հայաթում պատրաստվենք գիշերել, նրանից թույլտվություն կհարցնեն». Նիկոլ Փաշինյան, <https://www.aravot.am/2018/04/13/949084/>, 13.04.2018 թ.:

⁷ Հայաստանի ժողովուրդը գերի է վերցված իշխանության կողմից. Նիկոլ Փաշինյան, <https://news.am/arm/news/446210.html>, 13.04.2018 թ.:

Ընդ որում, լրատվամիջոցները ոչ միայն կատարում էին տեղեկատվական գործառույթ՝ իրազեկելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, ժողովրդի, իշխանությունների, ընդդիմադիր մյուս գործիչների, ուժային կառույցների գործողությունների, հայտարարությունների և մտադրությունների մասին (օրինակները շատ են), այլև ստանձնում էին կազմակերպողի դերակատարություն՝ նախանշելով հաջորդ օրվա հանդիպման վայրերն ու ժամերը, անմիջապես արձագանքելով և արձանագրելով փոփոխությունները և այլն: Իհարկե, կազմակերպչական գործառույթի իրականացման առումով սոցցանցերի դերը ևս անփոխարինելի էր:

Ըստ էության, այդ օրերին չեղավ որևէ նախաձեռնություն, որը դուրս մնար մեդիայի տեսադաշտից՝ Երևանի կենտրոնը ցուցարարների հսկողության տակ վերցնելը¹, մուտքը Հանային ռադիո² և ԵՊՀ³, անհնազանդության բոլոր կոչերն ու ակցիաները, բանտարկություններն ու ազատարձակումները, Ս. Մարգարյանի հետ չկայացած բանակցությունները, վերջինիս հրաժարականը, դրան հաջորդող ակցիաների դադարեցումն ու Աժ հայտնի նիստերը, որոնց Հանրապետության հրապարակում հետևում էին հարյուր հազարավոր մարդիկ և, ի վերջո, Նիկոլ Փաշինյանի ընտրությունը վարչապետի պաշտոնում:

Եթե փորձենք ընդհանրության մեջ դիտարկել հեղափոխության օրերի հրապարակումները, ապա պետք է փաստենք, որ այս դեպքում ևս շարունակվում էր Նիկոլ Փաշինյանի կերպարի ամբողջացումը՝ առաջին հերթին որպես ընտանիքի հայր և քաղաքացի: Նրա քաղաքական նպատակների խորքային վերլուծություններ գրեթե չկային. մեդիան սահմանափակվում էր քաղաքական կոչերի և կարգախոսների կրկնությամբ: Այսպես, քաղաքական այս խիստ ակտիվ գործողությունների թոհուրոհում անընդհատ շրջանառվում էին Փաշինյանի և կնոջ՝ սեր ու ջերմություն ճառագող նկարները, շեշտադրվում էր այն փաստը, որ կինը ողջ ընթացքում ուղեկցում և սատարում է ամուսնուն: Լրատվամիջոցները հարցազրույց էին վերցնում ընտանիքի անդամներից և նորից ուրվագծվում էր հավատարիմ, նվիրված մարդու կերպարը (Տե՛ս դիագրամ 2):

Այս առումով, հատկանշական էր նաև Նիկոլ Փաշինյանի նոր կերպարի նմանությունը Մոնթեին: Թեև սա ուղղակիորեն չի առնչվում մեդիահրապարակումների բովանդակությանը, այդուհանդերձ այս նմանությունը որոշակի միաստիկ դրականություն և հերոսականություն էր հաղորդում Փաշինյանի մեդիակերպարին: Այն ամբողջանում էր

¹ Երևանի կենտրոնը կլինի ցուցարարների հսկողության տակ. Նիկոլ Փաշինյան, <https://www.alplus.am/1607507.html>, 13.04.2018 թ.:

² Մուրադյան Լ., Նիկոլ Փաշինյանը համախոհներով ներխուժել են Հանրային ռադիոյի շենք, <http://www.armradio.am/hy/2018/04/14/radio-5/>, 14.04.2018 թ.:

³ «Իմ քայլը» նախաձեռնության անդամները ԵՊՀ-ում հանդիպում էին պահանջում ռեկտորի հետ, <https://armenpress.am/arm/news/929875.html>, 13.04.2018 թ.:

հեղափոխության լիդերի «Բաց ձեռքերի» քաղաքականությամբ և հանդուրժողականության ու սիրո մթնոլորտ ապահովելու կոչերով և կրկնապատկում մեղիամիջավայրի ընդհանուր զգացականությունը:

Արդեն հետհեղափոխության շրջանում քննարկման հիմնական առարկան նոր կառավարության կազմավորման ընթացքն էր: Չնայած շրջանառվում էին այլ հարցեր ևս. Նիկոլ Փաշինյանի տղան ծառայելու է, Հայաստանում արտոնյալներ չեն լինելու¹, նոր կառավարությունում օլիգարխները բացառվում են², Արցախը պետք է լիարժեք մասնակցի բանակցություններին³ և այլն:

Նիկոլ Փաշինյանի տեղեկատվական քաղաքականության մեջ կա մի շատ կարևոր հանգամանք, որին նա հավատարիմ մնաց հեղափոխության ողջ ընթացքում և դրանից հետո. թափանցիկությունն ու ժողովրդին հաշվետու լինելու ձգտումը: Սիրված հասարակությունը պատրաստ է ներել բացթողումները: Ըստ էության, սրանով Փաշինյանը իրականություն էր դարձնում թավշյա հեղափոխության գաղափարաբանությունը. «Թավշյա հեղափոխությունն այնպիսի իրադարձություն է, որի արդյունքում իշխանությունն ձևավորելու Ժողովրդի հնարավորությունը վերականգնվում է ոչ թե որպես մեկանգամյա իրադարձություն, այլ՝ որպես պարբերական մեխանիզմ»⁴:

Թավշյա հեղափոխությունը լեգիտիմացվեց նաև վավերագրական ֆիլմերի շնորհիվ, որոնք նկարահանվեցին գրեթե իրադարձություններին զուգահեռ: Նմանատիպ ֆիլմերը մի քանիսն են⁵, բայց թերևս ամենածավալունը Արտակ Սարգսյանի «Հայկական թավշյա հեղափոխություն» մոտ 3 ժամանոց վավերագրական ֆիլմն է⁶, որը ոչ միայն իրադարձությունների պարզ համադրություն է, այլև հեղափոխության լիարժեք արդարացում. ֆիլմը սկսվում է Նիկոլ Փաշինյանի 2011 թ. մայիսին քրեակատարողական հիմնարկից ազատ արձակվելու ժամանակ արտաբերած խոսքերով՝ «Կեցցե՛ ազատությունը, կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը, կեցցե՛ նմեր երեխաները, որ ապրելու են ազատ և երջանիկ Հայաստանում», և շարունակվում 2018 թ. մայիսին արդեն ՀՀ վարչապետի ընտրվելուց բոլորներ առաջ արտաբերած նույն խոսքերով, բայց

¹ **Ղուկասյան Ս.**, Նիկոլ Փաշինյան. «Հայաստանում արտոնյալներ չեն լինելու, և վերջ», <http://hetq.am/arm/news/88584/>, 08.05.2018 թ.:

² Կառավարության կազմում օլիգարխներ չեն լինի. Նիկոլ Փաշինյան, <https://www.civilnet.am/news/2018/05/07/Կառավարության-կազմում-օլիգարխներ-չեն-լինի-Նիկոլ-Փաշինյան/336117>, 07.05.2018 թ.:

³ **Հակոբյան Թ.**, Արցախը պետք է լիարժեք մասնակցի բանակցություններին. Նիկոլ Փաշինյան, <https://www.civilnet.am/news/2018/05/09/Արցախը-պետք-է-լիարժեք-մասնակցի-բանակցություններին-Նիկոլ-Փաշինյան/336439>, 09.05.2018 թ.:


⁴ Բնչու եւ ինչպես թավշյա հեղափոխություն, <http://haynews.am/hy/1360401838>, 09.02.2013 թ.:

⁵ «Թավշյա հեղափոխության» խրոնիկան, «Հանրային դիվանագիտություն» բարեգործական հասարակական կազմակերպության մեդիա նախագիծ, PARA TV, <https://www.youtube.com/watch?v=FRUQK4fxH5Y>, 14.05.2018 թ.:

⁶ **Սարգսյան Ս.**, Հայկական թավշյա հեղափոխություն, <https://www.youtube.com/watch?v=KVE9x9MzgeI>, 27.05.2018 թ.:

արդեն ներկա ժամանակով: Սա հավաստումն է այն բանի, որ Փաշինյանը չի դավաճանում իր սկզբունքներին, հետևողական է և իր խոսքի տերն է ոչ միայն ընդդիմադիրի կերպարում:

Դիագրամ 2. Նիկոլ Փաշինյանի վարկանշային փոփոխությունը մեդիայում 2017 թ. հունվար - 2018 թ. ապրիլ ամիսներին



Ամփոփում

Այսպիսով, եթե փորձենք հայաստանյան մեդիաարձագանքները դասակարգել ըստ ժամանակագրության, ապա պետք է փաստենք, որ.

- հեղափոխության նախօրեին լրատվադաշտը լուծեց հանրության իրազեկման և համապատասխան վերաբերմունքի ձևավորման խնդիրը: Ընդ որում, այդ վերաբերմունքը բացառապես կառուցվեց հեղափոխության լիդերի անձի շուրջ:

- Հեղափոխության ընթացքում հատկապես մեծ էր լրատվադաշտի դերակատարությունը կազմակերպչական առումով: Այս ընթացքում քիչ էին քաղաքական խորը վերլուծություններն ու դեբատները, դրա փոխարեն բավականին ուժեղ էր հրապարակումների զգացական կողմը:

- Բսկ արդեն հետհեղափոխական շրջանում մեդիան կարողացավ լիարժեքորեն լուծել հեղափոխության լեգիտիմացման խնդիրը: Ընդ որում, սա լիարժեքորեն պայմանավորված էր առաջին երկու փուլերում մեդիայի աշխատանքով: Նախնական շրջանում լիդերի անձի վրա կենտրոնացումը բերեց նրան, որ թե՛ հեղափոխության ընթացքում և թե՛ դրանից հետո հասարակության բոլոր հույզերը կապվում են Նիկոլ Փաշինյանի անձի հետ, և չնայած հետհեղափոխական էյֆորիան կարծես մասամբ ավարտված է, հայաստանյան

մեդիան, ինտերցիայի ուժով, դեռևս ավելի հաճախ կարևորում է իրադարձությունների զգացական կողմը՝ չմատուցելով քաղաքական իրավիճակի խորը վերլուծություններ:

Բանալի բառեր – Մեդիաարձագանքներ, մեդիաազդեցություն, թավշյա հեղափոխություն, լրատվամիջոցներ, վավերագրական ֆիլմ, կերպարաստեղծում:

Աիդա Անաստասյան, Գալուստ Սարոյան, Մեդիան՝ թավշյա հեղափոխության մասնակից - Թավշյա հեղափոխության կայացման գործում մեծ ներդրում ունեցավ հայաստանյան մեդիան: Այդ դերակատարության քննությունը, 2017/2018 թթ. հայաստանյան մեդիայի հրապարակումների համատեքստում, որոշակիորեն բացահայտում է թավշյա հեղափոխության հաջողության գաղտնիքը: Այսպես, հեղափոխության նախօրեին լրատվադաշտը լուծեց հանրության իրազեկման և համապատասխան վերաբերմունքի ձևավորման խնդիրը: Ընդ որում, այդ վերաբերմունքը բացառապես կառուցվեց հեղափոխության լիդերի անձի շուրջ: Հեղափոխության ընթացքում հատկապես մեծ էր լրատվադաշտի դերակատարությունը կազմակերպչական առումով: Այս ընթացքում քիչ էին քաղաքական խորը վերլուծություններն ու դեբատները, դրա փոխարեն բավականին ուժեղ էր հրապարակումների զգացական կողմը: Իսկ արդեն հետհեղափոխական շրջանում մեդիան կարողացավ լիարժեքորեն լուծել հեղափոխության լեգիտիմացման խնդիրը:

Аида Анастасян, Галуст Сароян, Медиа как участник бархатной революции

- В деле становления Бархатной революции большую роль сыграли армянские медиа. Научный анализ этой роли, в контексте публикаций армянских медиа 2017/2018гг., определенным образом раскрывает секрет успеха Бархатной революции. Так, накануне революции информационное поле решило задачу информирования общества и формирования соответствующего отношения. Причем, это отношение было построено исключительно вокруг личности лидера революции. В ходе революции особенно велика была роль медиа с организационной точки зрения. В этот период почти не было глубоких политических аналитических публикаций и дебатов, вместо этого довольно сильно была эмоциональная сторона публикаций. А уже в период революции медиа смогли полностью решить проблему легитимности революции.

Aida Anastasyan, Galust Saroyan, Media as a participant of the velvet revolution

- The Armenian media had a major contribution in the realization of the Velvet Revolution. The scientific analysis of its role in the context of Armenian media

publications of 2017 and 2018, clearly discloses the secret of success of the Velvet Revolution. Thus, on the eve of the Revolution media outlets solved two major issues – that of public awareness and the formation of a certain attitude. Moreover, that attitude was created solely around the leader of the Revolution. The role of the media outlets was particularly notable from the organizational perspective. During this period, there were very few fundamental political analyses and debates. Instead, the emotional aspects of the publications were strongly emphasized. In the post-revolutionary period, the media managed to fully solve the issue of legitimization of the Revolution.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՈՐԲԱԽԱՄ ՈՒ
ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ5

ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ13

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ԱԲԵՂՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԽԱՂԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻ
ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ20

ԷՍԹԵՐ ԽԵՄՉՅԱՆ, ՄԱՐԻՆԵ ԽԵՄՉՅԱՆ

ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴՈՒ ԹԵՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ28

ՀԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«ՔԱԶ ՆԱԶԱՐ» ՀԵՔԻԱԹԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԸ39

ՄԻՐԱՆՈՒՇ ՂՈՒՇՉՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՆՀԱՏԸ ԻՐ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ44

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ51

ՔՐԻՍՏԻՆԵ ԴԱՂՅԱՆ

ՌՈՒՄԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ59

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՎՀ.
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ69

ԱՌԴԱ ՍԱՐՀԱՏՅԱՆ	
ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	
ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱՆՈՒՇ» ՊՈԵՄՈՒՄ	82

ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ	
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԶԱՓԱԾՈՅՈՒՄ	91

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ	
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	99

ԻՆԵՍԱ ԳԱՐԴԻՇՅԱՆ	
ՌՈՒՍԱՅ ԵՎ ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ ԴԱՍԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՅՈՎ	106

ԷՍՄԱ ԹԵՄՐԱԶՅԱՆ	
ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՄԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	115

ՌՈՒԶԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ	
Ֆ. ԲԵԳԲԵԴԵՐԻ «99 ՖՐԱՆԿ» ՎԵՊԸ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ..	123

РУЗАННА ЗАРГАРЯН	
ЛИНГВИСТИЧЕСКИЕ ТРУДНОСТИ ПЕРЕВОДА ФРАЗЕОЛОГИЗМОВ, ПОСЛОВИЦ И ПОГОВОРОК	128

AÏDA MARDANIAN	
LES ANIMAUX DANS LES EXPRESSIONS ET DANS LES PROVERBES FRANÇAIS	132

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ	
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԶԵԱՎՈՐՄԱՆ և ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	137

ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՆԱԽՇՈՒՆ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի և «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 146

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՀԻՏ ԲՐՈՒՑՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ158

ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

«ՈՉ ՄԻ ՇԱԲԱԹ ԱՌԱՆՑ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ». ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ԿՅԱՆՔԻ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՆՈՐ ՁԵՎԱԶԱՓԸ ---165

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԻՂԱ ԱՆԱՍՏԱՍՅԱՆ, ԳԱԼՈՒՍՏ ՍԱՐՈՅԱՆ

ՄԵԴԻԱՆ` ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ 175

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱԿՈՒՆՔԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունքում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:

Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:

Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:

Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:

Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):

Հոդվածի վերջում գրել բանալի - բառերը, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում:

Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):

Հոդվածներն ուղարկել akunq.ysuib@gmail.com էլեկտրոնային հասցեով:

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1 (21)

Համարի պատասխանատու՝ Ա. Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Տեխնիկական խմբագիր՝ Թ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ստորագրված է տպագրության 20.06.2019

Չափսը՝ 70x100/16: Ծավալը՝ 12 պայմ. տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալ. Մանուկյան 1

A K U N Q
COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES
NUMBER 1 (21)

Executive editor: A. A. NERSISYAN

Cover and content design: T. V. SARGSYAN

Format: 70x100/16. Size: 12 sheets. Copies: 100.

YSU Publishing House

Yerevan, 0025, Al. Manukyan 1